# ԱԶԻԶ ԹԱՄՈՅԱՆ



# ՄԵՆՔ ԵԶԴԻ ԵՆՔ



9(91.57)
Թ-20

ԱԶԻԶ ԹԱՄՈՅԱՆ

# ՄԵՆՔ ԵԶԴԻ ԵՆՔ

## ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

3263



«ՎՄՎ-ՊՐԻՆՏ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2001

ԴՏՀ 39
ԳՄԴ 63.5
Թ - 206

**ԱԶԳՈՒԹՅՈՒՆՍ՝ ԵԶԴԻ,**
**ԼԵԶՈՒՍ՝ ԵԶԴԻԵՐԵՆ,**
**ԿՐՈՆՍ՝ ՇԱՐՖԱԴԻՆ**

Мьләте мьн-эзди,
зьмане мьн-эздики,
дине мьн-шәрфәдин

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Թամոյան Ա.
Թ - 206 Մենք եզդի ենք (Ծագումնաբանական, կրոնական պատմական ակնարկ):
Ազիզ Թամոյան: Եր. «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» 2001թ., 216 էջ:

*Աշխարհի և Հայաստանի Հանրապետության եզդիների ազգային միությունների պրեզիդենտ, եզդի ժողովրդի ազգային հերոս, եզդիների ազգային պատմագիտության և աստվածաբանության դոկտոր-պրոֆեսոր ԱԶԻԶ ԹԱՄՈՅԱՆԻ «Մենք եզդի ենք» խորագրով գրքում ի մի է բերվում այն ամենը, ինչ վերաբերում է եզդիներին, նրանց անցյալին ու ներկային:*

*Գիրքը հասցեագրված է ոչ միայն եզդիներին, այլև բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են եզդի ժողովրդի պատմությամբ ու ճակատագրով, եզդիների կրոնով, կենցաղով, սովորություններով ու ավանդություններով, մշակույթով, մյուս ժողովուրդների հետ ունեցած հարաբերություններով և բազմազան այլ հարցերով:*

*«Մենք եզդի ենք» գիրքը լավ նվեր է ընթերցող հասարակայնությանը և, կասկած չկա, որ այն կդառնա եզդիական յուրաքանչյուր ընտանիքի սրբությունը՝ որպես իր ժողովրդի ճշմարտացի պատմություն:*

ԳՄԴ 63.5

Թ 0505000000 / 0180(01) 2001 2001

ISBN 99930-904-3-3

© Ա. Թամոյան

## ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՍ

*Հավակնություն չունենալով սպառիչ պատասխան տալ եզդի ժողովրդին վերաբերող բոլոր հարցերին, ձգտել եմ այս գրքում ներկայացնել այն ամենը, ինչ կարողացել եմ գտնել և ուսումնասիրել եզդի ժողովրդին վերաբերող գրականության մեջ, ժողովրդական բանահյուսության էջերում, մեզ հասած ավանդապատումներում, մամուլում հրապարակված հաղորդումներում, այլևայլ աղբյուրներում: Տարիներ շարունակ զբաղվելով եզդի ժողովրդի պատմության, ծագումնաբանության, կրոնի, կենցաղի, անցյալի ու ներկայի հարցերով, պարբերական մամուլում հաճախ հանդես եմ եկել հոդվածներով, փորձել եմ լուսաբանել այս կամ այն կնճռոտ հարցը, ներկայացրել եմ եզդիների ճակատագրին և պատմության քառուղիներում նրանց ունեցած դերին վերաբերող նյութեր: Եվ այս ամենն ի մի բերելով, ձգտել եմ «Մենք եզդի ենք» խորագրով գրքում ամբողջական պատկերացում տալ աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ եզդիների մասին: Օգտագործել եմ մամուլում, հատկապես աշխարհում միակ եզդիական թերթում՝ «Եզդիների ձայնում» տպագրված նյութերը: Իսկ թե որքանով է ինձ հաջողվել դա, կերևա մասնագետ-պատմաբանների, գիրքն ընթերցող իմ բարեկամների գնահատականներից: Գիրքս նվիրում եմ իմ ժողովրդին, նրա բոլոր զավակներին, որ անցնելով դարավոր փորձություններով, եզդի անունը հասցրել են մինչև մեր փոթորկոտ օրերը և տանելու են դեպի նորանոր հորիզոններ, դեպի նոր դարեր:*

# Մենք եզդի ենք...

Իմ մանկության և պատանեկության տարիներին բազմիցս լսել եմ այս հպարտ արտահայտությունը, ունկնդիր եմ եղել իմ տարեց հայրենակիցների զրույցներին, լսել եմ նրանց պատմածները եզդի ժողովրդի, նրա հնագույն ավանդույթների, պատմության և ճակատագրի մասին: Ու երբեք չեմ մոռանա ամենատարեց, եզդիների մեջ ամենահեղինակավոր մարդկանց՝ շեխ Դավրեշի (որ հայտնի էր Կլոճ անունով), Աթարե Ավդալի, Ալիե Թամոյի, Ամարե Թամոյի, Ալիե Քալաշի, Շաքարե Ավասի, Հասանե Ազիտ Բազեի, Համիդե Ասոյի, Ֆատհաե Բրոյի, Ազիտե Չարկազի, շեխ Քյալաշի, շեխ Զայիլի և ուրիշների իմաստուն խոսքը. «Մենք եզդի ենք, դարերի խորքից է գալիս եզդի անունը, մեր ապուպապերն այդ սուրբ անվան համար պայքարել են դարեր շարունակ, շեն են պահել մեր օջախը, հալածվել են մուսուլմանների կողմից, տառապանքներ են կրել, բայց չեն դավանափոխվել, հավատարիմ են մնացել իրենց ազգությանը, իրենց կրոնին»:

Ու ինչպես ես, այնպես էլ իմ հասակակիցները, մեր մեծերի նման կրկնեցինք «Մենք եզդի ենք» խոսքը, հավատարիմ մնացինք մեր ազգությանը, մեր ժողովրդին: Ու դեռևս պատանեկությանս տարիներին որոշեցի անպայման լինել համայն աշխարհի եզդիների բնօրրանում՝ Լալըշում, տեսնել այն, առավել խորը հասկանալ իմ ժողովրդի պատմությունը, նրա դարավոր նիստն ու կացը, սովորույթները, ավանդույթները:

Երազանքս իրականացավ միայն 1972 թվականի հոկտեմբերին, երբ զբոսաշրջիկների մի մեծ խմբի հետ գնացի Իրաք, եղա իմ նախահայրերի հայրենիքում՝ Սինջարի (Շանգալ) լեռներում, Մուսուլ քաղաքում, շրջակայքի եզդիաբնակ գյուղերում, և որ ամենակարևորն ու նշանակալիցն է, համայն աշխարհի եզդիների գլխավոր սրբավայրում՝ Լալըշում: Այնուհետև եղա նաև Բաղդադում, Քերբալայում, Բասրայում:

Լալըշում հանդիպեցի եզդիների հոգևոր առաջնորդներին՝ միրերին և բազմաթիվ տարեց եզդիների, շատերի հետ սրտաբաց զրույց ունեցա, շատ նորություններ իմացա եզդի ժողովրդի պատմության մասին, է՛լ ավելի համոզվեցի, որ եզդիները հնդեվրոպական հնագույն ժողովուրդներից են, ունեն փառավոր անցյալ, որ եզդիների կրոնը աշխարհի հնագույն կրոններից է, որը քարոզում է բարություն, մարդասիրություն, խաղաղություն:

Ուղևորությունից վերադառնալով, իմ տեսածի ու լսածի մասին պատմեցի հայրենակիցներիս, ոգևորությամբ ներկայացրի Լալըշը, նրա մարդկանց ու միրերին, մեր նախահայրերի բնօրրանի անզուգական գեղեցկությունն ու աստվածային էությունը: Եվ ինձ լսում էին հափշտակված, կարոտով, ոգևորությամբ: Չէ՞ որ 200 տարի է, որ



նախկինում ցարական Ռուսաստանի, այնուհետև Խորհրդային Միության տարածքում ապրող եզդիներից շատերը ոչ միայն աղոտ, այլև ընդհանրապես ոչ մի պատկերացում չեն ունեցել Լալըշի մասին, անգամ չէին լսել այդ անունը, ոչինչ չգիտեին մեր ամենամեծ սրբավայրի մասին: Ու ես գտա համախոհներ և աջակիցներ, որոնք համախմբվեցին իմ շուրջը, և միասին որոշեցինք վերականգնել եզդի ժողովրդի երբեմնի փառքն ու անունը, արժանապատվությամբ հնչեցնել եզդի անունը, աշխարհին ներկայացնել եզդիների հերոսական պատմությունը:

Երևի այսպես երկար շարունակվեր, եթե 1988 թվականին հայ ժողովուրդը ոտքի չկանգներ՝ պատմական արդարությունը վերականգնելու, արցախահայության ինքնորոշման իրավունքը ազգովին պաշտպանելու համար: Ազգային-ազատագրական շարժման այդ պոռթկումը աննախադեպ երևույթ էր Խորհրդային Միության պատմության մեջ, և շատ պատկերացումներ փոխվեցին այդ օրերին, շարժման ողջ ընթացքում: Ազգային-ազատագրական այդ վիթխարի պայքարը հուզեց նաև մեզ՝ Հայաստանում



*Աշխարհի եզդիների գլխավոր սրբավայրը՝ Լալըշը:*

ապրող եզդիներիս, հուշեց, որ եկել է նաև պայքարի մե՛ր ժամանակը, որ վճռական պահն է՝ դեն նետել վախը և սարսափի զգացումը՝ ազգային նվիրական գաղափարները քարոզելու համար, որ ժամանակն է, վերջապես, հպարտ ու բարձրաձայն հնչեցնել եզդի անունը, պետական մակարդակով լուծելու եզդիներին հուզող բազմաբնույթ ու բազմազան հարցեր:

Եվ 1988 թվականի ամռանը իմ մտորումները հայտնեցի Նաիրիի շրջանի Քանաքեռավան գյուղի բնակիչ, եզդիների մեջ մեծ հեղինակություն վայելող Բրոյե շեխ Դավրեշին: Նա ոգևորությամբ լսեց ինձ, պատրաստակամություն հայտնեց օգնել:

1988 թվականի սեպտեմբերի 9-ին Նաիրիի շրջանի Քանաքեռավան գյուղում տեղի էր ունենում սգո արարողություն: Հողին էր հանձնվում գյուղի տարեց բնակիչ Գոգոե Համոն: Թաղումից անմիջապես հետո, ուղղակի գերեզմանի մոտ, տեղի ունեցավ կարևոր իրադարձություն: Սգո արարողության շատ մասնակիցներ որոշեցին երեք օր հետո հավաքվել հանրապետության այն ժամանակվա ամենահանրահայտ վայրում՝ օպերայի հրապարակում և ի լուր աշխարհի հայտարարել մեր պայքարի մասին՝ հանուն եզդի անվան վերականգնման: Գերեզմանոցում գտնվող և սգո արարողությանը մասնակցող շատ հայեր համակրանքով վերաբերվեցին մեր մտադրությանը, խոստացան օժանդակել մեր արդար պայքարին: Ոգևորված եզդիների վճռականությունից, հանպատրաստից ելույթ ունեցավ տեղի դպրոցի տնօրեն Քամալյանը և պաշտպանեց մեր առաջարկությունը, ներկաներին կոչ անելով ակտիվորեն մասնակցել պայքարի առաջին պոռթկմանը:

Նշանակված օրը՝ 1988 թվականի սեպտեմբերի 12-ին, Երևանի օպերայի հրապարակում տեղի ունեցավ եզդիների առաջին հրապարակային ելույթը, որը կարելի է պաշտոնապես համարել պայքարի առաջին քայլը:

Այդ արժանահիշատակ օրը օպերայի հրապարակ էին եկել հանրապետության տարբեր շրջաններից ժամանած հարյուրավոր եզդիներ, համակիր հայեր, ինչպես նաև բազմաթիվ հետաքրքրասերներ, որոնք ցանկանում էին հաղորդակից լինել մեր պահանջներին, իմանալ, թե ինչ ենք ուզում մենք: Պայմանավորվածության համաձայն այդ հավաքում առաջինը ելույթ ունեցա ես՝ Ազիզ Թամոյանս, որ փաստորեն պատճառ էի դարձել այդ բախտորոշ իրադարձությանը: Ապա ներկաներին հուզիչ խոսք ասաց Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղի բնակիչ Զայիլե շեխ Քյալաշեն:

Մանրամասն պատմելով այդ օրերի իրադարձությունների մասին, համոզված եմ, որ պայքարի այդ փուլը հավերժ կհիշվի եզդի ժողովրդի պատմության մեջ: Դա ազգային իսկական զարթոնք էր, աննախադեպ իրողություն մեր տարեգրության մեջ, որն սկիզբ դրեց նպատակային սուրբ մի պայքարի՝ հանուն եզդի անվան վերականգնման, եզդի ժողովրդի համընդհանուր ճանաչման ու նրա արժանապատվության հաստատման: Եվ թող մեր պայքարի տարեգրության մեջ հատուկ շեշտվի այն փաստը, որ այդ առաջին պաշտոնական հավաքում եզդիներին հուզող բոլոր հարցերի լուծման համար ընտրվեց կազմկոմիտե:

Կազմակերպական կոմիտեի կազմում ընդգրկվեցին հետևյալ անձինք.

ԱԶԻԶ ԹԱՄՈՅԱՆ- նախագահ
ԲՐՈ ԴԱՎՐԵՇԻ ՇԱՄՈՅԱՆ
ՋԱՅԻԼ ՔՅԱԼԱՇԻ ՀԱՍԱՆՅԱՆ - տեղակալ
ՔՅԱՐԱՄ ՍԵԼՈՅԻ ԱՎԴՈՅԱՆ
ԳՅՈՒԼՆԱՐԱ ՔՅԱՐԱՄԻ ԱՎԴՈՅԱՆ - քարտուղար
ՕՄԱՐ ՄԱՀՄՈՒԴԻ ԱՎԴՈՅԱՆ



ԳՈՒՐՋԻՍԵ ԽՈՒԴԵԴԱՅԻ
ՇԵԽ ԱՍՈՅԵ ՔՅԱՐԱՄ
ՀԱՍԱՆ ԳՈԳՈՅԻ ՖԱՐԸՋՅԱՆ
ՓԱՇԻԿԵ ՍԱՎՏՈ
ՌՈՒՍՈ ԳԱԼՈՅԱՆ
ԳՈԳՈ ԳԱԼՈՅԱՆ
ՋԱՍԸՄԵ ՀՈՒՍԵ
ՕՄԱՐ ՇԱՐՈՅԻ ՄԱՄՈՅԱՆ
ՄԱՀԻԴ ԱԶԻԶԻ ԹԱՄՈՅԱՆ

Ինչպես կազմկոմիտեի անդամներից շատերը, այնպես էլ շարժման շատ մասնակիցներ, այսօր արդեն կենդանի չեն:

Շեխ Ադու օրհնությունը լինի նրանց հոգիների վրա:

Կազմկոմիտեն անմիջապես գործի անցավ: Նույն օրը, այդ առաջին հավաքն ավարտվելուց մի քանի ժամ հետո, մեր հատուկ հանձնաժողովը, որի կազմում էին ԱԶԻԶ ԹԱՄՈՅԱՆԸ, ԲՐՈ ՇԱՄՈՅԱՆԸ, ՔՅԱՐԱՄ ԱՎԴՈՅԱՆԸ, ԳՅՈՒԼՆԱՐԱ ԱՎԴՈՅԱՆԸ, ՄԱՀՄԱԴԵ ԻՍՄԱՅԻԼԸ, ՖԱՏԵ ՋԱՀԱՆԳԻՐ ԱՂԱՆ, ԱՀՄԱԴԵ ՇԵԽ ԱՍԼԱՆԵՆ, ՕՄԱՐ ՄԱՄՈՅԱՆԸ, ՄՇԻՐԵ ԽՈՒԴԵԴԱՆ, եղավ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեում: Հանձնախմբին ընդունեց և ներկայացված պահանջները լսեց Կենտկոմի քարտուղար Գալուստ Գալոյանը:

Հարկ է հիշեցնել, որ ժամանակին, որպես ՀԿԿ Կենտկոմի քարտուղար, Գ. Գալոյանը պետք է զբաղվեր ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև եզդիներին հուզող բոլոր հարցերով, սակայն նա խուսափում էր սպառիչ և ճիշտ պատասխաններ տալուց: Եվ պատահական չէր, որ հաճախ եզդիների բազմամարդ խմբեր, որոնց մեջ կային ոչ միայն տղամարդիկ, այլ նաև կանայք ու երեխաներ, հավաքվում էին Գ. Գալոյանի բնակարանի մոտ, շրջապատում նրա ծառայողական ավտոմեքենան, պահանջում էին անհապաղ ճշտել եզդիների ազգային պատկանելության և բազմաթիվ այլ հարցեր: Սակայն Գ. Գալոյանը պատասխանում էր, որ նման հարցեր լուծում են միայն ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը, ԽՍՀՄ վիճակագրության պետական կոմիտեն:

Եզդիներն, իհարկե, չէին կարող համակերպվել այդպիսի լիակատար համահավասարեցման հետ. ինչո՞ւ պետք է եզդիները համարվեն քրդեր: Եթե եզդիներն ունեցել են իրենց հայրենիքը, պատմությունը, լեզուն, կրոնը, գիրը և այդ բոլորը՝ եզդիական, եզդիերեն, որտեղի՞ց է այդ քուրդ պիտակը: Խորհրդային տարիներին, հատկապես 30-ական թվականներից մինչև 1989 թվականը, եզդի անունը հիշվում էր միայն ծննդականներում և անձնագրերում, իսկ մարդահամարների ամփոփիչ աղյուսակներում եզդիները ներկայացվում էին որպես քրդեր: Ահա թե որն էր ամենամեծ կեղծիքը, որի դեմ էլ ընդվզեց ողջ եզդի ժողովուրդը:

Մինչև 1989 թվականի օգոստոսը մեր պայքարը սահմանափակվում էր միայն հանրապետության շրջանակներում: Մենք որոշեցինք եզդիների հարցը դարձնել միութենական քննարկման առարկա:

Ես՝ Ազիզ Թամոյանս, Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղի բնակիչ Հասան Հասանյանը և Նաիրիի շրջանի Ջովունի գյուղի բնակիչ, Հայրենական մեծ պատերազմի վետերան Մրազ Խուդոյանը, շարժման մասնակիցների համաձայնությամբ և հանձնարարությամբ, 15 հազար ստորագրություններով հաստատված դիմում-հավաստագրով, որ իրենք բողոքում են կատարված կեղծիքի դեմ և իրենց համարում են եզդի, մեկնեցինք Մոսկվա:

Թեև համոզված էինք, որ մեր հարցը կարող էր լուծվել նաև Հայաստանում, բայց, անհրաժեշտությունից դրդված, ստիպված էինք գնալ Մոսկվա: Մենք Մոսկվա տարանք այնպիսի փաստաթղթեր, որոնք վկայում էին, որ 20-ական թվականներին մեր ժողովուրդը մարդահամարների ժամանակ կոչվել է իր իսկական անունով՝ եզդի, որ այդ տարիներին Հայաստանում տեղի են ունեցել եզդիների համագումարներ: Այդ բոլոր փաստաթղթերը, եզդիներին վերաբերող անհերքելի փաստերը մեր ձեռքում դարձան հզոր կռվաններ, որոնցով որոշեցինք պայքարել ճշմարտության համար՝ կատարված կեղծիքի դեմ:




*Խորհրդային Հայաստանի կենտրոնական վիճակագրական վարչության 1922 թ-ին հրատարակած «Հայաստանի ազգաբնակչությունը» վերնագրով գրքույկի կազմը*

Այդպիսի փաստաթղթերն անառարկելի ապացույցներ էին մեր իրավացիության (տե՛ս աղյուսակները):

Ինչպես երևում է բերված փաստաթղթերից, եզդիները ամենուրեք նշված են որպես առանձին ազգություն, նրանց ազգային պատկանելությունը պարզորոշ տարբերակվում է քրդերից: Մանրամասնությունների մեջ չմտնելով, ասենք, որ այդ փաստաթղթերն օգնեցին կատարված կեղծիքի բացահայտմանը:

Կարևոր էր նաև մեկ այլ փաստաթուղթ: Այն հրապարակ է հանվել դեռևս 1955 թվականին և կրում է «Գրի զարգացումը» խորագիրը (Չ. Լոուկոտկա, «Գրի զարգացումը», Երևան, Հայպետհրատ, 1955): Այստեղ արդեն մեզ հետաքրքրողը եզդիերենին վերաբերող փաստերն






են: Արամեական, պալմիրական, սիրիական, արաբական և այլ գրերի կողքին հավասար իրավունքներով փաստվում է նաև եզդիական գրի գոյությունը, տրվում է եզդիերեն գրերի օրինակներ, եզդիական աստվածապաշտության գրքի տիտղոսաթերթ, տեղեկություններ եզդիերենի մասին և այլն:

Հիշեցնենք նաև, որ 1921 թվականին եզդի երեխաների համար լույս է տեսել հայատառ այբբենարան «Շամս» խորագրով:

Վերոհիշյալ և բազմաթիվ այլ փաստաթղթերով զինված, Մոսկվայում անցկացրած 16 օրերի ընթացքում հանդիպեցինք միութենական տարբեր ատյանների ղեկավարների հետ՝




*Արամեական գրից առաջացած գրի մի քանի տեսակներ:*

պահանջելով վերականգնել ճշմարտությունը: Պետք է ասել, որ ամենուրեք ըմբռնումով մոտեցան մեր հարցադրումներին, ընդունեցին, որ եզդի ժողովրդի պահանջն արդարացի է և ճշմարիտ, հանձնարարեցին Հայաստանի համապատասխան մարմիններին՝ դրական լուծում տալ մեր բարձրացրած հարցին:

1989 թվականին տեղի ունեցավ Խորհրդային Միության վերջին մարդահամարը: Անհրաժեշտ էր նախնական աշխատանք տանել, որպեսզի հետագա մարդահամարներում թյուրիմացություններ թույլ չտրվեն. եզդիները ներկայացվեն իրենց իսկական ազգությամբ: Այդ մտահոգությամբ եղանք հանրապետության համապատասխան մարմիններում, իրավասու մարդկանց մոտ, ներկայացրինք մեր նկատառումները: Շնորհակալությամբ պետք է նշել Գալուստ Գալոյանի արդյունավետ աշխատանքը, որն անտեսելով իր նախկին դիրքորոշումը, համակրանքով վերաբերվեց մեր պահանջներին, գրություն ուղարկեց Հայաստանի վիճակագրական կենտրոնական վարչություն, որպեսզի մարդահամարի ընթացքում թույլ չտրվեն անճշտություններ, եզդիները գրանցվեն որպես եզդիներ: Գոհունակությամբ պետք է նշել, որ 60 տարվա աղավաղումներից հետո, վերջապես, 1989թ. մարդահամարի ամփոփիչ աղյուսակներում երևաց եզդի ժողովրդի անունը, եզդիները մարդահամարի թերթիկներում հպարտությամբ նշեցին իրենց ազգությունը՝ եզդի: Մարդահամարի «Առանձին ազգությունների մասին» ամփոփիչ աղյուսակի ծանոթագրության մեջ նշվում է, որ 1979թ. մարդահամարի տվյալներով եզդիները որպես ազգ չեն առանձնացվել և հաշվառվել են քրդերի թվաքանակի հետ, ուստի նախորդ և վերջին մարդահամարների համեմատության մեջ չի նշվում եզդիների աճը, կրթական մակարդակը և այլն: Սակայն շեշտվում է, որ 1989թ. մարդահամարի տվյալներով Հայաստանում ապրում են 51 հազար 900 եզդի, որից 6 հազար 200-ը Երևանում: Այս փաստն արդեն վկայում է, որ եզդիներն իրավացիորեն ճանաչվում են որպես առանձին ազգ: Դա նաև մեր մոսկովյան առաքելության արդյունքն էր, մեր պայքարի կարևոր էջերից մեկը:

Վերևում ասվեց, որ 20-ական թվականներին Հայաստանում տեղի է ունեցել եզդիների 2 համագումար: «Խորհրդային Հայաստան» թերթի 1923 թ. օգոստոսի 23-ի համարում տպագրված «Եզդիական համագումարը Ալագյազի բարձունքում» խորագրով հոդվածում կարդում ենք.

«1923թ. օգոստոսի 3-ին Ալագյազի բարձունքում, Ջահանգիր աղայի օբաների մարգագետնում կայացավ Հայաստանի եզդիների համագումարը, որին մասնակցում էին հիսունից ավելի պատգամավորներ՝ բոլոր եզդիական օբաներից, թե հասընիներ (նախկին ռուսահպատակներ) և թե զուղուրիներ (Տաճկաստանից գաղթածներ):

Համագումարը բացված հայտարարեց էջմիածնի գավկոմի ագիտբաժնի վարիչ ընկ. Կարո Համտելյանը, որը հակիրճ, բայց դյուրըմբռնելի շեշտեց խորհրդային իշխանության սիրալիր վերաբերմունքը դեպի բաղկացուցիչ մանր ազգությունները, մասնավորապես դեպի եզդիները, որոնք մինչև այդ, բոլոր ռեժիմների ժամանակ եղել են վատ վիճակում, ներկայումս խորհրդային իրավակարգում լիակատար իրավասության սահմաններում միևնույն հնարավորությունն ունեն՝ քաղաքական գիտակցություն ձեռք բերելու,



տնտեսական բարգավաճ վիճակի հասնելու, կրթությամբ ու դաստիարակությամբ քաղաքակիրթ ազգերի շարքը մտնելու համար: Հայաստանի խորհրդային իշխանությունն ու կոմունիստական կուսակցությունը բոլոր միջոցները ի սպաս են դնելու, որպեսզի եզդի ժողովուրդը կուլտուրապես բարձրանա և հասնի քաղաքակիրթ վիճակի:

Բուռն ծափերի ու կեցցեների տարափի տակ ընկեր Կարոն հայտարարեց համագումարի օրակարգը, այն է.

1. Ամուսնական խնդիրներ.
2. Վարչական կապ իշխանության հետ.
3. Դպրոցական-կրթական խնդիրներ:

Առաջին և երկրորդ խնդիրների մասին պետք է խոսեր այդ նպատակով Թիֆլիսից եկած ընկ. Լազոն:

Հետո ելույթ ունեցավ ընկ. Լազոն, նկարագրեց վաչկատուն ցեղերի ընտանեկան շատ պակասավոր կողմերը, կանգ առավ մասնավորապես եզդիների ամուսնական խնդիրների վրա:

«Այն տգեղ և կիսավայրենի սովորությունները, որոնք բռնապետության ժամանակ թույլատրվում էին, արդեն խորհրդային կարգերում անհանդուրժելի են»:

Ընկ. Լազոն նկարագրեց, թե ինչպես 8-9 տարեկան մանկահասակ աղջիկներին ամուսնացնում են 20-30 տարեկան տղամարդկանց հետ, որի հետևանքով լինում են մահ, ցավ, ցավագարություն, ապա հարց տվեց՝ մի՞թե դուք, ծնողներ և եղբայրներ, այնքան խելքից զուրկ եք, որ չգիտակցեք այդ բոլորը, այսուհետև էլ կհանդուրժե՞ք: Եվ եթե այս չարիքը դիտվեր որպես տգիտության հետևանք, թերևս այնքան էլ չդատապարտվեր, բայց դրան գումարվում է նաև շահը, երբ ծնողներն ու եղբայրները հարազատ մանկանը անմարդկային սոսկալի տանջանքների են մղում՝ միմիայն դեղին ոսկիներ ձեռք բերելու համար. սա արդեն տգիտությունից և վայրենությունից էլ այն կողմ է անցնում:

Ընկ. Լազոն կենդանի փաստերով և կոնկրետ օրինակներով ապացուցեց իր ասածները: Ապա կանգ առնելով աղջիկ փախցնելու սովորության վրա՝ մանրամասն օրինակներով ցույց տվեց դրանից առաջացած թայֆայական և ցեղային մարդասպանությունները»:

Այս բոլորի դեմն առնելու միակ միջոցը ընկ. Լազոն եզդիների մեջ գրանցման (զագսի) օրենքը կիրառելու մեջ էր տեսնում. 1. սահմանելով աղջիկների ամուսնության տարիքն առնվազն 15, իսկ տղաներինը՝ 18: 2. Վերացնելով ընդմիշտ ղալանը, որ վաճառքի կամ գնման մի ձև է, փոխարինելով այն կամավոր նվերի, որ տղայի տերը տալիս է աղջկա տիրոջն՝ իր հարսի օժիտային պակասները հոգալու համար: 3. Աղջիկ փախցնելը համարել քրեական հանցանք: 4. Ծնող-ազգականների բռնության դեպքում փոխադարձ սիրով կապված զույգը կարող է ներկայանալ գրանցման (զագսի) ներկայացուցչին՝ արձանագրվելու, որով կապահովվի օրենքի պաշտպանությունը:

Ընկ. նախագահն էլ կանգ առավ նույն խնդրի վրա, շեշտեց, թե կառավարությունը ցուցակագրած ունի և գիտե, թե որ եզդին որքան ոչխար և կով ունի, թե նույն եզդին քանի տղա և աղջիկ ունի: Գրանցման կարգի սահմանումն անհրաժեշտ է թե՛ պետական, և թե՛ հենց իր՝ եզդի ժողովրդի շահերի տեսակետից:

Նույն նյութի մասին խոսում է նաև ընկերուհի Նուրեն, որը նկարագրելով եզդի կնոջ ստրկական վիճակը, կոչ է անում իր ցեղակիցներին՝ վերջ տալ այդ անպատվաբեր վիճակին և մտնել քաղաքակիրթ ազգերի շարքը:

Պատասխոս ընկ. Լազոն պատասխանեց պատգամավորներ Թեմուրի, Ալի-Խանի, Սայիդի և այլոց մի շարք հարցերին, որոնք վերաբերում էին ամուսնական, ապահարզանի, բազմակնության և զավակների պահպանության որոշ խնդիրներին, որից հետո բուռն ծափահարություններով և միաձայն ընդունվում են հետևյալ որոշումները.

1. Եզդիների մեջ մտցնել գրանցման կարգը (զագս), նշանակելով շրջանային հատուկ ներկայացուցիչ՝ գրանցման գրասենյակի կողմից:

2. Ամուսնության նվազագույն տարիք սահմանել. աղջիկներին՝ 15, տղաներին՝ 18:

3. Վերացնել ընդմիշտ աղջկա համար ղալան վճարելու սովորությունը՝ այն փոխարինելով կամավոր նվերներով:

4. Խնդրել համագումարին մասնակցող կառավարության ներկայացուցիչներին՝ տնօրինելու ըստ այնմ:

... Խոսում է ընկեր նախագահը, բացատրելով կրթության մեծ նշանակությունը և ապա հրավիրում ընկեր Լազոյին՝ կարդալ իր երկրորդ զեկուցումը՝ «Դպրոցական-կրթական խնդրի մասին»:

Պատմական ընդարձակ և մանրազնին մեջբերումներով Լազոն ցույց տվեց, որ եզդիական օրենքներով գիրն ու գրականությունը հայտարարվել են պիղծ և կարդացողները՝ «քյաֆուր»: Սուլթան Եզդին, երբ արաբական նոր կրոնի, իսլամի վարդապետությունը հզոր թափով տարածվում էին ամենուր, առաջին անգամ դուրանի ընթերցումը հայտարարեց արգելված, թույլատրելով միայն քրիստոնեական գրականության ընթերցումը:

12-րդ դարում Շեյխ Ադին, եզդիական կրոնի հիմնադիրը, երբ հարձակվեց Շանգալի լեռների մեջ գտնվող սիրիական ս. Յովհաննու վանքի վրա, խլեց այն և հայտարարեց եզդիական մայր աթոռ-Լալըշ: Բայց նա էլ իր հերթին, երբ սիրիական հոգևորականությունն սկսեց խոսքով և գրականությամբ հարձակումներ գործել եզդիական կրոնի, հոգևորականության և ժողովրդի վրա, առհասարակ գիրն ու գրականությունը՝ ինչ ձևով էլ այն լիներ, հայտարարեց պիղծ:

Այդ օրվանից եզդի ժողովուրդը անջրպետվեց գրից ու գրականությունից: Եզդիական միակ գիրքը՝ Ջելվան և Քիթաբե Ռաշը (Բիբլիան) Լալըշում դրվեց փականքի տակ. ոչ ոք իրավունք չուներ այն բանալու և կարդալու, իբրև սրբություն, ամուր կապկապած մետաքսյա





ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՌԱՆՑ ՔԱՂԱՔՆԵՐԻ

| [illegible] | Հայեր - Армяне | | | Թուրք-թաթարներ - Тюрко-татары | | | Ռուսներ — Русские | | | Եզդիներ Езиды | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արական Муж. п. | Իգական Жен. п. | Ընդամենը Итого | Արական Муж. п. | Իգական Жен. п. | Ընդամենը Итого | Արական Муж. п. | Իգական Жен. п. | Ընդամենը Итого | Արական Муж. п. | Իգական Жен. п. | Ընդամենը Итого |
| [illegible] | 7488 | 6262 | 13750 | [illegible] | [illegible] | 1245 | 206 | 198 | 404 | 85 | 79 | 164 |
| 1 | 6889 | 6187 | 13076 | 840 | 716 | 1556 | 191 | 200 | 391 | 134 | 123 | 257 |
| 2 | 8833 | 8407 | 17240 | 875 | 833 | 1708 | 229 | 220 | 449 | 136 | 116 | [illegible] |

*Աղյուսակ՝ «Յայաստան՝ առանց քաղաքների»: Այստեղ կարևորն այն է, որ հայերի թուրքթաթարների և ռուսների հետ որպես առանձին ազգ հիշվում են նաև եզդիները:*

քաշկինակների մեջ, ամենքն էլ պետք է մերձենային նրան միմիայն շրթունքներով և համբույրներով: Նրան մարդկային ձեռք չպիտի դիպչեր: Այդպես էլ շարունակվեց մինչև մեր օրերը: Եզդիների ներկա կրոնապետը՝ Միրե-Միրան Իսմայիլը, որ մի բացառիկ լուսամիտ մարդ է, դարասկզբին որոշեց վերացնել այդ անաթեման (անեծքը, արգելքը) և ժողովրդին հնարավորություն տալ հաղորդակից լինելու մարդկային ամենամեծ բարիքներին՝ գրին ու գրականությանը:

Սակայն պատերազմի արհավիրքները խանգարեցին մեծ վերանորոգչին՝ իրականացնել իր բարձր իղձերը: Վերջապես 1918 թվին նա մի հրովարտակ է հրապարակում, եզդիական կյանքում մի փառավոր դարագլուխ է բացում: Այդ հրովարտակով նա վերացնում է նախկին բոլոր արգելքները և «քյաֆուր» հայտարարում նրանց, որոնք արգելք կհանդիսանան գրի և գրականության տարածմանը: Յրովարտակը վավերացնում են Լալըշի 14 հայտնի շեյխերն՝ իրենց կնիքներով:

Խորհրդային իշխանությունը որպես նախանձախնդիր բոլոր փոքր ազգերի ինքնուրույն զարգացման, ընդա-



*Ահա նա մի փաստաթղթի պատճենը, որը հավաստում է մեր իրավացիությունը:*



| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|
| [illegible] | 71.420 | ... | 70.044 | 416 | [illegible] |
| [illegible] | 242.900 | 0.17 | 219.484 | 181 | 222 |
| [illegible] | 840 | ... | 570 | 269 | 1 |
| [illegible] | 18.218 | ... | 18.154 | 61 | |
| [illegible] | 1.567.568 | 1.07 | 1.449.120 | 117.127 | 20.821 |
| [illegible] | 1.703.600 | 1.16 | 1.601.640 | 96.931 | 1.047 |
| [illegible] | 56.957 | ... | 47.819 | 9.129 | 111 |
| [illegible] | 21.471 | ... | 21.379 | 91 | [illegible] |
| [illegible] | 9.808 | — | 8.986 | 837 | 400 |
| [illegible] | 54.881 | ... | 18.610 | 36.077 | [illegible] |
| [illegible] | 14.596 | — | 14.008 | 507 | [illegible] |
| [illegible] | 77.828 | ... | 75.599 | 328 | — |
| [illegible] | 28.705 | ... | 24.999 | 3.777 | [illegible] |
| [illegible] | 48.071 | — | 39.787 | 13.014 | [illegible] |
| [illegible] | [illegible] | 2.71 | [illegible] | [illegible] | [illegible] |
| [illegible] | [illegible] | 0.52 | [illegible] | [illegible] | 141 |
| [illegible] | [illegible] | ... | [illegible] | [illegible] | [illegible] |
| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | 14.773 | [illegible] |
| [illegible] | 763.540 | 0.52 | 743.540 | [illegible] | [illegible] |
| [illegible] | 240.700 | 0.16 | [illegible] | 421 | [illegible] |
| [illegible] | 237.601 | 0.16 | [illegible] | [illegible] | [illegible] |
| [illegible] | [illegible] | 100 | [illegible] | [illegible] | [illegible] |

*Տեղեկություններ ազգությունների մասին, որտեղ տարբերակված են եզդիներն ու քրդերը:*

ռաջ է գնում եզդի ժողովրդի բարձր ձգտումներին, հրապարակում է առաջին անգամ աշխարհում եզդիական մայրենի լեզվով «Շամս» դասագիրքը և բացում հատուկ դպրոցներ:

Սակայն, մի կողմից հին նախապաշարումները, մյուս կողմից հակառակ դասի կրոնավորների հակաքարոզները թույլ չեն տալիս, որ կրթական գործը մեծ քայլերով առաջ գնա: Եզդի ժողովուրդը պետք է գիտակցի կրթության մեծ նշանակությունը, պետք է գիտակցի, որ կյանքի պայմաններն այլևս նախկինը չեն, առանց գրի և գրականության այլևս փոքր ազգությունները չեն կարող պահպանել իրենց ինքնուրույն գոյությունը:

Մի շարք փաստերով և կենդանի օրինակներով ևս հիմնավորելով իր ասածները, ընկեր Լազոն հորդորում է ամեն կերպ աշխատել մայրենի դպրոց բացելու և եզդի մանուկներին կրթելու, դաստիարակելու գործով»:

Եզդիների 2-րդ համագումարը տեղի ունեցավ 1926 թվականին: Համագումարը նախկինի նման քննարկեց կարևոր հարցեր, ընդունեց կարևոր որոշումներ: Բայց այդ արժանահիշատակ օրերից հետո անցան օրեր, տասնամյակներ, ու եզդիների ձայնն այլևս չլսվեց, որովհետև բռնակալական ռեժիմը զրկում էր ազգային արժանապատվությունից, խաքարում մարդկանց հոգիները:

1988 թվականի պատմական իրադարձությունները, եզդիների ազգային զարթոնքը նոր խնդիրներ էին առաջադրել: Եզդիները վերագտել էին իրենց, խոսում, պոռթկում էր ազգի ոգին: Անհրաժեշտ էր ոգու այդ կրակը թեժ պահել: Եվ եզդիների ազգային միությունը որոշեց անցկացնել



իր երրորդ՝ հերթական համագումարը: Ստեղծվեց նախաձեռնող խումբ, որի կազմում ընդգրկվեցին ԱԶԻԶ ԹԱՄՈՅԱՆԸ, ՀԱՍԱՆ ԹԱՄՈՅԱՆԸ, ՔՅԱՐԱՄ ԱՎԴՈՅԱՆԸ, ՋԱՍԵՄ ՄԱՄՈՅԱՆԸ, ԲՌՈ ՇԱՄՈՅԱՆԸ, ՀԱՍԱՆ ՖԱՐԸՋՅԱՆԸ: Նախաձեռնող խումբը հսկայական ջանքեր գործադրեց համագումարի նախապատրաստման, հրավիրման, անցկացման հաջողությունն ապահովելու համար:

1989 թվականի սեպտեմբերի 30-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի եզդիների հերթական՝ 3-րդ համագումարը, որին մասնակցում էին հանրապետության բոլոր շրջաններից եկած 600 պատգամավորներ, բազմաթիվ հյուրեր: Հյուրերի թվում էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ՝ Հրաչիկ Սիմոնյանը, հայտնի արևելագետ, պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանը, հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր Խաչիկ Ստամբոլցյանը, ԽՍՀՄ արևելագիտության ինստիտուտի Կովկասի բաժնի վարիչ Սերգեյ Հարությունովը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Սարգիս Մուրադյանը, բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, Մատենադարանի գիտաշխատող Նիկոլայ Գրիգորյանը, «Երեկոյան Երևան» թերթի խմբագիր Կամո Վարդանյանը, ՀԿԾ վարչության անդամ Երջանիկ Աբգարյանը և շատ ուրիշներ:

Համագումարը ղեկավարում էր չորս հոգուց բաղկացած նախագահությունը՝ Ազիզ Թամոյան, Գառնիկ Ասատրյան, Ռազմիկ Դավոյան, Քյարամ Ավդոյան:




*Երրորդ համագումարի նախագահությունում:*

«Ազգային ինքնաճանաչման ոգին» զեկուցումով հանդես եկավ Ազիզ Թամոյանը: Այնուհետև ելույթներ ունեցան Արզնու 2-րդ առողջարանի գլխավոր բժշկի տեղակալ Ռզա Ավդալյանը, Հասանե շեխ Քյալաշեն, ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության Կովկասի բաժնի վարիչ Սերգեյ

Յարությունովը, Յրաչիկ Սիմոնյանը, Սարգիս Մուրադյանը, Խաչիկ Ստամբոլցյանը, Գառնիկ Ասատրյանը, Յայոց համազգային շարժման ներկայացուցիչ Երջանիկ Աբգարյանը, բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, Արմավիրի շրջանի Երասխահուն գյուղի բնակիչ Յասան Ֆարըզյանը, Ֆատե Ջահանգիր աղան:

Յամագումարն ընդունեց «Յռչակագիր», որի մեջ մասնավորապես ասված է.

«...Դարեր շարունակ հալածվելով բարբարոս թուրքերի և այլոց միջավայրում, եզդիներն իրենց պատմության մեջ աննախադեպ բարենպաստ պայմաններ գտան հայկական հողում: Արևելյան Յայաստանի տարածքում նրանք սկսեցին հիմնավորվել 19-րդ դարում: Յայ ժողովրդի բարի կամքի, իսկ հայկական պետականության վերականգնումից հետո նաև կառավարական ամենալայն աջակցության շնորհիվ եզդիները հասան մեծ հաջողությունների՝ կյանքի բոլոր բնագավառներում: Բարձրացել է եզդիների կենսամակարդակը, ծաղկել են մշակույթն ու կրթական գործը: Զգալիորեն ավելացել է եզդի ժողովրդի թվաքանակը:

Այս համագումարը, սակայն, գումարվել է ոչ միայն ի մի բերելու մեր նվաճումները, այլև նախանշելու հայոց հողում մեր զարգացման ուղիները: Դրա առաջին նախապայմանը Ջահանգիր աղայի ու Ուսուբ բեկի պատգամներին հետևելն է և հայ-եզդիական բարեկամությունը ամեն կերպ ամրապնդելը:



*Երրորդ համագումարի մի խումբ մասնակիցներ*



...եզդիների համագումարը գտնում է, որ եկել է ժամանակը՝ վերջ տալու ստալինյան դարաշրջանից ժառանգած այն իրողությանը, ըստ որի եզդիներին անվանում են քրդեր: Եզդիներն իրենց համարում են եզդիներ: Մեզ այդպես են ճանաչում դարեր ի վեր մեր հարևան բոլոր ժողովուրդները՝ հայերը, պարսիկները, արաբները, քրդերը, վրացիները, թուրքերը: Պաշտոնական բոլոր ատյաններում մեզ քուրդ անվանելը մեզ համար անընդունելի է: Մենք պահանջում ենք Յայաստանի համապատասխան մարմիններից՝ վերջ տալ անարդարությանը և մեր ժողովրդին կոչել իր անունով:

ԵԶԴԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՅԱՎԱՍՏԻԱՑՆՈՒՄ Է, ՈՐ ԻՆՔԸ ԲԱՐՁՐ ԿՊԱՅԻ ԻՐ ԲԱՐԳԱՎԱճՄԱՆ ՅԻՄՔԸ ՅԱՆԴԻՍԱՑՈՂ ՅԱՅ-ԵԶԴԻԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԸ»:

Յռչակագիրը շրջադարձային նշանակություն ունեցավ հանրապետության եզդիների կյանքում և դարձավ մեր ժողովրդի արդարացի պահանջի ընդհանրական ձայնը:

Իմ ելույթը համագումարում բխում էր «Յռչակագրի» դրույթներից և դրա ընդարձակ տարբերակից կուզենայի հատվածներ վերհիշել, որովհետև դրանք իրենց կարևորությունը այսօր էլ չեն կորցրել:

Ահա այն. «Յայաստանի եզդիների ազգային միությունը գործում է Յայաստանի, Լեռնային Ղարաբաղի համար ծանր ժամանակներում: Խորապես գիտակցելով պահի լրջությունը և հայ ժողովրդի մղձավանջային վիճակը՝ մենք, այնուամենայնիվ, հրավիրեցինք մեր համագումարը, հավաքվեցինք՝ բարձրացնելու և քննարկելու ոչ միայն եզդի ժողովրդի ազգային խնդիրները, հետադարձ հայացք գցելու նրա անցած ուղու վրա, մտորելու նրա ապագայի, նրան հուզող հարցերի, ազգային հավաքականության և ազգային դիմագիծը պահպանելու մասին, այլև մեր ուժերը համախմբելու և գործնական ծրագիր մշակելու, մեր եղբայր հայ ժողովրդին աջակից լինելու, հանդես բերելու մեր համեստ ավանդը նրան այս վիճակից հանելու համար: Իսկապես դաժան ու անհանգիստ օրեր են ապրում մեր հանրապետությունը, ողջ հայությունը, և օգտվելով ընձեռված հնարավորությունից, իմ պարտքն եմ համարում ողջ եզդի ժողովրդի անունից դատապարտելու Սումգայիթի կազմակերպված ոճրագործությունը, Ադրբեջանի հայ ազգաբնակչության նկատմամբ չդադարող ավազակային ջարդերն ու բռնությունը, տեղահանումը հայրենի օջախներից: Մենք պահանջում ենք Ադրբեջանի հայության կյանքի անվտանգության ապահովումը, այդ ուղղությամբ բոլոր հնարավոր միջոցների անհապաղ գործադրումը, Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի և անհապաղ լուծումը: Միաժամանակ խստագույնս դատապարտում ենք ԼՂԻՄ-ի և աղետյալ Յայաստանի ամոթալի շրջափակումը: Մենք համոզված ենք, որ վաղ թե ուշ, այս ամենն իրենց քաղաքական գնահատականը կստանան առաջադեմ մարդկության կողմից:

Մեր բազմաչարչար ժողովուրդը գալիս է դարերի խորքից, ձևավորվել ու կազմավորվել է միջնադարում: Իր բնօրրանում՝ Սինջարի լեռնաշխարհում, մեր ժողովուրդը դարեր շարունակ կենաց ու մահու պայքար է մղել օտար բռնակալների դեմ, պահպանելով իր ազգային ինքնությունը, դավանանքը, սովորությունները, մշակույթը: Կուզենայի հատկապես նշել մեր ժողովրդի գոյապահպանման հանրահայտ ճշմարտությունը. դա նախնիներից մեզ ժառանգված կրոնն է, որն ամուր զենք է եղել դարեր ի վեր մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված հակառակորդների դեմ պայքարում: Մեր կրոնը մշտապես քարոզել է մարդկայնություն, հարգանք բոլոր ժողովուրդների և կրոնների հանդեպ, բարություն, մաքրություն և ազնվություն: Ահա թե այդ մասին ինչ է գրում մեր ժողովրդի մեծ բարեկամ, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը. «Նրանք (եզդիները) չեն ժխտում ոչ մի կրոն, ոչ մի օտար դավանանք, ընդհակառակը, ամենամեծ հարգանք ու պարտք են տածում դրանց նկատմամբ... Նույնիսկ ոչ մի լուսավոր քրիստոնեական աղանդ չունի նման հարգանք օտարականների հանդեպ, ինչպես նրանք, և այնպիսի համեստ կարծիք իրենց մասին, ինչպես կրկին նրանք»:

Մեր կրոնը ոչ միայն դավանանք է, այլև աշխարհայացք, այն մեր ազգային աշխարհըմբռնման հիմքն է, մեր հոգեբանությունն է, մեր կենցաղը: Այսօր ես չեմ ուզում պատմական դեգերումներ կատարել, ծեր ուշադրությունը ծանրաբեռնել պատմական փաստերով, սակայն, այնուամենայնիվ, պետք է ասեմ, որ եզդի ժողովրդի անցյալը լի է տառապանքներով, խիզախումներով և մաքառումներով: Ապրելով մահմեդական տարածաշրջաններում, մեր ժողովուրդը ահավոր փորձությունների է ենթարկվել և ունեցել դառն ճակատագիր: Սինջարի անառիկ լեռնաշխարհում եզդիները պայքարի փայլուն էջեր են արձանագրել ընդդեմ այլակրոն թշնամիների՝ թուրքերի և նրանց կողմից մոլորեցված քրդերի: մեր ժողովրդի գոյությունը առավել վտանգի տակ դրվեց օսմանյան տիրապետության շրջանում: Ելնելով քաղաքական նպատակներից, թուրքերը մեր ժողովրդին անվանեցին անդավան, սատանայապաշտ, սատանայի հետնորդ: 16-17-րդ դարերից սկսած, օսմանյան կայսրության մահմեդական բարձրաստիճան հոգևորականությունը պարբերաբար սկսեց հրապարակել «անհավատ» եզդիների դեմ ուղղված ֆեթվաներ և սրբազան պայքարի կոչեր: Քիչ չեն եղել դեպքերը, երբ շատ եզդիներ, խուսափելով հալածանքներից, հարկադրված դավանափոխ են եղել և ընդունել այլ հավատ, հատկապես մահմեդականություն: Այդ ամենի հետևանքով, բնականաբար, գնալով նվազել է եզդիների թիվը:

Բացի այդ, բռնություններն ու կամայականությունները հարկադրել են ժողովրդին՝ հեռանալու հայրենի բնաշխարհից և հաստատվելու հարևան ժողովուրդների տարածքներում: Արտագաղթի այդ գործընթացը, ինչպես վկայում են պատմագրական նյութերը, սկսվել է դեռևս 14-15-րդ դարերից և ավելի զանգվածաբար շարունակվել հետագա դարերի ընթացքում:



Խուսափելով օսմանյան դաժան կայսրության ազգահալած քաղաքականությունից, եզդի ժողովուրդը փրկության ափեր որոնեց բախտակից և եղբայր հայ ժողովրդի գրկում, որի հետ մշտապես պահպանել է ջերմ հարաբերություններ: Դեռևս 19-րդ դարի սկզբներին սկսվեց եզդիների առաջին արտագաղթը դեպի Արևելյան Հայաստան, որտեղից էլ նրանք հետզհետե տարածվեցին Անդրկովկասի տարբեր մասերում: Այդ արտագաղթը շարունակվեց համարյա ողջ 19-րդ դարի ընթացքում և իր գագաթնակետին հասավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ արևմտահայության 1915 թվականի ցեղասպանությունից հետո, արևմտահայերի հետ միասին, եզդիների մի մասը ապաստանեց Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում:

Հայկական կոտորածների դժխային այդ օրերին եզդիները, իրենց կյանքը վտանգելով, օգնության ձեռք մեկնեցին դարավոր բարեկամներին՝ հայերին: Այո, բազմադարյան պատմության ընթացքում մեր երկու բարեկամ ժողովուրդները գրել են ազգային-ազատագրական համատեղ պայքարի հիշարժան և փայլուն էջեր: Այսօր ես չեմ կարող չնշել այնպիսի հերոսների անուններ, ինչպիսիք են եզդի Միրզա աղան (Շեխ Միրզա) և մեզ համար հոգեհարազատ հայ Պողոս քահանան՝ Քեշիշ Պոլոն, նրանց համատեղ անձնուրաց պայքարը օսմանյան կայսրության մեծաքանակ զորքերի դեմ:

1828թ. Ռնդովանի մոտերքում, Մոսուլից ոչ հեռու, Միրզա աղան և Քեշիշ Պոլոն, 10 հազարանոց հայ-եզդիական զորքով կռվեցին թուրք-քրդական 30-հազարանոց բանակի դեմ: Անհավասար և ահեղ մարտերում նրանք ելան կենաց և մահու պայքարի և ոչ միայն դիմադրեցին, այլև հաղթեցին եռակի անգամ գերազանցող հակառակորդին, ոչնչացրին թշնամու գրեթե ողջ բանակը՝ քաջության հրաշքներ ցույց տալով: Իր հայ բարեկամների՝ Ռնդովան քաղաքի ուսուցիչ Պետրոս Խազարովի և Կիրակոս Առաքելովի միջոցով Միրզա աղան նույնիսկ կապեր հաստատեց Կովկասյան առանձին կորպուսի գլխավոր հրամանատար, գեներալ-ֆելդմարշալ կոմս Պասկևիչի հետ: Եզդի առաջնորդի համար այնքան հարազատ է եղել հայ ժողովուրդը, հայկական միջավայրը, որ նա իր զավակներին կրթության է տվել հայ ուսուցիչների մոտ:

Շեխ Միրզայի, Պողոս քահանայի և նրանց զինակիցների կերպարները, հայ-եզդիական համատեղ պայքարը խոր հետքեր են թողել ժողովրդական զանգվածների մեջ:

Անմահ հերոսների մասին ռազմերգեր, զրույցներ, լեգենդներ են հյուսվել և պատմվել սերնդե-սերունդ: Դրանք հայերի և եզդիների ազգային-ազատագրական պայքարի հերոսամարտերին, համատեղ սխրանքներին նվիրված փառավոր կոթողներ են:

Չեմ կարող առանձնահատուկ կերպով չնշել նաև պատմական մեկ այլ հիշարժան իրողություն, որն իր հերթին հաստատում է մեր երկու ժողովուրդների ամուր բարեկամությունը: Դեռևս 1918 թվականին

Հայաստանի երիտասարդ հանրապետության ուշադրությունից դուրս չմնաց մեր ժողովուրդը:

Նորաստեղծ հայոց խորհրդարանը հատուկ տեղ հատկացրեց եզդիներին, որոնց ներկայացուցիչը դարձավ Ուսուբ բեկը: Եզդի ժողովրդի արժանավոր զավակներից էր նա, որի անունը սրբությամբ է հիշում յուրաքանչյուր եզդի: Նա եղել է դարասկզբի ամենամեծ հեղինակություններից, եղել է ժողովրդի շահերի պաշտպանը, նրա շահերը ներկայացնողը՝ բոլոր ատյաններում:

Ուսուբ բեկի մասին տեղեկությունները կցկտուր են: Հայտնի է, որ դեռևս 1909 թվականին հայկական մամուլում հաղորդագրություն հրապարակվեց այն մասին, որ միր Իսմայիլը բոլոր եզդիների գլխավոր և իր ներկայացուցիչն է նշանակում Ուսուբ բեկ Թեմուրյանին:

Ուսուբ բեկի նախնիներին նվիրված մի շարք հոդվածներ են տպագրվել հայկական մամուլում: Հիշվում են նրա նախնիներ Մահմուդ, Բաքըր, Դաուդ, Ղալանդար, Օսման, Հըսեն, Թամըր աղաները, որոնց արմատները հասնում են դարերի խորքը: 1909 թվականին իր նախնիներից առաջնորդի կարգավիճակն ստանձնել է Ուսուբ բեկը, որը եզդի ժողովրդին արժանիորեն ներկայացրեց հայոց առաջին հանրապետության խորհրդարանում՝ 1918 թվականին: Ականատեսների վկայությամբ և սերունդների հիշողության մեջ նա մեկուկես-երկու տարում անգնահատելի օգնություն է ցույց տվել իր ժողովրդին:

Ուսուբ բեկն ապրեց մինչև 1934 թվականը: Նրա աճյունն ամփոփվեց Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղի եզդիական գերեզմանոցում: Անցել են տարիներ, սակայն միշտ վառ է մնացել Ուսուբ բեկի հիշատակը: Նրա գերեզմանը ուխտավայր է դարձել Հայաստանում ապրող եզդիներկ համար:

Հայ և եզդի ժողովուրդների դարավոր բարեկամության խորհրդանիշ է բոլորին քաջածանոթ Զորավար Անդրանիկի և եզդի ժողովրդի մեկ այլ արժանավոր զավակի՝ Ջահանգիր աղայի ռազմական համագործակցությունը՝ թուրքերի դեմ մղված կռիվներում: Զորավարն ու Ջահանգիր աղան քաջագործության, սխրագործության նոր, ոսկե էջեր գրեցին մեր երկու ժողովուրդների պատմության մեջ:

Ջահանգիր աղան ծնվել է 1874 թվականին, Վանի նահանգի Բերկրի գավառի Չիբուխլի գյուղում, եզդիների ցեղապետ Խատիֆ աղայի ընտանիքում: Տեսնելով թուրք ջարդարարների բարբարոսությունները, պատանի հասակից նա ընդվզեց բռնակալների դեմ: 1904 թվականին Վանի նահանգի Հազարան գյուղում առաջին անգամ հանդիպեցին փառաբանված Զորավարն ու Ջահանգիր աղան: Անդրանիկն իմանալով, որ Ջահանգիր աղան նշանված է, ցանկություն է հայտնում դառնալ նրա հարսանյաց քավորը: Այդ օրվանից սկսվում է նրանց բարեկամությունը: Ջահանգիր աղան իր միջոցներով զենք է ձեռք բերում, հայթայթում է ռազմամթերք և բաժանում եզդիներին ու հայերին: Գաղթի ժամանակ նա ժողովրդին ուղեկցել և նրա անվտանգությունն ապահովել են հայ ֆիդայիները և Ջահանգիր աղայի ջոկատները, որոնք բազմիցս ետ են մղել թուրքերի գրոհները: Ընդհարումներից մեկի ժամանակ Ջահանգիր աղան վիրավոր է լինում և սպանում արյունարբու թուրք Ֆերիկ փաշային: Հայկական և ռուսական զորամասերի հետ Ջահանգիր աղայի ջոկատները մասնակցեցին Կարսի, Սարիղամիշի կռիվներին: Քաջության և խիզախության համար Ջահանգիր աղան պարգևատրվեց Գեորգիևյան խաչով: Սարդարապատի ճակատամարտի օրերին Ջահանգիր աղան և նրա զինյալները, իրո՛ք, անգնահատելի գործ կատարեցին, նպաստեցին հայերի հաղթանակին: Ջահանգիր աղայի անունը ընդմիշտ կապվեց Բաշ-Ապարանի, Սարդարապատի անունների, հաղթանակի հետ: Հետագայում նա ապրել է Արագածի շրջանի Ջարջառիս գյուղում (այժմ՝ Դերեկ): Այստեղից էլ 1938 թվականին նրան ձերբակալեցին, աքսորեցին Սիբիր, որտեղից նա այլևս չվերադարձավ: Հայոց սպարապետ Թովմաս Նազարբեկյանը Ջահանգիր աղայի մասին ասել է. «Նրա անունը պարտադիր պետք է դրվի ոչ միայն եզդի, այլև հայ նշանավոր հերոսների և անունների հետ միևնույն շարքում»:

Մեր երկրի նորացման, բացախոսության և դեմոկրատացման գործընթացները, անշուշտ նաև Արցախի իրադարձությունները, հայ ժողովրդի պայքարը բացեցին նաև ժողովրդի ցավերը, բարոյական խարիսխ ստեղծեցին արդարությունն ու ճշմարտությունը վերականգնելու համար:

Մեր՝ եզդիների համահայաստանյան 3-րդ համագումարի կենտրոնական և առաջնահերթ խնդիրը դարձավ վերադարձը դեպի ազգային արմատները, դեպի եզդիական ազգային դիմագծի ու կարգավիճակի վերականգնումը, թոթափելով ստալինյան բռնատիրության տարիներին մեզ պարտադրված և մեր ազգային արժանապատվությունը վիրավորող կաշկանդումները: Հնարավոր դարձավ ի լուր աշխարհի հայտարարել, որ եզդին եզդի է հենց իր ազգությամբ և էությամբ: Թե՛ համագումարը, և թե՛ եզդիների ազգային միությունը միաժամանակ իրենց որոշումներով ու հստակ քայլերով նպաստեցին ազգային միասնության վերականգնմանը, ազգային մշակույթի զարգացմանը, հայ և եզդի ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը:

Համագումարն ունեցավ պատմական նշանակություն, և, կասկած չկա, որ տարիներ հետո նրա նշանակությունն ավելի կիմաստավորվի:

Հայաստանի եզդիների երրորդ համագումարը հանրապետության զանգվածային լրատվության միջոցների կողմից լայնորեն ներկայացվեց ու մեկնաբանվեց:

Համագումարը խնդրեց հանրապետության նախարարների խորհրդին՝ թույլատրել Երևանում կամ մայրաքաղաքին մոտ ունենալ ազգային-մշակութային կենտրոն, պետական բանկում ունենալ հատուկ հաշիվ:

Համագումարը ոգևորությամբ ձեռնամուխ եղավ ազգային կազմակերպության վարչության կազմի ընտրություններին: Ղեկավար կազմի առաջին անդամներ ընտրվեցին.

Մրազե Նամո, Բրոյե շեխ Դավրեշե, Մշիրե Ահմադ, Ջասըմե շեխ Ագիտե, Փաշե փիր Սավտո, Այյասե փիր Ռաշո, Գոգոե շեխ Մնատե, Ալիխանե շեխ Բրո, Շամոյե շեխ Դավրեշե, Մահմուդե փիր Ալիե, Խալոե շեխ Աֆանդիե, Ուսըվե Ալի, Խուդոե Գուրջիս, Թոռունե Տոսուն, Սաիդե Ասո, Մամե Սլո, Քյարամե Սլո, Ազիզ Թամոյան, Քյարամե Ասո, Ջասըմե Հըսե, Թեմուրե Հասան, Հասանե Գոգո, Ջնոյե Թոզո, Կոտեե Ամո, Շուկուրե Քյարամ, Ֆատլայե Ջահանգիր աղա, Հասանե շեխ Քյալաշե, Մահմուդե շեխ Սլո, Ահմադե շեխ Ասլանե, Մամե շեխ Ռաշո, Արըֆե Սըմո, Սահմանդե Ավդի, Այլազե Բրո, Ահմադե Ամար, Խդրե Աթեր, Ուսկե Սայիդ, Ահմադե Ալի, Ուսըվե Ալի, Հսոյե Ֆատո, Ուսըվե Ջավո, Փաշիկե Մլազըմ, Խդրե Մլազըմ, Միե Կակե, Մամե Ավդո, Աթե Ամո, Ռզայե Հըսնի, Տիարե Հասո, Ալիե Հասան, Ուսե Աթեր, Ահմադե Լուլո, Զազոե Լուլո, Ագիտե Արաբ, Սաիդե Ուսըվ, Հպե Սանո, Ռաշե Չոլո:

Վարչության նախագահ ընտրվեց Ազիզ Թամոյանը:

Վարչության առաջնահերթ խնդիրներից էր՝ կատարել համագումարի որոշումը՝ ունենալ թերթ և ռադիոհաղորդումների ժամ: Այդ հարցերը շուտով լուծվեցին դրականորեն:

Ազգային միությունը նպաստեց Հայաստանի եզդի հոգևորականների համաժողովի անցկացմանը, որը տեղի ունեցավ 1992 թ. հոկտեմբերի 21-ին, Նաիրիի շրջանի Զովունի գյուղի մշակույթի պալատում:

Համաժողովում նախագահեց Ազիզ Թամոյանը, քարտուղարն էր Երևան քաղաքի բնակիչ Ասլան Ավդոյանը:

Հոգևորականների համաժողովում ելույթով հանդես եկավ շարժման ակտիվ մասնակից Հասանե Քյալաշը:

Շեխերն ու փիրերն ընտրեցին 15 հոգուց բաղկացած հոգևոր խուրհուրդ, որի առաջին անդամները դարձան.

Բրոյե շեխ Դավրեշե, Մահմուդե շեխ Սլո, Ջասըմե շեխ Ագիտե, Հասանե շեխ Քյալաշե, Ահմադե շեխ Ասլանե, Փաշե փիր Սավտո, Այյազե փիր Ռաշո, Գոգոե շեխ Մնատե, Ալիխանե շեխ Բրո, Շամոե շեխ Դավրեշե, Մահմուդե փիր Ալիե, Ռաշիդե շեխ Միրզաե, Քյարամե շեխ Ասո, Ջասըմե շեխ Հսե, Խալոե շեխ Աֆանդիե:

Հոգևոր խորհուրդը ժամանակավոր նախագահ ընտրեց Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղի բնակիչ Հասանե շեխ Քյալաշեին: ժամանակավոր, քանի որ արտասահմանում, հատկապես Իրաքում ապրող եզդի հոգևոր առաջնորդների հետ այն դեռևս համաձայնեցված չէր:

Եզդիների միության առաջնահերթ խնդիրներից էր նաև ֆինանսական ապահովման հարցը: Միջոցներ էին անհրաժեշտ և՛ թերթի տպագրության, և՛ ռադիոհաղորդումների, և՛, իհարկե, կադրերին վճարելու համար:

Ֆինանսական միջոցներ ձեռք բերելու համար ազգային միության ղեկավարությունը 1989 թվականի հոկտեմբերի 30-ի նիստում որոշեց դիմել ժողովրդի օգնությանն ու աջակցությանը: Եվ երախտագիտությամբ պետք է նշել, որ շուտով մեր ժողովուրդն իր խնայողություններից միության



հաշվին փոխանցեց այն ժամանակվա համար բավականին խոշոր գումար: Բացի այդ, և սա պետք է հատկապես շեշտել, Ամենայն Հայոց Կաթողիկոսը նույնպես օգնության ձեռք մեկնեց եզդիների ազգային միությանը՝ նվիրաբերելով 30 հազար ռուբլի: Մեր հայրենակից, ռուսաստանցի ձեռնարկատեր Միրզաե շեխ Ռոստամը մեր միությանը տրամադրեց 70 հազար ռուբլի:

1989 թվականի դեկտեմբերի 15-ին տեղի ունեցավ մի կարևոր նիստ ևս, որտեղ ելույթ ունենալով, առաջարկեցի երկար տարիների ընդմիջումից հետո առաջին անգամ հանդիսավորությամբ նշել ազգային կարևորագույն տոներից մեկը՝ «Այդա էզդիդը», հանրային հանրապետության հեռուստատեսությանը խնդրել, որ տոնը տեսագրվի և եթեր տրվի: Դեկտեմբերի 23-ին Զովունի գյուղի Ամո թաղամասում, հանդիսավոր պայմաններում, նշվեց տոնը, այն տեսագրվեց ու ցուցադրվեց հեռուստատեսությամբ: Այն ժամանակների համար դա եզակի երևույթ էր, որի սպառիչ գնահատականը դեռևս տրված չէ: Տեսագրությունը եթեր տրվելուց հետո եզդիներն ավելի վստահ զգացին իրենց, է՛լ ավելի համախմբվեցին, եզդիների ազգային սովորույթների նկատմամբ հետաքրքրությունն ավելի մեծացավ:

Եզդիների համախմբման, հայ ժողովրդին սատար կանգնելու իսկական փորձաքար դարձավ 1988 թվականի աղետաբեր երկրաշարժը: Ոչ միայն հարյուր հազարավոր ռուբլիների դրամական և նյութական օգնություն ցույց տրվեց աղետյալներին, այլև հարյուրավոր եզդի երիտասարդներ կազմակերպված ու միասնաբար մասնակցեցին աղետի գոտու փրկարարական աշխատանքներին:

Մեկ շաբաթից ավելի Սպիտակում փրկարարական աշխատանքների են մասնակցել Սուտո Ավդալյանը, Օմար Ավդալյանը, Ալիկ Թամոյանը, Շիրին Թամոյանը, Սուրիկ Խանշոյանը, Ահմադ Թամոյանը, Զազո Հաջոյանը, Մահմուդ Հաջոյանը, Քյալաշ Նամոյանը, Ալո Կարոյանը, Ալի Միոյանը, Քյարամ Միոյանը, Իսմայիլ Միոյանը, Հասան Թաթոյանը, Մամե Ջալիլյանը և շատ ուրիշներ:

Միայն Զովունի գյուղի Ամո թաղամասի եզդիները 250 հազար ռուբլի փոխանցեցին աղետյալների համար բացված հատուկ հաշվին: Այս ամենից բացի շատերն իրենց ընտանիքներում պատսպարեցին աղետի գոտու բնակիչներին, ջերմությամբ ու հոգատարությամբ շրջապատեցին նրանց: Երկու տարի իմ բնակարանում ապրեց Վիլիկ Մաշակարյանի հինգ հոգանոց ընտանիքը: Հետո ես խնդրեցի համապատասխան մարմիններին, որպեսզի այդ ընտանիքին տնամերձ հատկացնեն: Խնդրանքս չմերժվեց: Հիմա Մաշակարյանների ընտանիքը վերածնվել է. ունի իր տունը, տեղը, հողը: Սա միայն մեկ օրինակ է: Նման ընտանիքներ, որ այն ծանր օրերին հյուրընկալվեցին եզդիների մոտ, շատ-շատ են:

Ուզում եմ հիշել ևս մի դեպք: Այդ օրերին, երբ մեր ուշադրությունը գամված էր աղետի գոտուն, Մոսկվայից՝ ԽՍՀՄ դատախազությունից, մի խումբ էր եկել Հայաստան, որն «զբաղվում» էր ՀՀՇ-ի ղեկավարների գործերով: Որոշ «քուրդ» մտավորականներ հասցրել էին իմ մասին հայտնել նրանց, որ ես, իբր, զբաղվում եմ ազգի պառակտումով և ազգային թշնամանք տարածելով: Այդ խումբն ինձ կանչեց հանրապետության դատախազություն և պահանջեց բացատրություն տալ: Նրանց խոսակցությունից և հետագայում իրազեկ մարդկանցից իմացա, թե ովքեր են ինձ ամբաստանել: Մոսկվայից եկած պաշտոնյաներն ինձանից պահանջեցին հրաժարվել ազգային գործունեությունից, ապա թե ոչ՝ ես կազատազրկվեի: Երբեք չեմ մոռանա այն պահը, երբ ռուս պաշտոնյաները ցանկանում էին ինձ ստիպել ետ կանգնելու եզդիների իրավունքների պաշտպանության պայքարից: Մի քանի հարյուր մարդ դրսում, Բրոյե շեխ Դավրեշի ղեկավարությամբ, ի պաշտպանություն ինձ, միտինգ էին անում: Կենտրոնի դատախազության աշխատողները իմ երկարատև ու մանրամասն բացատրությունները լսելուց հետո, ինչպես նաև անցած մարդահամարների նյութերին ծանոթանալուց հետո, այսպես ասած, ժամանակավորապես դադարեցրին հետապնդումները:

Շարժման առաջին իսկ օրվանից և մինչև հիմա էլ կան ուժեր, որոնք ցանկանում են ետ շրջել պատմության անիվը, մոռացության տալ եզդի անունը, եզդի ժողովրդի պատմությունը, կրոնը, նիստ ու կացը, անցյալը... Այդ ուժերը հաճախ գործում են բացահայտ, չքողարկված: Նրանք երբեմն դիմում են սադրանքների, որպեսզի մեզ՝ եզդիներիս, մեղադրեն քրեական հանցագործություն կատարելու մեջ: Օրինակ, մի անգամ, երբ շարժման ղեկավարները բացակայում էին մայրաքաղաքից, մոտ երկու տասնյակ «քրդեր» շրջափակում են Հայաստանի կոմկուսի Կենտկոմի շենքը, հակաեզդիական լոզունգներով պահանջում դադարեցնել եզդիական շարժումը: Սակայն շարժումն անկասելի էր և անշրջելի: Զովունի գյուղի մոտ հարյուր երիտասարդ եզդիներ Սիմադ Թամոյանի ղեկավարությամբ հասնում են ցուցարարներին, խլում նրանց լոզունգները և խմբին ստիպում ցրվել: «Հակառակորդներից» վերցված «ռազմավարը» պահպանվում է մինչև այսօր: «Քրդերի» նման արարքները մեզ ստիպում էին դիմելու համարժեք գործողությունների: Եզդիներից շատերը փորձում էին նրանց հակազդել ուժով: Այդպիսիք էին հատկապես Սիմադե Ամարը, Քյարամե Սլոն, Քյարամե Ասոն, Բրոե Դավրեշը, Խդրե Աթերը, Հասանե Քյալաշը, Զասըմե Հըսեն և շատ ուրիշներ:

Քանի որ նշվեց վաղամեռիկ Իսոյի անունը, հիշենք, որ 1989թվականի նոյեմբեր ամսին Զովունի գյուղում հրավիրվեց միության նիստ, որը կոչ արեց եզդի երիտասարդներին կանգնել իրենց հայ եղբայրների կողքին, պաշտպանել հայոց հողը: Իսոն առաջիններից էր, որ կանգնեց այդ ուղու վրա և շատ-շատերի համար դարձավ խիզախության օրինակ:



Վերոհիշյալ նիստին մասնակցում էին Գառնիկ Ասատրյանը, Խաչիկ Ստամբոլցյանը, Երջանիկ Աբգարյանը և Արշակ Փոլադյանը: Իմ ղեկավարությամբ հաջորդ օրը մենք պետհամալսարանի բանասիրական և արևելագիտության ֆակուլտետի մասնաշենքում հրավիրեցինք հավաք, որին մասնակցեցին մոտ 1500 եզդի երիտասարդներ, որոնք արձագանքեցին նիստի կոչին և իրենց պատրաստակամությունը հայտնեցին պաշտպանելու հայոց հողը, որը մենք համարում ենք նաև մեր հայրենիքը: Հավաքը եզդի ազատամարտիկների ղեկավար ընտրեց Քյարամե Սըլոյին: Հազարավոր եզդիներ մասնակցեցին հայոց հողի պաշտպանությանը:

1992 թվականին եզդիների ազգային միությունը դիմեց հանրապետության եզդի ազգաբնակչությանը՝ հայոց բանակին օգնելու կոչով: Այդ նպատակի համար հանգանակվեց վեց միլիոն ռուբլի:

Պատերազմն ամեն օր անակնկալ էր մատուցում, որոնք կարող էին ամեն վայրկյան ճակատագրական լինել, խլել մարդկային կյանքեր:

Այդպիսի դեպք պատահեց 1992 թվականի գարնանը: Ես, որ հաճախ էի այցելում ռազմաճակատ, այս անգամ կրկին որոշեցի գնալ Նոյեմբերյան, ուր ծառայում էին Սահիդ, Ալիկ Թամոյանները, Օմար Ավդալյանը և ուրիշ եզդի ազատամարտիկներ: Ոսկեպար գյուղին մոտիկ գտնվող Սարա գյուղից մեզ միացավ նաև Պավլիկ Սառիկյանը: Ոսկեպար չհասած՝ մեր ճանապարհը փակեցին մոտ 30 ռուս զինվորներ, որոնք ավտոմատները պահած մեր կրծքին, ստիպեցին կանգ առնել: Ոչ մի բացատրություն չընդունելով, սպառնալով հաշվեհարդար տեսնել, կոպտորեն վերաբերվելով, մեզ տարան շտաբ: Այնտեղ մեզ խուզարկեցին, հարցաքննեցին, ուզում էին իմանալ, թե ուր ենք գնում, ինչ կապ ունենք հայոց բանակի հետ, քանի եզդի է ծառայում հայոց բանակում, ինչով ենք օգնում հայերին և այլն: Մեր գերությունը տևեց մոտ չորս ժամ: Սպառնալով ավելի վատ հետևանքներով, մեզ ետ ուղարկեցին մեր եկած ճանապարհով: Մեր՝ եզդիներիս խորամանկությունը՝ ոչ մի կապ ցույց չտալ հայոց բանակի հետ, մեզ փրկեց:

Ճանապարհին մի փորձանքից ևս ազատվեցինք: Ճանապարհի ոլորանից դուրս եկած մի ԲԵՏեէռ ուղղակի խոյացավ մեզ վրա, փորձելով շրջել մեր մեքենան: Մի կերպ խուսափելով հարվածից, շտապ հեռացանք մեր ծանոթ ճանապարհով:

Լավ եմ հիշում մեր այցը նաև Երասխավան: Ես, այն ժամանակ գիտությունների թեկնածու, այժմ պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանը, Ալիկ Թամոյանը, Օմար Ավդալյանը, Սուրիկ Թամոյանը, Սահիդ Թամոյանը և ուրիշներ, որ կազմում էինք մարտական մի ջոկատ, արհամարհելով բոլոր վտանգները և փորձությունները, գնում էինք դեպի Երասխավան: Թշնամու կրակակետից մեզ վրա էին թափվում մահաբեր արկեր: Մենք որոշեցինք լռեցնել թշնամուն և պատասխան կրակ բացեցինք նրա դիրքերի վրա:

կռիվը քանի գնում, թեժանում էր: Ամեն վայրկյանը կարող էր մեզ համար վերջինը լինել: Սակայն մի կերպ դիմացանք: Յարևան, գյուղի բնակիչ Սևդինե Ալին, որ եկել էր օգնելու Երասխավանի բնակիչներին, միացավ մեզ: Նա խիզախ տղա էր, համարձակորեն կանգնում էր իմ առաջ ու կրկնում. «Թող թշնամու գնդակն ինձ կպչի, քեզ ոչինչ չպատահի, դու մեր ազգին շատ ես պետք»: Յետագայում ևս, այս անգամ արդեն հարսանիքներում և ամենուրեք, Սևդինե Ալին սիրում էր կրկնել. «Ազիզ Թամոյանը մեր ազգին շատ է պետք: Պետք է միշտ պահպանել նրան:» Սևդինի օգնությամբ այդ օրվա լուսաբացին հասանք գյուղի արևելյան մասում ապրող եզդիների բնակարաններին: Մեզ դիմավորեց եզդիների ղեկավար Քյարամը, ցույց տվեց արկերից ծակծկված տանիքները, քանդուքարափ եղած պատերը, հետո ուղեկցեց դեպի ներքնահարկ, որը համեմատաբար անվտանգ էր, պատմեց գյուղի ծանր վիճակի մասին: Վաղ լուսաբացին Սևակավանի բարձունքներից կրակող թշնամուն ստիպված էինք լռեցնել: Կրակե տարափ թափվեց թշնամու վրա, և նա փախուստի դիմեց:

Այդ օրը ծնվեց Արցախյան ազատամարտին նվիրված մի երգ, որ հանպատրաստից հորինեցին ջոկատի անդամները, որը չի մոռացվում մինչև օրս:

Ուզում եմ երգն ամբողջովին մեջ բերել եզդիերեն՝ խոսքը ներկայացնելով հայերեն տառերով: Ահա այն.

*Ծըմե ըրըզ տեյը լըմը-լըմը,*
*Էվարդա սըր կավըլա գընդե Երասխեդա գըրտիե ջըրդա ըջըմը,*
*Ըրաֆե մըրիդանե խուն դըքըշը վակը ծըմը:*
*Ազիզե Ամզար-բավե Սըհիդ ժը Ռըվանե-*
*Դըկը գազի, Գըլի բըրա, հրո Ռըվանե վե մըրիդանե,*
*Ըմ գըրըկե սըրե խվը դահինըն Բոնա Ռըհինա ըրմընիստանե:*
*Ծըմե ըրըզ վե դըքըշը խըլը-խըլը.*
*Սեվդինե Ալի դըկը գազի; Ազիզ բավե մըն կըրըվի, բըդը սըր խվը*
*Խորտե էզդիա-չընդ կըբիլը,*
*Դըշտի խըդե նըֆըրե էզդիա գընդե Երասխե դըստե դըժմըն*
*դըրխըն հեսիրե-դիլը:*
*Ծըմե ըրըզ վե դըքըշը, դորը-գըզը,*
*Գընդե դորե թըմամ գըրտիե բախ ու ռըզը*
*Ազիզե Ամար դըկը գազի, գըլի էզդիա, հրո ըջըմա հըլդըն*
*հըիֆա կըվըն ու թըզը:*
*Վե բահարե գընդե Երասխե գըրտիը չընգը.*
*Ազիզե Ամար, Օմըր, Ալո, Սհիդ, Գառնիկ, դահը դընգը:*
*-Բավե մընվըն, չեվըն, չե բըխըվտըն, հրո էզդիա,*
*ըրմընիա դըրխըն դըրե տընգը:*
*Սըվըբու, բըրե սըվե լը մը չալ բու,*
*Դընգե ծըկ, սիլհե էզդիա, ըրմընիա հըվդը լալբուն,*
*Ջըրդա ըջըմա ըրաֆե մըրիդանե բեփըրգալբու:*



Իսկ այն ժամանակ, երբ Արցախի հողն այրվում էր արկերի պայթյուններից, երբ օդում հռնդում էին թշնամու ինքնաթիռները և մահաբեր արկեր էին նետում ազատամարտիկների դիրքերի վրա, այն ուրախ լուրը, թե եզդիների հերթական օգնությունն է տեղ հասել, հպարտությամբ էր լցնում եզդի ազատամարտիկների սրտերը, նրանք զգում էին, որ իրենց թիկունքին կանգնած էին՝ իրենց ժողովուրդը, ընկերներն ու բարեկամները:

Բայց պատերազմն առանց կորուստների չի լինում: Ու հանկարծ տխուր լուր էր տարածվում ողջ ռազմաճակատում.

- Ազիզը վիրավորվել է...
- Իսմայիլը զոհվել է...
- Բըրոն անհետ կորել է...

Դեռ անդառնալի կորստների համար ցավն ու կսկիծը չմեղմացած, նորից ռազմաճակատով մեկ, մինչև Երևան ու մինչև հեռավոր մարզերն էր հասնում նոր բոթը.

- Ընկավ Սահիդը...
- Չկա Բարզանին...
- Զոհվել է Տիտալը...

Ու գնում, գնում էին լավագույնները, իրենց ջահել կյանքն էին նվիրաբերում Արցախին, սուրբ նպատակին.

- Զոհվել է Ուսըվը...
- Չկա Սաբրին...
- Զոհվել է Ռաշիդը...
- Անհետ կորել է Կոտիկը...
- Ղուլիխանը չկա այլևս...

Ու այսպես շարունակ...

Եզդի ժողովրդի երեք տասնյակից ավելի զավակներ իրենց կյանքն ավարտեցին ջահել հասակում, նրանցից շատերը չհասցրեցին ամուսնանալ, զավակներ ունենալ, տուն ու տեղ դնել...

Ճակատագիրն անողոք գտնվեց նրանց նկատմամբ, կռիվը խլեց նրանց մատաղ կյանքը:

Արցախից Յայաստան էին բերվում զոհված ազատամարտիկները... Նրանցից երեքի՝ Իսմայիլ Շարոյանի (Իսո), Թեմուր Ջեյդինյանի, Գագիկ Յաջոյանի աճյունները հողին հանձնվեցին Եռաբլուրում՝ Արցախամարտի զոհերի պանթեոնում: Յետագայում, Յայաստանի անկախության 7-րդ տարեդարձի առթիվ, դեպի Եռաբլուր գնացող ճանապարհին կառուցվեց Յաղթակամար, որ խորհրդանշում էր զոհված ազատամարտիկների հաղթանակը, անմահությունն ու փառքը: Եզդի ժողովուրդն այդ Յաղթակամարն իրավամբ համարում է նաև իր զավակների հաղթանակի ու հերոսության վկայականը, որի տակով անցնելով՝ այցի է գնում հերոսների շիրիմներին, որոնց վրայից չեն պակասում անթառամ ծաղիկները:

Իհարկե, Արցախյան հերոսամարտից հարյուրավոր եզդիներ վերադարձան հաղթանակով, յուրաքանչյուրը շարունակեց իր գործը

պարտքը կատարած մարդու վստահությամբ: Նրանցից շատերը տուն վերադարձան հաշմանդամ դարձած, խեղանդամված, վիրավորված:

Վիրավորված տուն վերադարձան Ուսուբե Աթերը, Մշիրե Խուդեդան, Ալիկ Թամոյանը և շատ ու շատ ուրիշներ: Ասյա Խատոյանը տուն վերադարձավ մի ոտքը ռազմաճակատում կորցրած...

Դեռևս 1992 թվականի հոկտեմբերի 24-ին եզդիների ազգային միության նախագահությունը սահմանել էր «Եզդի ժողովրդի ազգային հերոս» պատվավոր կոչումը: Մինչև 2000 թվականը այդ կոչմանն արժանացել էին եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը, մոսկվացի ձեռներեց Միրզա Բաքոյանը: Հետագայում այդ պատվավոր կոչմանն արժանացան նաև Հայաստանի ազգային ռադիոյով եզդիների համար տրվող հաղորդումների խմբագիր Հասան Թամոյանը և Արցախյան ազատամարտի ամենաակտիվ մասնակիցներից մեկը՝ Մշիրե Խուդեդան (Մշիր Նադոյանը):



*Ազիզ Թամոյանը եզդի ազատամարտիկների հետ՝ ռազմաճակատ մեկնելուց առաջ:*

Եզդիների ազգային միության նախագահությունը և անձամբ նրա նախագահ Ազիզ Թամոյանը որոշել են զոհված եզդի ազատամարտիկների հիշատակը հավերժացնելու համար Երևանի փողոցներից որևէ մեկը, որևէ դպրոց, որևէ գյուղ նրանց անունով կոչել: Այդ մասին արդեն



պայմանավորվածություն է ձեռք բերվել Երևանի քաղաքապետարանի հետ:

Անցնում են օրե՜ր, ամիսնե՜ր, տարինե՜ր...

Սակայն չի խամրում հերոսների փառքը:

Եվ միշտ մեր դեմ են հառնում զոհված ջահելների կերպարները՝ ուրախ, ժպտուն, միշտ կենդանի:

Այդպիսին էլ կհիշվեն բոլոր ժամանակներում:

***

1998 թվականին լրացավ Արցախյան հերոսամարտի տասնամյակը: Տեղի ունեցան հանդիսավոր արարողություններ, որոնց մասնակցեցին նաև եզդի ժողովրդի ներկայացուցիչներ: Կարծես յուրատեսակ հաշվետվություն էր «Եզդիների ձայն» թերթում տպագրված հարցազրույցը, որը նպատակահարմար եմ գտնում ամբողջությամբ ներկայացնելու ընթերցողների ուշադրությանը:

## ԵԶԴԻՆԵՐԻ ՄԵԾ ԱՎԱՆԴԸ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԵԶԴԻՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ
ԱԶԻԶ ԹԱՄՈՅԱՆԻ ՀԵՏ

*- Պարո՛ն Թամոյան, լրացավ Արցախյան ազատամարտի 10-րդ տարեդարձը: Հայտնի է, որ եզդի ժողովրդի զավակները կանգնելով իրենց հայ եղբայրների կողքին, ակտիվորեն մասնակցեցին Ղարաբաղյան շարժմանը: Հայտնի է նաև, որ անձամբ Դուք եղել եք ոչ միայն այդ շարժման ակունքներում, այլև այդ շարժմանը զուգընթաց հսկայական ջանքեր եք թափել եզդիների ազգային զարթոնքը ճիշտ հունի մեջ դնելու համար: Որպես ականատես ու կազմակերպիչ ի՞նչ կասեիք այդ անմոռանալի օրերի մասին:*

- 1988 թվականն էր: Հայ ժողովուրդը պոռթկաց, սկսվեց Ղարաբաղյան շարժումը, որը, փաստորեն, ազգային ազատագրական պայքարի նոր փուլ էր: Եզդիներն անտարբեր չէին կարող լինել այդ հուժկու շարժման նկատմամբ: Ղարաբաղյան շարժմանը զուգընթաց սկսվեց նաև եզդիների ազգային զարթոնքը:

Փետրվարյան օրերին ես և իմ համախոհները՝ շեյխ Բրոե Դավրեշը, շեյխ Ջահլե Հասանը, շեյխ Քարամե Սըլոն ոտքի հանեցինք Հայաստանում ապրող ողջ եզդի ժողովրդին: Կազմակերպեցինք հանրահավաքներ՝ ինչպես մայրաքաղաքի Թատերական հրապարակում, այնպես էլ Նաիրիի շրջանի Զովունի գյուղում, հետագայում նաև հանրապետության մյուս շրջաններում՝ Արտաշատում, Մասիսում և այլուր: Միայն Զովունի գյուղում կազմակերպեցինք հարյուրից ավելի հանրահավաքներ: Ստեղծեցինք Ղարաբաղյան շարժմանը նպաստող կազմկոմիտե, որում ընդգրկվեցին

շարժման ակտիվիստներ: Կազմկոմիտեի նախագահ ընտրվեցի ես: Մեր հավաքներին մասնակցում էին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Խաչիկ Ստամբոլցյանը, պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանը, Երջանիկ Աբգարյանը, Արշակ Փոլադյանը և շատ ուրիշներ: Կազմկոմիտեն շարժման հենց առաջին օրերից համախմբեց եզդիներին: Պետական համալսարանում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ ստեղծվեց եզդիների միությանը կից ռազմական շտաբ, որի պետ ընտրվեց Քյարամ Ավդոյանը: Եզդի կամավորականները շատ էին, և շտաբը ստիպված էր ճիշտ հունի մեջ դնել սկսված բուռն շարժումը, ընտրել առավել տոկուն երիտասարդներին:

- *Պարո՛ն Թամոյան, հայտնի է նաև, որ եզդի ազատամարտիկները մասնակցեցին շատ ճակատամարտերի: Իսկ Դուք անձամբ եղե՞լ եք ռազմաճակատներում, ի՞նչ հուշեր եք պահպանում այդ օրերից:*

- Այդ օրերից անմոռանալի շատ հուշեր են մնում իմ սրտում: Բայց ես ուզում եմ հատկապես շեշտել այն ոգևորությունը, որ ապրում էր եզդի երիտասարդությունը: Դա չտեսնված մի երևույթ էր, որ վաղուց չէր զգացվել եզդիների կյանքում:

Իմ ղեկավարությամբ ռազմական շտաբի անդամները բազմիցս եղան ռազմաճակատի գրեթե բոլոր հատվածներում: Տարբեր տեղամասերում տեսանք և զգացինք պատերազմի իրական շունչը: Մենք եղանք Երասխավանում (մեզ հետ էր նաև պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանը), Ոսկեպարում, Ստեփանակերտում, Շուշիում, Լաչինում, Մարտակերտում: Ամենուրեք մեր տղաները կռվում էին անձնուրաց կերպով: Նրանք տեղաբաշխված էին ոչ թե առանձին, այլ հայ ազատամարտիկների հետ միասին, միևնույն ջոկատներում, և մենք առաջավոր դիրքերում զրուցում էինք ոչ միայն եզդիների, այլև հայ տղաների հետ, ոգևորում նրանց, ուրախանում էինք, որ նրանք մարտական ընկերներ են, մարտական զինակիցներ: Ուզում եմ հպարտությամբ հիշել, որ այդ ազատագրական պայքարին մասնակցեցին ոչ միայն եզդի երիտասարդները, այլ նաև եզդի աղջիկները, որոնք նույնպես աչքի ընկան խիզախությամբ: Նրանցից է ճանաչված Այսան, որը ռազմաճակատում զրկվեց մի ոտքից, բայց մինչև այսօր էլ մեզ հետ է:

Եզդիները կռվում էին Ղարաբաղյան բոլոր ռազմաճակատներում: Եվ նրանց թիվը քիչ չէր: Մենք մինչև այսօր էլ հպարտանում ենք մեր երիտասարդների խիզախությամբ, հերոսությամբ, նրանց եզդիական արժանապատվությամբ, որ միշտ և ամենուրեք բարձր պահեցին, արժանացան հայ եղբայրների, հայ ազատամարտիկների և նրանց մարտական ջոկատների հրամանատարների խրախուսանքին և բարձր գնահատականին: Հիշենք Արծվաշենի գրավումը. այդ ժամանակ եզդիների ազգային միության շտաբի պետ Սուրիկ Դավիթյանը 12 եզդի ազատամարտիկների հետ գտնվում էր Արծվաշենի շրջապատման մեջ: Ես գիշեր-ցերեկ կապվում էի նրանց հետ (հեռախոսակապով): Այդ ժամանակ էր,որ ես եղա Լ. Պետրոսյանի մոտ, ներկայացրի ստեղծված վիճակը: Նա



կանչեց Աշոտ Մանուչարյանին և հանձնարարեց զբաղվել այդ հարցով, հրաշքով տղաները դուրս պրծան գերությունից, ցավոք, Արծվաշենը թողնելով թշնամուն:

- *Այո՛, եզդիների անձնուրացության, նվիրվածության մասին մինչև այսօր էլ պատմում են: Ապրե՛ն տղաները: Իսկ թիկունքն ինչպե՞ս էր օգնում նրանց, ի՞նչ իրավիճակ էր տիրում մեզ մոտ, Հայաստանում:*

- Պատերազմի ընթացքում եզդիների միության ակտիվիստների ջանքերով հանգանակվեց վեց միլիոն ռուբլի, որը հանձնեցինք ՀՀ պաշտպանության նախարարությանը, Ղարաբաղի օգնության հիմնադրամին, ազատամարտիկների ընտանիքներին: Միայն ազգային միության Նաիրիի շրջանային կոմիտեի նախագահ Սուրիկ (Սուտո) Ավդալյանը իր անձնական ունեցվածքից տասնմեկ տոննա միս ուղարկեց ռազմաճակատ: Այդպիսի նվիրյալները շատ են: Հիշենք նրանցից մի քանիսին. Ուսկե Սաիիդի Շաբաբյան, Ամարե Ագիտ Բագե, Միե Կակե և շատ ուրիշներ, որոնք իրենց անշահախնդիր օգնությամբ նպաստեցին հաղթանակի գործին: Ես հատկապես ուզում եմ հիշել Հասան Թամոյանին, որը ոգևորությամբ համակում էր բոլորին, ջանք չէր խնայում իրեն հանձնարարած գործը մինչև վերջ հասցնելու համար, հանդես էր գալիս բազմաթիվ առաջարկություններով և նախաձեռնություններով:

- *Պարո՛ն Թամոյան, մեր թերթում այսօր տպագրվում են մի խումբ զոհված ազատամարտիկների լուսանկարներ: Նրանց հիշատակն անմահ է: Ի՞նչ է անում միությունը նրանց ընտանիքներին օգնելու համար:*

- Թեև ժողովրդի տնտեսական վիճակն այսօր այնքան էլ բարվոք չէ, սակայն նա շարունակում է իր օգնության ձեռքը մեկնել իր զավակներին: Հաճախ ենք կազմակերպում հանգանակություններ,օգնում ենք զոհվածների ընտանիքներին: Եռաբլուրում, ուր ամփոփված են եզդի ազատամարտիկներ Իսմայիլ Շարոյանի (Իսո), Թեմուր Ջեյդինյանի, Գագիկ Հաջոյանի աճյունները, հաճախ են լինում մեր ջահելները, երդվում՝ շարունակել նրանց կիսատ թողած գործը: Բազմիցս դիմել ենք համապատասխան մարմինների, ու թեև մինչև հիմա որոշակի օգնություն չենք ստացել, բայց հույս ունենք, որ նրանք անպայման ուշադրություն կդարձնեն, կհիշեն ազատամարտիկների ընտանիքներին: Մտադիր ենք առաջիկայում հարց բարձրացնել նրանց անունով փողոցներ, դպրոցներ, նույնիսկ գյուղ անվանակոչելու մասին: Եվ ինչո՛ւ միայն զոհվածներին հիշել: Իսկ մեր կողքին ապրողնե՞րը, որ հիշեցնում են կռվի թեժ օրերը, հաղթանակի հասնելու կամքը… Քյարամ Ավդոյանից հետո շտաբի պետ դարձավ Սուրիկ Դավթյանը (Արաբ), որն այժմ էլ շարունակում է ծառայությունը հայոց բանակում: Նա Տավուշի մարզում զորամասի շտաբի պետն էր: Նրան փոխարինեց Սուրիկ Դավրիշյանը: Նրանք հետևողական աշխատանք տարան եզդի երիտասարդների շրջանում, կազմակերպեցին հետաքրքիր միջոցառումներ՝ հանդիպումներ վիրավոր ազատամարտիկների հետ (Մշիրե Խուդեդա, Ուսուբե Աթեր, Թամոյան Ալիկ և ուրիշներ):



## ԹԱՄՈՅԱՆ ՍԱՀԻԴ ԱԶԻԶԻ
## СӘhИДЕ АЗИЗ
## (1972-1997)

Արցախյան հերոսամարտը հերոսացրեց նաև նրան՝ Սահիդե Ազիզին, որը ոգևորված իր հայրիկի՝ Հայաստանի Հանրապետության եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանի հայրենասիրական գործունեությամբ, կանգնեց նրա կողքին, դարձավ նրա օգնականն ու զինակիցը, աջակիցն ու զորավիգը:

Սահիդ Թամոյանը ազգային զարթոնքի օրերին միշտ զգաստ էր ու կարգապահ, որպես զինվորական շտաբի անդամ պատրաստ էր կատարելու բոլոր հանձնարարությունները, պատրաստ էր դիմել զոհողության՝ հանուն այն մեծ գաղափարների, որի համար պայքարում էր եզդի ժողովուրդը: Նա մասնակցեց Երասխավանի, Նոյեմբերյանի, Լաչինի, Մարտակերտի, Ֆիզուլու, Ստեփանակերտի ճակատամարտերին և մյուս ազատամարտիկների նման փառքով պսակեց իրեն:

Բայց կատարվեց անսպասելին. 1997 թվականին անսպասելիորեն դադարեց բաբախելուց Սահիդ Թամոյանի ազատատենչ սիրտը:



## ՀԱՋՈՅԱՆ ԳԱԳԻԿ
## ГАГИКЕ УНЬС
## (1972-1992)

Քսան տարեկան էր նա, նոր էր կյանք մտնում և որքա՜ն-որքա՜ն երազանքներ ուներ, որ այդպես էլ կիսատ մնացին, մնացին որպես երազանք... Նա իր կարճատև կյանքը նվիրաբերեց Արցախի ազատագրմանը, և ամբողջ հոգով ձգտում էր դեպի ռազմաճակատ, ուր կռվում էին իր ընկերները... Եվ նա հասավ իր նպատակին. 1992 թվականի մայիսի 5-ին Գագիկ Հաջոյանը զորակոչվեց հայոց բանակ:

... Հեռվում մնացին Արտաշատի շրջանի Ջրաշեն գյուղի հարազատ վայրերը, հարազատները, բարեկամները...

Ջրաշենում է ծնվել Գագիկը, 1972 թվականին, սովորել է գյուղի դպրոցում, աչքի է ընկել ջանասիրությամբ, աշխատասիրությամբ, նվիրվածությամբ:

Երկար չտևեց Գագիկ Հաջոյանի կյանքը: Թշնամու գնդակը խոցեց նրան 1992 թվականի օգոստոսի 7-ին՝ Արծվաշենի համար մղված մարտի ժամանակ:

Եզդի ժողովրդի զավակը թաղվեց Եռաբլուրում, հերոսների կողքին, հերոսին վայել արարողությամբ:





## ԲԱՔԻՐՅԱՆ ՄՈՒՍԱ
## МУСАЕ МӘ'МУД
## (1973-1992)

Արագածի լանջին, երբ բացվում էր առավոտը, Մուսան, որին բոլորը Ռազմիկ էին կոչում, վրանի փեշը մի կողմ էր քաշում, նայում երկնքին ու սարերի անծեղ քնքշանքին, հետո վազում էր հոր մոտ, իր հետ տանելով խրտնած գառներին, ինքն էլ գնում, խառնվում էր զմրուխտե բացատների արքայական գեղեցկությանը:

Մուսա Բաքիրյանը միշտ այսպես էր հիշում իր մանկությունը, որն անցավ Արագածի լանջերին, Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղում, ուր ծնվել էր նա՝ 1973 թվականի նոյեմբերի 22-ին: Սովորել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, ապա զորակոչվել հայոց բանակ, կռվեց ջահելի խիզախությամբ, տեսավ կռվի ավերածությունները, զգաց ռազմաճակատի շունչը: Բայց, ավա՜ղ, քսան տարին չլրացրած, Մուսա Բաքիրյանն ընկավ Լաչինում, փառքով պսակելով իրեն:



## ՌԱՍՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
## САМВЕЛЕ МОСКОВ
## (1973-1992)

Լաչինի համար մղված մարտերի ժամանակ անհայտ կորել է նա՝ 19-ամյա այդ պատանին, որի սիրտը լի էր պայծառ երազանքներով, կենսասեր էր ու կենսախինդ, որ զորակոչվելով հայոց բանակ, ռազմաճակատ էր մեկնել կռվելու, հաղթելու և Արցախն ազատագրված տեսնելու անմար հավատով:

Բայց ճակատագիրը դաժան գտնվեց Սամվել Ռասոյանի հանդեպ, նա չունեցավ իր գերեզմանը, ու մնաց այդպես՝ անմահ, ինչպես իր գործը:

Մեծ կենսագրություն չունեցավ Սամվելը: Ծնվել է Աշտարակի շրջանում՝ Արագածոտն գյուղում, սովորել է տեղի դպրոցում, 1992 թվականի գարնանը զորակոչվել է բանակ, մեկնել Արցախ, մասնակցել մի քանի մարտերի, աչքի ընկել պատանեկան խիզախությամբ: Բայց Լաչինի համար մղված թեժ մարտերից մեկը վերջինը եղավ նրա համար:

Ու՞ր է Սամվելը, ոչ ոք չգիտի, ու մնում է նա այդպես անգերեզման ու ... անմահ:

## ՔԱԼԱՇՅԱՆ ԳԱԳԻԿ
## ГАГИКЕ ШӘРИФ
## (1973-1993)



Իր հասակակիցների նման Գագիկ Քալաշյանն էլ լի էր եռանդով, ավյունով, սիրում էր կյանքը և պատրաստվում էր մեծ թռիչքների: Նա սիրում էր աշխարհը, կյանքը, ընկերներին, հարազատներին, իր ժողովրդին, որոնց համար էլ ձեռքը զենք առավ, կռվեց հանուն արդարության, հանուն հաղթանակի:

Գագիկ Քալաշյանը ծնվել է 1973 թվականին Մասիսի շրջանի Արգավանդ գյուղում, հետագայում ընտանիքով տեղափոխվել են Էջմիածին, որտեղից էլ զորակոչվել է բանակ, մեկնել է Արցախ:

Մարտական երկար ուղի չի անցել Գագիկ Քալաշյանը, բայց կռվել է երիտասարդներին հատուկ կրքոտությամբ, հաղթելու հավատով: Սակայն Մարտակերտ տանող ճանապարհը հետախուզելիս, հրամանատարության առաջադրանքը կատարելիս, 1993 թվականի մայիսի 6-ին զոհվեց՝ փառքով պսակելով իրեն: Նրա աճյունը ամփոփված է Էջմիածնի ֆիդայական գերեզմանոցում:

## ԱՎԴԱԼՅԱՆ ՕՄԱՐ
## ОМӘРЕ ХЬДЬР
## (1960-1993)



Դժվար է պատկերացնել, որ այլևս մեզ հետ չէ Օմար Ավդալյանը, այդ կենսուրախ, մշտաժպիտ, պատրաստակամ ընկերը, որ անցել էր պատերազմի բովով, մասնակցել էր Արարատի, Նոյեմբերյանի, Իջևանի շրջանների սահմանների պաշտպանությանը, ակտիվորեն նետվել կռիվների թեժ կետերը, իր խիզախությամբ և արիությամբ ոգևորել մարտական ընկերներին:

Ե՛վ Կոտայքի մարզի Զովունի գյուղում, ուր ծնվել է Օմար Ավդալյանը, և՛ սահմանամերձ շրջաններում, ուր մարտնչել է նա, միշտ բարի խոսքով են հիշում Օմար Ավդալյանին: Թեև թշնամու գնդակը չխոցեց նրան, սակայն ռազմաճակատից տուն վերադարձավ առողջությունը կորցրած: Եվ զինվորական հիվանդանոցում էլ կնքեց իր մահկանացուն՝ 1993 թվականի օգոստոսի 3-ին: Նրա աճյունը ամփոփվեց հայրենի գյուղի գերեզմանոցում:



## ՀԱՋՈՅԱՆ ԹՈՌՈՒՆ
## Т’ОР’ЬНЕ Ә’ЛИ
## (1958-1994)



Թոռուն Հաջոյանին շատերն էին ճանաչում որպես լավ ընկեր, լավ մարդ, իսկական հայրենասեր: Այդպիսին էր նա իր ապրած բոլոր տարիներին՝ մանկության օրերից մինչև իր հերոսական մահը:

Արտաշատի շրջանի Ջրաշեն գյուղում է ծնվել Թոռուն Հաջոյանը՝ 1958 թվականին:

Սովորել է հայրենի գյուղի դպրոցում, աչքի է ընկել իր պարտաճանաչությամբ, կարգապահությամբ: Նրան սիրել են և՛ ընկերները, և՛ ուսուցիչները, և՛, իհարկե, համագյուղացիները: Արցախյան շարժման առաջին իսկ օրերից եղել է իր հայ ընկերների կողքին և սկսած 1991 թվականից՝ մասնակցել Արցախյան հերոսամարտերին, Արցախի սահմանների պաշտպանությանը, արցախյան հողերի ազատագրությանը: Այդպիսի մարտերից մեկի ժամանակ էլ, 1994 թվականին, զոհվեց նա, խոր վիշտ պատճառելով բոլորին:

Թոռուն Հաջոյանն իր հանգիստն է գտել Մասիսի շրջանի Մարմարաշենի գերեզմանատանը:

Նա ամուսնացած էր, ունի երեք երեխա:

## ՀՈՍԵՅԱՆ ՀԱՍԱՆ
## h’ӘСӘНЕ СӘh’ИД
## (1973-1994)



Երազկոտ ու աշխույժ պատանի էր նա՝ Հասան Հոսեյանը: Իր հասակակիցների նման նա պայծառ երազներ ուներ և գալիքի պայծառ ճամփաներ: Բայց Արցախյան շարժումները խորապես հուզեցին նաև եզդի երիտասարդին: Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղում 1973 թվականին ծնված երիտասարդը, որ հասակ էր առել Արարատի հայացքի ներքո, մի՞թե կարող էր անտարբեր լինել Արցախի բախտի նկատմամբ: Եվ, ահա, 20 տարին դեռ նոր բոլորած տղան, հավատարիմ իր պապերի սուրբ պատգամներին, գնաց կռիվ՝ կանգնելու հայ եղբայրների կողքին, կռվելու հանուն Արցախի ազատության: Հերոսը ծնվում է ոչ թե պատահաբար, այլ նվիրյալ հոգով, խիզախությամբ: 1994 թվականի հունվարի 27-ին, Ֆիզուլու շրջանում մղվող մարտերի ժամանակ, թշնամու երկու տանկ շարքից հանելուց հետո, զոհվեց եզդի քաջորդին՝ Հասան Հոսեյանը, բարձր պահելով իր ժողովրդի պատիվը:

էջմիածնի շրջանի Ակնալիճ գյուղի ողջ բնակչությունը մասնակցեց Հասան Հոսեյանի հուղարկավորությանը: Եզդի ժողովրդի արժանավոր զավակը թաղվեց հայրենի գյուղի եզդիական գերեզմանոցում:

## ԳՈՒԼՈՅԱՆ ԲԸՐՈ
## БЬРОЕ К'ӘРӘМ
## (1955-1994)



Եզդի ազատամարտիկներից շատերը տուն չվերադարձան, չտեսան իրենց պայքարի հաղթական ավարտը: Նրանցից է Բըրո Գուլոյանը, որ հինգ տարի շարունակ մասնակիցն էր Արցախյան հերոսամարտերի, որ կոփվել էր կռիվներում, ու թվում էր, թե նրան այլևս մահ չկա...

Կռվել է նա Արցախ աշխարհի ազատության համար, դրանով իսկ կատարելով նախնիների պատգամը` միշտ լինել հայ եղբայրների կողքին, միասին ապրել ուրախությունն ու տխրությունը:

Էջմիածնի շրջանի Մեծամոր ավանում 1955 թվականին ծնված Բըրո Գուլոյանը, որ ապրեց եզդի երեխայի ուրախություններով ու չարաճճիություններով, որ հետագայում տեղափոխվեց Երևան, սովորեց հանրակրթական դպրոցում, վայելեց ընկերների ու ուսուցիչների համակրանքը, կամավոր մեկնեց Արցախ, մասնակցեց մի քանի ճակատամարտերի, պայքարեց հայրենի հողի համար, 1994 թվականի ապրիլի 20-ին` Հորադիզի մարտերի ժամանակ կորավ անհայտ ու... անմահացավ:

## ՉԱՏՈՅԱՆ ԲԱՐԶԱՆԻ
## БАРЗАНИЕ СӘҺ'ИД
## (1972-1994)



Տաշիրի (Նախկին Կալինինոյի) զավակ էր նա, ուր և ծնվել է 1972 թվականին: Դպրոցում սովորելիս աչքի է ընկել իր կարգապահությամբ, պարտաճանաչությամբ, ուսման առաջադիմությամբ: Ընկերները ակնածում էին նրանից, հաշվի էին առնում նրա կարծիքը, խորհուրդներ էին հարցնում նրանից: Դպրոցական պատանին ընթերցասեր էր, խորաթափանց, գիտեր, թե ինչ է Արցախը Հայաստանի համար և աներկյուղ նետվեց պայքարի` կատարելով իր պարտքը Հայաստանի հանդեպ: Եվ Արցախ աշխարհը անենամեծ



հայրենասիրության դպրոցը եղավ նրա համար, որին էլ զոհաբերեց իր ջահել կյանքը, հերոսության օրինակ դառնալով եզդի ջահելների համար:

Բարզանի Չատոյանը զոհվեց 1994 թվականի ապրիլին: Հերոս զինվորն իր վերջին հանգրվանը գտավ հայրենի Կալինինոյում (Տաշիր):

## ԽՈՒԴՈՅԱՆ ԲԱՐԶԱՆԻ
## БАРЗАНИЕ Һ'ӘСӘН
## (1974-1994)



Բարզանի Խուդոյանին Արմավիրի մարզի Արմավիր գյուղում հիշում են այնպես, ինչպես հրաժեշտի օրը, երբ նա ուրախ ու զվարթ, հպարտ այն գիտակցությամբ, որ մեկնում է հայրենի հողը պաշտպանելու, ասում էր, որ կվերադառնա հաղթանակով: Նա սիրված էր գյուղի հասարակայնության կողմից, որովհետև բարի և ընկերասեր էր, ուներ զգայուն հոգի, պատրաստ էր օգնության հասնել բոլորին:

Բարզանին ծնվել է 1974 թվականի հոկտեմբերի 14-ին, հաջողությամբ ավարտել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և երազում էր բարձրագույն կրթության, կյանքի նոր հորիզոնների մասին:

Բայց Արցախը կանչում էր, ու նա 1992-ի մայիսին զորակոչվեց բանակ: Առաջին ամիսներին մասնակցեց Կապանի պաշտպանական մարտերին, հետո կամավորների խմբի հետ հասավ Հորադիզ, ակտիվորեն մասնակցեց մի շարք մարտերի ու իր մահկանացուն կնքեց արցախյան հողում, անմահացավ «Կարմրաքար» ջոկատի զոհված մարտիկների նման:

Բարզանի Խուդոյանը թաղվեց գյուղում` Արմավիրի մարզի Արմավիրի եզդիական գերեզմանոցում:

Բարզանին ամուսնացած էր, ունի երկու աղջիկ:

## ԿՈՏԻԵՎ ԼԵՈՆԻԴ
## ЛЕОНИДЕ МИХАЙИЛ
## (1975-1994)



Ընդամենը տասնինը գարուն ապրեց նա, ընդամենն անցավ մի կարճ ճանապարհ, բայց այդ ճանապարհը նրան տարավ դեպի անմահություն: Նա չհասցրեց նույնիսկ ամուսնանալ, զավակներ ու հետնորդներ ունենալ, որոնք կարող էին հպարտությամբ արտասանել Արցախի համար իր կյանքը զոհաբերած Լեոնիդ Կոտիևի անունը:

Ծնվել է 1975 թվականին Տաշիրում (նախկին Կալինինո), սովորել է

տեղի դպրոցում, աչքի է ընկել ջանասիրությամբ, հավատարմությամբ: Նա հաստատակամորեն նետվեց մարտի, մեկնեց Արցախ, կռվեց մի քանի ռազմաճակատներում: Ու ինչպես իր բոլոր հասակակիցները, ինչպես հայ մարտիկները, թեև շատ կարճ կյանք ունեցավ, բայց ինքն էլ հերոսացավ ու անմահացավ:

Լեոնիդ Կոտիկը անհետ կորավ Հորադիզի մարտերի ժամանակ:

Լեոնիդ Կոտիկ անունն - ազգանունը, սակայն, անհայտ չէ:



### ՄԻՐԶՈՅԱՆ ՍԱՅԻԴ
### Сәh'ИДЕ МӘЩИТ
### (1972-1994)

Դժվար է բաժանվել մանկության ընկերներից, բարեկամներից, ծնողներից ու հարազատներից, բայց քաղաքացիական պարտքն ստիպում է գնալ նաև այդ քայլին, մանավանդ, որ ընկերներն այնտեղ են՝ ռազմաճակատում, ուր կռվում են ոչ միայն Արցախի, այլև հայոց հողի համար ընդհանրապես, հող, որ դարձել է նաև եզդի ժողովրդի նոր հայրենիքը:

Եվ Սաիդը, որ ծնվել էր 1972 թվականին Արտաշատի շրջանի Բաղրամյան գյուղում, հետո ընտանիքով տեղափոխվել Բաղրամյանի շրջան, 1993 թվականին զորակոչվեց հայոց բանակ: Շուտով նա վաստակեց խիզախ զինվորի համբավ, մասնակցեց մի շարք ճակատամարտերի և հաղթանակի հավատով էլ ընկավ մարտի դաշտում, Քելբաջարում՝ 1994 թվականի ապրիլի 24-ին:

Սաիդ Միրզոյանը իր վերջնական հանգիստը գտավ հայրենի գյուղում՝ Էջմիածնի շրջանի Ֆերիկ գյուղի եզդիական գերեզմանոցում:



### ՍԱԴՈՅԱՆ ՅԱՇԱ
### ЙАШАЕ ШИРША
### (1968-1994)

Անցել են տարիներ, սակայն Յաշա Սադոյանի հարազատների սիրտը կսկծում է անդառնալի ցավից, երբ հիշում են ժպտերես, կենսախինդ Յաշային, որը բանաստեղծական երկտողով միշտ ուրախացնում էր բոլորին .

**- Երբ կտեսնի Յաշային,**
**Պո՞ւկ, կփախչի թշնամին...**

Եվ, իրոք, կամավոր մեկնելով Արցախ, մասնակցելով մի շարք ճակատամարտերի, Յաշան և նրա ընկերները փախուստի էին մատնում թշնամուն, հաղթանակի բերկրանք ապրելով ամեն մարտից հետո: Բայց անողոք ճակատագիրը չխնայեց 1968 թվականին ծնված երիտասարդին: 1994 թվականի մայիսի 6-ին թշնամին Աղդամից հարձակում էր սկսել: Անհավասար էին ուժերը: Նրանց կողմից գրոհում էին տանկեր ու զրահամեքենաներ, իսկ մեր կողմից կռվում էին մի բուռ խիզախներ: Անհավասար կռվում ընկան քաջերից շատերը, նրանց թվում էր նաև Յաշա Սադոյանը:

Յաշա Սադոյանի դին տեղափոխվեց հայրենի Թալինի շրջանի Արտենի գյուղ, որտեղ էլ եզդիական գերեզմանոցում հողին հանձնվեց:

Յաշան ամուսնացած էր, ունի մեկ երեխա:



### ՍՈՒԼԹԱՆՅԱՆ ՂՈՒԼԻԽԱՆ
### QӦЛИХАНЕ Р'ӘЩО
### (1956-1994)

«Կամավոր մեկնեց ռազմաճակատ»,- դժվար չէ պատկերացնել, թե ի՞նչ է նշանակում՝ կամավոր մեկնել ռազմաճակատ: Դա նշանակում է՝ ընդառաջ գնալ մահին, իմանալ, որ թշնամու արկերն են սուլելու քո գլխավերևում, մտածել, որ դրանք կարող են պայթել մի քանի մետրի վրա, որ կյանքը ամեն վայրկյան վտանգի մեջ է...

Բայց Ղուլիխանը չսասանվեց: Էջմիածնի շրջանի Խաթունարխ գյուղի բնակիչները, աշխատանքային ընկերները հավատում էին, որ նա հաղթանակով կվերադառնա: Չէ՞ որ Ղուլիխանին բոլորը գիտեին որպես քաջ, արիասիրտ, անվախ համագյուղացի: Մի քանի հաղթական մարտերի մասնակցելով, Ղուլիխանին թվաց, որ թշնամու գնդակն այլևս իրեն չի կարող խոցել: Բայց... 1994 թվականի մայիսի 11-ին Ղուլիխան Սուլթանյանը զոհվեց, բոլորի սրտում մնալով որպես քաջ ու անվեհեր զինվոր:

Հերոսի դին տեղափոխվեց Հայաստան, հողին հանձնվեց հայրենի գյուղի՝ Խաթունարխի եզդիական գերեզմանոցում:

Ղուլիխան Սուլթանյանն ամուսնացած էր, ունի երեք երեխա:



### ՀԱՋՈՅԱՆ ՆՈՐԻԿ
### НОРИКЕ h'ӘСӘН
### (1974-1994)

Նորիկ Հաջոյանը ծնվել է Արտաշատի շրջանի Մրգանուշ գյուղում՝ 1974 թվականին: Ոչ մեկը չէր պատկերացնի, որ այդ փոքրիկ Նորիկը, որ խաղում էր բակում, հրապուրվում ֆուտբոլով, չարաճճիություններ անում, կարող է, հանկարծ, զենք վերցնել, կրակել թշնամու վրա, նետվել գրոհի, զոհվելով՝ անմահանալ:

Բայց այդպիսին էր նա՝ Նորիկ Յաջոյանը, որ ծնվել էր 1974 թվականին Արտաշատի շրջանի Մրգանուշ գյուղում, սովորել տեղի դպրոցում, իր աշխատասիրությամբ, ջանասիրությամբ, ընկերների, մեծերի ու փոքրերի նկատմամբ ունեցած ջերմ վերաբերմունքով արժանացել բոլորի սիրուն ու համակրանքին:

1998 թվականին նա զորակոչվեց բանակ, մասնակցեց պաշտպանական մի շարք մարտերի և ... զոհվեց 1994 թվականի հուլիսի 21-ին՝ Նոյեմբերյան շրջանի Կոթի գյուղի մոտ:



## ՅԱՄԶՈՅԱՆ ԹՈՌՈՒՆ
## Т'ОР'ЬНЕ МӘЩИТ
## (1975-1994)

«Բոլորը կռվում են քաջի նման»,- գրում էր Թոռունը ընկերներին, համեստորեն չհիշելով իրեն. բայց չէ՞ որ մյուսների նման այդ 19-ամյա պատանին նույնպես կռվում էր քաջաբար, չէր վախենում թշնամու արկ ու գնդակից: Երևանցի տղան, որ զորակոչվել էր բանակ 1993 թվականին, շուտով դարձավ բոլորի սիրելին, եզդիների հպարտությունը:

Մինչև նահատակությունը, զենքն անբաժան էր Թոռուն Յաջոյանից, իսկ հաղթանակի հավատը ամուր էր նրա սրտում: Մասնակցել է Արցախյան մի շարք ճակատամարտերի: 1994 թվականի ապրիլի 15-ին Յորադիզի համար մղվող մարտերից մեկում վիրավորվել է, տեղափոխվել հոսպիտալ բուժվելու: Սակայն... եզդի քաջորդու սիրտը դադարեց բաբախելուց՝ 1994 թվականի դեկտեմբերի 15-ին:

Թոռուն Յամզոյանը թաղված է Ներքին Չարբախի գերեզմանատանը:



## ՄՅՈՅԱՆ ԱԶԻԶ
## Ә'ЗИЗЕ ПЬРИСТАВ
## (1944-1994)

Ազիզ Միոյանի մասին լեգենդներ հյուսվեցին: 50-ամյա ազատամարտիկը կռվում էր ջահելի պես, ահ ու սարսափ տարածում թշնամու շարքերում: Կարծես նա վրեժ էր լուծում այն բոլոր զոհերի համար, որ տվել էին իր նախնիները՝ անցած դարավերջին ու այս դարասկզբին:

Ազիզ Միոյանը ծնվել է 1944 թվականին



Ալագյազում, մեծացել հայրենի լեռնալանջերի վեհությունը վայելելով, արժանանալով համագյուղացիների հարգանքին:

Արցախյան ազատամարտերի օրերին նա կանգնեց հայ եղբայրների կողքին, մասնակցեց մի շարք ճակատամարտերի, վաստակեց խիզախ զինվորի համբավ: Սակայն թշնամու գնդակը 1944 թվականին խոցեց նաև Ազիզ Միոյանին:

Ազիզ Միոյանին փառքով ու սրտի ցավով հողին հանձնեցին հայրենի Ալագյազ գյուղում:



## ՈՒՍՈՒԲՅԱՆ ԱԼԻԿ
## АЛИКЕ h'ӘСӘН
## (1976-1995)

Նվիրյալ ազատամարտիկն ապրեց ընդամենը 19 տարի, բայց հավերժացավ Արցախյան գոյամարտում:

19 տարի... Դա մի ակնթարթ է մարդու, այն էլ՝ երիտասարդ մարդու կենսագրության մեջ: Բայց այդ ակնթարթը անմահության խորհրդանիշն է եզդի երիտասարդի համար, որը թողած տուն ու տեղ, հարազատներ, բարեկամներ ու ընկերներ, զորականչի պահանջով նետվեց մարտի, կրծքով պաշտպանեց Կրասնոսելսկի շրջանի սահմանները: Նա վստահ էր, որ Սևանի ափին պաշտպանում է իր հայրենի Արմավիրի մարզի Ջրաշեն գյուղի մատույցներն ու արոտավայրերը, հայրական տունը, իր բոլոր բարեկամներին: Եվ 1994 թվականի նոյեմբերից մինչև 1995 թվականի փետրվարի 20-ը Ալիկ Ուսուբյանը բարձր պահեց եզդի ժողովրդի պատիվը: Ու թեև զոհվեց, բայց նրա անունը մնաց հայրենի գյուղի բնակիչների, ընկերների ու հարազատների շուրթերին...

Ալիկ Ուսուբյանը թաղվեց Արմավիրի եզդիական գերեզմանոցում:



## ՄՍՏՈՅԱՆ ՍԻԱԲԱՆԴ
## СИАБӘНДЕ Ә'ЩӘМ
## (1960-1995)

Յայրենի՝ Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղում սիրով ու ցավով են հիշում Սիաբանդ Մստոյանին: Նա ծնվել է այս գյուղում 1960 թվականին, սովորել է հայրենի գյուղի դպրոցում, հասակ է առել այստեղ, նվաճել սեր ու հարգանք, վայելել մեծ հեղինակություն: Արցախյան շարժման առաջին իսկ օրից եղել է բոլոր իրադարձությունների մասնակիցը, բռունցք է բարձրացրել ի սարսափ թշնամիների: Եվ սրտի կանչով էլ Սիաբանդը կամավոր մեկնեց Արցախ: Նա զգում էր, որ եզդի ժողովրդի զավակը պետք է լինի հայ

եղբայրների կողքին: Մարտակերտի պաշտպանները լավ են հիշում իրենց մարտական ընկերոջը, որ չվախենալով թշնամու գնդակից, պաշտպանում էր հայրենի ամեն մի թիզ հողը: Բայց 1995 թվականի փետրվարի 21-ը ճակատագրական եղավ Սիաբանդի համար: Այդ օրը նա զոհվեց Մարտակերտի շրջանում... և անմահացավ:

Նրա անմահության հուշարձանն է բարձրանում հայրենի Էջմիածնի շրջանի Ակնալիճի եզդիական գերեզմանոցում, ուր ամփոփված է նրա աճյունը:

Սիաբանդ Մստոյանն ամուսնացած էր: Ունի երեք երեխա:



## ՀԱՄԶՈՅԱՆ ՅՈՒՐԱ
## ЙУРАЕ ФАРЬЗ
## (1976-1995)

Երևանի N2 պրոֆտեխուսումնարանը, ուր սովորել է Յուրա Համզոյանը, միշտ կմնա եզդիների հիշողության մեջ որպես արիության դպրոց: Չ՞է որ այստեղ էր ձևավորվել արցախյան հերոսամարտերի մասնակիցը, եզդի ժողովրդի արժանավոր զավակը: Այստեղ սիրում էին նրան, ճանաչում էին որպես ձեռներեց ու գործունյա ընկեր, որին կարելի էր դիմել դժվար պահերին ու համոզված լինել, որ նա անպայման օգնության ձեռք կմեկնի:

Յուրան, 1976 թվականին Երևանում ծնված այդ երիտասարդը, կարճ ժամանակում ձեռք բերեց աշակերտական և ուսուցչական կոլեկտիվների վստահությունն ու սերը: Եվ ոչ ոք չզարմացավ, երբ լսեցին, որ իրենց Յուրան մասնակցում է Մեղրու շրջանի սահմանների պաշտպանությանը: Իսկ հետո ստացվեց ծանր բոթը. Յուրան զոհվել է Ջեբրայիլի մոտ՝ 1995 թվականի մարտի 28-ին: Խոր կսկիծ ապրեցին բոլորը, բայց մխիթարությունն այն էր, որ Յուրա Համզոյանն այդ օրից սկսել է իր անմահության ուղին:

Այդ են վկայում Չարբախի եզդիական գերեզմանոցում նրա սրբացած հողաթումբը և անմահության հուշարձանը:



## ԹԱՄՈՅԱՆ ՌԱԶՄԻԿ
## Р'АЗМИКЕ ИШХАН
## (1976-1995)

Անունը Ռազմիկ էր, և նա դարձավ ռազմիկն այն մեծ հերոսամարտի, որ մղում էր Արցախի ժողովուրդը հանուն իր հողի, հանուն պատմական արդարացիության:

Ռազմիկ Թամոյանի կենսագրությունն էլ, ինչպես իր հասակակից ազատամարտիկներից շատերինը, կարճ տևեց: Ծնվել է Բաղրամյանի



շրջանի Շենիկ գյուղում, սովորել հայերնի գյուղի դպրոցում ու հետո կամավոր մեկնել Արցախ՝ իր կարճ կենսագրությունը հարստացնելով հերոսական գործերով, պաշտպանական մարտերում ցուցաբերած հմտությամբ, թշնամուն միշտ անակնկալի բերելու վարպետությամբ: Այդպես ճանաչեցին Ռազմիկ Թամոյանին Մարտակերտում, որի համար նա կռվեց և նվիրաբերեց իր մատաղ կյանքը՝ 1995 թվականի մայիսի 9-ին:

Ռազմիկ Թամոյանի հուղարկավորման արարողությունը տեղի ունեցավ հայրենի՝ Բաղրամյան շրջանի Շենիկ գյուղի եզդիական գերեզմանոցում:



## ՈՒՍՈՅԱՆ ՌԱՇԻԴ
## Р'ЭШИДЕ Ә'Т'ЕР
## (1950-1995)

Նրա մահվան բոթը խոր վիշտ պատճառեց ինչպես ծանոթներին, այնպես էլ նրան անձամբ չճանաչող մարդկանց: Նախ, որ զոհվել էր արցախյան մարտերի հերոսը, եզդի ժողովրդի զավակը, որ իր սխրանքներով փառքով էր պսակում հարազատ ժողովրդին, և, երկրորդ, որ նա երկու տարի կռվելով՝ չճաշակեց վերջնական հաղթանակի քաղցրությունը:

Ռաշիդ Ուսոյանն ապրեց 45 տարի: Ծնվել է 1950 թվականին՝ Երևանի Էրեբունի համայնքի Ջրաշեն գյուղում, ավարտել տեղի դպրոցը, անցել աշխատանքի: Բայց Արցախը կանչում էր օգնության, և Ռաշիդը մեկնեց ռազմաճակատ: Կռվեց արիաբար, վաստակեց քաջի համբավ:

Ռաշիդ Ուսոյանը զոհվեց 1995 թվականին:



## ՀԱՍՈՅԱՆ ՍՈՒՐԻԿ
## СУРИКЕ Ә'МО
## (1976-1996)

Արմավիրի մարզի Շենավան գյուղում, հայրենի գյուղի դպրոցում կրթություն ստացած, ուսուցիչների և աշակերտների սիրուն ու հարգանքին արժանացած Սուրիկ Հասոյանին վիճակված էր երկու տարի շարունակ պաշտպանել սահմանամերձ շրջանները, հատկապես Կրասնոսելսկի սահմանները: Նա նման էր արհեստավարժ զինվորականի, սառնասիրտ էր, խոհուն ու քաջարի: Ընկերները հիշում են նրա խոսքը. «Ազատության համար պայքարը սուրբ գործ է, այս նշանաբանով պետք կռվել ու հաղթել»: Այդպես էլ մարտնչեց նա՝ եզդի ժողովրդի զավակ Սուրիկ

Յասոյանը, որը զոհվեց 1996 թվականի մարտի 6-ին Կրասնոսելսկի շրջանի Վահան գյուղի պաշտպանական մարտերում:

Սուրիկ Յասոյանի աճյունը հողին հանձնվեց հայրենի գյուղում՝ Արմավիրի մարզի Յուշակերտի եզդիական գերեզմանոցում:



## ՄՍՏՈՅԱՆ ԱՐՄԵՆ
## АРМЕНЕ МЬСТО
## (1976-1996)

Արցախում հիմա խաղաղություն է, Արցախի ժողովուրդը և համայն հայությունը վայելում է հաղթանակի բերկրանքը: Բայց այդ հաղթանակը ձեռք է բերվել անթիվ զոհերի գնով, զոհեր, որոնց շարքերում են նաև եզդի ազատամարտիկները, որոնցից է նաև Արմեն Մստոյանը:

Արմենը ծնվել է Արմավիրի մարզի Ամասիա ավանում, սիրել է հայրենի լեռներն ու լեռնալանջերը, հայրենի գյուղն ու հարազատ դպրոցը, ուր սովորել է նա:

1995 թվականի նոյեմբերից մինչև 1996 թվականի սեպտեմբերը Արմեն Մստոյանը մասնակցել է Մարտակերտի շրջանում տեղի ունեցած մարտական գործողություններին և անմահացել է 1996 թվականին՝ իր մատաղ կյանքը նվիրելով Արցախի ազատության սրբազան գործին:

Արմեն Մստոյանը իր վերջին հանգրվանը գտավ հայրենի՝ Արմավիրի մարզի Ամասիա գյուղի գերեզմանատանը:



## ՍԱԴՈՅԱՆ ԳՐԻՇԱ
## ГРИШЕ МӘМЕ
## (1957-1997)

Ինտերնացիոնալիզմը, բարեկամությունը, հայրենասիրությունը եզդիների լավագույն ավանդույթներից են, որոնք փոխանցվում են ավագ սերունդներից կրտսերներին, դրանով ամրապնդվում է եզդի և հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Իրենց որդիներին բանակ ճանապարհելիս այս ավանդույթներն են հիշեցնում ծնողները, համոզված լինելով, որ նրանք հավատարմորեն կպահպանեն իրենց պապերի սովորույթները:

Այդ հավատով է զորակոչվել հայոց բանակ նաև Աշտարակում 1957 թվականին ծնված Գրիշա Սադոյանը, որն Արցախում մի շարք ճակատամարտերի մասնակցեց, դարձավ իր մարտական ընկերների



սիրելին, բանիմաց ընկերն ու խորհրդատուն: Սակայն կատարվեց անսպասելին. Գրիշան զոհվեց Օմարի լեռնանցքում 1997 թվականի հունվարի 17-ին: Նրա աճյունն ամփոփվեց հայրենի Աշտարակում:



## ՆԱԲՈՅԱՆ ՍԱԲՐԻ
## СӘБРИЕ К'ӘЛӘШ
## (1978-1997)

Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղի ուսուցիչները սիրով ու ակնածանքով են արտասանում իրենց նախկին սանի՝ Սաբրի Նաբոյանի անունը: Պարտաճանաչ ու ընկերասեր աշակերտ էր նա, ընթերցասեր ու ամենազարմանալի հարցերը շուրթերին: Իսկ հետո նա զորակոչվեց հայոց բանակ, չհասցրեց իր տեղը գտնել կյանքում, երբ թշնամու գնդակը խոցեց նրան: Սաբրին ծառայեց թեև կարճ ժամանակ, բայց այստեղ էլ կարողացավ ճանաչում գտնել,խիզախության օրինակներ ցույց տալով, դառնալ ոչ միայն իր ընկերների, այլ նաև հրամանատարության սիրելին:

Սաբրի Նաբոյանը զոհվեց Լեռնային Ղարաբաղի Յադրութի շրջանում, 1997 թվականի հունվարի 27-ին: Անցնում են տարիները, սակայն չի խամրում եզդի ժողովրդի անվեհեր զավակի փառքն ու հիշատակը:

Նրա աճյունը հողին հանձնվեց հայրենի գյուղում՝ Աշտարակի շրջանի Շամիրամի գերեզմանատանը:



## ԱՍՈՅԱՆ ՈՒՍԸՎ
## УСЬВЕ ЗОҺРАБ
## (1978-1997)

Ուսըվ Ասոյանը չհասցրեց հարուստ կենսագրություն ունենալ: Ծնվել է 1976 թվականին: 20-ամյա երիտասարդ էր, երբ զորակոչվեց բանակ: Իր հասակակիցների նման աշխույժ էր, ժպտերես ու մարդամոտ: Նրանից չէին դժգոհում ո՛չ հարևանները, ո՛չ ուսուցիչները: Նա սիրում էր կյանքը, հայրենիքը, կապույտ երկինքը, որոնց պաշտպանելու համար էլ զինվորագրվեց արցախյան պայքարին, մասնակցեց մի քանի ճակատամարտերի, արժանացավ հրամանատարության խրախուսանքին:

Ուսըվ Ասոյանը շատ երազանքներ ուներ, որոնք, սակայն, մնացին անկատար: Բայց նրա անցած ուղին, կենսագրության այդ էջը պայծառ էր

ու անմոռաց: Թեև նա զոհվեց 1997 թվականի փետրվարի 4-ին, բայց նրա սխրանքն անմահ է. քաջերին մահ չկա:



## ՇԱՄՈՅԱՆ ՆՎԵՐ
## НВЕРЕ СУРЕН
## (1977-1997)

Ռազմաճակատից ստացված նամակը ոչ միայն ծնողների ու հարազատների, այլև բոլոր համագյուղացիների ուրախությունն էր, հաղթանակի հավատի ամրապնդումը: Այդպիսին էր Նվեր Շամոյանի պատճառած ուրախությունը, որ համակեց նրա բոլոր համագյուղացիներին՝ Մասիսի շրջանի Խարբերդ գյուղի բոլոր բնակիչներին: «Ուր հայրենիքի սերն է պահանջում, այնտեղ թշնամու ուժն է նահանջում»,- գրել էր Նվեր Շամոյանը:

Կարճ կյանք ունեցավ Նվերը, ընդամենը քսան տարի, ապրեց 1977-1997 թվականներին, բայց հասցրեց սովորել հայրենի գյուղում, զորակոչվել հայոց բանակ, մասնակցել մի շարք ճակատամարտերի, հերոսի համբավ վաստակել:

Նվեր Շամոյանը զոհվեց 1997 թվականի հունիսի 12-ին՝ Կրասնոսելսկի մարտերում: Թաղված է հայրենի գյուղի գերեզմանատանը:



## ԳԵԼՈՅԱՆ ՏԻՏԱԼ
## ТИТАЛЕ ШАВО
## (1976-1997)

Ընկերների, հարազատների, ուսուցիչների հուշերում Տիտալը մնում է նույն պայծառամիտ ու ժպտերես տղան, ինչպես նրան ճանաչում էին հայրենի՝ Մասիսի շրջանի Ռանչպար գյուղում: Դպրոցում ետ չէր մնում ընկերներից, աշխատում էր պարտաճանաչությամբ և սիրով կատարել ուսուցիչների բոլոր հանձնարարությունները, որի համար արժանանում էր նրանց գովասանքին, ընկերների վստահությանը, որովհետև միշտ օգնության էր հասնում ետ մնացողներին: Այդպիսի պարտաճանաչություն էր ցուցաբերում նաև բանակում, ձգտելով անթերի կատարել հրամանատարության բոլոր առաջադրանքները: Պատահական չէ, որ մի շարք մարտական գործողություններում նա դրսևորեց խիզախություն, արժանացավ խրախուսանքների:



Տիտալ Գելոյանի կյանքի թելը կտրվեց 1997 թվականի մայիսի 16-ին՝ Մարտակերտում: Սակայն այդ կյանքը շարունակվում է խիզախ մարտիկի մասին պատմվող հերոսական զրույցներում:

Տիտալ Գելոյանն իր վերջին հանգրվանը գտավ հայրենի՝ Մասիսի շրջանի Ռանչպար գյուղի գերեզմանատանը:



## ԹԱՄՈՅԱՆ ԶՈՀՐԱԲ
## ЗОһРАБЕ МӘМЕ
## (1976-1997)

Կարճ, բայց բուռն կյանք ապրեց Արմավիրի մարզի Կեսարիա գյուղի զավակ Զոհրաբ Թամոյանը:

1976 թվականին ծնված Զոհրաբը հաջողությամբ ավարտեց հայրենի գյուղի դպրոցը, անմոռաց հուշեր թողնելով դպրոցի կամարների տակ, որոնք միշտ կհիշեցնեն դպրոցի նախկին սանին, հայոց բանակի խիզախ մարտիկ Զոհրաբ Թամոյանին: Դպրոցն ավարտելուց հետո Զոհրաբը զորակոչվեց հայոց բանակ, ծառայեց Արցախում, իր կարգապահությամբ, ճշտակատարությամբ և ռազմական պատրաստակամությամբ արժանանալով հրամանատարության դրվատանքին և խրախուսանքին:

Դժվար է հավատալ, որ այլևս մեզ հետ չէ հայրենիքի զինվորը, որն ընկավ մարտական դիրքում՝ 1997 թվականի հուլիսի 20-ին Արցախի Տոնաշեն գյուղում: Ճիշտ է ասված. «Ոչ ոք չի՛ մոռացվում, ոչինչ չի՛ մոռացվում»: Անմոռաց է Զոհրաբ Թամոյանի անունը, անմոռաց է նրա սխրանքը:



## ՊՈԼՈՅԱՆ ՌԱԶՄԻԿ
## Р’АЗМИКЕ Аһ’МӘД
## (1977-1998)

Հայոց բանակի մարտիկ Ռազմիկ Պոլոյանը ծնվել է 1977 թվականին Արմավիրի մարզի Արգավանդ գյուղում: Դպրոցական տարիներին աչքի է ընկել ընկերների և ուսուցիչների նկատմամբ ջերմ վերաբերմունքով, կիրթ վարվեցողությամբ, կարգապահությամբ: Ոչ միայն ընտանիքում, այլև դրսում՝ ընկերների և անծանոթների միջավայրում նա միշտ համեստ էր, ժպտերես ու պատրաստակամ օգնելու, սատար կանգնելու նեղության մեջ գտնվողներին, օգնության կարիք ունեցողներին: Այդպիսի կարգապահությամբ նա աչքի ընկավ նաև

հայոց բանակում, Արցախում ծառայած տարիներին, ուր բազմիցս արժանացավ պատվոգրերի ու շնորհակալությունների:

Ռազմիկ Պոլոյանը վախճանվեց 1998 թվականին, խոր վիշտ պատճառելով մարտական ընկերներին, հարազատներին, բարեկամներին: Նրա աճյունն ամփոփվեց հայրենի գյուղի՝ Արմավիրի մարզի Արգավանդ գյուղում:



## ԳԱԼՈՅԱՆ ՀԱՄԼԵՏ
## hАМЛЕТЕ Ә'ЛИХАН
## (1979-1998)

Համագյուղացիների հիշողության մեջ Համլետ Գալոյանը մնաց որպես եռանդուն և աշխատասեր պատանի, օրինապահ ու կարգապահ անձնավորություն, բարի և հոգատար ընկեր: Այդ բարի համբավին նա տիրացել էր դպրոցում սովորելու տարիներին, արժանացել ուսուցիչների սիրուն ու համակրանքին:

Համլետ Գալոյանը ծնվել է 1979 թվականին Աշտարակի շրջանի Ավշարկ գյուղում, սովորել է հայրենի գյուղի դպրոցում:

Նոր էր սկսվել արցախյան հերոսամարտը, երբ Համլետ Գալոյանը հայտնվեց իրադարձությունների կիզակետում: Կարճ ժամանակում եզդի երիտասարդը տիրապետեց հրազենի գաղտնիքներին, մասնակցեց մի քանի ճակատամարտերի, կոփվեց ու ամրացավ, վաստակեց մարտական ընկերների սերն ու համակրանքը:

Համլետ Գալոյանը վախճանվեց 1998 թվականի մարտին և հողին հանձնվեց հայրենի Խաթունարխ գյուղում:

***

...Կանցնեն տարիներ, սակայն չի խամրի նրանց փառքը: Հավերժ կհիշվի նրանց սխրանքը:

Մեխ Ադու օրհնությունը թող լինի նրանց հոգիներին:

Հիշենք նաև, որ «Հայ զինվոր» թերթը նույնպես անդրադարձավ զոհված եզդի ազատամարտիկներին՝ 1998 թվականի N19-ում (16-23 մայիսի) տպագրելով «Եզդիները մեր նորօրյա հերոսամարտում» ընդարձակ հոդվածը: Թերթի էջերում տպագրված էին նաև նրանց դիմանկարները:

Զոհված եզդի ազատամարտիկների հիշատակը հավերժացավ նաև 1996 թվականին տպագրված մեծադիր պատի օրացույցով, ուր զետեղվել



էին զոհված 17 ազատամարտիկների լուսանկարները: 1998 թվականին լույս տեսավ օրացույցի լրացված, զոհված 35 ազատամարտիկների լուսանկարներով նոր տարբերակ՝ 1998, 1999 և 2000 թվականների համար: Այն նույնպես դարձավ եզդի ընտանիքների համար մի նոր սրբություն, որը դիտելիս, չի կարելի բարի խոսք չասել օրացույցը կազմող եզդիների միության պրզեդենտի և, հատկապես, փոխպրեզիդենտ Հասան Թամոյանի հասցեին, որոնց անմիջական ջանքերով լույս աշխարհ եկավ այդ օրացույցը:

Եզդի ազատամարտիկների մասին հիշատակություն կա «Հարատևության զարկերակ» հուշամատյան-գրքում, որի խմբագրումը, մշակումը, ձևավորումը կատարել է Ռուբեն Մնացականյանը: Հուշամատյանը հիմնականում ներառում է Կարմիրի շրջանի ազատամարտիկներին վերաբերող նյութեր, բայց նրանում տեղ են գտել նաև այլ վայրերից Արցախ գնացած ու զոհված ազատամարտիկների մասին նյութեր, եռաբլուրում ամփոփված հերոսների մասին հիշատակություններ: Այդ բաժնում են զետեղված նաև երեք ազատամարտիկների՝ Թեմուր Ջեյդինովի, Գագիկ Հաջոյանի և Իսմայիլ Շառոյանի մասին նյութերն ու նրանց լուսանկարները:

## «ԵԶԴԻՆԵՐԻ ՁԱՅՆ» ԹԵՐԹԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ և ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1990 թվականի փետրվարի 15-ին Զովունի գյուղի մշակույթի պալատում տեղի ունեցավ եզդիների ազգային միության նիստ, որը որոշեց արագացնել միության պաշտոնաթերթի հիմնումը: Քիչ ջանքեր չպահանջվեցին այդ որոշումն իրականացնելու համար: 1990 թվականը եզդի ժողովրդի պատմության մեջ կմնա որպես ամենանշանավոր տարիներից մեկը: Նույն տարվա նոյեմբերի 3-ին Երևանում լույս տեսավ եզդիների ազգային միության «Դանգե էզդիա» /«Եզդիների ձայն»/ պաշտոնաթերթի առաջին համարը: Դա եզդիական միակ թերթն էր ամբողջ աշխարհում: Անսահման էր եզդիների ուրախությունը, երբ նրանց հասավ իրենց թերթի անդրանիկ համարը: Թերթը ձեռքից ձեռք էր անցնում, ոգևորությամբ և հպարտությամբ համակում բոլորին:




*«Եզդիների ձայն» թերթի գլխագիրը*

«Եզդիների ձայն» թերթը ՀՀ Եզդիների ազգային միության պաշտոնաթերթն է, որի պատասխանատու տնօրենն է Ազիզե Ամարը / Ազիզ Թամոյան/, գլխավոր խմբագիրն էր Հասանե Մամուդը /Թամոյան/, խմբագրական խորհրդի անդամներն էին Հասանե Քյալաշը /Հասանյան/, Քյարամե Սըլըն /Ավդոյան/, Ջասըմե Հուսեյնը /Մամոյան/, Հասանե Գոգոն /Ֆարըզյան/, Սահմադե Ամարը /Նասըրյան/, Գառնիկ Ասատրյանը, Արշակ Փոլադյանը, Օրդիխանե Լազգին:

Թերթը սկսեց լույս տեսնել ամիսը մեկ անգամ, 1000 օրինակ տպաքանակով: Այն հիմնականում լույս է տեսնում հայերեն, որպեսզի հայ ժողովրդին ծանոթացնի եզդիների կյանքին ու ավանդույթներին, պատմությանը, կրոնին, եզդիական շարժմանը, կարևոր իրադարձություններին: Բացի այդ՝ հայերեն լեզվով թերթի տպագրությունը պայմանավորված էր նաև նրանով, որ եզդի բնակչության մեծամասնությունը կրթություն է ստանում հայկական դպրոցներում: Թերթը երբեմն էջեր է տպագրում նաև մայրենի լեզվով՝ եզդիերեն և այս փաստը մեծ ոգևորությամբ է ընդունվում եզդիների կողմից: «Եզդիների ձայնը» փաստորեն դարձավ ժողովրդի տարեգրության նոր մի էջը, որտեղ կարելի է գտնել եզդիներին վերաբերող բազմաթիվ տեղեկություններ, եզդիների կյանքում տեղի ունեցող իրադարձությունների արձագանքներ այլ թերթերում և ամսագրերում եզդիներին վերաբերող նյութերի արտատպություններ և այլն: Այդպիսի հրապարակումներն, անշուշտ, կօգնեն ապագա մասնագետներին՝ եզդի ժողովրդի նորօրյա պատմությունը շարադրելիս, կհուշեն կարևոր իրադարձություններ ու փաստեր, կլինեն հավաստի աղբյուրներ՝ մեր ժողովրդի պատմության համար:

Ահա այդպիսի մի հաղորդագրություն, որ տպագրվել է թերթի 1991 թվականի հունվարի 25-ի N2-ում «Զորավիգ եզդի ժողովրդին» խորագրով.

«Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն էջմիածնում ընդունել է Հայաստանի եզդիների ազգային միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանին: Վերջինս Վեհափառին հաղորդել է եզդի ժողովրդի հարգանքն ու նվիրվածությունը հայ ժողովրդին և անձամբ Վեհափառին, նշել, որ եզդիները Հայաստանում գտել են իրենց հարազատ օջախը, հնարավորություններ են ստացել պահպանելու իրենց լեզուն, բարքերն ու սովորությունները, զարգացնելու մշակույթը, գիրն ու գրականությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց «Եզդիների ձայն» պարբերականի լույս ընծայումը, համոզմունք հայտնեց, որ թերթը կնպաստի հայ և եզդի



ժողովուրդների դարավոր բարեկամության ամրապնդմանը, պատրաստակամություն հայտնեց նյութապես և բարոյապես սատար կանգնելու եզդի ժողովրդին»:

Այսպիսի հաղորդումներն, իրոք, հետագայում կնպաստեն եզդիների մասին գրվող աշխատությունների ստեղծմանը:

Թերթի գլխագիրը մի քանի անգամ փոփոխություն կրեց, ստացավ տարբեր տեսք և իմաստավորում: Վերջին համարները լույս տեսան բարեփոխված: Թերթի ճակատին աչքի են զարնում **«Ազգությունս՝ եզդի, լեզուս՝ եզդիերեն, կրոնս՝ շարֆադին»** բառերը: Դրանք թևավոր խոսքի նման մտան ժողովրդի խոսակցական լեզվի մեջ, դարձան լոզունգ ու կարգախոս:

Ազգային զարթոնքը և հուժկու ազգային շարժումը տվեց մեկ այլ կարևորագույն արդյունք ևս: Առաջին անգամ պատմության մեջ եզդիներին հատկացվեց եթերաժամ եթե էր տրվում «Եզդիների համար» խորագրով արդեն ավանդույթ դարձած հաղորդումը, որը հանրապետության տարբեր շրջաններում ապրող եզդիների համար հաղորդակցվելու, միմյանց մասին տեղեկություններ իմանալու, եզդիների կյանքում տեղի ունեցող իրադարձություններին տեղյակ լինելու հուսալի միջոց է: 1990 թվականի նոյեմբերի 19-ին, տեղական ժամանակով ժ. 17-30-ին Երևանից սկսվեցին առայժմ առաջին և աշխարհում միակ ռադիոհաղորդումները՝ եզդիերեն լեզվով, եզդիների համար:

Առաջին հաղորդման ժամանակ Ազիզ Թամոյանը եզդի ժողովրդին շնորհավորեց եզդիերեն առաջին հաղորդումների առթիվ: Այդ օրից մինչև այսօր նույն ժամին հնչում են եզդիերեն հաղորդումները:

***

Ժամանակի ընթացքում եզդիների միության համակիրների քանակն ավելանում էր, միության անդամների թիվը՝ բազմապատկվում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն զգացվեց կատարելագործել աշխատանքի մեթոդները, նոր խնդիրներ և նպատակներ առաջադրել: 1991 թվականի հունիսի 30-ին Երևանում տեղի ունեցավ ազգային միության հերթական, ընդլայնված նիստ, ուր քննարկվեցին բազմաթիվ և բազմաբնույթ հարցեր: Կարևոր իրադարձություն էր ազգային միության նախագահին *պրեզիդենտ* անվանելը: *Նիստի որոշմամբ Ազիզ Թամոյանն*

*ընտրվեց ազգային միության առաջին պրեզիդենտ,* ընդլայնվեցին պրեզիդենտի լիազորությունները: 1992 թվականի հոկտեմբերի 24-ին Երևանում տեղի ունեցավ ազգային միության հիշարժան նիստերից մեկը, որի մասին արժե ավելի մանրամասն պատմել: Այդ նիստում որոշվեց սահմանել ազգային հերոսի կոչում, Եզդիների ազգային հերոսի ոսկե մեդալ շնորհել այն մարդկանց, ովքեր ծանրակշիռ ներդրում կունենան եզդի ժողովրդի ազգային զարթոնքի, հոգևոր գիտակցության, ազգային ավանդույթների պահպանման գործին նպաստելու մեջ, ազգային վերածննդի, մշակույթի զարգացման ասպարեզում և արցախյան պայքարում ցուցաբերած խիզախության համար: Նիստը որոշեց ազգային հերոսի կոչում շնորհել Ռուսաստանի ձեռնարկատեր Միրզա Բաքոյանին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին և ազգային միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանին: Նույն թվականի դեկտեմբերին Մայր Աթոռ



*Եզդի ժողովրդի առաջին ազգային հերոսները՝*
*Ազիզ Թամոյան, Վազգեն Ա.,*
*Միրզա Բաքոյան*

Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն, որի ժամանակ ազգային միության հոգևոր գծով փոխնախագահ Ռոստամե շեխ Շամըլեն /Բաքոյան/ Եզդիների ազգային հերոսի ոսկե մեդալներ և



վկայագրեր հանձնեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին, Միրզա Բաքոյանին և Ազիզ Թամոյանին:

Պարգևատրվածներին հանձնվեց նաև 100-հազարական ռուբլի: Բացի այդ, ազգային միության կողմից հայոց կաթողիկոսին հանձնվեց նաև 500 հազար ռուբլի՝ զոհված ազատամարտիկների ընտանիքներին օգնելու համար: Արարողության ժամանակ, ուր ներկա էին հանրապետության տարբեր շրջաններից եկած բազմաթիվ հյուրեր, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, իր ելույթում Ազիզ Թամոյանը մասնավորապես ասաց. «Այսօր տեղի ունեցող այս արարողությունը խորհրդանշում է եզդիների՝ որպես ինքնուրույն ազգի հաստատումը, որին հասել ենք բազում օրերի համառ պայքարի, անդուլ աշխատանքի, մեծ ջանքերի և երկար սպասման գնով: Փոքր ազգերի ճակատագրերը նման են միմյանց: Պատմության ալիքի բերանն ընկած նրանք կարող են կամ երջանիկ բարեբախտությամբ պահպանել իրենց տեղը՝ մեծ ազգությունների շարքում, կամ հիմնովին անհետանալ: Այդպիսի դառը ճակատագիր էր վիճակվել նաև եզդի ժողովրդին, որը դեռևս 1931 թվականին իր տեղն ուներ Խորհրդային Միության 200 փոքր ազգությունների շարքում: Սակայն ստալինյան դաժան կամքով այն պարզապես հատվեց Հայաստան երկրի միաձույլ մարմնից, որպես ազգություն հանվեց ժողովրդական բառարանից, ուղղագիծ կերպով փոխարկվեց քուրդ ազգության: Միանշանակորեն քուրդ համարվեցին եզդի ազգի մտավորական զավակները՝ ուսուցիչները, լրագրողները, բանաստեղծներն ու բժիշկները:



УДОСТОВЕРЕНИЕ № 3.

Герой Езидского народа
Аджоян - Тамоян
Азиз Амарович
Награжден золотой медалью
президент Езидского Н.С.
А. Тамоян
«27» ноября 1992 г.

*Ազիզ Թամոյանին տրված վկայականը՝ Ազգային հերոսի կոչում շնորհելու մասին:*

Սակայն, ինչպես տեսանք, իրադրությունը փոխվեց: Ու այսօր եզդի ժողովուրդն ունի իր ազգային հերոսները: Հետագայում, արդեն 2000 թվականին, Եզդիների ազգային միության նախագահությունը ազգային հերոսների փոքրիկ ընտանիքը համալրեց ևս երկու անդամով. ազգային

հերոսներ հռչակվեցին իր ողջ գործունեությամբ ազգին անշահախնդրորեն նվիրված, Հայաստանի ազգային ռադիոյով եզդիների համար տրվող հաղորդումների գլխավոր խմբագիր Հասան Թամոյանը և Արցախյան հերոսամարտի ամենաակտիվ մասնակիցներից մեկը՝ Մշիր Նադոյանը:

Ավելի ուշ՝ 2001 թվականի հունիսի 22-ին եզդիների ազգային միության նախագահությունը կայացրեց ևս մի կարևոր որոշում:

Նախագահության բոլոր անդամները հետաքրքրությամբ ընդունեցին իմ առաջարկը՝ ստեղծել եզդի ժողովրդի ազգային հերոսների դիմանկարների շարքը: Նախագահության նույն նիստում նախ որոշվեց պաշտոնապես ճանաչել և ի լուր ամենքի հռչակել եզդի ժողովրդի ազգային հերոսների անունները: Ահա նրանք.

**Դավրեշե Ավդի, Համե Շարո, Մճոե Շեխ Իսաե, Ալի Բագե Միրե Շեխա, Կայմազե էզդի, Շեխ Արաբ, Շեխ Միրզա, Օնե Շըբըլի, Բրահիմ Աղա, Ամըր Աղա, Ուսուբ Բեկ, Ջահանգիր Աղա, Ջավո Բեկ, Աքարե Հասո, Օզմանե Գըզո, Ավդալե Քոչո, Ամրե Նադո, Հոսե Շավեշ,Թեմուրե Ղադի, Քալաշե Խուդեդա, Հասոե Սադե, Ամարե Թամո, Շեխ Բրո Շամոյան, Ազիզ Թամոյան, Միրզա Բաքոյան, Մշիր Նադոյան, Հասան Թամոյան:**

***

Զովունի գյուղի բնակիչ, նկարիչ Սամվել Ղազարյանը համբերատարությամբ լսելով ինձ և եզդի տարեց մարդկանց, ուսումնասիրելով եզդիների կեցվածքը, սովորությունները, ճանաչելով նրանց հոգեբանությունը, լսելով ժողովրդական զրույցները եզդի հերոսների մասին, ստեղծեց նրանց դիմանկարների շարքը, որը հավանության արժանացավ և՛ նախագահության անդամների, և՛ միությունն այցելող եզդիների, և՛ գիտակ մարդկանց կողմից:

Ես՝ որպես եզդիների ազգային միության պրեզիդենտ, որպես եզդի և որպես իմ ժողովրդի զավակ, ներքին գոհունակություն եմ ապրում, որ իմ նախաձեռնությամբ, իմ միջոցներով ստեղծվեց եզդի ժողովրդի հերոսների դիմանկարները, որոնք այսուհետև կդառնան հավատի, կլինեն հավերժության ուղեկիցները և հավերժ կապրեն սերունդների սրտերում: Իհարկե, ստեղծվեց ոչ միայն մեր ազգային հերոսների, այլև ազգային սրբերի դիմանկարների շարք, որի մասին կպատմենք եզդիների դավանանքի մասին խոսելիս:



*Իսկ այժմ ընթերցողին եմ ներկայացնում եզդի ժողովրդի ազգային հերոսների դիմանկարները՝ կենսագրական համառոտ տվյալներով.*



## ԴԱՎՐԵՇԵ ԱՎԴԻ

Ապրել է 19-րդ դարում: Պայքարել է քրդերի դեմ: Չի ուրացել ապուպապերի կրոնը, չնայած, որ նրան տվել են ամենատարբեր խոստումներ:

## ՀԱՄԵ ՇԱՐՈ



Ապրել և գործել է 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին՝ Սինջարի լեռներում: Գլխավորել է եզդի ժողովրդի պայքարը թուրքերի և քրդերի դեմ:



## ՄՃՈՅԵ ՇԵԽ ԻՍԱՅԵ

Ապրել և գործել է 19-րդ դարի առաջին կեսին: Դաշնակցելով Շեխ Միրզայի հետ, պայքարել է թուրք և քուրդ բռնակալների դեմ: Լուծելով Շեխ Միրզայի արյան վրեժը, մասնակցել է Դալանի ճակատամարտին՝ փրկելով եզդի համայնքին: Դալանի մարտում Մճոյե Շեխ Իսան զոհվում է, բայց հասցնում է փրկել իր համայնքը:

## ԱԼԻ ԲԱԳԵ ՄԻՐԵ ՇԵԽԱ



Ապրել և գործել է 19-րդ դարավերջում ու 20-րդ դարի սկզբներին: Օսմանյան պաշտոնյաները նրան առաջարկեցին, որ ինչպես ինքը, այնպես էլ բեգի համայնքը, ընդունեն մահմեդականություն: Ալի Բեգը մերժեց թուրքերի առաջարկը, չենթարկվեց նրանց և գերադասեց պատվաբեր մահը: Իրաքի հյուսիսային մասում թուրքերը, քրդերը նրան գազանաբար սպանեցին ու կախեցին ծորերից մեկում գտնվող ծառից: Ձորը հիմա կոչվում է Ալի Բեգի անունով /Գալիե Ալի Բագե/:

## ԿԱՅՄԱԶԵ ԷԶԴԻ



Կայմազե էզդին, ինչպես և իր քաջ նախորդները, աչքի էր ընկնում ազգային արժանապատվությամբ, մուսուլմանների դեմ պայքարի վճռականությամբ: Նա պատրաստ էր դիմել անձնազոհության` իր օջախի, բարեկամների, եզդիների համար:

Կայմազե էզդիի անունը լավ հայտնի էր նաև թշնամիներին, և բնավ էլ պատահական չէ, որ նրանք աշխատում էին հեռու մնալ նրանից: Կայմազե էզդիի փառահեղ տեսքն անգամ սարսափ էր ազդում թշնամիներին, և հենց այդ մասին է, որ ժողովուրդը հիշում է իր մի շարք երգերում:

## ԱՐԱԲԵ ՇԵԽ ՀԱՄԱԴԵ



Արաբե շեխ Համադեի հետնորդներն ապրում են Կոտայքի մարզի Զովունի գյուղի Ամո եզդիական թաղամասում: Նրանք սրբությամբ են պահում իրենց հերոս նախնու անունը և սերնդե-սերունդ փոխանցում են Շեխ Արաբի հերոսության մասին հետևյալ ավանդույթը.

Շեխ Արաբը 1914 թվականին ապրելիս է եղել Ապարանի շրջանի Միրաք գյուղում: Դեռևս ցարական Ռուսաստանի օրոք էր, որ լուր է տարածվում, թե ճանապարհներին մի մարդակեր կենդանի է լույս ընկել, որ



հանդիպած բոլոր մարդկանց ֆիզիկապես ոչնչացնում է: Մարդիկ վախենում ու տնից դուրս չէին գալիս:

Շեխ Արաբը վերցնում է իր դաշույնը, մեծ ճանապարհով գնում է դեպի Ապարան: Շուտով երևում է զարհուրելի կենդանին, հարձակվում է շեխ Արաբի վրա, սակայն քաջ շեխի դաշույնը խրվում է չար սիրտը, ու նա անշնչացած ընկնում է գետին: Լուրը հասնում է ցարին, ու նա շեխ Արաբին հռչակում է հերոս:



## ՇԵԽ ՄԻՐԶԱ

Եզդի ժողովրդի ազատագրական պայքարի ամենանշանավոր դեմքերից է: 18-րդ դարի 20-ական թվականներին գլխավորել է եզդիների և հայերի զինված պայքարը թուրքերի և քրդերի դեմ: 1827-28 թվականներին հայ քահանա Պողոսի /Քեչիշ Պոլո/ հետ, տասը հազարանոց աշխարհազորով Ռընդովանում պարտության մատնեց թուրքերի և քրդերի 30 հազարանոց բանակին: Հետագայում, մերժելով մահմեդականության ընդունման առաջարկը, դավադրաբար սպանվեց:

Ինչպես Շեխ Միրզայի, այնպես էլ Շեխ Մըճոյի մասին առ այսօր երգվում են հերոսական երգեր:

## ՕՆԵ ՇԸԲԸԼԻ



Կենսագրական կցկտուր տեղեկություններ են հայտնի Օնե Շըբըլի մասին: Հայտնի է, որ նա ապրել է 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին: Ինչպես հայտնի է, Թուրքահայաստանում ոչ միայն հայերը, այլև եզդիներն ու մյուս ազգային փոքրամասնությունները ենթարկվում էին հալածանքների, կանգնած էին հավատափոխության, ուծացման վտանգի առջև: Եվ այդ օրհասական պահին հանկարծ հնչում է Օնե Շըբըլիի որպես ազատագրական պայքարի անձնվեր մարտիկի, եզդիների շահերի անշահախնդիր պաշտպանի անունը:

Օնե Շըբըլին իր բարեկամների և մտերիմների ոչ մեծ խմբով օգնության էր հասնում եզդիաբնակ գյուղերին, կտրում էր ավազակների ճամփան, հետ էր խլում թալանվածը, անասունները և վերադարձնում էր տերերին: Եվ պատահական չէ, որ Օնե Շըբըլիի մասին նույնպես ժողովուրդը երգեր էր հորինում, հիշում նրա սխրագործությունները, փառաբանում իր սիրած հերոսին:



# ԲՐԱՀԻՄ ԱՂԱ

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Բրահիմ աղան Արևմտյան Հայաստանի Իգդիրի գավառի Սինակի յոթ գյուղերի գլավինն էր (ղեկավարը)։ Նրա ղեկավարությամբ եզդիները պայքարում էին թուրքերի և քրդերի դեմ, պաշտպանում իրենց հայրենի գյուղերը, երբեմն հարձակվում հրոսակների վրա, հետ խլում թալանված ավարը, անասունները, ոչխարների հոտերը։ Նրա մասին ժողովուրդն առասպելներ էր հյուսում, երգեր ստեղծում նրա ուժի և արիության մասին։ Մի երգում նրա մասին ասվում է. «Բրահիմ աղան երկաթը սառը-սառն էր ծռում (հասըն սարի քաղըղը)»։

# ԱՄԸՐ ԱՂԱ



Եզդի ժողովրդի ազատագրական պայքարի պայծառ դեմքերից է, որի անվան հետ կապված են մի շարք առասպելներ, ժողովրդական բանահյուսության բազմաթիվ նմուշներ։

Թուրքիայում Ամըր աղան գործել է 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին, գլխավորել է օրթըլանների պայքարը ընդդեմ թուրք և քուրդ հրոսակների։ Օրթըլա գյուղը փաստորեն զերծ է մնացել ասպատակություններից Ամըր աղայի շնորհիվ, որի քաջագործությունների համբավը հայտնի էր տարածաշրջանում։ Նրա անունը ահ ու սարսափ էր տարածում ամենուրեք։ Որպես օրթըլաների գլավին նա սիրված էր բոլորի կողմից և մեծ հեղինակություն էր վայելում եզդիների շրջանում։ Ամըր աղան շարունակում էր իր հոր՝ Ալի աղայի, ինչպես նաև իր պապի՝ հայտնի Թամըր աղայի ավանդույթները, որոնք փոխանցվեցին նաև նրա որդի Շավավ բեկին, թոռներ Տահար բեկին, Սահիդ բեկին, ծոռներին՝ Փաշիկ բեկին, Ուսկե բեկին։ Վերջիններս ապրում են Երևանի Ավան թաղամասում, հանդիսանում են իրենց մեծ գերդաստանի՝ Մանքաշիների ցեղի ներկայացուցիչներ։ Տհար բեկի թաղման արարողության ժամանակ աշխարհի և Հայաստանի եզդիների ազգային միությունների նախագահ Ազիզ Թամոյանն առաջարկեց, որ օրթըլանների բեկությունը շարունակի նրա որդի Փաշիկը։ Այդ առաջարկն ընդունվեց ծափերով։ Հոր գործը շարունակեց Փաշի բեկը։





# ՈՒՍՈՒԲ ԲԵԿ

Նրա մասին ավելի մանրամասն պատմվում է սույն գրքի 20-րդ էջում։ Դեռևս 1909 թվականին հայկական մամուլում հաղորդագրություն հրապարակվեց այն մասին, որ միր Իսմայիլը բոլոր եզդիների գլխավոր և իր ներկայացուցիչն է նշանակում Ուսուբ բեկ Թեմուրյանին։ Ուսուբ բեկի նախնիներին նվիրված մի շարք հոդվածներ են տպագրվել հայկական մամուլում։ Հիշվում են նրա նախնիներ Մահմուդ, Բաքըր, Դաուդ, Ղալանդար, Օսման, Հըսեն, Թամըր աղաները, որոնց արմատները հասնում են դարերի խորքերը։ 1909 թվականին իր նախնիներից առաջնորդի կարգավիճակն ստանձնել է Ուսուբ բեկը, որը եզդի ժողովրդին արժանիորեն ներկայացրեց հայոց առաջին հանրապետության խորհրդարանում՝ 1918 թվականին։ Ականատեսների վկայությամբ և սերունդների հիշողության մեջ նա մեկուկես տարում անգնահատելի օգնություն է ցույց տվել իր ժողովրդին։

Ուսուբ բեկն ապրեց մինչև 1934 թվականը։ Նրա աճյունն ամփոփվեց Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղի եզդիական գերեզմանոցում։ Անցել են տարիներ, սակայն միշտ վառ է մնում Ուսուբ բեկի հիշատակը։ Նրա գերեզմանը ուխտավայր է դարձել Հայաստանում ապրող եզդիների համար։

# ՋԱՀԱՆԳԻՐ ԱՂԱ



Ջահանգիր աղան ծնվել է 1874 թվականին, Վանի գավառի Չիբուխլի գյուղում, եզդիների ցեղապետ Խատիֆ աղայի ընտանիքում։ Թեև նրա մասին պատմել ենք գրքի նախորդ էջերում, բայց կրկին ուզում ենք անդրադառնալ անմահ հերոսի կերպարին։ Տեսնելով թուրք ջարդարարների բարբարոսությունները, պատանի հասակից նա ընդվզեց բռնակալների դեմ։ 1904 թվականին Վանի նահանգի Հազարան գյուղում առաջին անգամ հանդիպեցին փառաբանված Անդրանիկ Զորավարն ու Ջահանգիր աղան։ Անդրանիկն իմանալով, որ Ջահանգիր աղան նշանված է, ցանկություն է հայտնում դառնալ նրա հարսանյաց քավորը։ Այդ օրվանից սկսվում է նրանց բարեկամությունը։ Ջահանգիր աղան իր միջոցներով զենք է ձեռք բերում, հայթայթում է ռազմամթերք և բաժանում եզդիներին ու հայերին։ Գաղթի ժամանակ ժողովրդին ուղեկցել

ու նրա անվտանգությունն ապահովել են հայ ֆիդայիները և Ջահանգիր աղայի ջոկատները, որոնք բազմիցս ետ են մղել թուրքերի գրոհները: Ընդհարումներից մեկի ժամանակ Ջահանգիր աղան վրեժխնդիր է լինում և սպանում արյունարբու թուրք Ֆերիկ փաշային: Հայկական և ռուսական զորամասերի հետ Ջահանգիր աղայի ջոկատները մասնակցեցին Կարսի, Սարիղամիշի կռիվներին: Քաջության և խիզախության համար Ջահանգիր աղան պարգևատրվեց Գեորգիևյան խաչով: Սարդարապատի ճակատամարտի օրերին Ջահանգիր աղան և նրա զինյալները, իրո՛ք, անգնահատելի գործ կատարեցին, նպաստեցին հայերի հաղթանակին: Ջահանգիր աղայի անունը ընդմիշտ կապվեց Բաշ-Ապարանի, Սարդարապատի անունների, հաղթանակի հետ: Հետագայում նա ապրել է Արագածի շրջանի Ջարջառիս գյուղում (այժմ՝ Դերեկ): Այստեղից էլ 1938 թվականին նրան ձերբակալեցին, աքսորեցին Սիբիր, որտեղից նա այլևս չվերադարձավ:

## ՋԱՎՈ ԲԵԿ



Անվախի և քաջի համբավ էր վայելում: Ջավո բեկը ծնվել է Թուրքիայում 1864 թվականին, վախճանվել է 1924-ին, Թալինի շրջանի Սիչալի գյուղում: Պատմում են, որ Իգդիրում նա մեծ հեղինակություն է ունեցել որպես ոստիկան, ստանձնած հանձնարարությունները կատարել է ճշտությամբ, արժանացել խրախուսանքների: Այդպիսի մի հանձնարարություն կատարելու համար նշանակվել է Իգդիրի գավառի յոթ գյուղերի գլավին:

Դեպքը կատարվել է այսպես. թուրք խաներից մեկը՝ Բողուլավսկին, կանչում է Ջավո բեկին և ասում, որ մի թուրք դերվիշ են սպանել, գտիր, թե ովքեր են դրանք: Ջավո բեկը պարզում է, որ սպանողը քուրդ Ռաշկե Հաջին է և պատրաստվում է բռնել նրան: Իմանալով, որ Ռաշկե Հաջին գտնվում է Մասիսի փեշերի քարայրներից մեկում, Բողուլավսկու և ոստիկանների հետ մոտենում է քարայրի մուտքին և առաջինն ինքն է մտնում քարայր: Ասում են, որ նա տեսնում է սեղանին դրված մի աման խաշիլ, որ ուտում էին Ռաշկեի յոթ տղաները, ձեռքերով, իրար ձեռքից խլխլելով: Այդ ժամանակ գալիս է նաև Բողուլավսկին, հարցնում է Ռաշկեին, թե ինչու են ուտում մի ամանից, նա պատասխանում է. «որ կատաղի դառնան»: Հանկարծ Ջավո բեկը տեսնում է Ռաշկե Հաջիի կնոջը, որ անկյունից հրացանը վերցնելով, ուզում է տալ ամուսնուն: Ջավո բեկը կանխում է այդ և սպանում նրան: Բռնում են Ռաշկե Հաջիին, տանում են ռուսական ոստիկանություն, սրանք էլ հանձնում են Թուրքիայի կառավարությանը, սա էլ որպես պետական հանցագործի, Ռաշկե Հաջիին դատապարտում է 101 տարվա բանտարկության:



Ջավո բեկի տղան՝ Քյարամե Ջավոն, որը նույնպես հերոս անձնավորություն էր, ժողովրդի մեջ մեծ հեղինակություն էր վայելում: Նրա թոռները՝ Ֆատին և Ալին, այժմ ապրում են Արմավիրի մարզի Նորակերտ գյուղում:

## ԱԹԱՐԵ ՀԱՍՈ



Աթարե Հասոն հայտնի մարդ էր եզդիների շրջանում, ապրել է երկար: 1915 թվականի գաղթից հետո հաստատվել է Արմավիրի մարզի Արտաշար գյուղում: Վայելել է մեծ հեղինակություն: Նրա խոսքն ազդեցիկ էր և համոզիչ: Ուներ մի աղջիկ՝ Սուլթան անունով:

Երբ Աթարե Հասոն վախճանվեց, նրա թաղման արարողությանը մասնակցեցին հարյուրավոր եզդիներ ու հայեր: Զրույցներ են շրջում Աթարե Հասոյի մասին, զրույցներ, որ գովերգում են նրան, երգում են նրա հերոսությունը...

Ասում են, որ տնից-տեղից զրկված, գաղթի ճամփան բռնած Աթարե Հասոն, Արազ գետով այս կողմն անցնելիս, երդվել է ամեն օր մի քուրդ կամ մի թուրք սպանել: Այդպես էլ վարվում է. իր ջոկատի անդամների հետ ամեն օր մի թուրք կամ քուրդ է բռնում, կապկպում ու նետում Արազ գետը: Ու այդպես շարունակ, ու այդպես վրեժ է լուծում իր բոլոր կորուստների համար:

Աթարե Հասոյի հետնորդներն ապրում են Արմավիրի մարզի Ջվարթնց գյուղում:

## ՕՋՄԱՆԵ ԳԶՈ



19-րդ դարի վերջերին լայնորեն հայտնի դարձավ փիր Օջմանե Գզոյի անունը: Նրա մասին լեգենդներ էին հյուսվում, երգեր էին ստեղծվում, որովհետև նա էր վերջ տվել Ռաշկե Հաջիի ասպատակություններին:

Օջմանե Գզոն ծնվել է մոտավորապես 1840 թվականին՝ Թուրքիայի Իգդիրի նահանգի Բաշ-Սինակ գյուղում: Ականատես լինելով քրդերի հարձակումներին, թալանին, ատելությամբ է լցվում հրոսակների հանդեպ և որոշում է վրեժ լուծել նրանցից: Այդպիսի մի թալանից հետո Օջմանե Գզոն իր մարդկանցով հարձակվում է նրանց վրա, բռնում է Ռաշկե Հաջիին, կապում

է անասունների մսուրքից: Բայց Ուսուբ բեկի հայրը՝ Հասան աղան, բաց է թողնում նրան: Որոշ ժամանակ անց Դիդամի գետի մոտ (Ճրմե Դիդամե) քրդական Բաշինյան ցեղերը բռնում են Օզմանե Գզոյին ու նրա քրոջ տղային՝ Տիտալին ու սպանում են նրանց:

Օզմանե Գզոյի թոռը՝ Խդր (Խդրե փիր Համո), ապրում է Արտաշատի շրջանի Գեղանիստ գյուղում:

Երկրաշարժից հետո 13 աղետյալների երկու տարի շարունակ նա պահեց իր տանը, օգնեց Ղարաբաղին: Զոհվածների համար իրենց գյուղում նա պատարագ տվեց, որին մասնակցեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը:



## ԱՎԴԱԼԵ ՔՈՉՈ

1915 թվականն էր, ծանր ու օրհասական տարիներից մեկը: Ավդալե Քոչոյի անունն այդ տարիներին հնչում էր որպես վրիժառության, արդարության, հույսի ձայն: Չէ՞ որ նա հերոսաբար դիմագրավում էր քրդերին, հետ մղում հրոսակների հարձակումները, հայրենակիցներին փրկում թշնամու վայրագություններից: Քանի՜-քանի անգամ էր Ավդալե Քոչոն քուրդ թալանչիների ձեռքից խլել թալանված ապրանքները, անասունները և հետ վերադարձրել տերերին:

Բայց ահա ծանր բոթը տարածվեց ամենուրեք: Թուրքական Ղարաղու գյուղի մոտ քրդական հրոսակներն սպանել են Ավդալե Քոչոյին ու նրա որդուն՝ Ուսուբին: Տասը գնդակ էր խոցել Ավդալե Քոչոյին: Վերջին շնչում, մտածելով իր ժողովրդի մասին, նա ասել է. «Ինձ վահան դարձրեք, կռվեք քրդերի դեմ, պաշտպանեք իրար»:

Այդպիսին էր նա՝ եզդի ժողովրդի անմոռաց զավակը՝ Ավդալե Քոչոն: Նրա որդիները՝ Աթարե Ավդալը և Դավրեշ Ավդալը, վերջինիս զավակները՝ Խդրե Աթարը, Սայիդե Աթարը, ապրում են Կոտայքի մարզի Զովունի գյուղի Ամո թաղամասում:

## ԱՄՐԵ ՆԱԴՈ



Կոտայքի մարզի Արզնի ավանի անվանի մարդկանցից են Ամրե Նադոյի հետնորդները՝ Բրոն և Ուսկեն, որոնք հետաքրքիր հուշեր են պահպանում իրենց հերոս նախնու մասին: Նրանք գիտեն, որ Ամրե Նադոն, եզդիների պաշտպանն ու օգնականը ապրել է 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին: Գիտեն, որ Ամրե



Նադոն պայքարել է եզդիների ունեցվածքը թալանող քրդերի դեմ: Գիտեն, որ եթե քրդերը մեկ անասուն են տարել, Ամրե Նադոն վերադարձրել է տասը, եթե տասն են տարել, հետ է բերել հարյուրը: Սա էր Ամրե Նադոյի սկզբունքը. տասն էլ, հարյուրն էլ վերադարձնել այն ընտանիքներին, որոնցից տարել են քրդերը:

Ահա թե ինչու զրույցներից մեկում հիշվում է, որ քրդերը մոտենալով եզդիների գյուղին, ասում էին. «Ամրե Նադոյի գյուղն է, չմտնենք»:

Իսկ այդ գյուղը Իգդիրի գավառի Ղարադու գյուղն է, ուր ապրեց, պայքարեց և իր մահկանացուն կնքեց եզդի ժողովրդի արժանավոր զավակը՝ Ամրե Նադոն:

Հիշենք նաև, որ Ամրե Նադոն պատկանում էր դազանիների տոհմին:



## ՀՈՍԵ ՇԱՎԵՇ

Երբ ասում են Հոսե Շավեշ, եզդիներն անմիջապես հիշում են փառահեղ տեսքով եզդիական ընտանիքի մեծ նահապետին, որն իր բարի գործերով հիշվում է սերունդների կողմից: Ապրել է անցած դարի վերջերին, այս դարի սկզբներին: Ժողովրդական երգերի մեջ հաճախ է հիշվում նրա անունը, կատարած սխրանքները:

## ԹԵՄՈՒՐԵ ՂԱԴԻ



Ծնվել է Արևմտահայաստանում: Ինչպես բոլոր եզդիները, նա նույնպես ենթարկվել է հալածանքների: Չդիմանալով ճնշումներին, ջոկատ է կազմել և կռվել մուսուլմանների դեմ: Մեծ գաղթի օրերին հայտնվել է Թալինի շրջանի Դիհան գյուղում: Վայելել է մեծ հեղինակություն: Նրա հետնորդներն ապրում են Կոտայքի մարզի Ջրաղբյուր գյուղում:

## ՔԱԼԱՇԵ ԽՈՒԴԵԴԱ



Ճանաչված ու սիրված անձնավորություն էր Քալաշե Խուդեդան , այդ խստաբարո դեմքով ռամոշիների ցեղի ներկայացուցիչը, որի կրծքի տակ, բաբախում էր բարի մի սիրտ:

Նա ծնվել է Արևմտահայաստանում, ապրել է եզդի ժողովրդին բաժին հասած դժվարությունները, պայքարել թշնամիների դեմ և հերոսացել այդ պայքարում: Նրան բարի խոսքով են հիշում բոլոր եզդիները:

## ՀԱՍՈԵ ՍԱԴԵ



Ապրել է 1882-1936 թվականներին: Ծնվել է Վանի նահանգի Ութե գյուղում: Ռաշանիների ցեղից է, իր ցեղի պաշտպանը և օգնականը: 1935 թ., որպես հակախորհրդային անձ կարճ ժամանակով ձերբակալվեց: 1936թ. մայիսին Աշտարակի շրջանի Ուջան գյուղի մոտ ձիով անցնելիս կայծակնահար է լինում և վախճանվում:

Նրա թոռը՝ Քյարամ Մզաֆարի Ռասոյանը, այժմ ապրում է Երևանում և զրույցների ժամանակ հաճախ է պատմում իր հերոս պապի քաջագործություններից:

## ԱՄԱՐԵ ԹԱՄՈ



Հերոսական է եղել Ամարե Թամոյի ապրած կյանքը: Ապրել է երկար՝ 79 տարի: Ծնվել է Արևմտյան Հայաստանի Ղարաղու գյուղում՝ 1897 թվականին: Մանուկ հասակից տեսել է ավեր ու ավերածություններ, ալան ու թալան, ատելությամբ է լցվել թուրք ու քուրդ ավազակների, թալանչիների, ասպատակների նկատմամբ:

1918 թվականին գաղթի ճանապարհին, երբ քրդերն սպանում են Ամարե Թամոյի եղբայր Սիմադին, հորեղբայր Ավդալին ու նրա որդի Ուսուբին, Ամարե Թամոն որոշում է վրեժխնդիր լինել: Նա իր եղբայր Ալիի հետ միասին հարձակվում է Կարսի նահանգի Օզրլու և Ալաջա գյուղերի մոտ քրդերի վրա, կոտորում նրանց, ապա հավաքելով իր յուրայիններին, 1918 թվականին անցնում է ռուսական սահմանը: Այդ վրիժառության, հերոսական արարքի համար երգեր են հյուսվել Ամարե Թամոյի և նրա եղբայր Ալիի մասին: Ամարե Թամոն երբ գոռում էր, նրա ձայնը Ջենով Օհանի ձայնն էր հիշեցնում:

Անցնելով Արևելահայաստան և փրկվելով ֆիզիկական բնաջնջումից, Ամարե Թամոն հաստատվում է Կոտայքի մարզում: Նա իր եղբայր Ալիի և հորեղբայր Աթարի հետ հիմնում է Ամո գյուղը, որը դառնում է շատ եզդիների հարազատ օջախը:

Ամարե Թամոն վախճանվեց 1976 թվականին և ամփոփվեց Ամո գյուղի եզդիական գերեզմանոցում:



Ինչպես նրա հարազատներն ու բարեկամները, այնպես էլ նրան ճանաչողները, սիրով ու բարի խոսքով են հիշում Ամարե Թամոյին:

Ամարե Թամոյի որդին՝ Ազիզ Թամոյանը ընտրվել է Հայաստանի և աշխարհի եզդիների ազգային միությունների նախագահ: Հասարակական ակտիվ աշխատանքի, Արցախյան հերոսամարտում ցուցաբերած արիության և խիզախության համար նա արժանացել է եզդի ժողովրդի հերոսի պատվավոր կոչման և պարգևատրվել է Հերոսի ոսկե մեդալով:

## ՇԵԽ ԲՐՈ ՇԱՄՈՅԱՆ



Մեր ժամանակակիցն էր Բրո Շամոյանը, կամ ինչպես նրան անվանում են՝ Շեխ Բրոն: Նա մեծ հեղինակություն էր վայելում իր շրջապատում, բայց առավել հայտնի դարձավ 1988 թվականին, երբ կանգնելով եզդիների առաջնորդ Ազիզ Թամոյանի կողքին, պայքարելով կրքոտությամբ, ակտիվորեն մասնակցեց եզդի անվան վերականգնմանը: Նա լինում էր եզդիաբնակ գյուղերում, բորբոքում էր ազգային արժանապատվության կրակը, ոգևորում էր բոլորին: Նա շեխե շեխու բաքրաների ղեկավարն էր ու ոգեշնչողը: Նրան և, շարժմանն ընդհանրապես, մեծապես օգնում էր հորեղբոր տղան՝ Քյարամ Ավդոյանը, և երկուսն էլ մեծ ավանդ ունեցան Արցախին օգնելու գործում: Բոլորը գիտեն, թե ինչպես Բրո Շամոյանը, մոռացած տուն ու տեղ, թողած առօրեական ու ընտանեկան գործերը, առավոտից մինչև ուշ գիշեր, մտահոգված ազգային պատկանելության և Արցախի հարցով, աշխատում էր անդադար ու նվիրվածությամբ:

Հիշե՛նք նաև, որ Բրո Շամոյանը ծնվել է 1923 թվականին Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղում և վախճանվել է 1995 թվականին՝ Կոտայքի մարզի Քանաքեռավան գյուղում, եզդի ժողովրդի սրտում մնալով որպես ազգային հերոս:

## ԱԶԻԶ ԹԱՄՈՅԱՆ



Ազիզ Թամոյանը ծնվել է 1937 թվականին Կոտայքի մարզի Զովունի գյուղում: Ավարտելով Դավիթաշենի միջնակարգ դպրոցը, երկար տարիներ հայրենի գյուղի դպրոցում եզդի երեխաներին ծանոթացրել է մայրենի լեզվին ու հարազատ ժողովրդի պատմությանը: Նա եղել է Զովունի գյուղի դպրոցի փոխտնօրեն, Զովունիի խորհրդային տնտեսության տնօրենի տեղակալ,

Նաիրիի շրջանի անասնամթերման գրասենյակի տնօրեն: Ավարտել է Հոկտեմբերյանի գյուղատնտեսական տեխնիկումը, Երևանի Անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը: 1988 թվականից նա ՀՀ եզդիների ազգային միության նախագահն է, 1997 թվականից՝ նաև Աշխարհի եզդիների ազգային միության պրեզիդենտը:

Ազիզ Թամոյանը Հայաստանի եզդիների ազգային զարթոնքի ոգեշնչողն ու առաջնորդն է: Նրա ջանքերի շնորհիվ էր, որ վերականգնվեց արդարությունը. եզդիները կոչվեցին իրենց անվամբ: Նա մեծ աշխատանք կատարեց երկրաշարժի օրերին, փրկեց շատերի կյանքը, ակտիվորեն մասնակցեց Արցախյան շարժմանը, կազմակերպեց ազատամարտիկների ջոկատներ, անձամբ մասնակցեց Արցախի ազատագրմանը: Ցուցաբերած արիության և խիզախության համար Ազիզ Թամոյանն արժանացավ եզդի ժողովրդի ազգային հերոսի պատվավոր կոչմանը, պարգևատրվեց Հերոսի ոսկե մեդալով: Եզդիների ազգային պատմագիտության և աստվածաբանության դոկտոր, պրոֆեսոր է:



## ՄԻՐԶԱ ԲԱՔՈՅԱՆ

Դեռևս 1992թ., երբ եզդիների ազգային միության նախագահության ընդլայնված նիստը սահմանեց եզդիների ազգային հերոս պատվավոր կոչումը, Միրզա Բաքոյանն առաջիններից էր, որ արժանացավ այդ բարձր կոչմանը: Նա հասարակական գործիչ է և ազգային բարերար: Երկրաշարժի օրերին և Արցախյան շարժման ժամանակ նա մեծ օգնություն ցույց տվեց աղետյալներին, ազատամարտիկներին, ապա նաև զոհված ազատամարտիկների ընտանիքներին:

## ՄՇԻՐ ՆԱԴՈՅԱՆ



Մշիր Խուդոյի Նադոյանը ծնվել է Երևանում 1958 թվականին: Ունի միջնակարգ մասնագիտական կրթություն:

Մշիր Նադոյանին եզդի ժողովրդի ազգային հերոսի պատվավոր կոչում շնորհելու մասին ԵԱՄ-ի նախագահության որոշման մեջ ասված է. «Հաշվի առնելով Մշիր Նադոյանի հայրենանվեր աշխատանքը, այն մեծ ծառայությունը, որ նա ցուցաբերել է Արցախյան հերոսամարտում, նրան շնորհել Ազգային հերոսի պատվավոր կոչում»:



1989 թվականին Մշիր Նադոյանն ընդգրկվեց Հայաստանի սահմանամերձ շրջանների ինքնապաշտպանական ջոկատների կազմում, իրեն փառքով պսակեց ինչպես պաշտպանական մարտերում, այնպես էլ Արցախի բնակավայրերի պաշտպանության և ազատագրման մարտերում: Նա աչքի էր ընկնում խիզախությամբ, արիությամբ, հաճախ էր արժանանում հրամանատարության խրախուսանքին: Նրա մասին լեգենդներ են հյուսվել, և Մշիրը իր սխրանքներով օրինակ է դարձել բոլորի համար:



## ՀԱՍԱՆ ԹԱՄՈՅԱՆ

Հասան Մահմուդի Թամոյանը ծնվել է 1957 թվականին՝ Արմավիրի մարզի Արմավիր գյուղում, ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը: Ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, որն ավարտել է 1983 թվականին և ստացել իրավաբանի մասնագիտական որակավորում: Ուսման հետ զուգընթաց նա սովորել է նաև պետական համալսարանի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետում, որն ավարտել է 1982 թվականին, ստացել լրագրող-լուսանկարչի մասնագիտություն:

1983 թվականից Հասան Թամոյանն աշխատում է որպես Հայաստանի հանրային ռադիոյի եզդիների համար տրվող հաղորդումների բաժնի վարիչ, 1990 թվականից «Եզդիների ձայն» թերթի գլխավոր խմբագիրն է: Ընտրվել է Հայաստանի եզդիների ազգային միության փոխնախագահ:

Արցախյան ազատամարտի ընթացքում Հասան Թամոյանը ոգևորում էր եզդի ժողովրդին, ներկայացնում եզդի քաջորդիների սխրանքները, ցավով պատմում զոհված մարտիկների մասին, շրջում էր Հայաստանի եզդիաբնակ վայրերում, ոգևորում եզդի ժողովրդին, օգնում նրանց ապրելու, հարատևելու: Կատարած անձնվեր աշխատանքի համար Հասան Թամոյանը ԵԱՄ-ի նախագահության կողմից արժանացավ եզդի ժողովրդի ազգային հերոսի կոչման:

***

*Ազգային հերոսների մասին խոսելիս չպետք է մոռանալ Սամանդ Ալիի Սիաբանդովին, որը դեռևս 1945 թվականին արժանացավ Խորհրդային միության հերոսի կոչման (կարդացեք հաջորդ էջում):*



# ՍԱՄԱՆԴ ԱԼԻԻ ՍԻԱԲԱՆԴՈՎ

## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ



Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրենակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով **Լենինի** շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*268. Փոխգնդապետ **Սամանդ Ալիի Սիաբանդովին**:*

*ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ` **Մ. Կալինին***
*ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար` **Ա. Գորկին***

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945թ.:*

Սամանդ Ալիի Սիաբանդովը ծնվել է 1909 թվականի նոյեմբերի 20-ին Կարսի նահանգի Ասանջան գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: 1914 թվականին նրանց ընտանիքը տեղափոխվում է Թիֆլիս, ապա մի քանի տարի հետո` Հայկական ՍՍՀ Ապարանի շրջան:

Ս. Սիաբանդովը նախնական կրթություն է ստացել Թիֆլիսի №109 աշխատանքային դպրոցում: 1924 թվականին նա ընդունվել է բանֆակ, իսկ 1928 թվականին գործուղվում Լենինգրադ` արևելագիտական ինստիտուտում սովորելու: 1931 թվականին Ս. Սիաբանդովը ընդունվում է ՍՄԿԿ շարքերը: 1932 թվականին նա վերադառնում է Ապարանի շրջան և աշխատում Սանգյար գյուղում իբրև դպրոցի վարիչ: 1935 թվականին նա առաջ է քաշվում կուսակցական աշխատանքի, սկզբում ՀԿԿ Ապարանի շրջկոմում իբրև հրահանգիչ, իսկ 1938 թվականին ընտրվում է ՀԿԿ Ալագյազի շրջկոմի առաջին քարտուղար:



Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Ս. Սիաբանդովը սովորում էր Մոսկվայում ՀամԿ(բ)Կ կենտկոմին կից կուսակցական բարձրագույն դպրոցում: Այստեղից էլ նա մեկնում է ռազմաճակատ և 1941 թվականի հունիսից №217 դիվիզիայի քաղբաժնում որպես հրահանգիչ, մասնակցում Մոսկվայի հերոսական պաշտպանությանը: 1942 թվականի սեպտեմբերից նշանակվում է նույն դիվիզիայի №155 գնդի կոմիսար, իսկ այնուհետև գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ. այդ պաշտոնում էլ մնում է մինչև 1945թվականի օգոստոս ամիսը:

№217 դիվիզիան, Տուլայից սկսած մարտական ուղի է անցել մինչև Գերմանիա: Նա մասնակցել է Բելոռուսիայի և Լեհաստանի ազատագրմանը:

1943 թվականի աշնանը Բոբրույսկ-Մինսկ մագիստրալն անցնելիս, Օսիպովիչի շրջանից ոչ հեռու` Մալի Գարոշկի գյուղի մոտ №155 գնդի ստորաբաժանումներից մեկը մարտի է բռնվում: Ճանապարհների խաչմերուկում թշնամին հարձակում է գործում մի քանի տանկով: Ստորաբաժանումը Ս. Սիաբանդովի ղեկավարությամբ, վեց ժամ կռվելուց հետո, թշնամու տանկերը ոչնչացնում է և գերի վերցնում մի քանի հարյուր զինվոր:

1943 թվականի դեկտեմբերին Բելոռուսիայի Սոժ գետի անցման և նրա մյուս ափում հենակետ ստեղծելու համար համառ մարտեր են տեղի ունենում: №217 դիվիզիայի գնդերը ազատագրում են Ստարի սելոն, իսկ նրա №155 գնդի ստորաբաժանումները` Կալինովկան:

1944 թվականի աշնանը №217 դիվիզիայի գնդերը մարտական առաջադրանք ստացան անցնել Նարև գետը, հենակետ ստեղծել և պահպանել այն` մինչև օգնություն ստանալը: Նրանց դեմ դուրս էին եկել թշնամու մեծ ուժեր: Մի շարք դիվիզիաների, այդ թվում №217 դիվիզիայի ստորաբաժանումներն անցան գետը և հենակետ ստեղծեցին Դզբոնտ գյուղի շուրջը: Այն պահպանելու համար մի քանի օր համառ ու հերոսական մարտեր տեղի ունեցան, մեր զորամասերը թշնամուն մեծ կորուստներ պատճառեցին: Թշնամին անցավ հակագրոհի` հենակետը վերացնելու և այնտեղ գտնված մեր զորամասերը ոչնչացնելու համար: Հրամանատարությունը փոխգնդապետ Ս. Սիաբանդովին հանձնարարում է միավորել իր ունեցած բոլոր ուժերը և ինչ գնով լինի պահպանել հենակետը: Ս. Սիաբանդովը պատվով է կատարում մարտական այդ առաջադրանքը, հանդես բերելով քաջ հրամանատարի հմտություն և տոկունություն: Դզբոնտ գյուղի շուրջը ստեղծված հենակետը պահպանելու ծանր մարտերում ցուցաբերած հերոսության համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով փոխգնդապետ Սամանդ Ալիի Սիաբանդովին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:

Այդ կապակցությամբ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Գուսևը և ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Խստոմինը 1945

թվականի ապրիլի 28-ին հատուկ նամակ են ուղարկում Ս. Սիաբանդովի հորը՝ որի մեջ գրված է. «Ձեր որդի, փոխգնդապետ Ս. Սիաբանդովը գերմանական զավթիչների դեմ մղվող պատերազմում ցույց տվեց մեր Հայրենիքին անսահման նվիրվածություն՝ իբրև կարմիր բանակի քաջ սպայի: Նա պատվով կատարեց իր զինվորական պարտքը: Ռազմաճակատում կռիվների ամենադաժան պահին Ս. Սիաբանդովը առաջավոր գծում զինվորների մեջ էր գտնվում: Նա իր անձնական օրինակով և քաջությամբ հերոսական սխրանքների էր ոգեշնչում մարտիկներին՝ մարտական առաջադրանքը սրբությամբ կատարելու համար»:

Փոխգնդապետ Ս. Սիաբանդովը պարգևատրվել է Լենինի շքանշանով, «Ոսկե աստղ» մեդալով, ինչպես նաև երկու Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի առաջին և երկրորդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշանով և հինգ մեդալով:

1945 թվականի դեկտեմբերին զորացրվելով բանակից, Ս. Սիաբանդովը Խորհրդային Հայաստանում ղեկավար կուսակցական աշխատանք է կատարում: 1952 թվականից նա աշխատել է Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության նախարարությունում իբրև նախարարի տեղակալ և կադրերի գլխավոր վարչության պետ:

1937 թվականից սկսած Ս. Սիաբանդովը ընտրվել է ինչպես ՍՍՀՄ, այնպես էլ Հայկական ՍՍՀ Գերագույն խորհուրդների դեպուտատ:

Ս. Սիաբանդովը միաժամանակ զբաղվել է գրական աշխատանքով:

***








К'ЛАМЕ ЩМӘ'ТЕ

К'ЛАМА БРАҺИМ АГ'А

һəwарəке дак'əтиə һəр һ'əвт гӧнде Синəке нав елейə,
П'ир Аqо дьве: ,,Һ'əмо дə тӧ баве мьн кьрьви,
Хwə бькə бьлəзинə, Браһим аг'ае Һ'ащи аг'ар'а бьгһинə,
Бежьне т'алане п'ире тə щəрда гӧр Һ'əсо
Ӧве лал еварда бьрьнə, əм к'əтьнə зəлулиеда,,.
Бьро дькə дьqир'инə, дьве: ,,Әсо, тӧ бьре мьн кьрьви,
Гəвро тəwлəхане бьк'ьшинə,
Щоте казониа мал һьлинə,
Әме хwə гедука гəлие Qəрер'а бьгьһиньн.
Бро, Әсо хwə дькьн дьлəзиньн хwə гелир'а дьгьһиньн,
Бро се дəнга дькə дьqир'инə, дьве: ,,Гӧр Һ'əсо т'ален бəрдьн,,.
Гӧр Һ'əсо дьвежə һəвале хwə: ,,Пешйа т'ален бəрдьн йане на
Браһим аг'ае мə жи wе пер'а бьгьрə һесире дилə,,.
Паше Гӧр Һ'əсо дькə гази, дьве: ,,Браһим аг'а, wəрə наве мьн на-
ва ел ə'шире бəqəм нəкə,
Әз сонд дӧхӧм наве qӧране,
Әзе тəр'а бьшиньм сəд зер'е зəрə,
Т'əне мьнр'а бьһелə qəдəрəк пəзə,,.
Бро дьве: ,,Әз Бромə, баве Һ'əсəньм, кəке Нəщифемə, нəбие, навə,
Әзе т'алане п'ире хwə пажда биньм минани һəрщарə.

К'ЪЛАМА Ә'МӘРЕ Т'ӘМО

Щева баве Ә'зиз щева зер'а,
Wəхта чека Р'əwане, кӧр'мьре Мкртумйан,
Дора бьранге Ә'ли гьртьн,
Кəке Ә'зиз, Аһ'мəд мьнəт нəк'ьшанд, к'əтə ч'ер'а.

Коне баве Ә'зиз гьрə-гьре ве бəр'ие,
Даниə к'ьлеса ташниголе сəр кание,
Гəло чьма мьле баве Аһ'мəд, кəке Ә'зиз,
Гьртьн авитьнə чека ве Р'əwане.

Зозане баве Зəйт'уне, кəке Зəлихе дьньер'ьм мерг у гӧлə,
Теда те һ'ир'ина мəнəкиа,
Кəсəк хӧдане хере т'ӧнə щаwəке бьднə Ә'лие бьра,

Бе ә'мәре бьра мере мерхас
Чека Р'әwане к'әтиә зәлулиеда.

Коне баве Аh'мәд, кәке Әсәд вәгъртьнә,
К'амбаха чайлахе бәри ч'әма,
Пышта мала баве Әсәд дьнhер'ьм
Чит у п'әрда, т'әwьле мәнәкиа,
Фәләке мьле баве Аh'мәд, кәке Ә'зиз шькенандьн,
Пәй аха Хатунар'а кәсәк нәма.

КЪЛАМА Ә'МӘРЕ Т'ӘМО

Аләще дьнhер'ьм бәрф у байә,
Къчучапе сәр чока ә'мәре т'әмо,
Кәке Ә'зиз, баве Аh'мәд алавәкә гьран дайә.
Ә'рәфе мәйдане ә'мәр се дәнга дькә гази:
,,Ә'лие бьра, шашйа нәк'ьшинә,
Мьне hәйфа Аh'мәде бьра дәсте хwә нheлайә,,.
Мерхасо тӧ хwәш мери.
Әзе Аләще дьнhер'ьм сәрә жерә,
Хwәдева ә'йанә р'оже охьрме гьран,
Qир'ина ә'мәре Т'әмо, кәке Ә'зиз, баве Аh'мәд сәр нәйарада те минани Ә'ли Шерә,
Шә'дә-шуде ә'мәре Т'әмо гәләкьн,
Гәлә hәнә Qәләчиа жорьн, Qәләчиа жерьн,
Пе дурбинйа къчучапе к'ома нәйара ләв дьжберә.
Ә'мәре Т'әмо сйаре ве къhеле,
Гәвәз ханьме дәст авит ве дьзгине.
Дьве дә тӧ wәрә-пәйавә, тӧ хwәш мери

К'ЛАМА Т'ЕЛИ СҺ'ИД - Λ

Пайизә, сәре ве зьвьстане
Щабәк мә hатиә щаба нәбьхере,
Дьвен Сh'иде бра бриндарә,
Бьрине wи к'ур хәдарьн, р'а пе набә,
Ло лао, ло лао.
Сh'ид лао, qӧльнг тенә, чь qир'инә,
Кәсәке хӧдане хере т'ӧнә,
Мьле т'ели Сh'иде мьн бьгърьн
Бьгәр'иньн сәр hәкима-дохтьра,



Ло лао, ло лао.
Сh'ид лао, qӧльнг тенә, чь qир'инә,
Дәшт у зозан т'әв датинә,
Кәсәке хӧдане хере т'ӧнә
Мьле т'ели Сh'иде мьн бьгърә
Wалате шарьстана сәр hәкима бьгәр'инә,
Бәлки дәрманәки баве Сурик у Бәлгизарер'а бьгъинә,
Ло лао, ло лао.
Сh'ид лао, qӧльнг тенә, qӧльнг шәшә,
Wәләh п'әр'баске wана нәхшә,
Кәсәке хӧдане хере т'ӧнә
Мьле баве Сурик у Бәлгизаре бьгәр'инә
Сәр hәкиме бь hәмәшә,
Ло лао, ло лао.
Сh'ид лао, qӧльнг тенә жь зозана,
Бәре хwә данә бәр'и-бәр'истана,
hелуне хwә чекьрьнә сәр даре биана,
Бае Фәләке Сh'иде мьн дае,
Әз навиньм hәта-hәтае,
Мә буйә диндара qиамәте,
Ло лао, ло лао.

КЪЛАМА Т'ЕЛИ СҺ'ИД - 2

Әзе гӧнде ә'мо шәwьти дьнhер'ьм кәвре бьр'и.
Ве зьвьстане ньшкева чәрха баве т'ели Сh'иде мьн ч'әп дьзьвьр'и,
Сh'ид лао, авто wе те бь т'әкә,
Дә тӧ wәрә гӧр'а мере фәләке нәкә,
Тӧ wәрә гӧр'а баве хwә бькә,
Баве тә йарәм п'адше ездийайә,
hьнәки хwә бәр дәре баве хwә әгләкә.
Сh'иде мьни 24 сали hәр'ә сәрр'енга шоше,
Т'унщьк т'әморие хwә бе фәйдакә,
Чәрха фәләке сала исальне
Чаwа сәр т'ели Сh'иде мьнда ч'әп дьзьвьр'ә,
Мала hәким-дохдре ви wәлати бьшәwьтә,
Чаwа бьрине Сh'иде мьн нәкьрьнә сәрәдәр,
Дә р'әбә мал хьрабо, бав бь qӧрба.
Дае р'әбәне, тӧ гӧла мала ә'мәри,
Бәлгизар дьве Хәзале дае дәлиле,

Мә те бина бае дәв гәлиа,
П'ор'е сәре мьн тәва кöр'кръвә, дури бьра,
Мә'нәкиа т'ели Сҥиде бьра те зинәвала,
Сҥид дә тö р'абә бав бь qöрба,
Т'ели Сҥиде мьн һьштйә малйа хwәйә букини,
Щоте каре хәзала,
Әме хwәйкьн р'онайа ч'әве хwәр'а,
Сҥид лао, дә тö р'абә, бав бь qöрба.

## ҺӘЛАНӘ, ҺӘЛАНА МӘ ЕЗДИАНӘ

Баво һәланә, дае һәланә,
һәлан һәлана мә ездианә,
Дишана Ә'зизе Ә'мәрда
Ләв щьвйанә гърә-гъре мә ездианә,
Баве Сурен, кәке Бәлгизаре дьве:
,,Гәли бра, исал чәндьк чәнд салә
Сәр мьләте мә бйә фәрманә,,.
Иро щьвата шеха, п'ира у мриданә,
Әме дайньн шеwр у мсләта гъранә,
Сәрик әв огъра һол-һола Ездиде сорә.

Ә'зизе Ә'мәр дькә һаwар гази,
Дьве: ,,Гәли ездиа р'абьн п'иа,
Иро р'ожа хирәт намусейә,
Хwәйикьн наве Ездидә,
һуне гöр'а нәмам у нәзана нәкьн,
һуне дине Шәрфәдин бехwәйи нәкьн,
һуне наве кал-бава бәдәм нәкьн,
һуне р'ийа Ездид öнда нәкьн...
Гәли бьра әм р'әвинә, әм бәзинә,
Wәлат-wәлат әм гәр'инә,
Пьшти Ездид әм нәһәлинә,
К'е готйә әм нә ездинә
Әw кәләме р'ийа динә,
Гöмана мә Таwьси Мәләкә,
Ездид дәwр у зәмана ве бьминә...
Мерхасе дәwре Ә'зизе Ә'мәр го:
Һ'әсәне Мәҥмуд, бьре мьн кърви,
Те хwәки, хwә Хwәдеки,



Те р'адио у газете
Дәнге ездиа дьне аләме бәлаки,
Наве Ездид һәрчар qöлбада ә'йанки.

## ШӘР'Е ЕРАСХЕ

Ч'әме әрәз тейә ләмә-ләмә
Еварда сәр кавла гöнде Ерасхеда гъртийә щәрда ә'щәмә,
Ә'рәфе мәйдане хун дькъшә wәкә ч'әмә.

Ә'зизе Ә'мәр, баве Сҥид жь Р'әwане
Дькә гази: ,,Гәли бьра иро р'авнә ве мәйдане,
Әм гәрәке сәре хwә дайньн бона р'ьҥина Әрмәнистане,,.

Ч'әме әрәз wе дькъшә хöлә-хöлә,
Севдине Ә'ли дькә гази: ,,Ә'зиз баве мьн кърьви,
Бьдә сәр хwә хорте ездиа чәнд qәбилә,
Пьшти хwәде нәфәре ездиа, әме
Гöнде Ерасхе дәсте дьжмьн дәрхьн һесир-дилә,,.

Ч'әме әрәз wе дькъшә, доре гәзә,
Гöнде доре т'әмам гъртийә бах у р'әзә.

Ә'зизе Ә'мәр дькә гази: ,,Гәли ездиа,
Иро әщәм һьлдьн һәйфа кәвн у т'әзә,,.

Ве бьһаре гöнде Ерасхе гъртийә чәнгә,
Ә'зизе Ә'мәр Омәр, Ә'ло, Сҥид, Гар'ник дайә дәнгә:
Баве мьнвьн чевьн, че бьхәвьтьн,
Иро ездиа, әрмәниа дәрхьн дәре тәнгә.

Сьвәбу, бәре сьве ль мә чал бу,
Дәнге ч'әк-сильҥе ездиа, әрмәниа һәвдö лалбун,
Щәрда ә'щәма ә'р'афе мәйдане бепәргалбу.

## ШӘР'Е ХАНЕ

Дае шәр'ә, баво шәр'ә,
Шәр'әке qәwьмиә гәлйе Хане, дöзда тиша һәв дьгәр'ә
һәwарәке гöнде Кало дак'әтйә,
К'оме бувка жела тенә,
П'ир Т'әмо фәqире ханиа ль сәр пешиейә,
Бина баруте һьлдайә, кәко, вәнагәр'ә.

һәйло миро, шәр'аке qәwьмйә Хана шәwти we бь щилә,
Qаләке qәwьмйә, Хана шәwьти we щилә,
Мират'а к'ьчучапе дурбинә сәр чока һосе Шәweш хwәр'а wилә-wилә.

һосе бьра кьрә гази, го: ,,Әсо, Ә'мо, баве мьн кьрьбьн,
һуне чебьн че бьхәбьтьн,
Әме сьве бькӧжьн донздә мере Ә'лйа,
Бәлабькьн к'оме Qәрәчолйан,
һәла ле бьнһер'ьн, щоте бәгләра дәсте мәда бунә һесир-дилә,,.

Шәр'әке qәwьмийә гәлйе Хане we бь сусә,
Qаләке qәwьмийә гәлйе Хане we бь сусә,
Мират'а к'ьчучапе дурбинә сәр чока һосе Шәweш
Минани кәре бузе дьч'урьсә.
һосе бьра се дәнга кьрә гази, го: ,,Әсо, Ә'мо, һун баве мьн кьрьвьн,,

һуне че бьн, че бьхәбьтьн,
Әме бькӧжьн мере Ә'лйа, бәла, qәләчолйа,
Быгрьн щоте бәгләра сәва наве ела һ'әсьнийа
һьм навә, һьм намусә...
Хана шәwьти к'әтьм нава гәлйа,
Кәсәке хӧдане хере т'ӧнә щаwәке бьдә бәрәка Гридаг'е нав Ә'лйа,

Бе чьма ездйа we кӧштьнә щоте бәгләра, 12 мере ә'лйа,
Бәлакьрьнә к'оме qәләчолйа ле деране,
Чьма к'ока маqула жь мә qәлиа.

## КЬЛАМА ОЗМАНЕ ГЬЗО

Безе мә'руме бае Идьре р'абийә мә бийә т'озә,
Дә тӧ р'абә һ'ащи бьк'шинә р'әхт-р'ьшма
Баве сәре позә,
Иро се р'ожә се шәвә
Озмане Гьзо, баве Безе сйаре һ'ащи
Бәре хwә дайә сәр к'оме башәмиа,
Гьртиә дә'w-дозә.

Безе мә'рӧме щаwа кӧштьна Озмане Гьзо
Чуйә Р'әwане, бра хере нәвинә
К'афьре Т'ер'лан Хузов
Пәй Озмане Гьзо баве Безе, сйаре һ'ащи



Дьгәр'инә йашике барут'е щәбьрхане,
һатйсә кӧштьне Озмане Гьзо-
Кӧлилка 1700 мале ездихане.

Безе мә'руме, әзе дидәме дьнһер'ьм хwәш дидәмә,
Иро се р'ож се шәвә һатйә кӧштьне Озмане Гьзо- баве Безе, сйаре һ'ащи,

Щьнйазе Титале харзиа данә щәмә.
Безе мә'руме мә һатиә әскәре йале Трапизоне,
Бьра хере нәвинә к'афьре Т'ерлан Хузов,
Чаwа т'опәке qӧр'миш крийә авитийә орт'а к'оме,
һатйә кӧштьне Озмане Гьзо баве Безе, сйаре һ'ащи,
Кӧлилка 1700 мале ездихане,

## КЬЛАМА Ә'Т'АРЕ һ'ӘСО

Wәрә ло-ло, wәрә ло-ло
Шәр'әке qәwьмийә Әрдәшәре дәве we дьк'ане
Ә'т'аре һ'әсо гӧләки бәре бәдәна Сәйиде Ә'щәм дайә,
һьлдайә һ'әйфа Фәqир Дук'о фәqире ездихане.
Шәр'әке qәwьмийә Qәрәqуе пеш мала, һа пеш мала
Щьмә'те кьрә гази го:-Ә'т'аре һ'әсо к'ьчучапе һьлдә минани щара.
Ә'т'аре һ'әсо кәке Сӧлт'ане пе шәр'е хӧәйи мерхас буйә кәләме ч'ә'ве wан нәйара.

Qәрәqуйе шәр'әке qәwмйә к'ери-к'ери
Ә'т'аре һ'әсо, кәке Сӧлт'ане да к'ьчучапе сәр т'алане Ә'лйе Сьло,сәр п'әр'е һәри жерин.

Гӧләке бәри бәдәна Сәиде Ә'щәм дайә, т'алан вәгәр'андийә Ә'т'аре һ'әсо, мере мерхас, сәр т'алане мала Ә'лйе Сьло буйә пьшмери.

## ШЕХ МИРЗА

Аг'ао, мә дәрк'әтйә п'әлә ә'wре ве ңисане,
We гьртийә сәр кәке Мәло, баве һ'әсән, Шех Мирзае,
К'оме ездихане.
Р'әшид -п'аша щаw шандийә пәйи кәке Мәло, дьве:
,,Wәрә жор диwане,,.
Шех Мирзае-кәке Мәло, баве һ'әсән, сиаре һоле,
Шехе Ездийа,
Әхтиаре мәрга кьрә гази: ,,Р'әшид-п'ашао мьн говәка дине тә

р'əзилкьро, əзе иро еqин сəре хwə бьдмə огъра ве имане,,.

Wəзиро, wəзиро,
Wəзиро, Шехи динə.
Сəра Диарбəкъре дьнһеръм кəвре морə,
Əскəре Р'əшид п'аша, Нəфи-ə'ме гърaнə, к'ьшйа дорə,
Шех Мирзае кьрə гази го: ,,Р'əшид-п'аша тə əз хапандьм гизма һьлк'ьшандьмə диwана һəрə жорə.
Əз шех Мирзомə, шехе ездиханемə, əзе р'ожа иройин лехьм ћə та мьле мьн дьхəбьтə-ньвйа мьн йəки жорьн, Езиде Сорə.

Wəзиро, wəзиро,
Шехи динə.
Аг'ао, qəсра баве Мəло, кəке ћəсəн, сйаре һоле дьнһер'ьм кəвре морə.
Əскəре Р'əшид-п'аша, Нəфи ə'ме гърaнə, к'ьшйа дорə,
Р'əшид-п'аша щаб шандийə пəйи шех Мирзае, дьбе:
,,К'əрəмкə, wəрə диwана һəрə жорə,,.
Шех Мирзае кьрə гази го: ,,Р'əшид П'ашао, мьн си р'оже тə wa-wa кьро, һəwарйа тə бе сəре ч'йае Шəнгале, һəр'ə р'ома р'əшə дəрəwинə һəwара мьн бе сиаре р'оһьлате Ездиде Сорə.

Wəзиро, wəзиро,
Шехи динə.
Сəра Диарбəкъре дьнһер'ьм кəвре сорə,
Р'əшид П'аша кьрə гази го: ,,Шехо, те сöрманби зора шурə,,.
Шех Мирзае го: ,,Р'əшид П'ашао, мьн нивəка дине тə wa-wa кьро, тə чьма мьр'а зу нəгот, мьн к'осə Мьсьри, шуре һешин малда нəкьра бирə.
Мьне öса бькьра, иро чит у мəрт'але тə у мале тə бьда сəрə.
Wəзирə, Wəзиро,
Шехи динə.
Аг'ао сəра Диарбəкъре дьнһер'ьм ль ви дəсти,
Хəнщəра Шех Мирзае, əхтиаре Мəрге кəке Мəло, баве ћəсəн, сйаре һоле нерьзə, qəвзə һəсти.
Шех Мирзае кьрə гази, го: ,,Р'əшид П'ашао, мьн си р'оже тə р'əзил кьро.
Мьне 17 мере тə кöштьнə ль ви дəсти.
Хwəде мала хəнчəрчекьра хьравкə, мере 18-ада хəнчəра мьн шкəсти.



Wəзиро, wəзиро,
Шехи динə.

Сəра Диарбəк'ьре дьнһер'ьм дəви р'ейə,
Чуйин-һатьна щьмəте у аләме т'əви лейə.
Бьра баве мьн кьрьбə Мьч'ое Шех Исае, wəлə бь наве хwəде,
Дəсте хwə һьлда ћəйфа баве Мəло, шехе Езди, шех Мирзае.
Wəзиро, wəзиро,
Шехи динə.
Аг'ао, сəра Диарбəк'ре дьнһер'ьм ах сəр ћəйфе,
Бьра ч'əве сəре мьн корə к'отибьн, теда нае дəнг у сəдае Мьч'ое Ш.ех Исае
На, wəлə qир'ина баве Мəло, кəке ћəсəн, Сиаре һоле, шехе Езди йа, əхтийаре мəрга, Шех Мирзае.
Wəзиро, wəзиро,
Шехи динə.

МЬЧ'ОЕ ШЕХ ИСАЕ

һəwарə, баво, һəwарə,
Бьрао һəwарə,
Дае һəwарə, һəwарə,
Нə бəрфə, нə баранə,
Нə мьжə, нə думанə
Нə ə'рдə, нə ə'зманə,
Шəр'е ездийа ван р'омйанə,
Ах, гьдино ч'йае Дəлане бəр ч'əве мьн буйə мьж думанə.
Шəр' хwəш кьрийə Мьч'ое Шех Исае, ч'уке ћəвт бьранə.

Ах гьдино, шəр'е дəлане шəр'əки же гърaнə,
Хwəде мери хwəдева ə'йанə,
Шəр' хwəш кьрийə Мьч'ое Шех Исае, ч'уке һəвт бьранə.
Хwəде мери хwəдева ə'йанə, Мьч'ое Шех Исае весве кöштйə 300 мəле р'омиайə хwей к'тебə, хwəйиqöранə.

һəwарə, баво һəwарə...
Ах, гьдино, ч'иае Дəлане бəр ч'əве мьн буйə мьж думанə.
Шəр' хwəш кьрийə Мьч'ое Шех Исае, ч'уке ћəвт бьранə.
Дəлана шəwьти дьнһер'ьм we гəзгəзкə,
Мьч'ое Шех Исае се дəнга кьрə гази, гот: ,,Заде, хаинга

бьре хwə кьрьби, р'абə мə'нəгйа бьре хwə мəн'əскə,
Мьч'ое Шех Исае кьрə гази, го:,,Гəли лаwьке анqосйа,
Дə, һун лехьн, мьн весьве жекьрийə сəре чарсьд мəле р'омиайə сəрбьк'əскə.

һəwарə, баво һəwарə...

Ах, гьдино, ч'йае Дəлане бəр ч'əве мьн буйə мьж думанə.
Шəр' хwəш кьрийə Мьч'ое Шех Исае, ч'уке һ'əвт бьранə.
Ах, гьдино, wəзе Дəлана хопан дьнһер'ьм wе кь'мкорə,
Весве к'афьр бəшо бьн Мьч'ое Шех Исада нор'ə-нор'ə,
Хwəде мера хwəдева əйанə, весьве Мьч'ое Шех Исае
Кöштийə пенсьд мере р'омиайə сəрбь п'ор'ə.

һəwарə, баво һəwарə...

Ах, гьдино, ч'йае Дəлане бəр ч'əве мьн буйə мьж думанə.
Шəр' хwəш кьрийə Мьч'ое Шех Исае, ч'уке һ'əвт бьранə.

Ах, гьдино, wəзе Дəлана кавьл дьнһер'ьм wе бь һьзə,
Мьч'онге Шех Исае сйаре Ч'ич'əка дел гəвəзə,
Весьве ль ə'рафе ве мəйдане Мьч'ое Шех Исае бьриндарə, ах хуна сор бəр саqе сапокар'а ча дьбəзə.
Мьч'ое Шех Исае кьрə гази го: ,,Гəли лаwьке анqосйа, дə һун лехьн, мьн весьве жекьрийə сəре шəсьд мəле р'омиайə бəр мьразə.

һəwарə, баво һəwарə...

Ах, гьдино, ч'йае Дəлане бəр ч'əве мьн буйə мьж думанə.
Шəр' хwəш кьрийə Мьч'ое Шех Исае, ч'уке һ'əвт бьранə.

Мьч'ое Шех Исае хwəде һьшти,
Р'иши-шə'р, мəрт'ала пола жера бунə бəн у пьшти.
Дə весьве шурəке Мьч'ое Шех Исае данə, орт'а мəйдане буйə минани мə'рəки нивкöшти, wəе, wəе.

һəwарə, баво һəwарə...

Ах гьдино: ч'йае Дəлане бəр ч'əве мьн буйə мьж думанə.
Шəр' хwəш кьрйə Мьч'ое Шех Исае, ч'уке һ'əвт бьранə.

Wəзе Дəлане дьнһер'ьм кəвьре шинə,
Кəсəки хера хöдан т'öнинə,
Щавəке дахə К'əшиш Полор'а,



Бе К'əшиш поло, мальк тə хьравбə, ощаха тə корбə,
Ишəв се р'ожə у се шəвə мамизəра дəсте Мзч'онге Шех Исаеда
Ль ə'рафе мəйдане һнгьр'ийə: нə дьт'əqə, нə дькə дəнгə.
К'əшиш Поло кьрə гази, го: ,,Гəли ездйа, сəре хwə р'əшмьшоткьн,
К'е бəре хwə дьдə шəр'е Дəлане, бəр ч'əве wи дьбə мьждуманə,,.

һəwарə, баво һəwарə...

Ах гьдино, ч'йае Дəлане бəр ч'əве мьн буйə мьж думанə.
Шəр' хwəш кьрийə Мьч'ое Шех Исае, ч'уке һ'əвт бьранə.

Ах бьрано, wəзе Дəлане дьнһер'ьм,-wе бь wарə,
Дə гəли ездйа, һуне хwəкьн ль хwəдекьн,
һуне сəре Ездиде хwəйи соркьн,
һуне Шəмсе хwəкьн,
һуне ощахе шеха у П'иракьн,
һуне пьшта Мч'ое Шех Исае бьднə дарəк-дара чинарейə,
һуне шуре һешин, бьднə дəсте ль р'астейə,
Мəрт'ала пола бьднə дəсте ль ч'əпейə
Бьра əскəре р'ома р'əш бе дəрбазбə, ч'əв Мьч'ое Шех Исаек'əвə,
Же бьк'ьшинə тьрсе у хофейə,
Бьра бежə.,,Мьч'ое Шех Исае хwəшə, р'убаре ль дьнейə,,.
һ'əтани һесире ездихане дəрбаз дьвə жь авейə.

һ'əwарə, баво һəwарə...

Ах, гьдино: ч'йае Дəлане бəр ч'əве мьн буйə мьж думанə.
Шəр' хwəш кьрийə Мьч'ое Шех Исае, ч'уке һ'əвт бьранə.

КЛАМА ДƏWРЕШЕ Ə'ВДИ

Дəлал, wай дəлал, wа wай дəлал
Дəлал qöрба дьле мьн нə барə нə дəнгьзə,
Бае Öрфа шəwьти ишəв еварда те гьзə-гьзə
Əзе Дəwреше Ə'вди Лаwьке Езди бьстиньм бьра
Ле бьköжə ə'рəби ле ə'ньзə,
Wəрə нəминьм, нəминьм, нəминьм.

Бьр'ə мале мə шехан у п'иран данинə гьре Гəw-гəwа шəwти дəве ль wан бира,
Wəки мьне де у бава шəрм нəкьра, Дəwреше Ə'вди, лаwке езди фəни нəкьра

Әзе ве све р'абума, мьне даw-дәльнге хwә һьлда, дәнгәки бьҹир'а-ндае, әр'әби блиландае, мьне бьгота һәр-һ́әмдьла әзә ездәмә йол т'ариqе хwәйи т'әзә әз р'азимә.

Нәминьм, нәминьм, нәминьм...

Дәлал qӧрба, әзә нә кькимә нә мьлимә, qиза Зор-Т'әмьр п'ашанге зәнгу зер'имә,

Әр'әбәкә р'әшә левдәqандимә, сәре чардә р'йа сәкьнимә, бой хатьре Дәwреше Әвди, лаwке езди һәр-һ́әмдьла әзә ездимә ве сьве йол т'ариqе хwәйи т'әзә әз р'азимә,

Wәрә нәминьм, нәминьм паши Дәwреше Әвди лаwке езди һ́уте бьне бәр'йа, хwәие р'ьма дондзә мовьки, хwәйе мәрт'ала титькә т'әр'езә qотькә бь qолт'ази, кьрасәки к'аг'әли, жь алие мале һ́әта алие диwанхане нәqәтиньм.

Wәрә дәлал баһарә һайаме дәрк'әтьне,
Wәре мә жорьн кәвн бунә, wаре жерьн кеч' к'әтьне
Һ́әвт бьранге мьнә һабун бәр гьртьне, пирәдайка мьнә бәр шуштьне, каләбаве мьне бәр мьрьне, һ́әчке гава ч'әве мьне ч'әве Дәwреше Әвди лаwке езди дьк'әвә, мьн т'ьре һ́әмушкә сагьн р'уата дьне. Wарә нәминьм, нәминьм, нәминьм паши Дәwреше Әвди, лаwке езди һ́уте бьне бәр'йа, хwәйе р'ьма дондзә мовьки, хwәйе мәрт'ала титькә т'әр'езә qотькә бь qолт'ази, красәки к'аг'әли, жь алие мале һ́әта алие
диwанхане нәqәтиньм.

Wәй дәлал әзе кала накьм калә к'әтинә, дәwләтиа накьм мал гәнинә, к'әсива накьм, к'әсивә бьрчинә, әзе Дәwреше Әвди лаwке езди бьстиньм, бьра ле бькӧжә әр'әби ле әньзә.

Wәрә нәминьм, нәминьм, әз нәминьм, паши Дәwреше Әвди лаwке езди кьрасәки к'аг'әли жь алие мале һ́әйа алие диwанхане нәqәтиньм.

Дәлало дьлько бәр ч'әве хәлqе т'ели дәлал нә т'ӧйо, нә тьштәко, бәр ч'әве мьн әвдала хwәде ӧсано мина һ́әбәк-һ́әба һ́ьнара ∂лащгь-ра хопан хӧре калан у пиран бе дәндько. Wәй дәлал, wәй дәлал, wәй дәлало.

Оло Дәwрешо әзе чумә диwане диwанә т'ъжи, чумә qаwәхане qаwәханә т'ъжи, мьсине qаwе сәр даре чаме дьк'әльжи, qаwәчио те хwәки дь хwәдеки те qаwәки бьди дәсте Дәwреше мьн жи.



Дәмане qаwәчи qаwәк дабу дәсте Дәwреше мьн жи, дьлопа qаwе р'ъжйабу сәр qап'уте Дәwреше мьн жи, мьне р'абу чь кьр, чь нәкьр зер'әки Мә'муди сәре хwә вәкьр, әзе бистпенщ бажара гәр'йабум мьне дабу бист пенщ qальб сабуна р'әqе кьр'ибу, әзе һатьм кани ль мьн зһа бун, ч'әм ль мь ч'ъкйабун, әзе чумә дәве ава Мураде мьне дәр'аваке хар'ани гьртьбу бист пенщ qалб сабуна р'әqе сәр qап'уте Дәwреше хӧ жи дабу.

Баки нәзәре р'абу, т'ьлйе дәсте мьн дабу, нәйнька дәсте мьн wәшийабу, жь хала мьнжи жь qьр'ежа qап'уте Дәwреше мьнжи к'ефа дьле мь вәнәбу. Дә wәрә wи ло-ло wи ло-ло лаw ездийә.



... **Ի**նչպես ասվեց վերևում, եզդիները չհաշտվեցին ստալինյան բռնապետության տասնամյակներ տևած հետևանքների հետ: Եվ նրանք ընդդիմությամբ, համառ և հետևողական պայքարով հետ շրջեցին անարդարության կծիկը: Թատերական հրապարակի բազմաթիվ հավաքները, իշխանության վերին օղակներին հղված հարյուրավոր դիմումները, ցույցերը, որոնց մասնակցեցին եզդիների կրոնական ու աշխարհիկ բոլոր ներկայացուցիչները, վերջիվերջո տվեցին իրենց դրական արդյունքը: Եվ այսօր եզդիները Հայաստանի Հանրապետությունում ճանաչված են որպես ազգություն՝ իրենց նիստ ու կացով, ազգային ծեսերով ու ավանդույթներով, գիտության, մշակույթի, գյուղատնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի, մի խոսքով կյանքի բոլոր բնագավառներում աշխատող ներկայացուցիչներով: Եզդիների միության բոլոր նախաձեռնությունները, մտահղացումները և ծրագրերը հետևողականորեն կիրառվում են կյանքում, ավելի ու ավելի հաստատելով եզդիական ոգու գոյությունն ու անմահությունը: Դրա լավագույն ապացույցը հանդիսացավ նաև եզդիների ազգային դրոշի վերականգնումը, որը դարձավ ազգային արժանապատվության, ազգային ոգու վերածննդի, հարատևության վկայականը: Թեև նախկինում նույնպես որոշ քայլեր կատարվել էին ազգային դրոշի վերականգնման ուղղությամբ, սակայն դրանք միայն բարի ցանկություններ էին՝ առանց շոշափելի արդյունքների: Եվ, ահա, եզդիների ազգային միության նախաձեռնությամբ սկսվեցին պրպտումները պատմության, արխիվների, ժողովրդական բանահյուսության, բանավոր զրույցների ամենաբազմազան ոլորտներում: Դժվարությունները բազմաթիվ էին, ու թվում էր՝ հանգույցը անլուծելի է, սակայն ազգային դրոշի վերականգնման հիմքում դրվեց այն եռատողը, որի մեջ ասվում էր. *«Իմ աղա՛ն՝ եզդիե, իմ թագավորը եզդիե, կարմիր-սպիտակ դրոշի կրողն է, 14 շերտ երկինքն ու երկիրը նրա ձեռքում է»:*



*Ազիզ Թամոյանը՝ եզդիների ազգային դրոշով*

Ավանդության համաձայն, ուրեմն, եզդիների ազգային դրոշն ի սկզբանե սպիտակ է եղել, որը համարվել է եզդիների կրոնի, ազգի խորհրդանիշը: Բայց հետագայում, երբ ժողովուրդը դարերով պայքարեց թշնամիների



դեմ, երբ հազարավոր եզդիներ զոհվեցին արյունահեղ մարտերում, սպիտակ ու սուրբ դրոշը ներկվեց եզդի ժողովրդի զավակների արյամբ: Եվ ազգային դրոշի սպիտակին ավելացավ նաև կարմիրը: Դրոշը դարձավ սպիտակ ու կարմիր մասերից կազմված ամբողջություն:

Եզդիների ազգային դրոշի վրա, որը վերականգնվեց ազգային միության, հատկապես նրա պրեզիդենտ Ազիզ Թամոյանի նախաձեռնությամբ, կան նաև Մալաքե Թավուսի խորհրդանշանը և արևի պատկերը: Այսօր եզդիների ազգային դրոշը ծածանվում է Հայաստանի բազմաթիվ ազգային-մշակութային կենտրոններում, սրբորեն պահվում եզդիների տներում:

Եզդիների ազգային դրոշի գոյությունը ինքնին հուշում է, որ պետք է դողալ դրա և ազգային սովորույթների պահպանման համար, քանի որ այդ դրոշի և նրա հետ կապված գաղափարների համար եզդի ժողովուրդը դարեր շարունակ պայքարել է, զոհեր տվել, ենթարկվել է հալածանքների ու ձգտել հասնել իր նվիրական նպատակներին: Ուրեմն՝ պետք է համախմբվել դրոշի անաղարտության, նրա հարատևության համար, վերածնել ու պահպանել ազգային ավանդույթները՝ Շամսով (արևով) լուսավորված պայծառ օրվա ակնկալիքով:

Կգան, կանցնեն տարիներ, տասնամյակներ, դարեր և միշտ կլինի եզդիների հաջողությունների ու հաղթանակների գրավական եզդիական ոգին: Մնում է պատմության համար արձանագրել, որ դրոշի նախագիծը կազմեց, դրոշը պատկերեց ազգային միության մշակութային բաժնի վարիչ Մամադե Ամարը, որը դրոշի վերջնական պատկերը ներկայացրեց ազգային միության հաստատմանը: Այն հավանության արժանացավ, ու եզդիների ազգային դրոշը դարձավ գրեթե բոլոր եզդի ընտանիքների տան զարդն ու հպարտությունը:

Եզդիների հաջողություններն առկա են նաև այլ բնագավառներում, որոնք թև են տալիս, ոգևորում ու ոգեշնչում, դառնում նոր ձեռքբերումների գրավական: Եզդի ժողովուրդը կերտում է իր նոր կյանքը, ստեղծում իր նոր պատմությունը: Շատ ու շատ արժեքներ անցյալ տարիներին ոչնչացվել էին ու անհետացել: Անհրաժեշտություն էր առաջացել փշուր-փշուր վերականգնել ու ամբողջացնել կորածն ու ոչնչացվածը, դարձնել իրականություն, դարձնել յուրաքանչյուր եզդու սեփականությունը՝ դրա համար օգտագործելով տեղական ու միջազգային կապերը, ազգային փոքրամասնությունների կուտակած փորձն ու աշխատանքային մեթոդները:

Այս կարևոր գործում մեզ զորավիգ է մեր հարազատ եղբայրը՝ հայ ժողովուրդը: Նրա հոգատարության շնորհիվ եզդիները որոշակի քայլեր են կատարել ազգային վերածննդի ճանապարհին: 1989 թվականին, ինչպես ասվեց, եզդիները ի լուր աշխարհի հայտարարեցին, որ իրենք եզդի են: Եվ դա ամենամեծ նվաճումներից էր: Լուրջ ձեռքբերում էր նաև այն, որ Երևանի Ակսել Բակունցի անվան մանկավարժական ուսումնարանում տասը

Եզդի ժողովրդի բարեկամը



Վ.Մ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀՍՍՀ Կենտկոմի առաջին քարտուղար

տեղ հատկացվեց հանրապետության եզդի երիտասարդությանը, որպեսզի նրանք սովորեն և դառնան եզդիների ուսուցիչներ, եզդի ժողովրդի պատմության և կրոնի ջատագովներ: Երկու տեղ բացվեց նաև եզդի ասպիրանտների համար, որոնք պետք է զբաղվեն եզդի ժողովրդի պատմության, ազգագրության, լեզվի և կրոնի հարցերով:

Կրկին նշենք, որ այս ամենը եզդի ժողովուրդը ձեռք է բերել Հայաստանում: Հայաստանից բացի, աշխարհի ոչ մի անկյունում նա չի ունեցել իր զարգացման, ինքնաբացահայտման, գոյապահպանության նման հնարավորություններ: Այստեղ ուզում եմ անպայման հիշել Վլադիմիր Մովսիսյանին, ինչպես եզդիներն են ասում «Հայաստանի թագավորին», որը մեծ ավանդ ունի այս ամենում: Մոտիկից ճանաչելով և սիրելով մեր ժողովրդին, նա ջանք չի խնայել թե՛ հասարակական հնչեղություն ունեցող հարցերի, և թե՛ հոգևոր ոլորտների խնդիրների լուծման համար:

Եզդի ժողովրդի գալիք սերունդները պետք է իմանան, թե ինչպիսի ծանր ու դժվարին ուղի են անցել իրենց նախնիները: Նրանք պիտի հպարտությամբ ու երախտագիտությամբ հիշեն այն մարդկանց, ովքեր 1988-ական թվականներին, արհամարհելով բոլոր վտանգները, դժվարություններն ու խոչընդոտները, ոտքի ելան հանուն եզդի ժողովրդի, եզդի անունը մոռացությունից փրկելու համար, հանուն պայծառ ապագայի: Եվ այդ մարդկանց անունները սիրով ու սրբազան զգացումով ուզում եմ հանձնել եկող սերունդներին, որպեսզի այդ անունները միշտ ապրեն եզդի ժողովրդի սրտում և հիշողության մեջ:

***Ահա նրանք՝ ազգային զարթոնքի ազատամարտիկները.***

ՇԵԽԵ ՇԵԽՈՒԲԱԿՐԱ. Ռուստամե Շամըլ - Թալինի շրջան
Միրզաե Ռուստամ - -"-
Բրոե Դավրեշ - Նաիրի շրջան, Քանաքեռավան
Ֆատե Բըրո - -"-
Քյարամե Սըլո - Երևան
Ասլանե Քյարամ - -"-



Ալիե Քյարամ - -"-
Գյուլնարա Քյարամ - -"-
Ջասըմե Հուսե - Արտաշատի շրջան, գ. Դիտակ
Քյարամե Ասո - Արմավիր, գ. Կեսարիա
Մամե Քյարամ - -"-
Գոզոե Քյարամ - -"-
Ֆրիկե Քյարամ - -"-
Քյալաշե Դավրեշ - Արմավիր, Մայիսյան տնտեսություն
Դավրեշե Մաջիտ - -"-
Խդրե Սաֆարի - Աբովյան, գ. Քուլիջա
Ջարջե Սաֆարի - -"-
Ամարե Աբաս - -"-

ՏՈԼԿ ԳՅՈՒՂ

Համե Ֆատո, Ալիե Մաջիտ Ուսըվ, Ռաշիդե Մաջիտե Ալի, Խդրե Լազգի, Մստե շեխ Մաջիտե, Օրդե Լըզգի, Վազիրե Սայդո, Մրազե Մաջիտ, Տահարե Քյարամ, Զահարե Քյարամ, Ուսըվե Մաջիտ, Ալիխանե Լըզգի, Թեմուրե Ալի, Էյլազե Շըքըր, Ջամալե Քյարամ, Մրազե Բաքըր, Ուսե Ալիի, Ռոստամե Սայդո

Մամոե Ռաշո - Արմավիր, Մայիսյան խորհտնտեսություն
Ասադե Ուսո - -"-
Բադըրե Ուսո - -"-
Ագիտե Ուսուբ - -"-
Իսոյե Նադըր - Երևան
Արիֆե Սըմո - -"-
Մրազե Աֆո - -"-
Աֆոե Սըմո - -"-
Քյալաշե Միրզո - Երևան
Տայարե Քյալաշ- -"-
Ասոե Խուդո - Արտաշատ

Բրոե Խուդո - Արտաշատ
Այլազե Բըրո - Աբովյան
Ալիխանե Բըրո - -"-
Մահմուդե Սըլո - Արտաշատ
Ալիե Սըլո - -"-
Ռզաե Հուսեին - Նաիրի, Նոր Գեղի
Նադոե Զադա - Աշտարակ, Շամիրամ
Բրիկե Զադա - -"-
Ջնդիե Դավրեշ - -"-
Բրիկե Դավրեշ - -"-
Հասանե Քյալաշ - -"-

ՇԵԽԵ ՇԻԽԸՍԸՆԱ

Ահմադե Ասլան - Աբովյան
Խալոե Աֆո - -"-
Տիտալե Աֆո - -"-

ՇԵԽԵ ՋԸՆ ՏԱՅԱՐ

Գոգոե Միար - Արարատ
Շամոե Դավրեշ - Արմավիր, Զարթոնք
Ջադաե Ղադո - -"-

Շիրընե Ջամալ - Նաիրի, Զովունի
Վազիրե Ջամալ - -"-
Մրազե Ջըվո - -"-

ՇԵԽԵ ՄԱԼԱ ՄՐԱԶԱ

Հասանե Մահմուդ - Երևան
Հասանե Ֆաքիա - Նաիրի, Զովունի
Ուսըվե Ֆաքիա - -"-
Խդրե Ֆաքիա - -"-
Զաիլե Ուսըվ - Արմավիր, Հուշակերտ
Սիաբանդե Սահիդ - -"-

ՓԻՐԵ ԻՍԵԲԻԱ

Մրազե Նամո - Նաիրի, Զովունի
Ալոե Քյալաշ - -"-
Էմոե Ասո - -"-

ՓԻՐԵ ՕՄԱՐԵ ԽԱԼԱ

Մուսաե Շամո - Մասիս, Գեղանիստ
Խդրե Ալի - -"-
Քյարամե Խդր - -"-
Մահմուդե Ալի - Մասիս, Արգավանդ
Ուսե Խդր - -"-
Շամըլե Ռաշո - Մասիս, Գետափ
Այլազե Ռաշո - Նաիրի, Քանաքեռավան
Արասե Ալի - Մասիս, Գեղանիստ
Սուրիկե Իսկո - Մասիս, Արգավանդ

ՓԻՐԵ ՉԸԼ ՓԻՐԱ
Փաշաե Սավտո - Նաիրի, Քանաքեռավան

ՄԸՆԴԿԱՆԵՐ

Մհե Կըկե, Ազիզե Մհե, Գերմանե Կըկե, Ռըշիդե Կըկե, Հասանե Կըկե, Ռուստամե Կըկե, Տոսն Թոռուն Հասանյաններ, Վազիր

ԿԱՋԱՆԻՆԵՐ

Ազիզե Ամար, Սուրիկե Ազիզ, Ալիկե Ազիզ, Նորիկե Ազիզ, Սահիդե Ազիզ, Ահմադե Ամար, Ալոե Ահմադ, Շիրինե Ահմադ, Քյարամե Ահմադ, Գոզե Ահմադ, Թոռնե Ահմադ, Գոզե Ահմադ, Ասադե Ամար, Համլետե Ասադ, Սլավիկե Ասադ, Խդրե Աթեր, Օմարե Խդր, Ահմադե Խդր, Ալիե Խդր, Սուրիկե Խդր, Ազիզե Խդր, Շիրինե Խդր, Զաիլե Խդր, Սահիդե Աթեր, Ուսըկե Սայիդ, Մըմե Սայիդ, Ահմադե Սայիդ, Խդոե Սայիդ, Ամըրե Սայիդ, Հասանե Աթեր, Ֆայզոե Հասան, Զհարե Հասան, Վազիրե Հասան, Օրոե Աթեր,



Քյարամե Օրո, Շիրինե Օրո, Միարե Օրո, Ուսոե Աթեր, Քյալաշե Ուսո, Մրազե Ուսո, Դիարե Ուսո, Այլազե Աթեր, Կնյազե Այլազ, Այլազե Ալի, Քյարամե Այլազ, Սիաբանդե Այլազ, Իսե Այլազ, Սուրենե Ալի, Հասանե Սուրեն, Մաջիտե Սուրեն, Զհարե Սուրեն, Միարե Սուրեն, Քյալաշե Ահմադ, Շաբաբե Ահմադ, Տիարե Ահմադ, Զահարե Ահմադ, Հոտոե Ահմադ, Ֆատոե Ալո, Սուտոե Ալո, Ազիտե Ալո, Խդրե Ալո, Թեմուրե Ջավո, Թելմանե Թեմուր, Հասանե Զորբա, Ֆայզոե Հասան, Գոզե Հասան, Ալոե Մանդո, Ֆըտոե Մանդո, Ֆըիզե Մընդո, Ուսըվե Ալո, Սուրենե Մանդո, Քյարամե Ահմադ, Ահմադե Լուլո, Զազե Լուլո, Մահմուդե Ահմադ, Հասանե Մանդո, Շիրինե Ամար, Օմարե Ամար, Ուսոե Մըլո, Ֆատե Ուսո
Ահմադե Ալիե Քալաշ, Շիրնե Ահմադե Ալիի, Ուսվե Ալիե Քալաշ, Խդոե Ուսվե Ալիի, Սլոե Սուլթան, Խանոե Մըլո, Սայիդե Ուսըվե Խուդո, Սուրենե Սահիդե Ուսվ, Քյալաշե Սահիդե Ուսվ, Ազիտե Սահիդ, Մաջիտե Ուսըվե Խուդո, Ալոե Մաջիտ, Հոտոե Սահիդ, Զանգոե Սահիդ, Ֆայզոե Սահիդ, Ազիտե Արաբ, Սուրենե Ազիտե Արաբ, Ասոե Համո, Ջամալե Ուսվ, Ալիկե Արաբ, Քյարամե Ալիկե, Մաջիտե Ֆարզ, Զազոե Ֆարըզ, Սուրենե Ֆարըզ, Զանգոե Վազիր, Ֆատոե Դավրեշ, Քըրըմե Ֆըտո, Ուսոե Արաբ, Աթարե Արաբ, Ամարե Արաբ, Ահմադե Արաբ, Քյարամե Արաբե, Իսմայիլե Արաբ, Մամե Արաբ, Իբրահիմե Ղաչաղ, Ալիե Ռաշիդ, Քյարամե Ռաշիդ, Իսմայլե Ռըզգո, Հասանե Արաբ, Մուսաե Հասան, Ուսկե Ֆայզո, Սահիդե Ասո, Միշիրե Ահմադե Բաքո, Աթոե Ամըր, Սահիդե Ասադե Ավդո, Հոտե Սուտե Մըդո (Երասխահուն):

ՌԱՄՈՇԻՆԵՐ

Տիտալե Ամո - Արմավիր
Շուքուրե Քյարամ - Արտաշատ
Օմարե Մըմե - Բաղրամյան
Տիարե Մըմե - -"-
Փաշիկե Մլազիմ - Արմավիր
Ռուստամե Սահիդ - -"-
Խդրե Մլազիմ - -"-
Ուսվե Մհո - Նաիրի, Նոր Գեղի

ԲՈՒԴԻՆԵՐ

Արմավիր, Երասխահուն - Ուսե Ալի, Գոզոե Ալի, Ահմադե Ալի, Հասանե Գոզո, Ամարե Հասո, Սուրենե Գոզո, Ազիզե Քյարամ, Գերմանե Քյարամ, Ազիզե Ինդո, Քըլըշե Շամըլ:

ՍԻԴԿԱՆԵՐ

Սերոժ Պոլատով - Թալին
Նադըրե Շամլե Սլո - Նաիրի
Մրազե Իզատե Սլո - -"-

ՄԱՆԹԱՁԻՆԵՐ

Չոլե Սըյադ
Ալիկե Զուրբա - Երևան
Ուսկե Սահիդ - -"-
Փաշիկե Սահիդ -"-
Մահմուդե Ուսկե -"-

Քալաշե Ուսկե - -"-
Քյարամե Աhմադ - Էջմիածին
Ֆըտիհե Քըրըմ
Ալիե Քըրըմ - Նորակերտ
Ալիե Յասան - Աբովյան

ՍԸԼՎԱՆԱ

Յպոե Սանո, Ռըշե Չոլո, Արֆուտե Չոլո, Զըմալե Չոլո, Միրզաե Չոլո - Էջմիածին (Զվարթնոց)

ԵՐԵՎԱՆԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ

Ֆատհաե Մըտո, Ալիե Մըտո, Ֆըիզե Մըտո, Ուսվե Ֆըտհա, Ամարիկե Ֆարզ, Ազիզե Ամարիկե, Յասանիկե Աբաս, Աhմադե Յասանիկե, Խդրե Սուրեն, Սուրենե Սուրեն, Թելմանե Զըմել, Ուսվե Զըմել, Զըմալե Յասան, Ուբեթե Յասան, Ջվոե Յասան, Քյըրըմե Յլո, Ունզե Ավաս

ՇԱՐԿԻՆՆԵՐ

Թեմուրե Յասան - Արմավիր
Քոչոե Յասան - -"-
Աբասե Ասադ - Արտաշատ
Ասադե Շավավ - -"-
Շավավե Ասադ - -"-

Օնիկե Տհար - -"-
Քոչոե Սուտո - -"-
Զուրբե Քյարիմ - Մասիս
Քըրըմե Յոդո - -"-

ՄԱՄԻԴՈԿԱՆԵՐ

Յասանե Այիբ, Քըրըմե Քոչո, Տըֆուրե Ամո, Աhմադե Յասան, Քըլըշե Ավդո, Թըմոե Ավդո, Տըֆուրե Մաջիտ

ԿԱՋԱՆԱ

Խդրե Յամո, Միաքե Խդր, Փաշե Ավդել, Յասանե Ասադ, Բարիսե Սարտիպ, Ջահարե Աֆո, Ազիզե Իսա, Այսերե Ազիզ

...Անցել են տարիներ: Ազգային զարթոնքի առաջամարտիկների նվիրումն ու անձնազոհությունը տվեցին իրենց անգնահատելի արդյունքները...

Յիմա նրանցից շատերն այլևս մեզ հետ չեն:

Շեխ Ադու օրհնությունը թող լինի նրանց վրա, և թող բոլորը հիշվեն անուն առ անուն:



... **1995** թվականի դեկտեմբերի 5-ին տեղի ունեցավ եզդիների համահայաստանյան 4-րդ համագումարը: Այն անցավ աննախընթաց ոգևորության պայմաններում: Յամագումարի աշխատանքներին մասնակցում էր 300 պատգամավոր: Նրանցից 160-ը միության անդամներ էին:

Յամագումարը բացեց եզդիների ազգային միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանը:

Եզդիների ազգային միության 4-րդ համագումարի պատվավոր նախագահության կազմում ընտրվեցին Ազիզ Թամոյանը, Յասան Թամոյանը, շեխ Ռուստամ Բաքոյանը, Սերգեյ Պոլատովը, Շուքրե Քյարամը, Գյուլնարա Ավդոյանը, Ուսուբ Սարհանգյանը /Լիլո/, Ռուստամե Սահիդը, Սուտո Ավդալյանը:

Նախագահող Ազիզ Թամոյանը ներկայացրեց համագումարի աշխատակարգը, հաստատվեց օրակարգը, ընտրվեց մանդատային հանձնաժողով:

Յամագումարի մասնակիցներին ողջունեցին ՅՅ Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի աշխատակից, բանասիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանը, Արմավիրի շրջանից՝ պատմության դասատու Սամվել Խաչատրյանը: Ուզում եմ մեջ բերել նրանց ողջույնի համառոտ շարադրանքները.

***Բարի երթ համագումարին***

*Գառնիկ Ասատրյան (ՅՅ Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտ, բանասիրական գիտությունների դոկտոր)*

Սիրելի՛ բարեկամներ, անցել է 6 տարի եզդիների ազգային միության նախորդ համագումարից: Դա պատմական մի ժամանակաշրջան է, երբ եզդի ժողովուրդը, համախմբվելով իր ազգային ինքնուրույնության հաստատման համար պայքարող մտավորական առաջնորդների (հանձին Ա. Թամոյանի) շուրջը, մեծ գործ կատարեց իր ազգային զարթոնքի գործում: Սա պատմական իրադարձություն է: Կան և ուրիշ անձնավորություններ, որոնք նույնպես մեծ դեր են կատարել այդ նպատակին հասնելու համար՝ Ջահիլ Յասանյան, Քյարամե Սլո և ուրիշներ: Մեծ աշխատանք է կատարվել, ստեղծվել ՅՅ Եզդիների ազգային միություն, եզդիների համար թերթ, ռադիոհաղորդումներ, հրատարակվել են գրքեր, բրոշյուրներ, և հեշտ չի եղել այդ ամենի կազմակերպումը: Լրագրերում շատ է խոսվում ազգային ինքնության մասին: Դժվար է էթնիկական հարցերին անդրադառնալը: Յատկապես այժմ հաճախ են արծարծվում եզդի և քուրդ ժողովուրդների հետ առնչվող հարցերը: Կարծում եմ, որ եթե մեկն իրեն համարում է եզդի, դա իր գործն է և դրան չպետք է հակադրվել:

Ես, որպես եզդիների ազգային ինքնության շարժման ականատես, ուրախանում եմ այդ հաջողություններով: Հպարտ եմ, որ կատարվում է մեր հայրենիքում և պատահական չէ, որ ազգային այդ զարթոնքը տեղի է ունենում հենց Հայաստանում: Երբեմն ասում են, որ հայերը եզդիներին անջատեցին քրդերից: Դա սխալ մեկնաբանություն է: Հայաստանում ապրում են տարբեր ազգային փոքրամասնություններ և հավասար իրավունքներով: Ուրեմն, թող յուրաքանչյուրը նրանցից օգտվի այդ իրավունքներից ու ձգտի պահպանել իր ինքնությունը, հավասարապես կիսելով Հայաստանում ապրող բոլոր ժողովուրդների և՛ ուրախությունները, և՛ դժվարությունները: Բարի երթ եզդիների ազգային միության 4-րդ համագումարին:

### *Բարեկամության արահետներով*

*Սամվել Խաչատրյան (Արմավիրի շրջան, պատմության ուսուցիչ)*

Հարգելի՛ բարեկամներ, այսօր մեզ բախտ է վիճակվել մասնակցել եզդիների 4-րդ համագումարին: Որպես պատմության մասնագետ և ապրելով մի շրջանում, ուր եզդիները մեծ թիվ են կազմում, հետաքրքրվել եմ նրանց պատմությամբ, որն ապացուցում է հայերի հետ ունեցած նրանց դարավոր բարեկամությունը: Ինքս լինելով սուրմալեցու զավակ, գիտեմ, որ այդ գավառում, հայերի հետ կողք-կողքի ապրել, աշխատել ու օտար նվաճողների դեմ հավասար պայքար են մղել նաև եզդիները: Ճակատագրի բերումով նրանք միասին թողել են իրենց տունն ու տեղը, եկել, բնակություն հաստատել այստեղ՝ Արարատյան դաշտում, շարունակելով իրենց բարեկամությունը: Դրա ապացույցն այն է, որ այսօր Ղարաբաղի անկախության համար մղվող պայքարում մեզ հետ են եզդի ժողովրդի հարյուրավոր զավակներ, որոնցից շատերն իրենց մահկանացուն են կնքել ազատագրական մարտերում, նահատակվել հանուն բարեկամության: Ոչ մի կասկած չկա, որ այս համագումարում տեղ կգտնեն հարցեր, որոնց կենսագործումով հնարավոր կլինի լուծել եզդի ժողովրդին հուզող բազմաթիվ խնդիրներ: Անշուշտ, պետք է մեծ տեղ հատկացվի կրթության ու մատաղ սերնդի դաստիարակության հարցերին: Դա հուզում է նաև ինձ, որպես մանկավարժ:

Ցանկանում եմ, որ համագումարում ընդունված որոշումները կյանքի կոչվեն՝ ի նպաստ մեր դարավոր բարեկամության ամրապնդման և եզդի ժողովրդի ազգային մշակույթի հետագա զարգացման:

Այնուհետև հիմնական զեկուցումով հանդես եկավ ՀՀ եզդիների ազգային միության պրզիդենտ Ազիզ Թամոյանը:

Թեև նախորդ էջերում շատ փաստերի ենք անդրադարձել, սակայն կուզենայի որոշ մեջբերումներ կատարել հաշվետու զեկուցումից.





Ելույթ է ունենում Ազիզ Թամոյանը

«Մեր համագումարը տեղի է ունենում մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանի նորանկախ հանրապետությունը առաջին քայլերն է կատարում երկրի պետականության ամրապնդման, ժողովրդի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, արտաքին աշխարհի հետ քաղաքական ու տնտեսական կապերի ամրապնդման ու ընդլայնման, մեր ժողովրդին հուզող կարևորագույն միջազգային խնդիրներն ըստ ամենայնի, ի նպաստ Հայաստանի աշխատավորության լուծելու և այլ բնագավառներում: Մեր նախորդ համագումարից հետո, որը տեղի է ունեցել 1989 թվականի սեպտեմբերի 30-ին, այն օրերին, երբ դեռ նոր-նոր էր լայն ծավալ ստանում պայքարը ազատ և անկախ Հայաստանի, իսկական ժողովրդական սաղմերի տարածման, Ղարաբաղում ազգային ազատագրական պայքարի հաղթանակի և այլ բնագավառներում կատարվող փոփոխությունների ժամանակ: Ինչպես միշտ, այդ օրերին նույնպես, Հայաստանում ապրող եզդի ազգաբնակչությունը մեր մշտական ու հաստատուն եղբայր հայ ժողովրդի հետ էր, նրա մղած պայքարի բոլոր փուլերում: Եվ այն օրերին, երբ հզորանում էր Հայաստանի անկախության, նրա պետականության ստեղծման, Ղարաբաղյան խնդրի ճշմարտացի լուծման համար ծավալվող շարժումը, նրա անմիջական մասնակիցը լինելով, եզդի ժողովուրդը միաժամանակ պայքարում էր 70 տարի ոտնահարված իր ազգային իրավունքների վերականգնման համար: Խորհրդային իշխանության տարիներին ոտնահարվում էին ազգային փոքրամասնությունների իրավունքները: Դա էր պատճառը, որ պատմությունից փորձում էին ջնջել նաև աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ եզդիների անունը: Բայց դա, իհարկե, նրանց չհաջողվեց:

*Եզդիների 4-րդ համագումարում*



*Համագումարի դահլիճում*



*Ամբիոնի մոտ է Սիմադ Թամոյանը*

Յուրաքանչյուր համագումարում քննարկվող հարց բխում է տվյալ ժամանակի հրատապության պահանջով: Եվ եթե նախորդ երեք համագումարներում հիմնականում քննարկվել են կենցաղային ու կրթությանը վերաբերող հարցեր, ապա երրորդ համագումարում, ստեղծվեց եզդիների ազգային միությունը, կենտրոնական և առաջնահերթ խնդիրը դարձավ վերադարձը դեպի ազգային արմատները, դեպի եզդիական ազգային դիմագծի ու կարգավիճակի վերականգնումը՝ թոթափելով տասնամյակներ շարունակ մեզ պարտադրված և մեր ազգային արժանապատվությունը խորապես վիրավորող կաշկանդումները: Դրանք հարցեր էին, որոնք քննարկվեցին ու մեզ համար գործունեության ուղենիշ հանդիսացան ետհամագումարյան շրջանում, մինչև այսօր, մինչև մեր 4-րդ համագումարը:



Այսօր մեր համագումարի օրակարգում կա մեկ կարևոր հարց, այն է. եզդի ժողովուրդը վերջին վեց տարիներին, նոր ժամանակաշրջան, նոր խնդիրներ:

Ցանկանում եմ անդրադառնալ հաշվետու ժամանակաշրջանում եզդիների ազգային միության ծավալած գործունեությանը:

Առաջինը, ինչպես նշվեց, լայն պայքար է ծավալվել եզդի ժողովրդի ազգային ինքնորոշման ուղղությամբ: Չկա որևէ կոնկրետ սահմանում, որով կարելի լինի որոշել այս կամ այն ազգը կամ ազգությունը վերջնականապես: Անհիշելի ժամանակներից ապրել, զարգացել են ազգերը, ստեղծել իրենց պատմությունը: Ինչպես կարելի է որևէ ազգի բռնի պարտադրել, թե դու այս ազգը չես, այլ՝ այն:

Համոզված պնդելով, որ մենք եզդի ենք, դարձյալ մնում ենք որպես ժողովուրդների բարեկամության ջատագով: Դա ապացուցելու համար հիշեցնեմ մեր կրոնական աղոթքներից մեկը. «Աստված, դու առաջին հերթին օգնիր աշխարհի 72 ժողովուրդներին, հետո մեզ»:

1926 թվականի մարդահամարի տվյալներով Հայաստանում եղել է 12 հազար 237 եզդի: Սակայն 1936 թվականից սկսած, մինչև 1989 թվականը, Խորհրդային Միությունում անցկացված մարդահամարի ժամանակ հաշվառման թերթիկներում եզդի ազգություն չի նշվել, նրանց դասել են քրդերի շարքը: Նա, ով համարձակվել է ըմբոստանալ այդ բռնադատմանը, համարվել է հայրենիքի դավաճան ու ազգայնամոլ, աքսորվել է Սիբիր: Շատ-շատերն են իրենց մահկանացուն կնքել այնտեղ՝ հեռուներում, այսպես ասած՝ «քաղաքական հանցագործների» ճամբարներում:

1989 թվականին մարդահամարի թերթիկներում կրկին երևաց եզդի ազգությունը, պարզ դարձավ, որ Հայաստանում ապրում է 51 հազար 900 եզդի և ... 4 հազար 200 քուրդ: Ահա, թե ինչպես էր խեղաթյուրվել ազգային քաղաքականությունը մի երկրում, որն իրեն համարում էր ամենադեմոկրատականն աշխարհում:

Այսօր ժողովրդավարությունը մեզ, ինչպես նաև հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնություն կազմողներին, հնարավորություն տվեց վերականգնել մեր անունը: Դրա լավագույն ապացույցն է ԱՊՀ շրջանակներում ստորագրված «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, որի առաջին վավերագրողներից մեկը եղավ նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը: Դա մարդասիրության կարևորագույն ակտ էր, որ գոհունակությամբ ընդունվեց Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների կողմից:

Աշխարհում առաջին անգամ Հայաստանում է ստեղծվել եզդիների ազգային միություն, որն ունենալով իր զինանշանը, իր դրոշը՝ հանրապետության եզդի ազգաբնակչության մեջ զգալի աշխատանքներ է տանում բազմաթիվ հարցերի պարզաբանման, օգնություն կազմակերպելու, եզդիներին հուզող հարցերի լուծման և այլ

բնագավառներում: Միության հիմնական խնդիրներն են եղել՝ նպաստել եզդիերեն լեզվի զարգացմանը, աջակցել մշակութային ժառանգության հարստացմանը, եզդիական գեղարվեստական կոլեկտիվների գործունեությանը, ընդլայնել ու ամրապնդել մշակութային կապերը հայ ժողովրդի գրականության ու արվեստի հետ, մշտապես սնվել ժողովուրդների բարեկամության գաղափարների զուլալ աղբյուրներից:

Եզդիների ազգային միությանը հուզող հրատապ հարցերից է մայրենի լեզվով կրթության դրվածքը հանրակրթական դպրոցներում, բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում: Դեռևս 1994 թ. միությունը դիմեց բարձրագույն կրթության և գիտության նախարարությանը Ակսել Բակունցի անվան ուսումնարանում եզդիական խումբ բացելու համար: Հարցը լուծվեց դրականորեն, ուսումնարանում ստեղծվեց եզդիական խումբ, ուր ընդգրկվեցին 10 պատանիներ ու աղջիկներ: Բայց ցավալի էր, որ հետագայում, դիմորդներ չլինելու պատճառով, նոր խմբեր չբացվեցին: Բայց չէ՞ որ մեր դպրոցներում աշխատող եզդիերենի ուսուցիչներ են հարկավոր, որոնք կկարողանան եզդի երեխաներին սովորեցնել մայրենի լեզուն, եզդի ժողովրդի պատմությունը: Չէ՞ որ դեռևս 1994 թվականին դպրոցների գլխավոր վարչությունը 2-8-րդ դասարանների ուսումնական պլաններում թույլատրել էր մտցնել երկուական ժամ նախասիրական և ընտրական դասընթացների համար՝ մայրենի լեզուն ուսումնասիրելու, սովորելու նպատակով: Սակայն մանկավարժական կադրերի պակասի պատճառով եզդիերեն է դասավանդվում միայն Նաիրիի շրջանի Զովունի, Թալինի շրջանի գյուղերի դպրոցներում, իսկ ահա Աբովյանի շրջանի Ջրվեժ գյուղի և մի շարք այլ գյուղերի դպրոցներում դադարեցվել են եզդիերենի պարապմունքները»:

Հաշվետու զեկուցումը լսվեց մեծ ուշադրությամբ: Այնուհետև ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, գնահատականներ տրվեցին միության կատարած աշխատանքներին:

Համագումարում ելույթ ունեցան մի շարք պատգամավորներ, որոնց ելույթները տպագրվեցին «Եզդիների ձայն» թերթում: Սահմանապահ զորքերի մարտիկ Այսեր Իսայանը իր ելույթը նվիրեց եզդիների զինվորական ծառայության հարցերին: «Մենք,- ասաց նա,- մեզ համարում ենք Հայաստանի Հանրապետության լիիրավ քաղաքացի և մեր պարտքն ենք համարում ծառայել անկախ Հայաստանի խաղաղությունը պաշտպանելու գործին»: Նա կոչ արեց եզդի երիտասարդությանը՝ չխուսափել զինվորական ծառայությունից, պատվով կատարել իրենց քաղաքացիական պարտքը: Նույնպիսի կոչ էր պարունակում նա́և էջմիածնի շրջանի բնակիչ, Արցախյան մարտերում բազմիցս վիրավորված Ուսուբե Աթարի /Լիլո/ ելույթում: Նա կոչ արեց նվիրումով ծառայել հայոց բանակում և հարգել եզդի ժողովրդի այն զավակների հիշատակը, ովքեր իրենց կյանքը չխնայեցին հայոց հողի պաշտպանության համար: Երևան



քաղաքի բնակիչ Հասանե Խալոն կոչ արեց համագումարի պատգամավորներին՝ այսուհետև ևս նույնքապես և բարոյապես սատար կանգնել միությանը, որով կարելի կլինի շատ ու́ շատ նպատակների հասնել: Արմավիրի շրջանի բնակիչ Մուսայե Հասանն իր ելույթում շեշտը դրեց եզդի ժողովրդի միասնության և համախմբման վրա: Նաիրիի շրջանի բնակիչ Ահմադե Ամարն առաջարկեց չզորակոչել այն եզդի երիտասարդներին, ովքեր մինուճար են: Երևան քաղաքի բնակիչ Մահմադե Չաչանն առաջարկեց միության ղեկավարությանը՝ հաճախ հետաքրքրվել եզդի զինվորականների վիճակով, լուծում տալ նրանց հուզող հարցերին: Թալինի շրջանի բնակիչ Սերգեյ Պոլատովն անդրադարձավ եզդիների միության աշխատանքներին և դրական գնահատական տվեց նրա գործունեությանը: Նույն շրջանի բնակիչ Ռուստամե Շամըլը ժողովրդի, մասնավորապես հոգևորականների միասնության կոչ արեց և երախտիքի խոսք ասաց հայ ժողովրդի հասցեին, որի շնորհիվ հայաստանաբնակ եզդիներն ազգային և մշակութային զարթոնք են ապրում: Էջմիածնի շրջանի բնակիչ Շամոե Դավրեշն անդրադարձավ եզդիների ազգային միության աշխատանքներին և կոչ արեց ամեն կերպ աջակցել նորաստեղծ, սակայն արդեն նշանակալի աշխատանքներ կատարած միությանը: Արտաշատի շրջանի Բուրաստան գյուղի բնակիչ Շքուրե Քյարամ Ասոյանն իր ելույթը նվիրեց եզդիների այն պայքարին, որ նրանք մղեցին իրենց ինքնությունը հաստատելու համար: «Այո,- ասաց նա, - մենք հաստատեցինք, որ եզդին եզդի է, և այժմ ամենակարևորն այն է, որ կարողանանք զարգացնել մեր մշակույթը, պահպանել մեր ազգային սովորությունները, ամրապնդել հայ և եզդի ժողովուրդների բարեկամությունը»: Երևանի բնակիչ Քյարամ Ավդոյանն անդրադարձավ եզդիների ազգային միության աշխատանքին, նրա հեղինակության բարձրացման հարցերին, եզդի երիտասարդների զինվորական ծառայության, հայ և եզդի ժողովուրդների բարեկամության ամրապնդման խնդիրներին: Նա շեշտեց, որ պետք է ունենալ ազգային այբուբեն, երեխաներին անհրաժեշտ է մայրենի լեզվով կրթել, պետք է կապ ստեղծել համայն աշխարհի եզդիների միջև, զարկ տալ ազգային մշակույթին և այլն:

Այնուհետև համագումարն անցավ եզդիների ազգային միության պրեզիդենտի ընտրությանը: Համագումարը բաց քվեարկությամբ, միաձայն, եզդիների ազգային միության պրեզիդենտ ընտրեց Ազիզ Ամարի Թամոյանին: Նորընտիր պրեզիդենտի առաջարկությամբ փոխպրեզիդենտներ ընտրվեցին Հասան Թամոյանը, Սերգեյ Մամեդի Պոլատովը, Ռուստամե շեխ Շամըլե Բաքոյանը:

Համագումարն ընդունեց կարևոր որոշում, որը ներկայացվում է ստորև.

# ՈՐՈՇՈՒՄ

## ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀՀ ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ 1995Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ

Համագումարը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում (1989թ. սեպտեմբերի 30-1995թ. դեկտեմբերի 5) որոշակի աշխատանք է կատարվել ազգային միության ղեկավարության կողմից: Հիմնականը, որ այդ ընթացքում տեղի ունեցավ, վերադարձն էր դեպի ազգային արժատները, դեպի եզդիական ազգային դիմագծի ու կարգավիճակի վերականգնումը, թոթափվեցին տասնամյակներ շարունակ պարտադրված ազգային արժանապատվությունը վիրավորող կաշկանդումները: Աշխարհում առաջին անգամ Հայաստանում պետականորեն ստեղծվեց Եզդիների ազգային միություն՝ իր դրոշով ու զինանշանով, ինչպես նաև հոգևոր խորհուրդ: Արդյունքը եղավ այն , որ եզդիներն ունեցան իրենց առաջին ազգային՝ «Եզդիների ձայն» թերթը և պետական ռադիոհաղորդումները ազգային լեզվով, հրատարակվել է «Եզդիների դավանանք» բրոշյուրը:

Հաշվետու ժամանակաշրջանում նոր խնդիրներ դրվեցին ազգային լեզվի ու մշակույթի զարգացման համար: Երևանի Ակսել Բակունցի անվան մանկավարժական ուսումնարանում սկսեց գործել եզդիական խումբ, որի շրջանավարտները դպրոցում կդասավանդեն եզդիերեն և եզդի ժողովրդի պատմություն:

Ամենակարևորը, որ հաշվետու ժամանակաշրջանում է՛լ ավելի ամրապնդվեց, հայ և եզդի ժողովուրդների դարավոր բարեկամությունն է: Ինչպես միշտ, վերջին վեց տարիներին նույնպես, հայ ժողովրդի ազգային ազատագրական ու անկախության, Ղարաբաղյան շարժման համար մղվող պայքարում իրենց մասնակցությունն էին բերում եզդի ժողովրդի զավակները, որոնցից շատերը նահատակվեցին այդ պայքարում:

Համագումարը միաձայն հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքը գնահատեց բավարար:

Ելնելով զեկուցումից և ելույթներից, համագումարը միաժամանակ նշում է, որ դեռևս կան չլուծված հարցեր, որոնք պետք է գործունեության հիմնական ծրագիր հանդիսանան նորընտիր միության համար: Համագումարը որոշում է.

ա) Դիմել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝ գալիք ուսումնական տարվանից հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում արտամրցույթային կարգով տեղեր հատկացնել եզդի դիմորդներ ընդունելու համար:

բ) Այն դպրոցներում, ուր կա եզդի երեխաների համապատասխան քանակ, ունենալ եզդիերենի դասատուներ:

գ) Խնդրել ՀՀ կառավարությանը և ֆինանսների նախարարությանը «Եզդիների ձայն» թերթի հրատարակմանը ցույց տալ ֆինանսական օգնություն:



դ) Դիմել Երևանի քաղաքային խորհրդի գործկոմին՝ վերջնականապես լուծելու Եզդիների ազգային միությանը տրվելիք աշխատասենյակների հարցը:

ե) ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում բացել եզդիագիտության բաժանմունք:

զ) Երևանի պետհամալսարանի արևելագիտության ֆակուլտետում բացել եզդիագիտության բաժին:

է) Կազմակերպել եզդիերեն դասագրքերի հրատարակումը:

ը) Հայկական հեռուստատեսությամբ ամիսը երկու անգամ 10-15 րոպե տևողությամբ եթերաժամ տրամադրել եզդիերեն հաղորդումների համար:

թ) Բացել վճարովի բարձրագույն ուսումնական հաստատություն եզդի երեխաների համար՝ կրոնական, իրավագիտական ու այլ բաժանմունքներով:

Որոշումը համագումարի կողմից ընդունվել է միաձայն:

*5 դեկտեմբերի 1995թ.,*
*ք. Երևան*

Համագումարից հետո, առաջնորդվելով նրա որոշումներով, եզդիների ազգային միությունը հանդես եկավ մի շարք նախաձեռնություններով:

Կարևորություն տալով իշխանությունների ներկայացուցիչների հետ անձնական շփումներին և պաշտոնական հանդիպումներին, ես, որպես ազգային միության պրեզիդենտ, համագումարից հետո հանդիպումներ եմ ունեցել ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, Ազգային ժողովի նախագահ Բ. Արարքցյանի, վարչապետ Վ.Մանուկյանի, ներքին գործերի նախարար Վ. Սիրադեղյանի, պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի, մի շարք նախարարների, տարբեր կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ղեկավարների և շատ-շատերի հետ, բազմաթիվ հարցեր եմ բարձրացրել, ձգտել հասնել դրական արդյունքների:

Քանի որ ավելի հավաստի է տպագրված խոսքը, ուզում եմ մեջ բերել «Եզդիների ձայն» թերթում տպագրված մի քանի հաղորդումներ՝ եզդիների միության կատարած աշխատանքների մասին: Հիշենք, որ թերթում տպագրվածը կարճ, համառոտ տեղեկություններ են, իսկ թե ինչ նախնական-նախապատրաստական աշխատանքներ են կատարվել, ինչպիսի բազմաբնույթ հարցեր են շոշափվել այդ հանդիպումների ընթացքում, մնում է ընթերցողի կռահմանը:

Այսպես.

## ԱՅՑ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ

Հանրապետության գլխավոր դատախազ Հ. Խաչատրյանն ընդունեց Եզդիների ազգային միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանին:

Հանդիպման ընթացքում արծարծվեցին այն հարցերը, որոնք այսօր մտահոգում են Հայաստանի եզդիներին՝ հանրապետության դատախազական համակարգի հետ կապված:

Հանդիպման վերջում ՀՀ գլխավոր դատախազն ասաց.

-Ես առաջին անգամ հանդիպեցի ՀՀ ԵԱՄ-ի ներկայացուցիչների հետ: Գտնում եմ, որ Հայաստանը և՛ եզդիների պետությունն է, և՛ հայերի: Որևէ տարբերության խնդիր չկա, թե՛ օրենսդրական առումով, թե՛ մեր գործունեության:

Կան հիմնահարցեր և խնդիրներ, հանցագործության աճն ու կարգ ու կանոնի բացակայությունն, անշուշտ, ազդում է մարդկանց հոգեբանության վրա, և ինչո՞ւ չէ՝ նաև եզդի համայնքի հոգեբանության վրա:

Պետք է ասեմ, որ մարդկանց մոտ մի տեսակ ձևավորվել է անպաշտպանվածության զգացումը: Դա բոլորի մոտ է: Եվ ինչո՞ւ ոչ, նաև հայտնի չափով անվստահությունը պետական մարմինների նկատմամբ:

Ես ուզում եմ վստահեցնել եզդի համայնքին, որ դատախազական բոլոր միջոցները կձեռնարկվեն, որպեսզի այս տեսակետից որևէ ազգային խնդիր չլինի: Իսկ ինչ վերաբերում է կատարված հանցագործություններին, ապա նրանց քննությունը կվերցվի հատուկ հսկողության տակ:

## ԼՈՒՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Գերմանիայի Հաագեն քաղաքի հանդիսասրահներից մեկի բեմում նստած էին Հայաստանի եզդիների միության նախագահ Ազիզ Թամոյանը, աշխարհի եզդիների հոգևոր առաջնորդ միր Թասիմ բեկը, Հայաստանի եզդիների միության ներկայացուցիչ Ռուբեն Սարդարյանը:

Ամբիոն էին բարձրանում ելույթ ունեցողները, ներկայանում էին իրենց լրիվ անվանմամբ, ճշգրիտ հասցեով, ողջունում էին ներկաներին և սկսում զեկուցումը:

Նախագահողը՝ Աշխարհի և Հայաստանի եզդիների ազգային միությունների նախագահ Ազիզ Թամոյանը ուշադրությամբ լսում էր ելույթ ունեցողներին, գրառումներ կատարում:

Եզդիները, ինչպես նշեցին զեկուցողները, ցրված են աշխարհով մեկ, ապրում են գրեթե բոլոր երկրներում և մեծ տառապանքներով, ծանր հալածանքների պայմաններում, կարողանում են մի կերպ պաշտպանել իրենց գոյությունը, ազգային ավանդույթները, կրոնն ու լեզուն: Եվ ամենուրեք վտանգի տակ է նրանց ազգային ինքնությունը, նրանց բուն գոյությունը: Շատերը ելույթ ունեցան, պատմեցին իրենց մտահոգությունների, դժվարությունների, իրենց նկատմամբ ցուցաբերվող կամայականությունների մասին:

Ելույթ ունեցավ նաև Ազիզ Թամոյանը: Նա ներկաներին պատմեց այն պայմանների մասին, որոնցում ապրում են եզդիները Հայաստանում: Սակայն որտեղ էլ որ նրանք ապրելիս լինեն, պետք է բոլոր ջանքերը նպատակաուղղեն իրենց ազգությունը, կրոնը, ավանդույթները պահպանելուն: Այդ մեծ նպատակն է հետապնդում նորաստեղծ Աշխարհի եզդիների ազգային միությունը, որը պատրաստ է օգնել բոլոր հայրենակիցներին, բոլոր եզդիներին:



Աշխարհի եզդիների ազգային միության նախագահությունը գտնվում է Երևանում: Աշխարհի բոլոր եզդիներն իրենց հետաքրքրող բոլոր հարցերով կարող են դիմել նախագահությանը, անձամբ պարոն Ազիզ Թամոյանին:

## ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Հուլիսի 22-ին ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանն ընդունեց աշխարհի եզդիների ազգային միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանին:

Ջերմ ու անկաշկանդ զրույցի ընթացքում արծարծվեցին եզդիներին հուզող բազմաթիվ հարցեր, որոնցից էին ՀՀ կառավարությունում, նախարարություններում, մարզային կառույցներում եզդի ներկայացուցիչներ ունենալը, Ազգային ակադեմիայում և գրողների միությունում եզդիական բաժանմունքների ստեղծումը, Եզդիների մշակույթի կենտրոն-եզդիների տուն ունենալը, նրան համապատասխան տարածք հատկացնելը, ազգային հեռուստատեսությամբ եզդիներին հատուկ ժամ տրամադրելը, եզդիներին վարկ տալը և այլն, և այլն:

Վարչապետ Ա. Դարբինյանը ըմբռնումով մոտեցավ բարձրացված հարցերին, խոստացավ առաջիկայում շուտափույթ լուծել մի շարք հարցեր, հատկապես աշխարհում միակ եզդիական թերթին ֆինանսապես օգնելու, համակարգիչ տրամադրելու խնդրում:

Վերջում վարչապետը, ծանոթանալով զոհված եզդի ազատամարտիկներին նվիրված նոր օրացույցին, հարգանքի և ափսոսանքի խոսք ասաց զոհվածների հասցեին:

## ԿՍՈՎՈՐԵՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎՈՎ

ՀՀ կրթության և գիտության նախարար Արտաշես Պետրոսյանն ընդունեց Ազիզ Թամոյանին և Հասան Թամոյանին:

Հանդիպման ժամանակ հիմնականում խոսվեց այն հարցերի մասին, որոնք այսօր մտահոգում են հանրապետության եզդիներին՝ կրթության բնագավառում: Մասնավորապես նշվեց, որ պետք է աշխատանք տարվի եզդիերեն դասագրքերի հրատարակման, եզդի մանկավարժների պատրաստման, եզդի դպրոցականների՝ կանոնավոր դպրոց հաճախման համար:

Հանդիպման վերջում Ա. Պետրոսյանն ասաց.

- Այսօր իմ վերջին հանդիպումն է որպես նախարար, ղեկավարության, նախագահի և պաշտոնաթերթի խմբագրի հետ: Այսօր մեր հանրապետությունում կա 50 հազար եզդի, որը ազգային փոքրամասնություն է, բայց կազմում է հայրենիքի մասը, ուրեմն մենք անպայման պետք է մտածենք այդ փոքրամասնության կրթական խնդիրների մասին:

Երկարատև զրույցի ընթացքում քննարկվեց նաև դպրոցների, դպրոց հաճախելու հարցը, խոսվեց Ակսել Բակունցի անվան մանկավարժական

ուսումնարանում եզդի սովորողների խմբի մասին: Այստեղ կպատրաստվեն ուսուցիչներ՝ եզդի երեխաների հետ աշխատելու համար: Շեշտվեց նաև բուհերում եզդիների համար հատուկ տեղեր ունենալու անհրաժեշտությունը: Ինչո՞ւ չպետք է թեկուզ մանկավարժական ինստիտուտում պատրաստվեն եզդի ուսուցիչներ:

- Այնպես որ, ես համոզված եմ, որ այս առաջին հանդիպումը կտա իր արդյունքները և կշարունակվի: Նույնիսկ ինձ համար հաճելի է, որ խոսք գնաց վերակենդանացնելու եզդիական այբուբենը, որպեսզի եզդի երեխաները սովորեն նաև իրենց մայրենի տառերով ու լեզվով և կարողանան պահպանել իրենց ազգային ավանդույթները, - վերջում ասաց նախարար Ա. Պետրոսյանը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԿԴԱՌՆԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ

Եզդիների ազգային միություն այցելեց Վրաստանի եզդիական ավանդույթների «Ռազիբուն» կենտրոնի նախագահ Դավրեշե Շեխ Ասադեն:

Նա ներկայացրեց կենտրոնի գործունեությունը: ՀՀ ԵԱՄ պրեզիդենտ Ա. Թամոյանի հետ համաձայնություն ձեռք բերվեց նման հանդիպումները դարձնել հաճախակի մեծացնել շփումը Վրաստանի և Հայաստանի եզդի համայնքների միջև, որոնք կնպաստեն երկու համայնքների գոյապահպանությանը և ազգային մշակույթի, ազգային ծեսերի պահպանմանը:

## ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՀՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Արմեն Սմբատյանն ու ՀՀ Առողջապահության նախարար Վ. Ստամբոլցյանը նույն օրը՝ մի քանի ժամվա տարբերությամբ, ընդունեցին ՀՀ ԵԱՄ պրեզիդենտ Ա. Թամոյանին: Երկու հանդիպման ժամանակ էլ քննարկվեցին հարցեր, որոնք առնչվում են հանրապետության եզդի ազգաբնակչությանը: Ձեռք բերվեց փոխադարձ համաձայնություն՝ նման հանդիպումները դարձնել կանոնավոր, որոնք միայն կարող են օգուտ բերել եզդի համայնքի մշակութային, մարզական կյանքին, երիտասարդության դաստիարակության և առողջության հետ կապված բազմաթիվ հարցերի լուծմանը:

## ՋԵՐՄ ՈՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ ՆԳ և ԱԱ փոխնախարար, գնդապետ Լ. Վարյանն ընդունեց ՀՀ եզդի համայնքի տարբեր մարզերի ներկայացուցիչների՝ ՀՀ ԵԱՄ պրեզիդենտ Ազիզ Թամոյանի գլխավորությամբ:



Հյուրերին ողջունելուց հետո փոխնախարար Վարյանն ասաց. որ մի քանի օր առաջ ընդունել է Ազիզ Թամոյանին և Հասան Թամոյանին, ՀՀ ՆԳ և ԱԱ նախարար Ս. Սարգսյանի հանձնարարությամբ, պայմանավորվածություն է ձեռք բերվել յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը հանդիպել հանրապետության եզդի համայնքի ներկայացուցիչներին, լսել նրանց դիմում-գանգատները և համագործակցությամբ լուծում տալ առաջացած հարցերին:

Հակիրճ ելույթով հանդես եկավ ՀՀ եզդիների միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանը, որը խոսեց եզդի համայնքի, նրա ձեռքբերումների, հոգսերի մասին: Այնուհետև առաջարկեց, որպեսզի կարդացվեն այն երկու գրությունները, որոնք ՀՀ ԵԱՄ ղեկավարությունը հանձնեց պարոն Վարյանին:

Առաջին գրությունը շնորհակալություն էր՝ ուղղված ՀՀ ՆԳ և ԱԱ նախարար պարոն Ս. Սարգսյանին և փոխնախարար պարոն Վարյանին, որոնց ջանքերի շնորհիվ էջմիածնի շրջանում ձերբակալվել էր իր հարևան Քյարամե Ահմոյին սպանող հանցագործը, որով մեծապես կանխվեց գյուղում սրված իրավիճակի հետագա անկանխատեսելի հետևանքները: Երկրորդ գրությունը պարունակում էր հարցեր ազգային-մշակութային բնագավառների վերաբերյալ, որոնց լուծումը անհամեմատ կբարելավի հանրապետության եզդի համայնքի վիճակը: Այնուհետև փոխնախարար Վարյանին ներկայացվեցին եզդի ժողովրդին հուզող բազմաթիվ այլ խնդիրներ ու հարցեր, որոնք ուշադրությամբ լսվեցին և գրի առնվեցին պարոն Վարյանի կողմից: Նա խոստացավ օրինականության շրջանակներում լուծում տալ դրանց:

Հանդիպման վերջում, որն անցավ ջերմ և անմիջական մթնոլորտում, որոշվեց ՀՀ ԵԱՄ կողմից ստեղծել մի հանձնաժողով, որն օպերատիվ կապի մեջ կլինի փոխնախարար Վարյանի հետ և նրան ու մնացած իրավապահ մարմիններին կներկայացնի համայնքի հետ կապված բազմազան հարցեր:

## ՀՀ ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ *ԱԶԻԶ ԹԱՄՈՅԱՆԻՆ*

ՀՀ կրթության և գիտության նախարարին հասցեագրված Ձեր (06.06.97թ., N029) գրության կապակցությամբ հայտնում ենք, որ ըստ մարզերի ուսումնասիրվել է եզդիերեն լեզվի ուսուցման վիճակը, ճշտվել են վիճակագրական տվյալները:

Նկատի ունենալով, որ եզդիերեն լեզուն ուսուցանվում է Արագածոտնի մարզի՝ Թալինի, Արագածի, Աշտարակի, Ապարանի տարածաշրջանների դպրոցներում, հանձնարարվել է Արագածոտնի մարզի տարածքային տեսչության պետին սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին ստուգելու եզդիերեն լեզվի ուսուցման դրվածքը և Ձեր բարձրացրած այն հարցը, որ

շատ եզդի դպրոցականներ առանց դպրոց հաճախելու փոխադրվում են հաջորդ դասարան:

Իսկ ինչ վերաբերում է եզդիերեն «Այբբենարանի» և դասագրքերի հրատարակմանը, ապա հայտնում ենք, որ նախարարության ծրագրամեթոդական վարչության նոր ուսումնական տարվան ուղղված աշխատանքային ծրագրում կպլանավորվեն նաև եզդիերենի դասավանդման ծրագրային և դասագրքային խնդիրները:

*Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ, ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ, ԵՎՐՈՒՈՐՀՐԴԻՆ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՐԻ ԿԱՄՔԻ ՏԵՐ ԲՈԼՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

Մենք՝ աշխարհի եզդիներս, չափազանց անհանգստացած ենք Իրաքում կատարվող իրադարձություններից, և մեր ձայնը միացնելով խաղաղասեր բոլոր ուժերի ձայնին, խնդրում-պահանջում ենք, որ Իրաքի հետ կապված բոլոր տարաձայնությունները լուծվեն միայն քաղաքակիրթ եղանակով, ինչպես վայել է առաջադեմ մարդկությանը: Իրաքում ապրում են մոտ 1 միլիոն եզդի մեր հայրենակիցներ, որոնց ճակատագրի նկատմամբ մենք խոր տագնապ ենք ապրում: Պատմության ընթացքում մեր հանիրավի հալածված ժողովուրդը կրկին կորուստներ կրելու սպառնալիքի տակ է:

Այս կոչ-խնդրանքը ամբողջ աշխարհում սփռված բոլոր եզդիների կամքի արտահայտությունն է, նրանց ակնկալիքների մարմնավորումը:

*ԱՇԽԱՐՀԻ ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ Ա. ԹԱՄՈՅԱՆ*

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Ապրիլի 10-ին Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան առաջին քարտուղար ժիլ Ստեղնը ընդունեց Աշխարհի եզդիների ազգային միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանին, փոխպրեզիդենտ Հասան Թամոյանին, պրեզիդենտի խորհրդական Թոսուն Հասանյանին:

Ջերմ զրույցի ընթացքում շոշափվեցին եզդիներին հուզող մի շարք հարցեր: Մասնավորապես խոսք եղավ եզդիների միությանը վարկեր տրամադրելու, եզդիների միության պատվիրակության՝ Ֆրանսիա կատարելիք այցի և այլ հարցերի շուրջ:



Ժիլ Ստեղնը պատրաստակամություն հայտնեց եզդիների ազգային միությունը միջազգային հանրությանը ներկայացնելու, ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի անդամների հետ հանդիպում կազմակերպելու համար:

Ա. Թամոյանը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության և գործնական զրույցի համար:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հուլիսի 2-ին ՀՀ Նախագահի ավագ խորհրդական Վահան Հովհաննիսյանն ընդունեց Աշխարհի եզդիների միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանին և ազատ ու աննկաշկանդ զրույց ունեցավ նրա հետ:

Այդ պաշտոնական հանդիպման ընթացքում Ա. Թամոյանը ներկայացրեց եզդիների վիճակը հանրապետությունում, պատմեց այն հոգսերի մասին, որ ունեն եզդիները:

Վ. Հովհաննիսյանը ըմբռնումով մոտեցավ բարձրացված հարցերին, խոստացավ եզդիներին հուզող հարցերը ներկայացնել ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին և աշխատել դրական լուծում տալ դրանց:

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԵԶԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Տեղի ունեցավ ՀՀ եզդիների ազգային միության նախագահության արտահերթ նիստը, որին մասնակցում էին միության մասնաճյուղերի ղեկավարներ, մարզերի ներկայացուցիչներ, մտավորականներ:

Բացելով նիստը, միության նախագահ Ազիզ Թամոյանը ներկաներին տեղեկացրեց, որ շուտով ՀՀ Ազգային ժողովը քննարկելու է «Ընտրությունների մասին» օրենքի նախագիծ: Հաշվի առնելով, որ հանրապետությունում ապրում է ավելի քան 50 հազար եզդի, բայց նրանք ՀՀ Ազգային ժողովում չունեն իրենց ներկայացուցիչը, անհրաժեշտ է առաջարկություն ներկայացնել ՀՀ Ազգային ժողով, որպեսզի նոր օրենքի քննարկման ժամանակ ընդունվի համապատասխան մի հոդված, որը թույլ կտա եզդի համայնքին՝ Ազգային ժողովում ընտրելու իր պատգամավորը:

Նիստը որոշեց առաջարկությունը ներկայացնել ՀՀ նախագահին, վարչապետին, Ազգային ժողովին և խնդրել՝ հարգել առաջարկությունը, ընտրությունների օրենքում ընդունել համապատասխան որոշում, վերականգնել այն լավ ավանդույթները, որ կային Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների ժամանակ:

Ազգային հեռուստատեսությամբ ցուցադրվեց նիստի ընթացքը, ազգային միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանի ելույթը և արդարացի պահանջը՝ Ազգային ժողովում եզդի պատգամավոր ունենալու մասին:

## ԵԶԴԻՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

Վերջին տվյալների համաձայն եզդիների թիվն աշխարհում հասնում է երկու միլիոնի, ներառյալ նաև Իրաքի խոշոր համայնքը՝ մոտ մեկ միլիոն: եզդիներն ապրում են Ռուսաստանում (300 հազար), Թուրքիայում (50 հազար), Գերմանիայում (300 հազար), Վրաստանում (մոտավորապես 40 հազար), Հայաստանում (60 հազար), Սիրիայում (20 հազար), ինչպես նաև Շվեյցարիայում, Բելգիայում, Էստոնիայում, Ուկրաինայում, Ֆրանսիայում:

Իրաքը համարվում է եզդիների հայրենիքը: Եզդիների հիմնական սրբավայրը Իրաքի հյուսիսում է, Լալըշի ձորում: Թե՛ Իրաքում և թե՛ Թուրքիայում եզդիները հալածվում են կրոնական շարժառիթներով:

Միայն Հայաստանում, ուր եզդիները ապաստան գտան ներկա դարասկզբին, բացառվում են նրանց ուծացման հնարավորությունները: Աշխարհի եզդիների ազգային միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանի խոսքերով, Հայաստանը միակ երկիրն էր, ուր ժողովուրդը կարող է գրել մայրենի լեզվով՝ եզդիերենով, որովհետև միայն Հայաստանում է, որ եզդիները հնարավորություն ունեն եզդիերենը սովորել միջնակարգ դպրոցում: Հայաստանի Հանրապետությունում այդպիսի դպրոցների թիվը հասնում է 10-ի. դպրոցներ կան Արմավիրի մարզում (Արտաշար, Ֆերիկ և Զարթոնք գյուղերում), Կոտայքում (Զովունի, Քանաքեռավան), Արագածոտնում (Շամիրամ) և այլն: Եզդիական միակ թերթն աշխարհում հրատարակվում է Երևանում, եզդիերեն միակ ռադիոհաղորդումները հեռարձակվում են Հայաստանի Հանրապետությունում:

Հետաքրքիր է եզդիների այբուբենի պատմությունը: Դեռ 11-րդ դարում արդեն կային եզդիերեն գրության 33 տառեր, որոնք ստեղծվել էին նեստորական այբուբենի հիմքի վրա: 1920 թ. բանահավաք Լազոն (Հակոբ Ղազարյան) ստեղծեց եզդիերեն այբուբեն՝ օգտագործելով հայերեն տառերի գծագրությունը: 1926 թվականից սկսած՝ սկսեցին օգտագործվել լատիներեն տառեր, 1940 թվականից անցան ռուսերեն այբուբենին՝ ավելացնելով առանձին հնչյունների համար լատիներեն 7 տառ:

Այժմ Հայաստանում բոլոր հնարավորությունները կան զարգացնելու եզդիական մշակույթը: Եվ եզդիները գնում են դեպի նոր հորիզոններ:

*«ՈՒՐԱՐՏՈՒ», N2, 1998թ.*

## ԸՆԴՈՒՆԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

1998 թվականի մարտի 7-ին ՀՀ Ազգային ժողովի Նախագահ Խոսրով Հարությունյանն ընդունեց Աշխարհի եզդիների ազգային միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանին, ՀՀ եզդիների ազգային միության Նաիրիի շրջանային կոմիտեի նախագահ Սուրիկ Ավդալյանին և ջերմ զրույց ունեցավ նրանց հետ:

Ա. Թամոյանը պատմեց Հայաստանի Հանրապետությունում ապրող եզդիների առօրյայի, նրանց սոցիալական, մշակութային կյանքի, իրավական պաշտպանվածության մասին, անդրադարձավ մի շարք հարցերի, որոնք հուզում են եզդիներին, հատկապես կանգ առավ եզդի երեխաների կրթության, եզդիերեն լեզվի և մշակույթի զարգացման, սեփականաշնորհման ընթացքում եզդիների նկատմամբ ցուցաբերված անտարբերության, Ազգային ժողովում եզդի ներկայացուցիչ ունենալու և մի շարք այլ հարցերի վրա: Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը ըմբռնումով մոտեցավ եզդի ժողովրդին հուզող հարցերին, խոստացավ ուշադրության կենտրոնում պահել եզդիների խնդիրները, լուծել եզդի ներկայացուցիչ ունենալու հարցը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկայում նույնպես գործնական հանդիպումներ ունենալու մասին:

***

1997 թվականը կարևոր էր նաև նրանով, որ պատմության մեջ առաջին անգամ ձևավորվեց Աշխարհի եզդիների ազգային միությունը:

«Գոլոս Արմենիի» օրաթերթն անդրադարձավ այդ մեծ իրադարձությանը և «Աշխարհի եզդիների ազգային միությունը ծնվեց Երևանում» խորագրով հաղորդում տպագրեց նոյեմբերյան համարներից մեկում, որի մեջ ասված է.

«Նոյեմբերի սկզբին ՀՀ Արդարադատության նախարարությունը գրանցեց Աշխարհի եզդիների ազգային միությունը: Այս կազմակերպությունն ստեղծվել է հանրապետության ազգային միության հիմքի վրա: Ինչպես հաղորդել է եզդիների համաշխարհային ազգային միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանը, Միության նոր կարգավիճակը ձևավորվել է ոչ դատարկ տեղում: Դրան նախորդել են ինչպես ԱՊՀ երկրների, այնպես էլ Արևմտյան Եվրոպայի եզդիական համայնքներում տեղի ունեցած հանդիպումները, որոնց ընթացքում էլ ստացվել է վստահության քվեն:

Պ-ըն Թամոյանի խոսքերով, այսօր աշխարհում հաշվվում է մոտ 2 միլիոն եզդի: Եվ դա այն դեպքում, երբ անցած դարում նրանց թիվը հասնում էր 7 միլիոնի:

Մինչև վերջին ժամանակներս Հայաստանում ապրում էին շուրջ 60 հազար եզդիներ, որոնց մի մասը արտագաղթել է:

Ինչպես նշեց Ազգային միության առաջնորդը, Հայաստանի Հանրապետությունն աշխարհում միակ պետությունն է, ուր լույս է տեսնում եզդիերեն թերթ, եթեր է թողարկվում եզդիերեն լեզվով կես ժամ տևողությամբ ամենօրյա ռադիոհաղորդում: Այսպիսով, Համաշխարհային միության ստեղծումը հատկապես Հայաստանում, պատահական չէ: Ա. Թամոյանն ընդգծեց, որ Աշխարհի եզդիների ազգային միությունը դուրս է քաղաքականությունից և զբաղվելու է եզդի ժողովրդի ավանդույթների պահպանման խնդիրներով:

***

Աշխարհի եզդիների ազգային միության կանոնադրությունը հաստատվեց Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում:

Կանոնադրությունը բացի «Հիմնական դրույթներից», անդրադառնում է կազմակերպության նպատակներին ու խնդիրներին, կառուցվածքային, առանձնացված ստորաբաժանումների ստեղծման հարցերին, միջազգային կապերին, սեփականության գոյացման աղբյուրներին և դրանց օգտագործման, վերակազմակերպման և լուծարման հարցերին, ինչպես նաև կազմակերպությանն անդամագրվելու, անդամությունից դուրս գալու կարգին: Հատուկ շեշտադրում են ստացել կազմակերպության անդամների իրավունքները և պարտականությունները:

Աշխարհի եզդիների ազգային միությունը հիմնական նպատակ է հռչակում հայ և եզդի ժողովուրդների դարավոր բարեկամության ամրապնդումը, փոխադարձ ըմբռնումն ու համագործակցությունը, այդ գործին աշխարհով մեկ սփռված եզդիների ընդգրկումը, եզդիների ազգային մշակույթը, կրթական համակարգի զարգացումը, փառատոների, ցուցահանդեսների, սեմինարների, գիտաժողովների, կլոր սեղանների և բազմաբնույթ այլ միջոցառումների կազմակերպումը, եզդիների, եզդի զինծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, միշտ համագործակցելով պետական իշխանության և կառավարման մարմինների, կրոնական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ:

Ըստ կանոնադրության, Միությունը գործում է օրինականության, կամավորության, իրավահավասարության, հրապարակայնության սկզբունքներով: Օգտվելով իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և ստանձնելով որոշակի պարտականություններ, Միությունն իր գործունեությունը իրականացնում է ինչպես Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, այնպես էլ արտասահմանյան երկրներում՝ այդ երկրների օրենսդրությանը համապատասխան:

Միության անդամ կարող է դառնալ յուրաքանչյուր ոք, ով ընդունում է Միության կանոնադրությունը: Միության նախագահության որոշմամբ այն անդամներին, ովքեր զգալի ներդրում կունենան Միության նպատակների ու խնդիրների իրականացման գործում, կարող է շնորհվել Միության պատվավոր անդամի կոչում: Միության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ընտրել և ընտրվել ղեկավար մարմիններում, տեղեկություններ ստանալ Միության գործունեության մասին, մասնակցել կազմակերպվող միջոցառումներին, օգտվել Միության անդամի բոլոր իրավունքներից: Միաժամանակ Միության անդամը պարտավոր է ակտիվորեն մասնակցել նրա աշխատանքներին, բարոյապես և նյութապես նպաստել կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացմանը, բարեխղճորեն կատարել ղեկավար մարմինների որոշումները և կանոնադրական պահանջները:



Միության ղեկավար մարմիններն են եզդիների Համաժողովը, ընտրված նախագահությունը և նախագահը: Համաժողովը հրավիրվում է 5 տարին մեկ անգամ, որն իրավունք ունի փոփոխություններ և լրացումներ կատարել կանոնադրության մեջ: Համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում Միության ղեկավար մարմինը նախագահությունն է, որն ընտրվում է հինգ տարի ժամկետով, քննարկում և լուծում է Միությանը վերաբերող բազմաբնույթ հարցեր:

Միության նախագահն ընտրվում է համաժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով: Նա է հետևում նախագահության որոշումների կատարմանը, հրավիրում է նախագահության նիստեր, Միության անունից կնքում է պայմանագրեր, համաձայնագրեր, ընդունում և ազատում է հաստիքային աշխատողներին, վարում է Միության ֆինանսական գործերը, կազմակերպում և իրականացնում է ընթացիկ աշխատանքները:

Միության սեփականությունը և միջոցները գոյանում են մուտքի վճարներից, տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ անձանց նվիրատվություններից, իր հիմնադրած ձեռնարկությունների տնտեսական գործունեությունից ստացված եկամուտներից և օրինական այլ աղբյուրներից: Ֆինանսական ողջ գործունեությունը վերահսկվում է համաժողովի կողմից ընտրված վերահսկիչ հանձնաժողովի կողմից:

Միությունն ունի իր անունով կլոր կնիք՝ խորհրդանշանով, ուր արևի ֆոնի վրա պատկերված է Սիրամարգ, եզդիների ազգային կրոնի խորհրդանիշը, անկյունադրոշմ, պաշտոնաթերթ, պաշտոնաթղթեր:

Միության ղեկավարությունն իր գործունեությունն իրականացնում է Երևանից:

***

...Եվ այսպես, տարիների համառ պայքարը, եզդի նվիրյալների մեծ ջանքերը, հայ մտավորականության աջակցությունը, իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը և այլ գործոններ տվեցին իրենց շոշափելի արդյունքները: Եզդի ժողովուրդն իրեն հաստատեց որպես եզդի, տեր դարձավ իր արմատներին, վերագտավ իր պատմությունը, դարձավ քաղաքակիրթ ազգությունների շարքում իր տեղն ու արժանապատվությունն ունեցող լիարժեք ազգ, Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների նման իրավահավասար քաղաքացի:

Ովքե՞ր են եզդիները, որտե՞ղ է նրանց հայրենիքը, որտե՞ղ են ձևավորվել նրանք որպես ազգ, ժողովրդական բանահյուսության մեջ այդ հարցին առնչվող ի՞նչ ավանդույթներ են պահպանվել, ովքե՞ր են անդրադարձել եզդիների պատմությանը, ինչպիսի՞ ուսումնասիրություններ են կատարվել, ի՞նչ գրքեր են հրատարակվել եզդիների մասին:

Ցավոք, այս բոլոր հարցերին սպառիչ և գիտական պատասխան առ այսօր տրված չէ: Ճիշտ է, որոշ ուսումնասիրություններ կատարվել են,

սակայն դրանք վերաբերում են եզդիների կրոնական պատմությանը և չեն շոշափում քաղաքացիական պատմության հարցեր: Ահա թե ինչու անհրաժեշտություն է զգացվում անդրադառնալ հատկապես այդ հարցին ելնելով ոչ միայն ժողովրդական բանահյուսության մեջ պահպանվող ավանդապատումներից, այլև վկայակոչելով պատմական փաստերը «Եզդիների դավանանքը /հիմնական աստվածությունները, Սուրբ գրքերը/» հրապարակման, Խաչատուր Աբովյանի «Քրդեր և եզդիներ» հոդվածի /Երկերի ժողովածու, 8-րդ հատոր/, Լեոյի «Հայոց պատմություն» /2-րդ հատոր, 294-րդ էջ/ և այլ աղբյուրներ, ձգտել ենք ներկայացնել փոքրիշատե ամբողջական մի պատկեր: Նշենք, որ քիչ չեն պատմական անճշտությունները ու չիմացածությունից բխող աղավաղումները:

Հավաստի փաստերը վկայում են, որ եզդիների նախահայրենիքը Հնդկաստանն է, ավելի ճիշտ՝ Բոմբա, այսինքն՝ Բոմբեյ քաղաքը: Այն ժամանակ եզդիները կոչվում էին կռապաշտ հեթանոսներ, ապա և Մալաքե Թավուսի ժողովուրդ: «Եզդի» անունը նրանք ստացել են միայն 7-րդ դարում: Ահա մի վկայություն ժողովրդական բանահյուսությունից.

«Ջավե բդընը էզդիխանա բըմբաե, կանդահարե, շարկե ու շամե, բրա կային խուլայկն քըթեբա դինը»

Այսինքն՝ կոչ է արվում, որ Բոմբեյ, Շարկ և Շամ վայրերում ապրող եզդիները ամուր պահեն իրենց ազգային կրոնական գիրքը:

Ահա և երկրորդ խոսքը, որը նույնպես ունի կրոնական բնույթ և դարձյալ գալիս է ժողովրդական բանահյուսությունից.

«Ջաբե բըդընը Հնդստանե, Շարֆադին միրե դիվանե, Խայկըն քթեբա իմանե», այսինքն՝ Հնդկաստանից տվեք խաբար, որ Շարֆադինը բարձր ատյանի անդամ է, պահպանեք մեծի կրոնական գիրքը:

## ՊԱՏՄԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆՈՎ

*Ըստ Գ. Ասատրյանի և Ա. Փոլադյանի «Եզդիների դավանանքը» գրքի՝ իմ լրացումներով*

Հայտնի է, որ եզդիները պաշտում են Սիրամարգը: Եվ այս պաշտամունքը գալիս է հազարամյակների խորքից: Ընդհանրապես պետք է հիշել, որ Սիրամարգի պաշտամունքի առանձին տարրեր վաղ պատմական ժամանակներում սկիզբ են առել Հնդկական թերակղզում և լայն տարածում գտել Մերձավոր ու Միջին Արևելքում ապրող ժողովուրդների մեջ, արտացոլվել են նրանց հավատալիքներում, հոգևոր և նյութական մշակույթի հուշարձաններում:

Մալաքե Թավուսը եզդիների ծիսական համակարգում պատկերվում է նաև աքաղաղի կերպարանքով՝ ամրացված աշտանակի վրա: Նման ձևի պղնձե արձանիկներ պահպանվում են Հնդկաստանում, Հյուսիսային Իրաքում, Լալըշում:





Սիրամարգ



Սանջակ



Պաշտամունքի առարկա

Դրանք ամեն տարի Լալըշում, ինչպես նաև Լալըշից դուրս դավալների կողմից (եզդի հոգևորականների ստորին դասերից մեկը) ման են ածվում եզդիաբնակ վայրերում: Դրանց միջոցով համայնքից նյութական հանգանակություն է գանձվում հոգևոր կենտրոնի: Այդ արձանիկները կոչվում են սանջակներ և խիստ գաղտնի են պահվում այլադավաններից:

Որքան էլ տարօրինակ է, Մալաքե Թավուս (սիրամարգ-հրեշտակ) աստվածության մասին խոսելիս, ընդունված է այն կոչել չարիքի արտահայտություն: Դա է երևի հիմք տվել, որ եզդիներին հաճախ անվանեն սատանայապաշտներ, սատանայի հետևորդներ: Իսկ ինչո՞ւ սատանա կամ շեյթան: Այս հարցը նույնպես ունի իր բացատրությունը: Ըստ կրոնական հավատալիքների, Մալաքե Թավուսը մուտք գործելով դրախտ՝ սատանայաբար Ադամին և Եվային մատուցում է ցորենի հատիկներ, որոնք արգելված էին աստծո կողմից: Այդ պատճառով Ադամին ու Եվային վտարում են դրախտից, իսկ Մալաքե Թավուսը, որ ամեն ինչի մեղավորն էր, կոչվում է սատանա, շեյթան:

Մի քանի աղբյուրներում նշվում է, որ Մալաքե Թավուս նշանակում է թագավորի թագ: Թագի վրա ամրացվում էին սիրամարգի գեղեցիկ փետուրներ: Այդպիսի փետուրներ ամրացված են նաև հնդկական աստված Կրիշնայի թագին: Սա ևս մի ապացույց է, որ եզդիների ծագումնաբանությունն առնչվում է Հնդկաստանին: Հետևաբար, վաղնջական ժամանակներում եզդիները պաշտել են «թագավորի թագը»: Այն հետագայում է ստացել իր առասպելական կերպարանափոխությունը՝ սիրամարգ-հրեշտակ պատկերացումով: Իսկ սիրամարգն արևելքում համարվում է գեղեցկության և վեհության արտահայտություն, իմաստության և շուքի խորհրդանիշ:

Թերևս հազարավոր տարիներ առաջ Մալաքե Թավուսի ժողովուրդն արտագնացությամբ տարածվում է դեպի Աֆղանստան, Բիրմա, Իրան և այլուր: Հիշենք, որ այսօր էլ Իրանում ապրում են Մալաքե Թավուսի ժողովրդի շուրջ 100 հազար ներկայացուցիչներ, որոնք չեն միաձուլվել ոչ մի այլ ժողովրդի հետ, մնացել են արևապաշտ, ունեն իրենց շեխերը,

փիրերը: Նրանք, հավաստի տվյալների համաձայն, կենցաղավարում են այնպես, ինչպես ներկայիս եզդիները:

Թեև ոմանք պնդում են, որ այն ժամանակ եզդիներն ընդունել են զրադաշտականություն, սակայն ոչ մի փաստով դա չի ապացուցվում: Եզդիներն այդ ժամանակ նույնպես համարվել են Մալաքե Թավուսի ժողովուրդ և եղել են արևապաշտ: Ըստ պարսիկների սովորության Խաթունա-Ֆարխայի սրբությունը (Խաթունա Ֆարխան է, որ օգնում է ծննդաբերության ժամանակ) մինչև այժմ պահպանվում է թե՛ պարսիկների, թե՛ եզդիների մոտ:

Վստահորեն պետք է նշել այն կարևոր փաստը, որ ծագումնաբանական հիմքից են գալիս եզդիների, հնդիկների, պարսիկների բազմաթիվ լեզվական ընդհանրությունները:

Մեր ենթադրությունը, ավելի ճիշտ՝ մեր համոզմունքը հաստատելու համար, որ եզդիերենն ունի հնագույն արմատներ, որ նա պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին և որ այն շատ ընդհանրություններ ունի հնդիկների լեզվի հետ, խնդրեցինք պարզաբանումներ տալ Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դասախոս Սանթոշ Կամարիին: Նրա հավաստմամբ իմ համոզմունքն իրական է: Նախապես ես ներկայացրել եմ բազմաթիվ բառեր, որոնք և հնչույթով և գրությամբ ու իմաստով նույնական են: Մեր համատեղ աշխատանքը տվեց իր արդյունքը: Ոչ լրիվ տվյալներով (իսկ դա պահանջում է լայնածավալ հետազոտական աշխատանք) կան այսպիսի անվիճելի համադրույթներ:

Ազման բառը երկու լեզուներում էլ նշանակում է երկինք: Այդպես են նաև թութ-թութ, պանիր-պանի, հաքիմ-բժիշկ, դարդ-ցավ, այնա-հայելի, բուկ-հարս, զավա-փեսա, ջահալ-երիտասարդ, դուքան-խանութ, սկոլ-դպրոց, գըրդըն-կոկորդ, նան-հաց, խուն-արյուն, մըրըն-մեռնել, դըլ-սիրտ, զենդի-կենդանի, սէվ-խնձոր, փըրդը-վարագույր, դրան-ատամ, քուրսի-աթոռ, դիվար-պատ, հնար-նուռ, դոստ-բարեկամ, թըրըզա-կշեռք, ջավ-պատասխան, քըթեբ-գիրք, հեդիկա-կամաց, մեր-տղամարդ, ռընգ-գույն և այլ բառերը:

Այնուհետև նույն իմաստն ունեն պիվազ, շըրբաթ, հալվա, շիրը, հըվտե և բազմաթիվ այլ բառեր, անուններ, տեղանուններ, տերմիններ, մտքեր, հասկացություններ և այլն, որոնք, իրոք, կարող են համոզիչ դարձնել մեր իրավացիությունը:

Լեզվացեղային տեղաշարժերի բերումով Մալաքե Թավուսի ժողովրդի մի ստվար հատված հայտնվում է Իրաքում: Թերևս այս շրջանին է վերաբերում Մալաքե Թավուսի ժողովրդի կողմից թլպատման իրողության ընդունումը:

Հիշենք, որ 11-12-րդ դարերում ադավիների ուսմունքը մուտք գործեց հնդիրանալեզու լեռնցիների (ներկայիս եզդիների) մեջ: Պատահական չէ, որ եզդիները նույնպես հիմա անվանվում են ադավինը: Կրկնենք, որ Մալաքե Թավուսի ժողովուրդն իրեն դեռևս 7-րդ դարից անվանում է եզդի: Որտեղի՞ց առաջացավ այս անվանումը: Ինչո՞ւ մարդիկ իրենց կոչեցին եզդիներ: Այս հարցի պատասխանն առայժմ տրվում է պատմական իրողությունների հավաստմամբ:



Արաբական առաջին խալիֆը եղել է Աբու Բաքրը (632-634թթ.): Նրան հաջորդել են խալիֆներ Օմարը (634-644թթ.), Օսմանը (644-656թթ.), Ալին (656-661թթ.), Մուավիան (661-680թթ.), Եզիդը (680-683թթ.):

Եզիդի հայրը՝ Մուավիան, ընդունել էր իսլամը: Այդ պատճառով հոր և որդու միջև առաջացել էին լուրջ տարաձայնություններ, որոնք կրում էին կրոնական հակասությունների բնույթ: Ժողովրդական բանահյուսության մեջ հիշատակվում է նաև Մուավիայի և կնոջ գժտության փաստը: Չընդունելով իսլամը, Եզիդի մայրը հեռանում է Մուավիայի մոտից և ապաստան գտնում որդու՝ Եզիդի մոտ, որը ի հակադրություն իր հոր, շարունակում է պաշտպանել Մալաքե Թավուսի ժողովրդին:

Հոր մահից հետո, 680 թվականին, նա դառնում է խալիֆ՝ Սըլթան Եզիդ անունով, որ ժողովրդի մեջ հաճախ կոչվում է նաև Եզիդի Սոր, այսինքն՝ Կարմիր Եզիդ: Չէ՞ որ Քերբալայի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում Եզիդը շաղախվում է արյամբ, որի համար ժողովուրդը նրան անվանում է Կարմիր Եզիդ:

Սըլթան Եզիդը պանթեոնի մեջ Մալաքե Թավուսից հետո երկրորդ դեմքն է: Ըստ գիտական որոշ շրջանների, Եզիդը մարմնավորում է հին իրանական յազատներին /աստվածություն, զոհաբերության արժանի/: Այս աստվածությունը գոյություն է ունեցել մեր թվարկությունից երեք հազար տարի առաջ, սակայն մենք տեսանք, որ Սըլթան Եզիդն ապրել է 7-րդ դարում, իշխանության գլուխ է անցել 680 թվականին, Եզիդ Բին Մուավիայի որդին է: Հետևաբար, յազատ բառը եզիդ բառի հետ միայն հեռավոր նմանություն ունի և գիտնականների արտահայտած կարծիքը՝ «եզիդին» կապել «յազատի» հետ չի հիմնավորվում:

Երբ Քերբալայի ճակատամարտում սպանվեց Հուսեինը, մահմեդականների, մասնավորապես շիաների շրջանում, Եզիդը հռչակվեց հանցագործ և սրբապիղծ անձնավորություն, սկսվեցին հալածանքները եզդիների նկատմամբ: Եզդիների հռչակը որպես անհավատների, չարիքի մարմնավորողների, աստիճանաբար ձևավորվեց սատանայապաշտների՝ հարևան ժողովուրդների միջավայրում: Որպես նախահայր ընդունելով Սըլթան Եզիդին, եզդիները իրենց շոյված են զգացել:

Ինչպես տեսնում ենք, միշտ չէ, որ եզդի անվանումը եղել է, ժողովուրդն իրեն համարել է Մալաքե Թավուսի ժողովուրդ, այնուհետև ադավիներ, սունիներ, և, վերջապես 7-րդ դարից սկսած՝ եզդի:

Ըստ եզդիների ազգային օրենքների՝ եզդին ծնվում է որպես եզդի և ոչ մի այլ ազգի ներկայացուցիչ չի կարող լինել եզդի: Դա ապացուցվում է նաև նրանով, որ դարեր շարունակ սրբությամբ պահպանվում է հիմնական օրենքը՝ եզդին ամուսնանում է միայն եզդու հետ: Սակայն հիշենք, որ այստեղ էլ կա որոշ տարբերակում: Եզդիներն էլ իրենց հերթին բաժանվում են երեք ճյուղի (կաստայի)՝ շեխեր, փիրեր, մրիդներ: Շեխերն ամուսնանում են շեխերի, փիրերը՝ փիրերի, մրիդները՝ մրիդների հետ: Այս մասին կխոսվի հետագայում ավելի մանրամասնորեն: Այս իրողությունը կա նաև ադավիների, ինչպես նաև հնդիկների մեջ:

Բերենք երկու օրինակ.

Ա. Քիդարե բու կըսատա մավի վի սըլթանի մավի վե յակե նըկըբըրը դումըշկե (Դամասկոս-Սիրիայի մայրաքաղաքը) կըր սըֆըրը Մակա Սըլթան էզդի ինաը դըրը:

Բ. Դե գո միրո բավետը փաքշաբու ռակի ռավաստաբու դըմէշխ (Դամասկոս) սարնավե վի Ավաբու:

Յիշենք, որ Դամասկոսի նախկին անունն է Շամ:

Սըլթան Եզիդի ժամանակ, 680 թվականին, երբ շիաների մեջ՝ Քուֆում, նորից շարժում սկսվեց, դարձյալ նշանաբան ունենալով այն արյունոտ հարցը, թե ով պիտի համարվի մարգարեի օրինավոր ժառանգ, Յուսեինն ապրում էր Մեքքայում: Շիաները նրան նամակներ գրեցին և հրավիրեցին Քուֆ, որտեղ նա շուտով 12 հազար կամավորներ հավաքեց Յուսեինին օգնելու համար: Միայն թե Եզիդ խալիֆի փոխանորդը՝ Ուբեյդուլլահը, իրազեկ դառնալով պատրաստվող ապստամբությանը, սպանել տվեց Յուսեինի ուղարկած մարդուն: Դավադրությունը վիժեց: Իսկ Յուսեինն անտեղյակ այդ ամենին, իր կողմնակիցների մի փոքրիկ խմբով, կանանցով ու երեխաներով, Մեքքայից ճանապարհվեց Քուֆ: Քաղաքին մոտենալով նա տեղեկացավ, որ ապստամբությունը չի հաջողվել, բայց նա հետ չդարձավ, այլ գնաց հանդիպման իր թշնամիների հետ: Թեև որոշ պայմաններ առաջադրվեցին հաշտության համար, բայց չընդունվեցին, և Յիջրեթի 61 թվի մուհարրեմ ամսի 10-ին (680թ. հոկտեմբերի 10-ին) Քերբալա վայրում կռիվ սկսվեց Յուսեինի և կառավարական զորքերի միջև: Յուսեինին շրջապատող կողմնակիցները 150 հոգի էին, այնինչ նրանց դեմ գործում էր 5 հազարանոց մի բանակ: 150-ի խումբը հետզհետե հալվում էր զինվորների հարվածների տակ: Յետո ընկավ Յուսեինը՝ սրերի ու նիզակների հարվածներից: Կանանց ու երեխաներին ձեռք չտվեցին, միայն գերի վերցրեցին և ուղարկեցին Սըլթան Եզիդ խալիֆին՝ Դամասկոս: Նրան ուղարկեցին նաև Յուսեյնի գլուխը: Սըլթանն անկեղծորեն վշտացավ այդ արյունահեղ և տխուր դեպքի համար և նրա կանանց ու երեխաներին բնակեցրեց Մեքքայում, հատկացնելով նրանց հատուկ թոշակներ և պատվավոր կացության բոլոր միջոցները:

Քերբալայում թաղվեց Յուսեյնի անգլուխ մարմինը, և այնուհետև այդ նահատակի գերեզմանը դարձավ շիա հռչակավոր ուխտավայրը, ուր աշխարհի բոլոր կողմերից գալիս-հավաքվում էին իրար տեսնելու, իրար լսելու համար՝ արաբական լծից անբավական բոլոր տարրերը:

Յուսեինի մահվան առթիվ ամեն տարի, սկսած 7-րդ դարից, շիա աշխարհում տեղի են ունենում սգո արարողություններ, և այդ սուգը կոչվում է «մուհարրեմ» /շախսե-բախշե/, իբրև անեծքի, զայրույթի ցույցեր Սըլթան Եզիդի և նրա կողմնակիցների դեմ, որոնք ահ ու սարսափ էին ազդում եզդիների վրա:

Երեք տարի ու կես, այսինքն՝ մինչև 683 թվականը իշխելուց հետո, Սըլթան Եզիդը անհետանում է: Մինչև այսօր էլ անհայտ է նրա ճակատագիրը: Եզդիները չդիմացան շիաների ճնշմանը, հեռացան երկրից



և իրենց ապաստանը գտան Իրաքի հյուսիսային մասում՝ Մոսուլի մարզի Շանգալի /Սինջար/ և Լալըշի խոր ձորում:

Սակայն Եզիդը անհետացավ ֆիզիկապես, իսկ նրա տոհմը, նրա շառավիղները շարունակեցին ապրել: Մինչև այսօր էլ նրա ժառանգորդները համարվում են աշխարհի եզդիների միրեր՝ հոգևոր առաջնորդներ:

Ցուցակը, որ ներկայացվում է ստորև, սովորական թվարկում չէ, այլ Եզդիի տոհմածառը, որի նախահայրն է հենց ինքը՝ Եզիդը: 1972 թվականին, երբ ես Իրաքում էի և հանդիպեցի Միր Իսմայիլի որդի Միր Բայազիտին, նա ինձ տրամադրեց եզդիության հոգևոր առաջնորդության այս տոհմածառը, որը ես մեջ եմ բերում ամբողջությամբ:

-Սուֆիայի որդի Մուավիան, որ իր ժառանգական իրավունքն ապացուցում է նրանով, որ մարգարեն էլ է պատկանում միևնույն Օմանյան ցեղին /Լեո, 2-րդ հատոր, էջ՝ 639/.

Մուավիա

1. Եզդի - Մուավիայի որդին է
2. Միր Խալք - Եզդիի որդին է
3. Միր Յարբ - Խալքի որդին է
4. Միր Իբրահիմ /Չլմիրան/ - Յարբի որդին է
5. Միր Մրվան Ամավի Իբրահիմի - Չլմիրանի որդին է
6. Միր Յասան - Մրվան Ամավիի որդին է
7. Միր Մրվան - Յասանի որդին է
8. Միր Մուսա - Մրվանի որդին է
9. Միր Իսմայիլ - Մուսայի որդին է
10. Միր Սաֆըր - Մավրի Ամավի Իսմայիլի որդին է
11. Ադիլ Ամավի / Շեխ Ադի/ - Մավր Ամավիի որդին է
12. Միր Մահմուդ Ռահմանի /Միրեն, Միրան շեխ Մահմուդ Ռահմանին/ - Ադիի որդին է
13. Միր Բարաքատ - Շեխ Մահմուդ Ռահմանի որդին է
14. Միր Իսմայիլ - Բարաքատի որդին է
15. Միր Իբրահիմ - Իսմայիլե Անզալի որդին է
16. Միր Բաքր - Իբրահիմի որդին է
17. Միր Մալաք - Շեխ Բաքրի որդին է
18. Միր Մահմադե - Բատնի Միրե Միրան շեխ Մահմադե Բատնի - Մալաքի որդին է
19. Միր Յադին - Մահմադե Բատննիի որդին է
20. Միր Յամզը - Յադինի որդին է
21. Միր Զեինալ /ճավխալ/ - Յամզատի որդին է
22. Միր Յսեյին /Միրե Միրան/ - Մեծ Յսեինե Զեինալի որդին է
23. Միր Սալըհ - Յսեինի որդին է
24. Միր Սլեման - Սալիբագի որդին է
25. Միր Ավդլա - /Միրե Միրան/, Ավդի Բեկե Մըզն- Սլեմանի որդին է

26. Միր Շըրիֆ - Ավդլա Բագի որդին է
27. Միր Յասան - Շըրիֆի որդին է
28. Միր Սլեման /Միրե Միրան/ - Յասանի որդին է
29. Միր Միրխան - Սլեմանի որդին է
30. Միր Բադրխան - Միրխանի որդին է
31. Միր Չոլբագ - Բադրխանի որդին է
32. Միր Յասան - Չոլբագի որդին է
33. Միր Ալի - Յասան Բագի որդին է
34. Միր Արդի Բագ - Մեծ Ալի Բագի որդին է
35. Միր Իսմայիլ - Ավդի Բագի որդին է
36. Միր Բայազիտ Միր Իսմայիլի որդին է:
37. Միր Թասին - Բեգը Միր Սահիդի որդին է

Պետք է նշել, որ վերջին հարյուրամյակում ինչ-որ անախորժություններ տեղի ունեցան Եզիդի հետևորդների միջև: Անախորժության պատճառը միրության ժառանգման հարցն էր: Այժմ Իրաքում հոգևոր առաջնորդներ են հորեղբոր որդիներ Միր Թասին բեկը և Միր Իսմայիլի որդիները, որոնք Ալի Բագիի թոռներն են:

Վերադառնանք եզդիականության սրբացյալ հեղինակություններին:

Շեյխ Ադին /Շեյխ Ադի Բին Մուսաֆեր/ Մալաքե Թավուսից հետո երրորդ խոշոր դեմքն է եզդիների կրոնի պատմության մեջ: Եզդիները նրան համարում են աստծո առաքյալը և հավատում են, որ նա ստեղծվել է Մալաքե Թավուսի ստվերից: Շեյխ Ադին /ինչպես և Մալաքե Թավուսը/, հանդիսանում է աստծո փոխանորդը, իսկ որոշ ավանդապատումներում ստանում է նաև աստծուն հատուկ հատկանիշներ: Ուշագրավ է այն փաստը, որ Շեյխ Ադի Բին Մուսաֆերը պատմական անձնավորություն է: Օմայան ազնվական տոհմից: Նրա մասին տեղեկությունների կարելի է հանդիպել բազմաթիվ արաբական միջնադարյան սկզբնաղբյուրներում (տե՛ս Ibn Xallikan, 254-255. Ibn al-Athir, 80-81. Ibn Kathir, 243 և այլն):

Շեյխ Ադին ծնվել է 1072թ. /տոհմածառի մեջ 11-րդն է/ պատմական Սիրիայի Բաալբեկի շրջանի Բեյթնար գյուղում /այժմ Լիբանան/: Յաքարի լեռներում բնակվելու պատճառով ստացել է Ալ-Յաքարի մականունը: Երկար դեգերումներից հետո նա հաստատվել է Լալըշում՝ Մոսուլ քաղաքից հյուսիս, խոր ձորի մեջ գտնվող նեստորական ավերված մի եկեղեցում (տես՝ Yaqut 28), որտեղ էլ մահացել է 1162 թ.: Նա հիմք է դրել այսպես կոչված ադավիների կրոնական ուղղությանը (իր անունով): Ըստ աղբյուրների վկայության, Ադին եղել է իր ժամանակի ադանդավորական շրջաններում հայտնի ամենախոշոր քարոզիչներից մեկը, միջնադարի ականավոր գիտնական և փիլիսոփա: Նա սերտ հարաբերություններ է ունեցել սուֆիական կրոնական ուղղության կարկառուն դեմքերի՝ Ուկայլ ալ-Մանբաջիի, ալ-Յուլվանիի, Աբդ ալ-Կադիր ալ-Գիլանիի (Ջիլի) և այլոց հետ:

Այստեղ է, որ Ադին տեսավ, թե ինչպիսի գժտություններ կան ցեղապետների միջև: Տեսավ, որ մեկը մյուսին չի ենթարկվում: Ու ստեղծեց հաղաղ, այսինքն՝ եզդիների կրոնական սահմանադրություն: Շեյխ Ադին էր, որ ստեղծեց այսպես կոչված, Յոթ ձիավորների միություն /ժողով,



պառլամենտ/ , որի ղեկավարն էր հենց ինքը: Անկասկած, մեր օրերն է հասել այդ իրադարձության բանահյուսական-առասպելային արձագանքը:

***Ըստ այդմ՝ Սուրբ Յոթ ձիավորներն էին.***



1. Շիխսըն
2. Շեշըմս
3. Շեխուբաքըր
4. Սըջադին
5. Նասըրդին
6. Ազիզ Մալաք Ֆարխադին
7. Միր Յազմաման:

Սուրբ Յոթ ձիավորների այդ միությունը, հեռավոր անդրադարձի համաձայն, փաստորեն եզդիների այն ժամանակվա պառլամենտն էր (խորհրդարան), ուր յուրաքանչյուրն ուներ իր պաշտոնը:

*Կրոնական ավանդույթում պաշտոնները բաժանվեցին այսպես.*

1. Շամսը մարմնավորեց արևը:
2. Սըջադինը (Բանգա Արշա)՝ տիեզերքի հետ հաղորդակցվողը, միաժամանակ Կասըրե Ռոհե Մըն, որն իրականացնում է ոստիկանի պարտականությունները:
3. Նասըրդինին բաժին ընկավ հոգեառ հրեշտակի պաշտոնը, որն իրականացնում էր մահապատիժները (նաև հոգի էր տալիս և հոգի առնում):
4. Ազիզ Մալակ Ֆախրադինին հանձնարարվեց կրոնական դավրների և բայթերի (հիմների, ոտանավորների, աղոթքների) կատարումը, իսկ դրանք ստեղծեց հենց ինքը՝ Ազիզ Մալակ Ֆախրադինը: Միաժամանակ նա մարմնավորեց լուսինը /Մանգա Մալակ Ֆարխադին/:
5. Միր Յազմամանին բաժին հասավ քուլոկ, այինքն՝ սուրբ գլխարկների բաժանումը կրոնական անձանց: Նա համարվում էր քառասուն փիրերի փիր:
6. Շեխուբաքըը /Մավլե Մերաե/ դարձավ եզդիների բոլոր տարածքների՝ նահանգների ղեկավարը, այսինքն՝ Սարհադա շիխադի:
7. Մալակ շեխ Յասանը դարձավ եզդիների գրի ու գրականության ստեղծողը և հովանավորողը՝ շեխե ղալամե - շեխե սներտե:

11-րդ դարում Մալակ շեխ Յասանը Լալըշի, Շանգալի, Մուսուլի տարածքներում բացեց մի շարք եզդիական դպրոցներ, ուր եզդիական տառերով ուսուցանվում էր եզդիականություն: Մի քանի տարի անց՝ արաբ ղեկավար Բադըր Դիլոն իմանալով այդ մասին, փակում է եզդիական դպրոցները, արգելում եզդիականության ուսուցումը, բանտարկում է շեխ Յասանին և սպանում հենց Մոսուլի բանտում: Ըստ ավանդության, յոթ օր նրա դիակը մնում է բանտախցում: Միայն ութերորդ օրը նրա համախոհները կարողանում են դիակը դուրս հանել և թաղել Լալըշում, շեյխ Ադիի կողքին, հենց նրա դամբարանում: Բադըր Դիլոյի հրամանով արաբները մտնում են եզդիական գյուղերն ու բնակավայրերը, հավաքում և այրում են եդիական բոլոր գրքերն ու ձեռագրերը: Այդ ողջ գրականությունից փրկվում է միայն երկու գիրք՝ «Մասիհաֆա ռաշը» և «Քըթեբա ջուլվեն»՝ «Գիրք հայտնության» և «Սև մատյանը»:

Բացի Յոթ ձիավորների միությունից, կային նաև այլ պաշտոնյաներ, որոնք պատմական անձնավորություններ են, սակայն պարուրված են կրոնական քողով: Դրանցից է, օրինակ, Շեխալե Շամսան, որն ըստ կրոնական պատկերացումների, ներկայանում է որպես հիվանդների, ճանապարհորդների, նեղն ընկած մարդկանց հովանավորն ու աջակիցը: Իրականում, ըստ զրույցների, նա ոստիկանապետն էր, բանտերի ու բանալիների տերը, այսինքն՝ խուաե քլիթ մըֆտայե դարգավանե գըրտիե հըվսան: Նրա շիրիմը թաղված է Դիոկի բլուրի վրա ժամանակի ընթացքում դարձել է սրբավայր:

Այսպիսին է նաև Իսիբա Ուսվեբիան, որը Շեխ Ադու գանձապետն էր: Նա նույնպես իրական անձնավորություն է: Զեվա Օմարե Խալան՝ Խըրկը, այսինքն՝ սուրբ հանդերձներն իր պահեստից բաժանում էր արժանավոր կրոնավորներին:

Բացի այս տվյալներից, Աբովյան քաղաքի /նախկինում՝ Էլար/, բնակիչ Աhմադե շեխ Ասլանեն, 1998 թվականի ապրիլի առաջին չորեքշաբթի օրը, այսինքն՝ ամսի 1-ին, կատարեց հետևյալ հավելումները.

Փիրե Մալկավեսային հանձնարարվել էր սուրբ հանդերձների թել մանելը, այսինքն՝ փիր Մալկավեսա թաշիյա խարկա դռեստը:

Փիրե Քամալան կրոնական-երաժշտական գործիքների տերն ու տիրակալն էր, այսինքն՝ խուայե դավ շվիվայը:

Շեր Մամառաշան տիեզերքի, ամպ ու կայծակի տնօրինողն էր:

Շեխմադը օձերի թագավորն էր, այսինքն՝ փադշայե մարաբիյե: Դրա հնագույն ապացույցը մինչև հիմա սուրբ Լալըշում Շեյխ Ադու դամբարանի արտաքին պատին մնացած վիշապ օձի փորագիր պատկերն է, որը կոչվում է զիայե զըր, այսինքն՝ Դեղին Վիշապ:

Սորե Սորային էր հանձնվել քամիների տնօրինումը, և նա իր բնակարանում գտնվող սրբության մոտ բուժում էր քամոտ անձանց և այլ հիվանդություններ:



Այսինքն՝ Սորե Սորա- չկասթավի բավի հաբունը չունը բըր օջախա վույի:

Ճարա Պիրա ֆատը եզդիների գենի պահպանողն էր, այսինքն՝ թոխումե մերե էզդի ջըմ վեյա բույը:

Խատունա ֆարխան ծննդաբերող կանանց հովանավորն ու փրկիչն է:

Մամե Շըվանին հանձնարարվել է ոչխարների խնամքն ու պահպանումը:

Մալակ Զայդինը գարնան հրեշտակն էր: Նրա տոնը նշվում է յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսվա առաջին չորեքշաբթի օրը /հին տոմարով/:

Ջնտայարը հոգեկան հիվանդներին և կատաղությամբ տառապողներին ձեռքի բարակ ճիպոտով ծեծելով առողջացնողն է:

Գավանե Զարզան Լալըշում խոշոր եղջերավոր անասունների նախապապանն է:

Շարֆադինին հանձնվեց հավատը՝ դինե մա շարֆադինը:

Փիրե բըրան ծովերի փիրն է, նըվի Դավըդ:

Թզբեհների փիրն է փիրե Թզմիյան՝ նըվի Դավըդ:

Ուղտերի փիրն է փիրե Դըվան՝ Յասան Դակիկ:

Կային նաև փիրե ալը. փիրե Խանյա՝ /բնակարանների փիր/ և այլն:

Խդր Նաբին՝ Խդր Էյլասը, ազգությամբ հրեա էր, բայց բոլոր ազգերի, այդ թվում նաև եզդիների նպատակակատարն է մուրազատուն, բոլորի իղձերի և երազանքների կատարողը: Այդ է պատճառը, որ ամեն տարի փետրվար ամսվա /հին տոմարով/ առաջին երեքշաբթի օրվանից ծոմ են պահում՝ 3 օր, իսկ 4-րդ օրը տոնում են Խըդըր Նաբի-խդր Էյլասի օրը: Այս տոնը թեև պարտադիր չէ, բայց սիրով նշվում է եզդիների մոտ: Փաստորեն խդր Նաբի Իբր Էյլասը Սուրբ Սարգիսն է:

Իսայի Նուրանին, որ Քրիստոսն է, թեև հրեա, բայց հարգվում է նաև եզդիների կողմից:

Շեխ Ադիի մահից հետո նրա գործը շարունակեց Միր Մահմուդ Ռահմանին, այնուհետև Միր Բարաքատը, և այդպես միրերը շարունակաբար հաջորդում են միմյանց մինչև մեր օրերը, մինչև Թասիմ բեկը /տոհմածառը տրված է վերևում/:

Ինչպես ասվեց, մոտավորապես 400 տարի առաջ, չդիմանալով մուսուլմանների՝ թուրքերի, քրդերի, արաբների հալածանքներին, եզդիները ցրվեցին աշխարհով մեկ՝ Սիրիա, Լիբանան, Թուրքիա, Արևմտյան Յայաստան, Արևելյան Յայաստան, Վրաստան, Ռուսաստան և այլուր: Նրանք հաստատվեցին հատկապես Արևմտյան Յայաստանի՝ Կարսի, Մուշի, Վանի, Էրզրումի և այլ տարածքներում, Դիարբեքիրում, Կարակոյում, Իդըրում, Սինակում, Օրթլայում և այլ բնակավայրերում:

Ծանր օրեր ապրեցին եզդիները հատկապես 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, երբ հայերի նման նրանք էլ ենթարկվեցին ցեղասպանության: Մինչև այդ, ինչպես նշում է թուրք պատմիչ Չելեբինը, միջին դարերում մուսուլմանները ոչնչացրեցին 300 հազարից ավելի եզդի:

1915 թվականից հետո եզդիները, ծանր կորուստներով թողած տուն ու տեղ, ունեցվածք և բնակության վայրեր, գաղթեցին դեպի արևելք, հաստատվեցին Յայաստանի Արագածոտնի, Կոտայքի, Արմավիրի, Արտաշատի և այլ մարզերում, Թիֆլիսում, Կրասնոդարում և այլ վայրերում:

...Վերադառնանք Շեյխ Ադիին, որը Յոթ ծիավորների միության ընդհանուր ղեկավարն էր և հաղսադի հիմնադիրն ու գաղափարախոսը: «Մինչև Շեյխ Ադին եզդիները համախմբված չէին: Նրանց փիրերն էին Յաջի Սահմադե Բե Զըռատը, 4 եղբայրները՝ Նասըրդինը, Սըջադինը, Շեշըմսը, Մալակ Ֆարխադինը /որոնք համարվում են Ստիա/, Զինի որդիները, Շեխ Ադիի ցուցումով դարձան շեխեր, փոխվեցին նրանց շապիկները /կրասե խվա գոհաստըն բունը շեխ/»: Այսպես է պատմում շեխ Ահմադե Ասլանեն:

Ըստ Շեյխ Ադիի հաղսադի, եզդիները նորից բաժանվեցին մի քանի կաստաների /շեխեր, փիրեր, մրիդներ, կավալներ, ֆակիրներ/: Սրա նպատակն էր կրոնական ուսմունքով եզդիներին միավորել և ենթարկել իր կամքին:

Շեխերն իրենց հերթին բաժանվեցին երեք ենթակաստայի՝

Վադանի - Շեխե Շիխսն

Զարզանի - Շեխե Շեշմս

Կաթանի - Շեխե շեխու բաքրա:

Սրանք համարվում են հանդերձյալ կյանքի եղբայրներ և միմյանց մեջ դնում են դաստ դամըն խարկա քըլըք:

Այս երեք ենթակաստաները իրավունք չունեն ամուսնանալու միմյանց հետ: Այս արգելքը տևել է դարեր շարունակ և այսօր էլ գոյություն ունի: Բացի այդ, եզդիները պետք է պահպանեն ևս երեք օրենքներ: Դրանք պարտադիր են բոլոր եզդիների համար և պետք է պահպանվեն սրբությամբ: Առաջին օրենքը՝ դարբա խարկան խախտողը չի մնա եզդի, բայց կպատժվի: Փաստորեն դարբա խարկան կրոնավորի հանդերձն է, որին չպետք է հարվածել: Իսկ եթե հանկարծ այն հարվածվել է, մեղադրյալը կենթարկվի կրոնական պատժի:

Իսկ մյուս երկու օրենքները՝ դիսկա դանեն և շալպկե զեռին խախտողներն այլևս եզդի չեն համարվում, իրենց վարքագծով համարվում են արատավոր:

Դիսկա դանեն, որ նշանակում է մրոտ կճուճ, նշանակում է, որ եզդին այլազգիների հետ ամուսնանալու, ընդհանրապես, կապեր ունենալու իրավունք չունի: Շալպկե զեռինը, որ նշանակում է ոսկե բաժակ, արգելում է ամուսնությունը, կապը շեխերի, փիրերի և մրիդների միջև:

Օրենք է նաև քնելու պահին եզդիների ամենօրյա երեկոյան աղոթքը գլուխը բարձին դնելիս: Դա երկարաշունչ մի աղոթք է, որ ամբողջովին տրված է շեխերի և փիրերի կողմից:

Ահա այն և հոգևոր այլ երգեր.



ШӘ'ДӘТИ

I

Һәqе мьн Езид
Qӧлба мьн Каниа Сьпи,
Дине мьн Шәрфәдин.
Мьтн'әвә дине мьн Мәләк Фәрхәдин
Qасьде р'ӧн'е мьн, Сьщадин
Щәлате р'ӧн'е мьн Насьрдин.
Һ'әща мьн, Qӧбьлдор
Каниа Сьпи, гәлие Лальше дьвә мор.

II

Шәдәтийа мьн, мьк'им әла
Шихади һәбуби әла
Шихьсьн Р'әсули әла.

III

Сьлавә Мәргае, мәqлуби сәрае
Щемае, бьни мае
Щие Ездихана Шәрq у Шә'м
Дьчә бәр таwаве сьщудае.

IV

Ездимә, ездимә,
Шех, П'ир, Оста, Мәрһәби,
Йар у бьре ахрәте мәwламә,
Сьлавк'еше Каниа Сьпимә
Ви дини, ви мәсәви, нав дькьре Шихади
Һәрпенщ т'ьреqе хwә р'азимә.

V

Мьнәтк'арьм мьнәте
Wаварьм шьлә'те
Йа р'әби шькьр
Шихади дамә сәр пәшка сӧнәте.

VI

Йа р'әби мьнәтк'арьм мира
Wаварьм жь wавира
Йа р'әби шькьр
Шихади дамә сәр пәшка Шех у П'ира.

VII
Йа р'әби, мьнәтк'арьм мала Адиа,
Wаварьм жь Qадийа
Йа р'әби шькьр,
Шихади, дамә сәр пешка Мәләк Шихьсне Адиа.
VIII
Йа р'әби Шихади П'адьшайә
Шехöбәк'ьр Мәwлайә
Шехшьмс ч'ьрайә
Шә'дәтийа имана хwә
Наве Мәләки Таwьс һьлдайә.
IX
Шихади даимә
Шехшьмс qәдимә
Шә'дәтиа Ймана хwә
Наве Мәләки Таwьс анимә.
X
Шихади Хәфурә
Шехшьмс нурә,
Шихьсьн Р'әсулә,
Шә'дәтиа Имана хwә
Наве Мәләки Таwьс qәбулә.
XI
Дәрде мьн, дöә'ае мьн,
Шехе мьн, Мәwлае мьн
П'ире мьн, остае мьн
Сәре мьн, сәр бә'лгие мьн
Бә'лгие мьн, бәрье шьваке
Йа Р'әби, бьди хатьре Езид у маке
/дәрге хера вәкә, дәрге шәр'а дадә, ахриа мә р'ә'м бькә/.

QӘWЛ У БӘЙТ'Е ЕЗДИЙА
Qәwле шех ә'рәбаги Инт'узи

Р'ожәке Сöлт'ан Езид дьчә дәре дишана бәге ә'рәбстане вәдькә дьве: ,,Сәлам ә'лекьм, йа ә'рәбаги,,, бәге әрәба-езди бу /Шех ә'рәбаги Инт'уз пьсе Шехубәк'ьрә/, го:



I
П'адшайе мьн, тöйи йәкә т'әмам,
Сöлт'ан Езидә, ә'лекьмә сәлам.
ә'сле хафьла жь һ'әдид,
Хафьл кор бун, әw сöр' нәдит.
II
ә'сле хафьла жь һ'әсьн,
Хафьл диwане тужьн wәкә алмас,
Хафьл кор бун, р'ийа Сöлт'ан Езиде мьн һәq нәнас.
III
Зер' бавежә нава агьри,
Хьлтә вәнашери,
Зер'е бе сәр ә'сле хwәйи бәри.
IV
Зер', мьдһ'еки чейә,
Оста ле дьньер'ә,
Сәр'аф занә бьнейә.
V
Мәнйа зер'ин вайә;
Зер', кö сафир'а к'öтайә,
Оста ле дьньер'ә,
Сәр'аф занә чь бьнетә.
VI
Дьвежьмә wә але к'ьтаве,
Пьрс бькьн жь але Мәдине, жь але К'аве,
Чькани әw к'и бу, дот һ'әлал кьр ль баве.
VII
Бәре qил у qар кьр,
әw адәм бу, дот ле һ'әлал кьр,
Шьранә ле wәсал кьр.
VIII
Нәwерьм бьк'ельмьм,
Wәки әз бежьм, сöнәтә бәри адәмә,
Әзе бьрьщьмьм.
IX
Сöнәтә бәри Адәмә,
Әw мә'никә мәзьнә,
һьдрәта мире мьнә.

X
Дьвежьмә wә сӧнәте,
Р'оже ћәйшта ћәзар тә'ли-тәнги ль сәр wә те,
һун ћәвсуди мәньћер'ьн мале шьлә'те.
XI
Мәве чәндик малә, чәндик зер'ә,
Р'ожа ахрәте һун wанва жь һәвә ваверьн.
XII
Шьлә'т кӧ һәйә, бӧг'д у т'анә,
Әwьн дьжмьне Сӧлт'анә,
Р'ожа ахрәте әw аше бьгәр'ә хуна wанә.
XIII
Р'ожке we бьвә газийә,
Шьлә'те бьминә р'ут у тә'зийә,
һаша wи бәразийе.
XIV
Бәрази хӧльqәтәки чейә,
Сьвәйә, р'о һьлтейә,
Әw жи шькрима хwә тинә наве хwәдейә.
XV
һашаш жь хӧлqе зәри,
Wәки хwәйи р'оже ћәвт щара ле бьрqәһьри,
Т'ӧ к'ин, бӧг'зе дьле хwәда нагри.
XVI
Т'альб, софи, әw мәлләнә,
А дәрәwа хәнгәрәнә,
Р'ожа ахрәте сәре wан дәве доже, щә'ньмева дьчәмә.
XVII
Чь ашәки һур бьнйамә,
Хаде тала кәвьре wи аши жь хәзәведанә,
Р'ожа ахрәте сәре тальб, софи у мәлла те һеранә.
XVIII
Кьтеба wә ньмайә,
Хаде тала кәвьре wи аши жь хәзәведайә,
Р'ожа ахрәте сәре тальб, софи у мәлла те нона дә'нә.
XIX
Дьвежьмә wә сӧнийа,
һун дәста бәрмәдьн жь мала Адийа,
һивийа wана зор һивийе.



XX
һивийа wан һивикә бе мәфәрә,
Шихадийе, Шехмәндә, Шәмсе т'әтәрә,
Әwьн зу тенә бангин у мадәре.
XXI
Әw зу тенә банге,
Шехшьмсе мьнә хӧдане манге,
Сӧнәтхане наһелә ә'дәве, наһелә авьстанге.
XXII
һәwара мә хwәде Соре тә'ри,
Мә ль we дитьн зор мьрари,
Мә ль we нәхтәкә сәлф вәхари.
XXIII
Мә ль we вәхари нәхтәкә сәлфә,
Бә'ра хwәде к'урә, кәс нагһижә т'әрәфә,
Мә ль we дитьн се ћәрфә.
XXIV
һәрсе ћәрфе wенә,
Пенща дӧдӧ фәрәк женә,
Ћәрәмә, нә жь we ньqленә,
Бьра әва дьнийа мә бьшкенә.
XXV
Әwә мьләте хәрqә п'арьсти,
Хәрqә мадул кьр, сәр хwәр'а дехьсти,
Р'ожа ахрәте we же һәр'ә нуркә к'әски,
Дәсте Сӧлт'ан Езид сәр чьqас мәсәв, чьqас дин, чьqас дәсти.
XXVI
Т'әмамәти Шихади,
Әмә кемьн, Шихади т'әмамә,
Әм ә'вдьн, бәшәрьн, бә'ра гӧнанә,
Сьве ћәта еваре ћәзар щӧр'ә хәбәр дәве мә дәрдьк'әвә.

QӘWЛЕ ШЕХУБӘК'ЬР /шаха 1-е/

Дәwрешо сәре хwә жь хәма һьлин
Боре льнга бәтьлин,
Щьнди чун диwана мир wәсьлин.

II
Щьнди чунә һәдрәте,
Хас натьрсьн жь һебәте,
Мьлк'е хаса баг'е щьнәте.
III
Щьнәтеда машхӧр бум,
Дьлдәки мори ль бәр бу,
Мәзьнә мәйдане мәләк'ани гогәр бум.
IV
Гогәро жь мәйдане,
Щьнди хӧдане сәбре у ськ'ане,
Нәвса къбир бьгрьн у бавежьнә зиндане.
V
Сәйиде мьн сийар бә бәре чейә,
Мәзьнә мәйдане мәләк'а дәнге wан гогәра тейә.
VI
Дәнге wан гогәра те газә-газә,
Къвш бунә пьсе пьрьнган у база.
VII
Йа Сӧлт'ан Езид, тәйи һ̇ӧнӧрьм,
Пьшти тә дәйн дькрьм.
VIII
Дәйн дькьм, гойи дьгәр'иньм,
Ша дьвьм, дәнг һьлтиньм,
К'әнге диндара Сӧлт'ан Езиде хwә бьвиньм.
IX
К'әнге бьвиньм wе диндаре,
Әзьм кӧлирка баһаре,
Р'уньштьмә, йар, бьре ахрәтер'а дькьм базаре.
X
Базара мьн базара мира,
К'әнге диһарвьм алийе фәqира,
Диһера нагьһижьмә бнийа сукер'а.
XI
Хwәш һ̇әбуд, Дәwреш һ̇әбуб, дәһьрин,
Момьна дьл к'әсьрин,
Дәсте Сӧлт'ан Езид һәqийе һатийә, нәһәqийе дьбәтьли.



XII
Момьна шабу дьлә,
Щавәке дьдьм ә'нзәлә,
Дәсте Сӧлт'ан Езид һәqфйе һатйә, нәһәqфйе дьбәтьлә.
XIII
Чь дәwрешәки әв һ̇альм,
һьн т'ещьрьм, һьн дәлальм,
һьн сукьм, һьн сәвальм,
Мьст'әqе диндара Сӧлт'ан Езиде хwә ван дӧр'аньм.
XIV
Чь дәwрешәки ньһамә,
Хьлфәки нуйи гиһамә,
Мир-мәләк'авани р'әнг дамә.
XV
Мир-мәләк'а wә дьбетә,
Пеш wәва агьрә гӧр'ә у петә,
Әwан жи сьве евара qьсмәте хwә п'адшайе хwә дьбетә.
XVI
Чь дожәкә хәдарә,
Тъжи мышкә у тъжи марә,
Әw щийе хәлqе сәләфхӧри инк'арә.
XVII
Чь дожәкә тәнгә,
Тъжи мышкә, тъжи марә у тъжи пьрьнгә,
Әw щийе хәлqе сәләфхӧри, инк'ари у ләнгә.
XVIII
Гәли мерә, бьхәвьтьн нәчьнә wейә,
К'әләдуке же һьлдьк'шейә,
Әwана жи сьве евара qьсмәте хwә жь п'адшайе хwә дьбейә.
XIX
Р'ийа Сӧлт'ан Езид р'астә, нә бь харә,
һәрч'и кәсе мала Адийар'а к'әрби, к'ини, к'арә,
Р'ожа ахрәте орт'а wан у Сӧлт'ан Езидда һ̇әйште һ̇әзар диwарә.
XX
Р'ийа Сӧлт'ан Езид р'астә, нә бьч'укә,
һәрч'и кәсе дьле хwә мала Адийар'а нәкә сукә,
Р'ожа ахрәте нә дьвә зә'вә, нә дьвә букә.

XXI
Р'ийа Сӧлт'ан Езид р'астә нә бь нәһинә,
һәрч'и кәсе мала Адийар'а к'әрб у к'инә,
Р'ожа ахрәте орт'а wан у Сӧлт'ан Езидда һ'әйште һ'әзар ч'ийайе бәрфинә.

XXII
Qәлсо, гиһане хwә ләз кә,
Те бина маwәр у мьскә,
Бьһер' п'адшайе мьн чь ә'франдийә: к'аса к'әскә.

XXIII
К'аса тьрийе р'әшә,
Назьл бийә ә'ршә,
Хаса харийә, хафьлә корьн, пе һәхашьн.

XXIV
К'аса тьрийе сорә
Назьл бийә жорә,
Хаса харийә, хафьлә корьн.

XXV
К'аса тьрийе спийә,
Назьл бийә ә'рше тә'рийә,
Хаса харийә, хафьлә корьн, пе к'ьфьрийе.

XXVI
К'аса на жь тьрийе,
Мәләк' Шихьсьн жь хӧйа ә'нийа хwә че кьрийе,
Хаса харийә, хафьлә корьн, пе к'ьфрийе.

XXVII
К'аса тьрийе меwа,
ә'йнәта wе ә'йнәта деwа,
Мәрьв вәдьхӧн, хафьл дьчьн пева.

XXVIII
Т'әмамәти Шихади,
Әм кемьн, Шихади т'әмамә,
Шихади бә'рә, бәр дьчә щәw у щобәр у кани,
Хаса хас заньн,
Хафьлә корьн, мә'нийа ви qәwли ньзаньн.



QӘWЛЕ МАЛА БАВА

Ай, дьбемә, дьбемә,
We qӧве кьм бәри щемә,
Хош мала бабанә,
Ава дькьрьн qәлемә,
Нурә жь мала шеханә.

II
Qәлем дькьрә авайә,
Шихади хwә гәр'ийа навә,
Хош мала бабанә,
Дост р'онкайа һәрдӧ ч'ә'вә,
Нурә жь мала шеханә.

III
Шихади Шаме фьр'и,
Дәwране дәwран бьр'и,
Хош мала бабанә,
Бәле, Шихади щийе хwә Лальше дькьри,
Нурә жь мала шеханә.

IV
Шихади Шаме һатә,
Шәрqе гьрт хәватә,
Хош мала бабанә,
Шихади хwәйи нурер'айи хәлатә,
Нурә жь мала шеханә.

V
Хәлат дькьр Маме Р'әшанә,
Дайә маше шәшанә,
Хош мала бабанә,
Паше к'ьвш дькьр сәрwере меранә,
Нурә жь мала шеханә.

VI
Мала мә мала бабанә,
Сәрәканийа чьqас сӧнийанә,
Хош мала бабанә,
Пе вәр'е дькьн зийарәтийанә,
Нурә жь мала шеханә.

VII
Мала мә мала Адийанә,
Сәрәканийа чьҷас сӧнийанә,
Хош мала бавана,
Пәй вәр'е дькьн щоҷәтийанә,
Нурә жь мала шеханә.

VIII
Мә жь Адийа, мә жь Адийа,
Дәрмано, тӧйи афади,
Хош мала бавана,
Хазьла мьн wи р'ӧһида,
Шихади ле бьвә р'ази,
Нурә жь мала шеханә.

IX
Мә жь Адийа гәләк мелә,
We ҷӧве кьм, сәри һәлелә,
Хош мала бавана,
һәwардоре шаһәре гьран тенә гелә,
Нурә жь мала шеханә.

X
Мә мала Адийа гәләк бәхшә,
Әз we ҷӧве кьм, сӧр'ә ль ә'ршә,
Хош мала бавана,
һәwаре шаһәре гьран тенә ҷал у щәнгә,
Нурә жь мала шеханә.

XI
Лальшә, we мьск у мойә,
Әз we ҷӧве кьм, сәри ль weйә,
Хош мала бавана,
Щьмһ'а мера, дар у бәре гәлийе Лальше, дьбунә морә,
Нурә жь мала шеханә.

XII
Лальшә, we бь мьскә,
Әз we ҷӧве кьм, сәри ль к'әскә,
Хош мала бавана,
Щьмһа мера, Лальше буйә маш у р'ьсҷә,
Нурә жь мала шеханә.



XIII
Зора сьнщаҷ анинә,
Лальшеда данинә,
Хош мала бавана,
Сьнщаҷ, сьнщаҷе шехе Адинә,
Нурә жь мала шеханә.

XIV
Зора сьнщаҷ, дьве, р'астьн,
Лальшеда вәдӧгӧһастьн,
Хош мала бавана,
Дине ахрәте, сьнщаҷе Шихади т'әмам р'астьн,
Нурә жь мала шеханә.

XV
Сьнщаҷе сорьн, сьпинә,
Лальшеда данинә,
Хош мала бавана,
Сьнщаҷ, сьнщаҷе шехе Адинә,
Нурә жь мала шеханә.

XVI
Сьнщаҷе сорьн, зәрьн,
Лальшеда дәһәрьн,
Хош мала бавана,
Сьнщаҷ, сьнщаҷе шехе әк'бәрьн,
Нурә жь мала шеханә.

XVII
Чәнди дь мефьрьн,
Дәсте хwә сьнщаҷе Шихади, мала Адийа р'агьрьн,
Хош мала бавана,
Бәлки ахрәте, сәр сьтҷе һәйа, имане хwә дьмьрьн,
Нурә жь мала шеханә.

XVIII
Чәнди wә ҷадьрьн,
Дәсте хwә сьнщаҷе Шихади, мала Адийа Wәриньн,
Хош мала бавана,
Бәлки ахрәте, сәр сьтҷе һәйа, имане хwә дьминьн,
Нурә жь мала шеханә.

XIX
Шихади һат Лальше,
Хәмьлийә хәрqе р'әшә,
Хош мала бавани,
Дост р'онкайа һ'ӕрфа хашә,
Нурә жь мала шеханә.
XX
Шихади һатийә Лальше,
Хәмьлийә дьлqе р'әшә,
Хош мала бавани,
Щьмһ'а мера дьл пе хwәшә,
Нурә жь мала шеханә.
XXI
Шихади Шихьсьньн,
Бә'ре wанә мәзьньн,
Хош мала бавани,
Нәфусе wан нәшкәре гьранва дьсекьньн,
Нурә жь мала Шеханә.
XXII
Шихади бьн Мьсефьрә,
Хош мала бавани,
Мера дар у бәре гәлийе Лальшева сöщöда бәр дькьрә,
Нурә жь мала шеханә.
XXIII
Шихади хат һәкарә,
Мера сöщöда бу бәр у дарә,
Хош мала бавани,
Шихади нава мерада хош сәрдарә,
Нурә жь мала шеханә.
XXIV
Шихади, Шехубәк'ьр,
Ширьньн нола шәкьр,
Хош мала бавани,
Шихадийе мьн к'әрәм тә кьр, щийе тә щәм хwә че кьр,
Нурә жь мала шеханә.
XXV
А, жь Адийа, а жь Адийа,
Шехе мьнә, п'ире мьнә.



ТӘМӘДИЙА ШИХАДИ

Бабилко, тö р'авә р'ә'мани,
Диwан гәр'ийа qәйнт'әрә,
Шихади занә, к'и ль пешә, к'и ль бәрә.
Бьнат'ара ви qәwли гьреда ә'йнз-бәйнзайе,
Йар у бьре ахрәте һун р'авнә сьмайе,
К'әрәмә хöдане к'әраме,

Геше гәлийе Лальше,
Гöлбаникә р'ә'мәте, йәка ахрәте,
Р'әмәл ль де у баве һадьр-гöдера,
Мьрид момьна,
П'ир һостайе мә жи пер'а,
Мал мәзәле әм теда,
Р'әмәл гор'а сәйдайе мьвә.

QӘWЛЕ ЕЗДИД

I
һькими дькьм һ'ькйате,
Шер хöдане атqате,
һьла бьньер'ьн Сöлт'ан Ездид чь р'уки һатә р'ук'ьнйате.
II
һ'ькими пе дьзани,
Пьрсе бькә мь һ'әйрани,
Кö бу qьсәта Маwи, wи сöлт'ани.
III
Маwи, wе хәдәре хwә нәда бәре,
Дöмьшqе бажаре кьр сәфәрә,
Го: ,,Мака Сöлт'ан Ездид Дöмьшqейи инайи дәрә,,.
IV
Мака Сöлт'ан Ездид Дöмшqейи р'ебу,
Дажко бәр дәре Мәсре бу.
V
Дажко бәр дәре Мәсрайе,
Дәм һатийә wә'дайе,
Дәһәр бийә Сöлт'ан Ездиде мьнә.

VI
Дәҍәр бийә Сӧлт'ан Ездиде мьнә,
И нә ч'укә, и мәзьнә,
Зор пьрсәте гьран ле дьчьнә.

VII
Же дьчунә зор пьрсәтә,
Аме данийә саw, һеwатә,
Зәрпанә мәрийа к'ьрйамәтә.

VIII
Сьвәке мь бу сари,
Сӧлт'ан Ездид маке пьрси,
Го: ,,ḥәwале мә ль вьр чьйә?,,

IX
,,Сьвәке мә бу сари,
Әм дәрхьстьн кьрнә wи шаһари,
Әм wьра бун, wан бу р'онкайи,
Әм дәрк'әтьн, wан бу тари,,.

X
Соро wәкә пето,
К'и корә, Сӧлт'ан Ездид нә бь wето.

XI
Сӧлт'ан Ездид дәре бащар'е певә тинә,
Qасьдәки Маwи у дьшинә,
Го: ,,Маwи, к'әрәм кә шесийарәк тә дьхунә,,.

XII
Го: ,,Тӧ wи ки, илаһийә,
Те пьрсе бежи мь р'астийә,
Әw шесийаре мьн дьхунә, әw бь к'ийә?,,

XIII
Го: ,,Ез wи кьм, илаһийә,
Пьрсе бежьмә тә р'астийә,
Әw шесийаре тә дьхунә, әw бь к'ийә.

XIV
Го: Әw шесийаре тә дьхунә, р'әнг жорә,
Львасе дәсте wи морә,
Сәре мьн qӧрбавә, һолә-һолә, Сӧлт'ан Ездиде сорә.



XV
Го, әw шесийаре тә дьхунә, р'әнг мәстә,
Р'ьмәкә к'әскә, сорә дәстә,
Атqат фәрwара мьн, тә т'әвә дәстә,,.

XVI
Сӧлт'ан Ездид гӧ: ,,ḥәрч'а дьле мьн дьн'әвиньн,
Бьра бьшиньн, мака мьн Мәсрайе биньн,,.

XVII
Qази, мәллә дькьрә р'айи,
Qасьдәк шандьнә Мәсрайи,
һьлда бун, ина бу дайи.

XVIII
һьлда бу, ина бу малә
Qази, мәллә р'авун һатьнә балә,
Го: ,,Сӧлт'ан Ездид, әва чь гьлийә, чь ḥәwалә?,,

XIX
Го: ,,П'адшаки мь һәбу нав Сӧлт'ан бу,
Дьӧльфанд ӧлфе ве qӧране,,.

XX
Го: ,,Мә'нийе wанә щот бун,
Әw р'уньштьбун, дьготьбун,
Сӧлт'ан Ездид йәк чаре wан дьготьбун.

XXI
Мә'нийа wанә вәнә,
Чәнд qанә к'ас у бади мәнә.

XXII
Чәнд qанә к'ас у бади пәй тенә,
Ехләра сәд бист чар ḥәзар ә'т'әрә ленә,
Wана жи нав дьк'ре Сӧлт'ан Ездид һойә, һой дьстренә.

XXIII
Сӧлт'ан Ездид гот: ,,ḥәрч'а бәнде ьер'ьфе хӧлqе wи нә жь мәр'а,
Мере нә ль вандәра, вандәра һәр'ә,,.

XXIV
Ләнго, сәреке ләнга,
Щәм хwә бькә бәна,
Дәм әwә, ле һәр'ә ḥәзар р'әнга.

XXV
Ләнго, сәрәке ләнгәки,
Щәм хwә бькә бәнәки,
Дәм әwә, ле һәр'ә һәзар р'әнги.
XXVI
Го: ,,Qӧдрәта сәйрана we щаре,
Әме сьве мьле Сӧлт'ан Ездид бьгрьн, бавенә бә'ре,,.
XXVII
Әw сӧр' Сӧлт'ан Ездид ә'йан бу,
һәрчар йале хwә һьлан бу,
Нивәка бә'ра Шаме дабу нав бу,
Хwә чадьр к'ӧта бу, хwә хәйбәт леда бу.
XXVIII
Ван чадьра, ван кьнйаса,
Пешбәри мә сәкьнийә хәлqе кори, хафьли, хwәденәнаса,
Сӧлт'ан Ездид щьндийе диwана хwә дьнһер'и,
Гьшкә дәст йеqинә, qәләм зер'и,
Wана жи новәт, новәтк'асе хwә п'әв дӧгӧһер'и.
XXIX
Сӧлт'ан Ездид нӧхтәк дайә сәр нәйнука хwә, дайә Qази Шьро,
Qази Шьро вәдьхарә,
Го: ,,Йа Маwи, зари ширьнә ле дьли т'әлә,,.
XXX
Qази Шьро кьрә һ'әлимчийе совәте,
Сӧлт'ан Ездид Qази Шьро кьрә Р'әqасчийе дә'wате,
Qази Шьро нькарә бьхунә ве к'аг'әте.
XXXI
Qази Шьро к'аг'әзе хwә тәр' бь тәр' кьрьн,
Qази Шьро К'аг'әзе хwә кәр бь кәр кьрьн,
Нивәка бә'ра Шаме wар кьрьн.
XXXII
Әw дәнг бәлайи дьне аме бу,
Го: ,,Qази Шьрок һәбу wәлате исламе,
Әw жи һатә сәр айина дине Сӧлт'ан Ездид мала Шаме.
XXXIII
П'е р'әше, мьн һәйране,
Бә'ре вәгәр'ә нәфуса wи сӧлт'ани.



QӘWЛЕ БОРӘ-БОРЕ
I
Шехе һ'әсәни сӧлт'анә,
Бавежи qәлпе р'әһманә,
Сӧлт'ан Ездид һ'әму дәрдайи дәрманә.
II
Шехе һ'әсәни щидә,
Бавежи qәлпе мьридә,
Qап'ийе мьраза qап'ийе Сӧлт'ан Ездидә.
III
Шехе һ'әсәни фәqирә,
Бавежи qәлпе мирә
Сӧлт'ан Ездид һ'әму дәрдайи хәбирә.
IV
Шехе һ'әсәни мәзьнә,
Бавежә qәлпе момьнә,
Qап'ийе мьраза qап'ийе Мәләк' Шихьсьнә.
V
Шехе һ'әсәни ә'мәрә,
П'адшаки мьни һәри бь һәрә,
Р'ӧһ бей фәрwара хwәде, һ'ӧсн у щьсна найе дәрә.
VI
Шехе һ'әсәни әсәдә,
Банг дькә ә'рше сәр мәда,
П'адшайе мьн йәке сәр мәдә:
VII
Чь ә'щебәкә wа къбирә,
Бәр дәре мирә,
Ә'wьл п'адша дит фәqирә.
VIII
Чь ә'щебәкә wа къбир бу,
Бәр дәре мир бу,
Ә'wьл п'адша дит фәqир бу.
IX
We qӧве кьм, qӧванә дәрә,
Теда дьейисә фьнд у шәмале зәрә,
Сӧлт'ан Ездид п'адше мьнә, хwә р'уньштийе бәрә.

X
Wе qöве кьм, сәри ль ә'ршә,
Теда дьейисә фьнд у шәмале гәшә,
Qуле диwане Мәләк' Фәрхәдинә, диwанбәге, диwане Шәмсә.

XI
Wе qöве кьм, сöр'ә, ә'зминә,
Теда дьейисә фьнд у шәмале нуринә,
Диwанбәге диwане Шәмсә, qуле диwане Мәләк' Фәрхәдинә.

XII
Wе qöве кьм, сәр һ'әму qöванә,
Теда дьейисә сесьд у шест у шәш ч'ьранә,
Сöлт'ан Ездид п'адше мьнә, дәсте wи сәр һәр чар qöлбанә.

XIII
Лальша нурин хәме мьн дьбьрьн,
Дара qәwала, зьнщир, т'опа, мира wәр дькьрьн,
Диндара йар, бьре ахрәте ша дькьрьн.

XIV
Лальша нурин хәме мьн дьбьнә,
Дара qәwала зьнщир т'опа, мира wәр кьрьнә,
Диндара йар, бьре ахрәте ша кьрьнә.

XV
Аве сәра һатьн,
Шайийә бь хәватьн,
Әwе чунә диwана Шихади, нәһатьн.

XVI
Аве сәра тенә,
Шайийә бь хәменә,
Әwе чунә диwана Шихади, ль wенә.

XVII
Манге сәрайе р'әшьн,
Шайийә бь гәнгәшьн,
Ә'йде фәqира ә'йдьнә же хwәшьн.

XVIII
Манге сәрайе сорьн,
Шайийә бь щорьн,
Ә'йде фәqира ә'йднә же зорьн.



XIX
Манге сәрайе зәрьн,
Шайийә бь хәбәрьн,
Ә'йде фәqира ә'йдьнә же нәдәрьн.

XX
Манге сәрайе сьпинә,
Шайийә бь хошинә,
Ә'йде фәqира ә'йднә же щьндинә.

XXI
Гели баки хwәш те,
Шайи бь гәйнгәш те,
Дәнге һ'әзни борә-бора Лальш те.

XXII
Гәли баки сар те,
Шайи бь к'ар те,
Дәнге һ'әзни борә-бора һ'әкар те.

XXIII
Тәйро, тәйре мане,
Хöдане дайине у стане,
Әме тавьн Зьмзьме, Qöбьлдоре, Дандоле дане.

XXIV
Wе дьвежә стийа Есә,
Бьра һәр'ә диwана Шихади диса,
Бьпьрсә һ'але гьртйан у һ'әдиса.

XXV
Wе дьвежә стийа Ес хwәйә,
Бьра һәр'ә диwана Шихади wә'дәйә,
Бьпьрсә һ'але мәйә.

XXVI
Шех Зәйдине йәкә нәче кьр,
К'еwришк бьн һ'уле мәрһәвида шәрже кьр,
Ләwк мәрһәви ньфьр' ле кьр.

XXVII
Шех Зәйдине йәкә бе wәсул кьр,
Нә qәwле хwәде кьр, нә жи һ'әдида Р'әсул кьр,
К'еwришк бьн һ'öле мәрһәвида шәрже кьр,
Ләwк мәрһәви ньфьр' ле кьр,
Шихади ньфьр'ийа мәрһәви qәбул кьр.

XXVIII
Шех Зәйдине, Шех Зәйдине,
Шихади авитә пышта бә'ре шинә,
һьла һьсрәта Лальша нуранийә.
XXIX
Шех Зәйдине гот: ,,Шехәки мын һәйә ә'рәбьстане,
Хӧдане дайине у стане,
Бьра мәдәра мын бе ве һане.
XXX
Шехәки мын һәйә ль ә'рәбе,
Хӧдане дайине, тәләбе,
Сӧлт'ан Ездид п'адшайе мьнә, бьра мәдәра мь бе.
XXXI
Шехәки мь һәйә һ'әкаре,
Зор кәване qӧдрәтейи бале,
Чардә тәвәк ә'рд у әсман к'әфа дәсте wида һ'әсарә.
XXXII
Шехәки мын һәйә һ'әкарийе,
Зор кәване qӧдрәтейи бал wийә,
Сӧлт'ан Ездид п'адшайе мьн щийе wи к'ӧли, филь, берийе.
XXXIII
Сәнәта р'ӧһе мьн Зәби бу,
Сӧр'әке мьн дәwреши ньхми бу,
Сӧлт'ан Ездид п'адшайе мьнә, шийе wи к'ӧли, филь, бери бу.
XXXIV
Сәнәта р'ӧһе мьн хар бу,
Сӧр'әке мьн дәwреши диһар бу,
Сӧлт'ан Ездид п'адше мьнә, щийе wи һ'әкар бу,,.

ДӦӘ'А СЬВРЕ

Йе хер да, йе вәхарьн да мьн
Йе әв хера башәр дькьр мь баһарә
Qәнщйа тә йе жь кӧр' адьм һ'әму хӧльqи дьне
Бит'әр һәр т'әк т'әне дӧә'а
Тawси мәләк левә.

һәр йәк дьвә һәвал дьвинә
Диса Езди бу гот сьлава Хwәде
Дӧә'а Насьрдине зәр р'ӧһе мьри
Гор' у малевә.



Сәр готьна Сәйдае
Сәр готьна сәйда бәлг ньвисар
һатиә хwәндьне, ле бәле дӧә'а сәйда дәстпеке һәр майә.

Qәбули qӧрбан, мь qәбули
Йа Хwәде бәрәк'әта Тawьси мәләк тедавә
Хәмьн нәви, дәм нәви, мал р'ьсqе wә зедәвә-
һ'әрч'ке да әв тә'м дожә ле бьвә һ'әраш бӧһӧшт,
Ле бьвә wар т'әми Тawьси Мәләк, Сьлт'ан Шихади.
*/Гот Ӧбете әмьр- шехе Насьрдина/*

Т'ӘРQИНА АСИНЕ

Жь qәwле шех фәрхе һәqие
Йа хwәде тӧ һәр у һәр-һәй тӧйи баqи
Дәрк'әт waж бӧһӧште
Шабуна мьнә т'әмам
Qәwл дӧә'ае мьшуре.
Готьн жь мьнә,
Сәр р'йа де бава,
Вәдьгәр'и гор'ьстинә,
К'әрәмкә кӧлилкәке сәр мьн данинә.
К'әрәмкә дәнг һьлинә,
Т'әрqина Асине бьхwунә,
Наве Шихади Мәләк Шихьсьн,
Сәр мьн һьлинә.
Т'әрqина Асине щар-щара шабуне,
Сәр р'йа Qануне, хәрqә к'әф-к'уне
һәр у һәр мәианиж-мәйни
Же дәрдьк'әвә херан хер у р'әзә,
А, фькьра р'азибуна дьле р'аст.
Т'әрqина Асине wе бе сәр тә
Әзраһил Насьрдинә, wе пьрсәке бежә тә,
Wе бежә:-Тӧ к'ижан динийи?
Тӧ бежә:-Әз Ездимә,
Шех у п'ир оста мәрһәбимә,
Йар бьре Ахрәтемә
Бьн дара зьмзьм т'оп'е
Р'йа т'ъреqатие сәр п'ъра сьлате,
һ'әч'и фькри шә'дәтие бәр мьнда те диwана Сӧлт'ан Езди Атqате,

Жь qəwле ḣəqиате, мьн п'ар те ḣəбə мьлк'е Шихади,
Мәләк Шихьсьн ле бу wəфате,
Р'ожа щьнәт у щьвате.
Чумә бьн дара Зьмзьм Т'опе
Сәр п'ьра Сәлате ḣəвгъртьн р'е у Арк'анә бәр наве атqата р'ожа щьнәт у щьвате.
Шихади, Мәләк шихьсьн, сәр канийа спи р'уньштьнә,
We гор'ьстинда бькьн шәв ḣате, əw шəвḣат, шəвḣата qöдрәте.
Зер'инә-ḣ'әщ кәсе р'астйа мала Адийа бе баḣарә, бе п'арә- əw кәсе бьре ахрәте нинә, теда нинә бьре ә'wльн бәдәв бу бе дәв бу паше we бьвә дәв we мә р'авә диса Мьдин Шәрфәдинә, we ḣьлдә бангин сьлаwәте, we хьравкә дер мьзгәвте Qади.
К'әсәк навежә нә Иса нә Муса нә Мәḣ'мәд, әме бангинкьн Сöлт'ан Шихади Таwъси Мәләк Насьрдине Зәри. Ә'рдан амин т'әмами Сöлт'ан Шихади

*/Гот Öбете әмьр- шехе Насьрдина/*

---

## ԽՈՍՔ ԵԶԴԻԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ըստ կրոնական ավանդույթների՝ Աստծո մասին խոսելը մեղք է համարվում: Բայց թող Աստված ների ինձ, որ ես ինձ թույլ եմ տալու իր անվան հետ կապված մի քանի բացատրություն տալ: Եզդիերեն՝ խըդե թըկ թընեյը բե հավալը բե շըրիկը, նուրը ըզմանայը, հայերեն թարգմանվում է՝ Աստված միակն է, նա չունի ոչ ընկեր, ոչ էլ ընտանիք: Նա տիեզերքում է՝ արևի տեսքով, աներևույթ ու հեռու: Խըդե իըկը դըրգե հըզարըն- աստված մեկն է՝ դռները հազարն են: Յազար յակ նավե խադե, դը հազար դը նավե խադե, սե հազար սե նավե խադե, այսինքն՝ հազար մեկ Աստծո անուն, երկու հազար երկու Աստծո անուն, երեք հազար երեք Աստծո անուն, սա բացատրվում է նրանով, որ հազարավոր անուններ է ունեցել միակ այդ Աստվածը: Ըստ եզդիական կրոնական ավանդույթների՝ տիեզերքը, այսինքն՝ երկրագունդը, երկինքը, մոլորակները, հողը, ջուրը, կենդանական աշխարհը, բուսականությունը և ամեն-ամեն ինչ՝ ստեղծել է Աստված: Մարդու ճակատագիրը կախված է Աստծուց, սա նշանակում է, որ ինչ որ կատարվում է աշխարհում, կատարվում է Աստծո կամքով, և ամենուրեք Աստվածն է, որ հանդես է գալիս որպես անմեկնելի, անհասկանալի գաղտնիք, որը ոչ մեկը չի կարող բացատրել, որովհետև դա միայն Աստծո իմանալիքն է, ինքն է տնօրինում ամեն ինչ:

Այն, ինչ որ Աստծունն է հասանելի, հասու չէ հասարակ մահկանացուին: Եթե մարդը որևէ տեղ է գնում, զգուշացնում է սաբրի տեսքով, որ չի կարելի գնալ: Եթե սաբրը մեկ անգամ է լինում, դա նշանակում է, որ նա անհաջողության կմատնվի - քե բըկը դոռա սըբըրեյը վե բըվը-միրե մըրեյը:

Կրկնակի սաբրի դեպքում Աստված հորդորում է՝ գնա, բարի ճանապարհ է մաղթում, այսինքն՝ գործը կհաջողվի: Դա է Աստծո կամքը, որ թելադրվում է զույգ սաբրի տեսքով:

Կարելի է շատ բան ասել, բայց այսքան մեղքն էլ բավական է...



***

... **Ա**յսօր էլ բոլոր եզդիները պետք է կատարեն իրենց օրենքները, խստորեն պահպանեն բոլոր սկզբունքները: Նրանք պետք է հիշեն, որ եզդիները բաժանվում են երեք գլխավոր կաստաների: Ամեն եզդի պետք է ամուսնանա իր կաստայի աղջիկների հետ: Ավելին, շեխերը, որ իրենց հերթին բաժանվում են ենթակաստաների, պետք է ամուսնանան միայն իրենց ենթակաստայի աղջիկների հետ:

*Շեխերի ենթակաստաներն են.*

1. Կաթանի, որի մեջ մտնում են՝ ա) շեխե իմայլի անզալ, բ) շեխե կյառա, գ) շեխե սորե սորա: Այս խմբերում թույլատրվում է ամուսնանալ միմյանց հետ:
2. Վադանի, որի մեջ մտնում են՝ ա) շեխե շարֆադինա, բ) շեխե բրահիմա, գ) շեխե էթիմա: Այստեղ նույնպես թույլատրվում է ամուսնանալ միմյանց հետ:
3. Ջարզանի, որի մեջ մտնում են՝ ա) շեխե շեյխըդըրա, բ)շեխե հասանա, գ) շեխե հըվընդա, դ) շեխե Ավդալե Գոլե, ե) շեխե Ամադինա, զ) շեխե Տոկըլա: Այս վեց խմբերը նույնպես իրավունք ունեն ամուսնանալու միմյանց հետ:

Փիրերը նույնպես բաժանվում են ենթակաստաների, որոնց թիվը հասնում է 41-ի:

*Եզդիների համար պարտադիր են հետևյալ սկզբունքները.*

1. Դինե մըն շարֆադինը
2. Իմանա մըն Տաուսի Մալակը
3. Մըըըվե մը շեշըմը
4. Ատկատա մըն Սուլթան Եզդիդը
5. Մաս հավե դինե մա ազիզ մալաք ֆարխադինը
6. Կասըդե ռըհե մըն Սըջադինը
7. Ռուհաստին Նասրդինը

Մյուս կարևոր սկզբունքներից հարկ է նշել, որ ամեն մի եզդի պետք է ունենա իր 5 կրոնավորները: 1. Փըրե զը քայե, 2. Բրե ախրատե /հանդերձյալ կյանքի եղբայր/, 3. Յար բըրե Ախրատե, 4. Մար հաբի, 5. Շեխե բըսկե:

Այնուհետև, յուրաքանչյուր եզդի /տղամարդ կամ կին/ պետք է ունենա իր հանդերձյալ կյանքի քույրը, ինչպես նաև՝ իրեն վզում լինի տոկա եզդի, այսինքն՝ եզդու օղը, որով նա ճանաչվում է:

## ԵԶԴԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՍՐԲԵՐԸ

Վերադառնանք եզդիականության սրբացած հեղինակություններին: Յիշենք, որ եզդիների ազգային միության նախագահության 2001 թվականի հունիսի 22-ի ընդլայնված նիստի արձանագրության մեջ ասված է. «Եզդի ժողովուրդը պահպանում է իր ազգային սրբերի նվիրական հիշատակը, ավանդապատումները, նրանց նվիրված ծիսական

արարողակարգը: Սակայն ոչ մի պաշտոնական գրանցում և պաշտոնական տեղեկատվություն չկա այդ մասին, ուստի անհրաժեշտություն է առաջացել անդրադառնալ այդ հարցին, եզդիների ազգային միության նախագահության նիստով ամրագրել այդ իրողությունը և ի լուր աշխարհի և ի գիտություն ողջ եզդի ժողովրդի, պաշտոնապես հայտարարել եզդի ժողովրդի սրբերի անունները, ազգային կոմիտեների միջոցով այն հասցնել ժողովրդի բոլոր խավերին:

*Եզդի ժողովրդի սրբերն են.*

1. Մելեկե Թավուս
2. Կարմիր Սուլթան Եզիդ
3. Շեխ Ադի
4. Շիխսըն
5. Սըջադին
6. Շըմս-Տեշըմս
7. Մըլըկ Ֆըրխըդին
8. Նասըրդին
9. Շեխուբըքր
10. Հըզնամամ
11. Շըրֆըդին
12. Սորե Սորա
13. Մուսափիա
14. Մամը Ռըշան
15. Շեխ Մընդ
16. Գավանե Զըրզա
17. Մըլըկ Զըդին
18. Իսբրիա
19. Ճարա Պիրա Ֆատ
20. Շեխ Ալե Շըմսա
21. Զըն Տըյար
22. Օմարե Խալա
23. Մըմե Շվան
24. Խաթունա Ֆըրխա
25. Դոլմեշ Արո

## ՄԵԼԵԿԵ ԹԱՎՈՒՍ



Սակայն իրականում Մելեկե Թաուսը երկրագնդի չորս անկյունների հրեշտակների գերագույնն է: Ըստ ավանդության, Մելեկե Թավուսը եզդի ժողովրդի պահապանն է, հովանավորը, եզդի ժողովրդի հաջողությունների գրավականը: Մելեկե Թավուսի տոնը, որը միաժամանակ կոչվում է նաև Տարեսկզբի տոն, նշվում է ապրիլի 13-ից հետո, առաջին չորեքշաբթի օրը: Այդ օրը եզդիների տանը կիսում են Նոր տարվա գաթան (կլոճը), հետո այցելում են գերեզմանոց վերհիշելու ննջեցյալներին: Չար շըմա սորե սալե մըրի հատըրը դըրե նալե:



## ԿԱՐՄԻՐ ՍԵԼԹԱՆ ԵԶԻԴ



Կարմիր Սելթան եզիդը եզդիների նախահայրն է: Նրա անունով է կոչվում եզդիների ազգը, եզդի ժողովուրդը:

## ՇԵԽ ԱԴԻ



Շեխ Ադին պատմական անձնավորություն է: Ապրել և գործել է 11-րդ դարի վերջին, 12-րդ դարի սկզբին: Առաջին անգամ նա է հիմնադրել եզդիների կրոնի սահմանադրությունը (հադ-սադ): Ըստ ավանդության, Շեխ Ադին եզդիների մեջ առաջին սուրբն էր, որ կրեց եզդիների դավանանքը մարմնավորող խարխամ: Շեխ Ադու դամբարանը գտնվում է Լալըշում, որը համարվում է եզդիների գլխավոր ուխտատեղին: Շեխ Ադին դավլերում ու բայթերում հաճախ հավասարեցվում է Աստծուն:

## ՇԻԽԸՍԸՆ



Շիխըսընը եզդի շեխերից ավագագույնն է: Նա համարվում է Աստծո առաքյալը: Ըստ ավանդության միայն Շիխըսընն ու իր հետնորդներն իրավունք ունեին գրել ու կարդալ:

Շիխըսընի սուրբը գտնվում է Կոտայքի մարզի Էլար գյուղի բնակիչներ շեխ Ահմադի և Խալոե Աֆանդիի, շեխ Տիտալե Աֆանդիի տներում:

## ՍԸՋԱԴԻՆ



Սըջադինը մարդկանց հոգիները կանչողն է: Նա մարդկանց հոգիները տանում է Նասըրդինի մոտ, սա էլ այդ հոգիներն առնում է:

Այս առիթով է ասվում. «Կասըրդե ռըհե մըրիա»:

Սըջադինի սուրբը գտնվում է Վեդիում՝ շեխ Ահմադի և շեխ Մահմուդի ու նրանց բարեկամների տներում:

## ՇԱՄՍ



Շամսանի եղբայրների և գերդաստանի ավագն է Շամսը: Շամսը (Շեշըմս) մարմնավորում է արևը՝ եզդիների գերագույն պաշտամունքը: Յուրաքանչյուր եզդի ամեն օր պարտավոր է առնվազն երեք անգամ (արևածագին, կեսօրին, արևամուտին) կանգնել դեպի արևը, աղոթել:

Շամսի սուրբը գտնվում է Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղի բնակիչ շեխ Տոսուն Շեխ Ամոյի տանը:

## ՄԱԼԱԿ ՖԱՐԽԱԴԻՆ



Հրեշտակ Ֆարխադինը համարվում է եզդիների ղավլ բայթերի հիմնադիրը: Համաձայն «Ղավլե Մալակ Ֆարխադինի», ֆարխադինը ծնվել և մահացել է չորեքշաբթի օրը: Ֆարխադինը շամսանի շեխերի գերդաստանի ընտանիքներից մեկի նախահայրն է: Ֆարխադին անունով է կոչվում լուսինը՝ «Մանգա մալակ Ֆարխադին»:



## ՆԱՍԸՐԴԻՆ



Նասըրդինը Շեխ Շամսի եղբայրն է: Ըստ ավանդության, նա մարդու հոգեառն է: Նրան հիշում են հատկապես մահվան և հուղարկավորության ժամանակ:

Նասըրդինի սուրբը գտնվում է Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղի բնակիչ շեխ Ուբեթե Համոյի, Արմավիրի մարզի Արմավիրի բնակիչ Ջասըմե Ագիտի, Կոտայքի մարզի Զովունի գյուղի Ամո թաղամասի բնակիչ Ուբեթե Ամըրի տներում:

## ՇԵԽՈՒԲԱՔՐ



Շեխուբաքրը եզդի յոթ սուրբ ծիավորներից մեկն է: Նա հայտնի է նաև «Շեխուբաքրե ֆաքիր» անունով: Ըստ ավանդության, եզդիների մեջ նա առաջին սուրբն էր, որ կրեց սարհադա Շեխուբաքըր - Խըդանե շեխուբաքըր...

Շեխուբաքրի սուրբը գտնվում է Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղի բնակիչ շեխ Քյալաշե Հասանի, նրա բարեկամ, Կոտայքի մարզի Քանաքեռավանի բնակիչ շեխ Բրոե Դավրեշի և նրանց բարեկամների տներում:

## ՀԱԶՄԱՄԱՆ



Հազմամանը համարվում է սուրբ գլխարկների (քուլք) տերն ու բաժանողը:

Հազմամանի սուրբը գտնվում է Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղի բնակիչ փիր Ուսըվի որդիներ Ասադի, Ամարի և Կոտայքի մարզի Քանաքեռավան գյուղի բնակիչ փիր Ֆայզոյի և Փաշիկի տներում:



## ՇԸՐՖԸԴԻՆ

Շըրֆըդինը եզդի ժողովրդի կրոնն է: «Շըրֆըդին դինե մըե»:

Շըրֆըդինը Շըխըսընի ավագ որդին է: Նրա սուրբը գտնվում է Թբիլիսիի բնակիչ շեխ Բաշիրի տանը:

## ՍՈՐԵ ՍՈՐԱ



Սորե Սորան մարդկանց բուժողն է: Ըստ ավանդության, նա բուժում է իշիասով, քամիով հիվանդներին:

Սորե Սորայի անունով կա սուրբ, որը գտնվում է Էրեբունի շրջանի Տոլկ գյուղում՝ Շեխե շեխու բաքրա Մաջիտե Ուսըվի եղբայրներ Ագիտի և Խամոյի տանը:



## ՄՈՒԱՎԻՅԱ

Մուավիյան Կարմիր Սըլթան Եզիդի հայրն է, եղել է խալիֆ:

Մուավիայի սուրբը գտնվում է Կոտայքի մարզի Էլլար գյուղում՝ Շեխե շեխու բաքրա Բրոյի տղաներ Էյլազ և Ալիխան եղբայրների տանը:

## ՄԱՄԸ ՌԸՇԱՆ



Մամը Ռըշան համարվում է կայծակի, անձրևի, ամպերի, շանթի հովանավորը:





## ՇԵԽ ՄԱՆԴ

Շեխ Մանդը Մալակ Ֆարխադինի որդին է: Ըստ ավանդության, Շեխ Մանդը գիտեր օձերի և մնացած սողունների լեզուն: Եվ պատահական չէ, որ այս գերդաստանի շեխերին կոչում են օձերի շեխեր (շեխե մարա):

Շեխ Մանդի սուրբը գտնվում է Վրաստանի Հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիի բնակիչ շեխ Ղարամանի տանը:

## ԳԱՎԱՆԵ ԶԱՐԶԱ



Գավանե Զարզան համարվում է խոշոր եգջերավոր անասունների պահապանն ու հովանավորը: Ինչպես Շըվանի, այնպես էլ Գավանե Զարզայի տոնը նշվում է եզդիների Նոր տարվա հետ միասին: Կլոճի մեջ կա նաև Գավանե Զարզայի բաժինը:



## ՄԱԼԱԿ ԶԱՅԴԻՆ

Մալակ Զայդինը Շիխըսընի տղան է: Նրա մասին հիմնականում նշվում է «Ղավլե բորաբորե»-ում: Ըստ ավանդության, նրա տոնը նույնպես նշվում է Եզդիների Նոր տարվա առաջին օրը:

Մալակ Զայդինի անունը կապվում է գարնան գալուստի, անասունների ծնի հետ:

## ԻՍԵԲԻԱ



Իսեբիան փիր է:

Ըստ ավանդության, Իսեբիան համարվում է Շեխ Ադու գանձապետը: Իսեբիայի սուրբը գտնվում է Էջմիածնի շրջանի Նորակերտ գյուղի բնակիչ փիր Քյալաշե Դոդոե Բաբայի և նրա բարեկամների տներում:



## ՊԻՐԱ ՖԱՏ

Ըստ ավանդության, Պիրա Ֆատը հազարավոր տարիներ եզդի ժողովրդի ստեղծման նախահիմքը, նախասերմն իր մոտ էր պահում: Նա էր, որ եզդի ժողովրդի ստեղծման նախասերմը փրկեց ոչնչացումից: Փաստորեն, կարելի է ասել, որ Պիրա Ֆատը համարվում է եզդի ժողովրդի նախամայրը:

## ՇԵԽ ԱԼԵ ՇԱՄՍԱ



Շեխ Ալե Շամսան շեխ Շամսի որդիներից է: Նրա անունով կա ղավլ՝ «Ղավլե Շեխ Ալե Շամսա»: Ըստ եզդիների կրոնի և ավանդության, Շեխ Ալե Շամսան համարվում է բանտապետ: Եվ պատահական չէ, որ եզդիները նրա անունով օրհնում են այն մարդկանց, ովքեր նեղության և պանդխտության մեջ են, բանտարկված են կամ անկողնային հիվանդ:



## ՋԻՆ ՏԱՅԱՐ

Ջին Տայարը հոգեկան հիվանդների բուժողն է: Ըստ ավանդության, երբ նա նստել է քարի վրա, քարն առյուծ է դարձել, ձեռքի մտրակը օձի է վերափոխվել: Ջին Տայարի սուրբը գտնվում է Էջմիածնի շրջանի Վաչե գյուղում՝ Մահարե Ռազայի և նրա հորեղբոր տղաներ Շամոյե Դավրեշի և Ջահարե Արֆուտի, Ջամալե Աֆանդիի տանը:

## ՕՄԱՐԵ ԽԱԼԱ



Օմարե Խալան համարվում է սուրբ հանդերձանքի օծողը (քուլք և խարկա): Երբ Օմարե Խալան օծում է հանդերձանքը, դրանք սրբանում են (Ջեվա Օմարե Խալա):

Եզդիական փիրերի ընտանիքներում կա Օմարե Խալայի սուրբը:

Այն գտնվում է Մասիսի շրջանի բնակիչներ փիր Խդրե Ալիի, փիր Հասանե Ալիի և փիր Խդրե Ռաշոյի տներում:





## ՄԱՄԵ ՇԸՎԱՆ

Մամե Շվանը համարվում է մանր եզջերավոր անասունների պահապանն ու հովանավորը:

Մամե Շըվանի տոնը հիշատակվում է եզդիական նոր տարվա առաջին օրը, երբ կիսվում է կլոճը: Կլոճի բաժիններից մեկը Մամե Շըվանինն է:

Մամե Շըվանի սուրբը գտնվում է Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղի բնակիչ փիր Ֆրիկե Շարաֆե Ջալոյի և Արմավիրի մարզի Մրգաշեն գյուղի բնակիչ Ֆրիկե Փիր Ուսոյի տներում:



## ԽԱՏՈՒՆԱ ՖԱՐԽԱ

Խատունա Ֆարխան համարվում է ծննդաբերության հովանավորը: Խատունը հրեշտակ Ֆարխադինի (մալակ Ֆարխադին) աղջիկն է: Եզդիների մեջ կան շեխեր, որոնք կոչվում են «շեխե Խատունե»: Կնոջ ծննդաբերության ժամանակ եզդիներն ասում են. «Թող Խատունա Ֆարխան գա քեզ օգնության»:



## ԴԱՎՐԵՇ ԱՐԴ

Դավրեշ Արդը համարվում է Գետնի Դավրեշը: Ըստ ավանդության, ամբողջ երկրի գետինը հանձնված է Դավրեշ Արդին: Դավրեշ Արդին հիշում են հատկապես մահվան և հուղարկավորության ժամանակ:

*Կրկին հիշեցնեմ, որ իմ անմիջական նախաձեռնությամբ, իմ մտահղացմամբ, Զովունի գյուղի բնակիչ, նկարիչ Սամվել Ղազարյանի երևակայությամբ ստեղծվեցին մեր սրբերի դիմանկարները, որոնք այսուհետև կդառնան մեր հավերժական ուղեկիցները:*

*Որոշ ենթակաստայի փիրեր իրավունք չունեն ամուսնանալու այլ 40 ենթակաստայի փիրերի հետ: Հատկապես փիրե հազմամանները, որոնք համարվում են քառասուն փիրերի փիրեր, իրավունք չունեն ամուսնանալու մնացած փիրերի հետ և՝ հակառակը: Սակայն վերջին շրջանում, չնայած կրոնական արգելքներին, փիրե օմարե խալան, փիրե խիբյան, փիրե Մալկավեսա կաստաներն ամուսնանում են միմյանց հետ:*

*Մրիդները ազատորեն կարող են ամուսնանալ կաստայի ներսում, բայց ոչ երբեք՝ շեխերի և փիրերի հետ: Մրիդները շեխերին և փիրերին համարում են մալա ադիա, այսինքն՝ Ադիայի (Շեյխ Ադիի) տան անդամներ: Բայց դա այդպես չէ: Այստեղ տևական ժամանակով ի հայտ է եկել արմատավորված մի թյուրիմացություն: Իրապես՝ փիրերն ամենևին էլ չեն պատկանում «Մալա Ադիա» կոչվող կրոնադավանական գերդաստանային հավաքականությանը:*

*Շեյխ Ադին, բացի հաղսադից, հիմք է դրել ադավիների կրոնական ուղղությանը (իր անունով): Նա եղել է իր ժամանակի աղանդավորական շրջանում ամենահայտնի քարոզիչներից մեկը, միջնադարի ականավոր գիտնական ու փիլիսոփա: Նա սերտ կապեր է ունեցել կրոնական հայտնի դեմքերի՝ Ուկայլ ալ- Մանբաջիի, Ալ- Հուլվանիի, Աբըդ Ալ-Ջիլանիի (Ջիլի) և այլոց հետ: Շեյխ Ադիի առանձին գրվածքներ (կրոնական տրակտատներ, բանաստեղծություններ) պահպանվել են մինչև մեր օրերը:*

*Շեյխ Ադիի ազգականները նպաստել են ադավիների աղանդի ծաղկմանը:*

## *ԵԶԴԻՆԵՐԻ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԸ*

Անցյալ դարավերջին անգամ տիրում էր մի կարծիք, ըստ որի եզդիական ուսմունքը հիմնված է միայն բանավոր ավանդույթների վրա, թե եզդիները չունեն կրոնական որևէ գրավոր փաստաթուղթ, օրենսգիրք: Իսկ բանավոր ավանդույթներն էլ (աղոթքներ, հիմներ և այլն) եզդիական դավանանքի ներփակ, գաղտնի բնույթի պատճառով, անմատչելի էին գրեթե բոլորին, այդ թվում նաև հետազոտողներին: Այժմյան գիտական տեղեկություններն էլ հիմնվում են միայն կողմնակի, հաճախ ոչ ճիշտ տվյալների վրա:

Սակայն երբեմն, հատկապես ճանապարհորդների նոթերում, ինչ-որ աղոտ ակնարկներ են արվում եզդիական սուրբ գրքերի մասին, որոնք պահվում են եզդիների սրբավայրում՝ Լալըշում:

Եզդիական առաջին կրոնական տեքստը 1891 թվականին հրատարակել է հայ գիտնական Ս.Ա. Եղիազարյանը (նա տեքստի մասին անմիջականորեն լսել է եզդի կրոնականներից): Այդ հրապարակումն իրենից ներկայացնում է եզդիական հիմնական աղոթքների երեք տարբերակ: Դրանք հետագայում նույնությամբ վերահրատարակեց



հունգարացի արևելագետ Հուգո Մոկաշը: Բացի այդ, եզդիական կրոնական բանավոր հիմների ժողովածու են հրատարակել Ջալիլ եղբայրները:

Մեր դարի սկզբին արաբ կաթոլիկ հոգևորական և գիտնական Անաստաս Մարին մեծ դժվարությամբ կարողացավ ձեռք բերել եզդիական երկու սուրբ գրքերի ծածկագրական պատճենները: Դրանք վերծանելով նա հրատարակեց 1911 թվականին: Այս փաստով նա վերջնականապես հաստատեց եզդիական երկու սուրբ գրքերի գոյությունը: Պարզվեց, որ լալըշյան եզդիական ծածկագրերը գրվել են 33 տառերի գործածությամբ:

Եզդիական ուսմունքի հիմնադրույթներն ամփոփող այս փաստաթղթերը մեծ հետաքրքրություն առաջացրին արևելագետների շրջանում: Հենց նրանց միջոցով էլ հայտնվեցին այդ բնագրերի նոր տարբերակներ: Դրանք թարգմանվեցին գերմաներեն, իտալերեն, անգլերեն, հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով:

Գիտական բարձր արժեք է ներկայացնում ավստրիացի արևելագետ Մաքսիմիլիան Բիտների հրատարակությունը, որը լույս տեսավ Վիեննայում 1913 թվականին:

Եզդիական սուրբ գրքերը խիստ հսկողությամբ, հատուկ տուփի մեջ պահվում են Լալըշում: Շարքային եզդիներին, առավել ևս այլադավաններին, չի թույլատրվում նույնիսկ տեսնել դրանք: Անաստաս Մարիի համառությամբ միայն ասպարեզ հանվեցին դրանց պատճենները:

Այդ գրքերը եզդիական դավանանքի հիմնական սկզբունքների համառոտ գրառումներն են:

Սուրբ գրքերից առաջինը կոչվում է «Քըթեբա Ռաշը» («Սև մատյան»): Այն վերաբերում է Մալաքե Թավուսին, նրա սրբազան խոսքն է առ իր համայնքը: Նա պատգամում է՝ չշեղվել շիտակ ճանապարհից և չհրապուրվել հարևան այլադավանների կրոնական գաղափարներով: Նա հնազանդներին բարիք ու փառք է խոստանում, անհնազանդներին սպառնում է պատիժներով:

Երկրորդ գիրքը կոչվում է «Քըթեվա ջըլվա» («Գիրք հայտնության»): Դրա մեջ հիմնականում շարադրվում է աշխարհի արարչագործությունը և ընտրյալ ժողովրդի՝ եզդիների առաջացումը: Այստեղ զգալի է «Աստվածաշնչի» և, ընդհանրապես, Միջագետքի դիցաբանության և տեղական հավատալիքների, ինչպես նաև սուֆիական գաղափարախոսության ազդեցությունը:

Այս գրքերի հեղինակային պատկանելությունը թեև տարբեր կերպ է բացատրվում, սակայն ելնելով որոշակի տվյալներից, կարելի է հաստատապես ասել, որ դրանց հեղինակները Շեյխ Ադին ու շեխ Իսընն են եղել:

Այդ տեքստերի հայերեն թարգմանությունն իրականացրել են Գ. Ասատրյանը և Ա. Փոլադյանը:

*Տրվում է այդ թարգմանության տեքստը.*

## ԳԻՐՔ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ

1. Նա, ով գոյություն է ունեցել բոլոր արարածներից առաջ, Մալաքե Թավուսն է:
2. Նա է, որ այս աշխարհին ուղարկեց Աբթավուսին (Մալաքե Թավուսի ծառային), որպեսզի վերջինս իր ընտրյալ ժողովրդին առանձնացնի և պարգևի իմաստություն ու իմացություն և փրկի վախից ու մոլորություններից:
3. Այս գրքի երևան գալը եղավ (կատարվեց) բանավոր, երես առ երես, այնուհետև՝ այս գրքի միջոցով, որը կոչվում է Ջալվա /«Հայտնություն»/, որի ընթերցումն արգելված է այս համայնքներից /այսինքն՝ եզդիների համայնքից/ դուրս կանգնած մարդկանց համար:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1. Ես եղել եմ և այժմ կամ և կմնամ հավիտյանս հավիտենից: Ես իշխում եմ բոլոր արարածների վրա և կարգավորում եմ նրանց գործերը:
2. Ես պատրաստ եմ. ես բարի եմ նրանց համար, ովքեր հավատում են ինձ և կարիքի դեպքում դիմում են ինձ:
3. Ես ամեն տեղ եմ: Ես մասնակից եմ բոլոր իրադարձություններին, որոնց այլադավանները «չարիք» են համարում, քանզի դրանք չեն համապատասխանում նրանց ցանկություններին:
4. Յուրաքանչյուր ժամանակ ունի իր կարգավորիչը, և դա իմ խորհրդով է: Յուրաքանչյուր ժամանակ ուղարկում է որևէ տիրակալի և այդ տիրակալներից յուրաքանչյուրը իր դարաշրջանում կատարում է իր գործը:
5. Ստեղծված արարածներին թույլ եմ տալիս անել այն, ինչ ցանկանում են:
6. Պարտվում է նա, ով ինձ հակադրվում է:
7. Ուրիշի աստվածները չեն խառնվում իմ գործին, ինչ ցանկանամ, նրանք ինձ չեն հակաճառի:
8. Այն գրքերը, որոնք այլադավանների ձեռքերին են, ճշմարիտ չեն և գրված չեն մարգարեների կողմից, այլ կեղծված են և աղճատված: Յուրաքանչյուրը կրկնում է մյուսին և ժխտում:
9. Ճշմարտությունն ու կեղծիքը հայտնի են փորձից:
10. Ես զայրանում եմ նրանց վրա, ովքեր իմ անունից են խոսում: Անհամաձայնությունս արտահայտվում է իմ կողմից մի քանի օրով ուղարկված իմաստուն կարգադրիչների միջոցով: Ընդհանրապես, իմ կարծիքով, ոչ ճիշտ կատարված գործերը ես արգելում եմ:
11. Ես ուղի եմ ցույց տալիս և ուսուցանում եմ նրանց, ովքեր հետևում են իմ աշակերտներին: Այդ մարդիկ երջանիկ կլինեն՝ դառնալու իմ ուղեկիցները:



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

1. Մարդկանց բարություն եմ շնորհում ըստ իմ հայեցողության:
2. Ես իշխում եմ երկրի ու նրա խորքում գտնվող բոլոր արարածների վրա:
3. Ես չեմ ցանկանում, որպեսզի մարդիկ ընդհարվեն /կռվեն/ միմյանց հետ:
4. Եվ ես բոլոր դեպքերում բարություն չեմ խնայում նրանց համար, ովքեր ինձ են պատկանում և հնազանդվում են ինձ:
5. Ես գործ եմ տալիս նրանց, որոնց փորձել եմ և որոնք իմ ցանկությամբ են շարժվում:
6. Ես հայտնվում եմ որևէ տեսքով նրանց, ովքեր հավատում են ինձ և խորհրդակցում են ինձ հետ:
7. Ժամանակ առ ժամանակ ես մարդկանց ենթարկում եմ տանջանքի, և ոչ ոք չի կարող դա ինձ արգելել:
8. Եվ ոչ ոք չի կարող դրան միջամտել:
9. Տանջանք և հիվանդություն եմ բերում նրանց, ովքեր դիմադրում են ինձ:
10. Նա, ով ինձ է ուղղված /ինձ է հետևում/, չի մեռնի այնպես, ինչպես ուրիշ մարդիկ:
11. Ես չեմ հանդուրժում, որ որևէ մեկն ապրի այս աշխարհում իրեն հատկացված ժամանակից ավելի:
12. Եթե ցանկանամ՝ որևէ մեկին հոգու շրջագայության /տրանսմիգրացիայի/ միջոցով մեկ կամ երկու-երեք անգամ այս կամ մի այլ աշխարհ կուղարկեմ:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

1. Առանց գրքի ճանապարհ եմ ցույց տալիս /առաջնորդում եմ/ նրանց, ովքեր ինձ հաճո են և ինձ են նայում: Ես աներևույթ կերպով ղեկավարում եմ նրանց: Այն, ինչ ես ձեզ սովորեցնում եմ, ձեռք է բերվում առանց տանջանքի:
2. Ժամանակ առ ժամանակ ես վնաս եմ բերում նրանց, ովքեր այլ աշխարհում են և խուսափում են իմ կրոնից:
3. Ադամի այս զավակները չգիտեն կրոնի ընթացքը /օրենքը/ և դրա համար հաճախ շեղվում են ուղիղ ճանապարհից:
4. Ցամաքի կենդանին, երկնի աղավնին և ծովի ձուկը՝ բոլորն իմ ձեռքում են և գտնվում են իմ հրամանի ներքո:
5. Ես գիտեմ ստորերկրյա գանձերի տեղը և դրանք մեկ առ մեկ տալիս եմ մարդկանց:
6. Իմ հրաշքները ցուցադրում եմ այն մարդկանց, ովքեր ցանկանում են տեսնել դրանք:
7. Այն օտարները, ովքեր չարություն են գործում և չեն վարվում ըստ իմ և իմ հետնորդների խոսքերի, վնաս պետք է տեսնեն, քանզի չգիտեն, որ մեծությունն ու հարստությունը իմ ձեռքերում են և ես եմ տալիս դրանք

Ադամի որդիներից լավագույններին:
8. Աշխարհի ստեղծումը, օրերի հաջորդականությունը և բոլոր կարգավորիչների կարգավորողը ի սկզբանե ինձանից են:

## ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

1. Իմ իրավունքը ես չեմ հանձնի այլ աստվածներից որևէ մեկին:
2. Չորս տարրերը, չորս ժամանակները և չորս հիմքերը ես նվիրեցի, որպեսզի կատարվի արարչագործությունը:
3. Օտարների գրքերը ընդունելի են, եթե համապատասխանում են իմ օրենքին: Այն գիրքը, որը չի համապատասխանում իմ օրենքին, նրանց կողմից փոխված է /աղավաղված է/:
4. Իմ թշնամիները երեքն են և իմ չարությունը երեք բանի վրա է:
5. Նրանց, ովքեր չեն հայտնում իմ գաղտնիքը, բարիք է հասնելու:
6. Նրանք, ովքեր տանջվում են հանուն ինձ, յուրաքանչյուրին որևէ աշխարհում ես բարությամբ կհատուցեմ:
7. Օտարների դեմ պայքարում ես կկանգնեմ նրանց կողքին, ովքեր ինձ հետ են:
8. Ով դուք, մարդիկ, որ իմ ճշմարտությունը ձեր ականջներով եք ընկալում, հեռացեք այն խոսքերից, որոնք ինձանից չեն: Իմ անունը և իմ հատկությունները մի հիշատակեք, որպեսզի մեղք չգործեք /եզդիական դավանանքում Մալաքե Թավուսի անունն արգելվում է տալ, դա մեղք է համարվում/: Դուք չգիտեք, թե ինչ են անում շիտակ ճանապարհից շեղվածները:

## ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1. Իմ էությունն ու պատկերը պահեք ձեր մտքում, քանի որ դա ձեզ կօգնի մտաբերել իմ օրենքից այն, ինչ մոռացության է մատնվել:
2. Իմ ծառաների խոսքերով առաջնորդվեք, ականջ արեք այն գերբնական գիտությանը, որ իմ անունից նրանք հայտնում են:

«ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՐՔՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է

# «ՍԵՎ ՄԱՏՅԱՆ»

1. Ի սկզբանե աստված իր բարի էությունից ստեղծեց մի սպիտակ մարգարիտ /գոհար/ և ստեղծեց մի աղավնի, որին տվեց Անֆար անունը և նրա մեջքին դրեց այդ մարգարիտը, որը այնտեղ մնաց 40 հազար տարի:
2. Կիրակին արարչագործության առաջին օրն էր: Աստված ստեղծեց մի հրեշտակի, որին տվեց Ազրաիլ անունը: Դա Մալաքե Թավուսն էր, որը բոլորի առաջնորդն է:



3. Երկուշաբթի օրը աստված ստեղծեց Դարդայել հրեշտակին, որը շեյխ Հասանն էր /Շեյխ Հասանը, ինչպես նաև «Սև մատյանում» հիշատակվող անձինք, բացի շեյխ Շամսից, որը մարմնավորում է արևը, պատմական դեմքեր են, ադավիյան շարժման գործիչներ/:
4. Երեքշաբթի օրը նա ստեղծեց Իսրաֆիլ հրեշտակին, որը շեյխ Շամսն է:
5. Չորեքշաբթի օրը նա ստեղծեց Միքայել հրեշտակին, որը շեյխ Աբուբաքրն է:
6. Հինգշաբթի օրը նա ստեղծեց Ջաբրայիլ /Գաբրիել/ հրեշտակին, որը Սաջադինն է:
7. Ուրբաթ օրը նա ստեղծեց Շամնայիլ հրեշտակին, որը Նասրադինն է:
8. Շաբաթ օրը նա ստեղծեց Թուրայիլ հրեշտակին, որը Ֆախրադինն է:
9. Եվ նա Մալաքե Թավուսին կարգեց բոլորի ղեկավարը:
10. Այնուհետև նա ստեղծեց յոթ երկինքների, և երկրի, և արևի, և լուսնի պատկերը:
11. Ֆախրադդինը ստեղծեց մարդուն, կենդանիներին, թռչուններին և վայրի գազաններին, և տեղադրեց իր վեղարի գրպանում: Եվ մյուս հրեշտակների հետ դուրս եկավ մարգարիտի միջից: Այնուհետև նա մի ահեղ ճիչ արձակեց մարգարիտի վրա, որը բաժանվեց չորս մասի և նրա միջից ջուր հոսեց և ծով գոյացավ: Երկիրը կլոր և առանց անցքի էր:
12. Նա թռչնի տեսքով ստեղծեց Ջաբրայիլին և ուղարկեց՝ նրա ձեռքը տալով աշխարհի չորս անկյունները: Այնուհետև նա ստեղծեց մի նավ և դրեց ջրի վրա՝ երեսուն հազար տարով: Այնուհետև նա եկավ և բնակվեց Լալըշում: Նա բղավեց և երկրին ամրացրեց քարեր, և երկիրը դարձավ հող և սկսեց ցնցվել: Նա հրամայեց Ջաբրայիլին, և եղավ հանդարտություն: Մարգարիտի երկու կտորները բերեց և մեկը տեղադրեց երկրից ներքև, իսկ մյուսը՝ երկնքի դռանը: Այնուհետև դրանցից կախեց լուսինը, արևը և աստղերը, որոնք նա ստեղծեց սպիտակ մարգարիտի փշուրներից և կախեց դրանք՝ երկնքի զարդարման համար:
13. Բերքատու ծառերը և բույսերը և լեռնագագաթները նա ստեղծեց երկրի զարդարման համար: Այնուհետև նա ստեղծեց երկնքի գահը՝ երկրի գորգի վրա:
14. Մեծ աստվածն ասաց հրեշտակներին. «Ես ստեղծում եմ Ադամին և Եվային և նրանց մարդ կդարձնեմ: Ադամի էությունից կառաջանա Շահր բին Սաֆարը, և նրանից կսերի երկրի վրա մի ժողովուրդ, որից հետո Ազրայիլի, այսինքն Մալաքե Թավուսի ժողովուրդը, որը եզդի ազգն է, ի հայտ կգա»:
15. Այնուհետև նա Շամ քաղաքից /այսինքն՝ Սիրիայից/ Լալըշ ուղարկեց շեյխ Ադիին:
16. Այնուհետև աստված իջավ Սև լեռան վրա և բղավեց ու ստեղծեց երեսուն հազարանոց հրեշտակների բազմությունը, որոնք քառասուն տարի պաշտեցին նրան: Ապա աստված այդ հրեշտակներին հանձնեց Մալաքե Թավուսին և նրանց հետ համբարձվեց երկինք:

17. Ապա աստված իջավ սուրբ երկիր և հրամայեց Զաբրայիլին՝ հող բերել աշխարհի չորս անկյուններից, և նա ստեղծեց հող և քամի և կրակ և ջուր, և շնորհիվ իր զորության՝ հոգի ներշնչեց հողին և ստեղծեց Ադամին և հրամայեց Զաբրայիլին՝ տանել նրան դրախտ, և թույլ տալ ճաշակելու բոլոր ծառերի պտուղներից, բացի ցորենից:
18. Հարյուր տարի հետո Մալաքե Թավուսը ասաց. «Ինչպե՞ս է բազմանալու Ադամի սերունդը»: Աստված ասաց. «Այդ գործի կարգավորումը հանձնում եմ քեզ»: Եվ Մալաքե Թավուսը եկավ և ասաց Ադամին. «Դու ցորեն կերե՞լ ես»: Ադամն ասաց. «Ոչ, քանզի աստված ինձ արգելեց»: Եվ Մալաքե Թավուսն ասաց. «Կեր, դա քեզ համար լավ է»: Ցորենը ուտելուց հետո Ադամի փորը ուռավ: Մալաքե Թավուսը նրան վտարեց դրախտից, տեղում ձգեց և համբարձվեց երկինք:
19. Ադամը սկսեց նեղվել, որովհետև հետանցք չուներ: Աստված մի աղավնի ուղարկեց նրա մոտ , որը իր կտուցով անցք բացեց /նրա հետույքում/ և նա հանգստացավ:
20. Զաբրայիլը հարյուր տարով Ադամից հեռու էր: Նա հարյուր տարի վշտի մեջ էր:
21. Աստված հրամայեց Զաբրայիլին, որը եկավ և ստեղծեց Եվային՝ Ադամի ձախ կողմից:
22. Ապա Մալաքե Թավուսը իջավ երկրի վրա՝ հանուն մեր ժողովրդի: Բացի սորական թագավորներից, մի քանի այլ թագավորներ էլ մենք ունեինք, որոնք են՝ Նաշրուհ, որը Նասրադդինն է, և Գամբուշ, որը Ֆախրադդինն է, և Արտեմուշ, որը Շամսադդինն է: Եվ դրանից հետո մենք ունեցանք ևս երկու թագավոր՝ Շաբուր առաջին և Շաբուր երկրորդ: Նրանց իշխանությունը տևեց հարյուր հիսուն տարի: Նրանց սերնդից են առաջացել մեր մեծերը մինչև այժմ:
23. Եվ մենք զայրացած ենք չորս թագավորների վրա:
24. Մեզ համար արգելված է՝ ա)Հազար (բույսը), որովհետև նրա անվանումը համընկնում է Խասիա մարգարեուհու անվան հետ: բ) Եվ լոբին: գ) Եվ կապույտ գույնը դ) Ձուկը նույնպես մի ուտի՝ ի պատիվ Հովնան մարգարեի: ե) Եղնիկի միսը մի ուտի, քանզի մեր մարգարեներից մեկի ոչխարն է: զ) Եվ շեյխն ու իր աշակերտները բոլորովին աքաղաղի միս չպետք է ուտեն՝ ի պատիվ Մալաքե Թավուսի, որովհետև Թավուսը մեկն է հիշատակված այն յոթ աստվածություններից, որի տեսքը նման է աքաղաղի: է) Եվ շեյխն ու իր աշակերտները դդում չպետք է ուտեն: ը) Արգելված է նաև կանգնած միզել: թ) Նստած տաբատ հագնելն անթույլատրելի է: ժ) Բնական կարիքը հոգալ մասսայական զուգարանում նույնպես արգելվում է: ի) Նաև լողանալ բաղնիքում: լ) Ճիշտ չէ սատանա բառն արտասանել, քանզի դա մեր աստծու անունն է: Ճիշտ չէ, երբ մենք օգտագործում ենք այնպիսի բառ, որ նման է կայթան (պարան), շաթ (գետ) և շառ (չարիք) բառերին: Ճիշտ չէ օգտագործել մալըուն (անիծված) բառը: Նաև ճիշտ չէ խոսքի մեջ օգտագործել լաընա (անեծք) և նաըլ (պայտ)



բառերը (եզդիական բարոյական կոդեքս, տես «Սև մատյանի» վերջում):
25. Քրիստոսի հայտնությունից առաջ այս աշխարհում մեր կրոնը կոչվում էր կռապաշտություն: Հրեաները, քրիստոնյաները և մահմեդականները հակադրվեցին մեր կրոնին: Իրանցիները՝ նույնպես:
26. Ահաբը մեր թագավորներից էր: Նա հրամայեց յուրաքանչյուրիս, որպեսզի մենք նրան հատուկ անուն դնենք: Եվ կոչեցին նրան Ահաբ-աստված կամ Բաըլզբուբ (Բեեղզեբուղ), որը այժմ Փիրբուբն է:
27.Մենք ունեինք մի թագավոր Բաբելոնում, որի անունն էր Բուխտնասար (Նաբուգոդոնոսոր): Եվ Իրանում մի թագավոր ունեինք՝ Ախաշվերոշ (Քսերքսես) անունով: Եվ Կոստանդնուպոլսում մենք ունեինք մի թագավոր՝ Ագրինկալուս (Արկադիո՞ս) անունով:
28. Երկրի և երկնքի ստեղծումից առաջ աստված գտնվում էր ծովի վրա: Նա իր համար մի նավ պատրաստեց և դրանով նավարկում էր ծովերի վրա:
29. Ինքն իրենից մի մարգարիտ ստեղծեց և դրա վրա իշխեց 40 տարի: Ապա ոտքով հարվածեց դրան:
30. Եվ, ով զարմանք, նրա աղմուկից և ձայնից առաջացան լեռները, և փոշուց՝ բլուրները, իսկ ծխից՝ երկինքը: Եվ նա ամրացրեց դրանք առանց սյուների:
31. Այնուհետև նա կողպեքով փակեց երկիրը և ձեռքը վերցրեց մի գրիչ և սկսեց կազմել բոլոր արարածների ցանկը:
32. Ապա իր էությունից և լույսից նա ստեղծեց վեց աստվածություններ, և դրանց ստեղծումը նման էր մի ճրագից մյուսը վառելուն:
33. Առաջին աստվածն ասաց երկրորդին. «Ես ստեղծեցի երկինքը միայն: Համբարձվիր գնա դու երկինք և ստեղծիր որևէ բան»: Նա բարձրացավ երկինք և դարձավ արև: Նույնը ասաց նաև մյուսին: Եվ նա բարձրացավ և դարձավ լուսին: Չորրորդը ստեղծեց հորիզոնը, հինգերորդը ստեղծեց արշալույսը, վեցերորդը՝ մթնոլորտը:

**«Սև մատյան» սուրբ գիրքն ավարտված է**

Եզդիական սուրբ գրքերի ի հայտ գալը մեծ իրադարձություն էր եզդիների կյանքում: Փաստորեն նոր լույս էր սփռվում եզդիների պատմության վրա, հստակորեն շարադրվում էր եզդիական դավանանքը:

Կա ևս մի պաշտոնական փաստաթուղթ, որ լույս է տեսել 1873 թվականին: Դա եզդիների բարոյական կոդեքսն է, իր ամբողջական արտահայտությունն է գտել եզդի հոգևորականների՝ Օսմանյան կայսրության բարձր դռանն ուղված դիմում - խնդրագիր տեքստում: Սուլթան Աբդուլ Ազիզի նույն թվականի հրամանի համաձայն նախատեսվում է զինվորական ծառայության կանչել նաև եզդիներին, որոնք մինչ այդ ազատված էին: Դրանից խուսափելու համար հոգևորականները դիմում են գրում, ուր թվարկվում է այն պատճառաբանող եզդիական կրոնական դրույթները (Հավելված-1, էջ 165 ):




1



2



3



4







5



6



7



8

## ԵԶԴԻԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԸ՝ ԵԶԴԻԵՐԵՆ



9



10



11



12





Եզդիական սուրբ գրքերի պարունակած նյութը կարելի է լրացնել 14 հոդված ընդգրկող այդ փաստաթղթի տվյալներով:

ՀՈԴՎԱԾ 1-ին. Մեր եզդիական համայնքի յուրաքանչյուր անդամ, մեծ թե փոքր, տղամարդ, թե կին, տարեկան երեք անգամ՝ ապրիլ, սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին, պարտավոր է Լալըշում այցելել Մալաքե Թավուսին: Հակառակ դեպքում նա կհամարվի անհավատ:

ՀՈԴՎԱԾ 2-րդ. Մեզանում յուրաքանչյուրը, եթե ամեն տարի սեպտեմբերի 15-20-ը չմասնակցի Շեյխ Ադիի տոնակատարությանը, համարվում է անհավատ:

ՀՈԴՎԱԾ 3-րդ. Յուրաքանչյուր եզդի, ամեն օր արևածագին պետք է ծնկաչոք աղոթի արևի դիպած տեղում, այն պայմանով, որ նրան չպետք է տեսնի որևէ մահմեդական, քրիստոնյա կամ հրեա:

ՀՈԴՎԱԾ 4-րդ. Մեր համայնքի յուրաքանչյուր անդամ ամեն օր պետք է համբուրի իր «հանդերձյալ կյանքի» եղբոր՝ շեյխի և փիրի ձեռքը:

ՀՈԴՎԱԾ 5-րդ. Անեծքը, ըստ մեր ուսմունքի, արգելվում է: Եթե մեզանից որևէ մեկը անեծքի խոսքեր լսի այլադավանի կողմից, նա պետք է անիծի վերջինիս կամ ինքը սպանվի:

ՀՈԴՎԱԾ 6-րդ. Երբ համայնքի որևէ անդամ մեռնում է, պետք է ներկայանան նրա «հանդերձյալ կյանքի եղբայրները», շեյխը, փիրը և որևէ դավալ, որը պետք է արտասանի հետևյալ դավալը (աղոթքը). «Ով դու Մալաքե Թավուսի ծառա, դու պետք է մնաս որպես Մալաքե Թավուսի հետևորդ: Եթե մեկն ու մեկը քեզ այն աշխարհում ասի՝ ընդունիր քրիստոնեություն, մահմեդականություն կամ հրեական դավանանք, հրաժարվիր և մի՛ հավատա: Եթե հավատաս, կհամարվես անհավատ:»

ՀՈԴՎԱԾ 7-րդ. Ամեն մի եզդի պետք է գրպանում ունենա օրհնյալ Շեյխ Ադիի գերեզմանից մի բուռ հող, որից մի պտղունց նա պետք է ճաշակի ամեն օր առավոտյան: Եզդին մեռնելիս էլ իր գրպանում պետք է ունենա այդ հողից:

ՀՈԴՎԱԾ 8-րդ. Յուրաքանչյուր եզդի ծոմ է պահում միայն իր հայրենիքում, այլ վայրում դա չի կարելի, քանզի այդ օրերին, առավոտյան և երեկոյան, նա պետք է այցելի իր շեյխին կամ փիրին և նրանցից մեկի տանը խմի 2-3 բաժակ գինի:

ՀՈԴՎԱԾ 9-րդ. Եթե եզդիական համայնքի որևէ անդամ շուրջ մեկ տարի բացակայի իր տնից, վերադարձին նա չի կարող ապրել կնոջ հետ, և մեզանից ոչ մեկը նրան կին չի տա:

ՀՈԴՎԱԾ 10-րդ. Եզդին իր նոր հագուստը անպայման պետք է լվանա օրհնյալ Շեյխ Ադիի գերեզմանի մոտ գտնվող սուրբ ջրում:

ՀՈԴՎԱԾ 11-րդ. Եթե մեզանից որևէ մեկը ցանկանում է կարել նոր վերնաշապիկ, նրա «հանդերձյալ կյանքի քույրը» պետք է ձևի օձիքը:

ՀՈԴՎԱԾ 12-րդ. Մեզանում արգելված է կապույտ հագուստը: Չի թույլատրվում նաև սանրվել մահմեդականի, քրիստոնյայի, հրեայի սանրով կամ սափրվել նրանց ածելիով:

ՀՈԴՎԱԾ 13-րդ. Եզդին չպետք է մտնի հասարակական զուգարան, բաղնիք, չպետք է օգտագործի օտար դավանանքի տեր մարդու ճաշի գդալը:

ՅՈԴՎԱԾ 14-րդ. Ինչ վերաբերում է սննդին, ապա մեզ, ի տարբերություն ուրիշների, արգելվում է ուտել ձուկ, դդում, բամյա, լոբի, կաղամբ և հազար (եզդիներին արգելվում է նաև խոզի միսը): «Մենք չենք ապրում այնտեղ, որտեղ աճեցվում է հազար»:

Նկատի ունենանք, որ այս կանոնները հայտարարվում էին Օսմանյան Թուրքիայում հատուկ նպատակով, Բարձր դռանը բացատրելով, թե ինչպես պետք է ապրեն եզդիները և ինչու պետք է նրանք ազատվեն զինվորական ծառայությունից:

Եզդիների սովորույթներին անդրադարձել է նաև Խաչատուր Աբովյանը:

Հայ մեծ լուսավորիչը մոտիկից շփվելով եզդիների հետ, դեռևս 150 տարի առաջ գրում էր.

«...Իրենց հարևան ազգերից և ոչ մեկի հետ նրանք այնպես սերտ կապված չեն, այնպես համատեղ չեն գործում, ինչպես հայերի, որոնց նրանք անվանում են եղբայրներ:

...Ով հայերից մի բան հափշտակի, բոլորովին կվտարվի իրենց համայնքից: Այդ պատճառով նրանց համար սուրբ և անձեռնմխելի է՝ ինչ պատկանում է հայ ժողովրդին: Նրանք ավելի շուտ իրենց ունեցվածքը կտան հային, քան նրանից մի բան կվերցնեն, և նրա ունեցվածքը կպաշտպանեն իրենց կյանքի գնով:

...Նրանց բարքերի մաքրությունը և հարգանքը օտարազգի կանանց նկատմամբ, անցնում է ամեն չափ ու սահմանից: Կնոջ նայելն անգամ մեղք է համարվում: Եզդուն կարելի է խոստանալ աշխարհի բոլոր գանձերը, սակայն ոչ մի կերպ չի հաջողվի նրան հարկադրել, որ նա խախտի այդ սուրբ սովորությունը:

...Նրանց պահ տված որևէ բան, ինչ էլ որ լինի, կարելի է մինչև իսկ շատ տարիներ անցնելուց հետո անվնաս հետ ստանալ: Ընդհակառակը, եթե նրանք որևէ մեկին պահ տված լինեն մի ձի, եզ, զենք կամ նման բաներ, ինչ արժեք էլ որ ունենա, և եթե այն կորչի կամ որևէ ձևով դժբախտության մատնվի, ապա նրանք իրավունք չունեն ոչ մի կոպեկ պահանջելու, որովհետև այդպիսի դժբախտությունը համարվում է աստծո տնօրինություն: Եթե եզդուց պահանջեք մինչև իսկ մի քանի հարյուր ռուբլի և նա ի վիճակի լինի այդ գումարը տալու, ապա նա անմիջապես կհանի և կտա, և այն կարելի է տարիներ շարունակ պահել՝ առանց մի կոպեկ տոկոս վճարելու, որը նրանց աչքում մեծագույն ոճրագործություն է համարվում:

...Եզդիները և նրանց դավանանքը, չնայած, որ ամենուրեք եղել են հալածված և բոլորին ատելի, մինչև օրս անաղարտ են մնացել շնորհիվ իրենց երկյուղության և բնատուր քաջության, որոնցով այդ ժողովուրդը դիմադրել և հետ է մղել իր մահացու թշնամիներին:»

*Խաչատուր Աբովյան,*
*Երկերի լիակատար ժողովածու,*
*8-րդ հատոր, Երևան, 1958թ. էջ 260-262, 405*

---

Ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի մեծ զավակը դեռևս 1840-ական թվականներին ճիշտ է բնութագրել եզդիներին, նրանց մեջ տեսել ամբողջ ժողովրդին բնորոշ լավագույն գծերը:



# ՄՇՈՒՐ

Գրվել է Շիխադու (1072-1162) մահվան տարում՝ եզդիների հոգևոր առաջնորդների կողմից (արաբերեն լեզվով, թարգմանված չի): Պահպանվել և մեզ է հասել փիրե բըրա (ծովերի փիր) Ուսկե Մրազի Սաֆոյանի ապուպապերի ժառանգորդական ճանապարհով: Վերջինս այժմ ապրում է Նաիրիի շրջանի Զովունի գյուղի Ամո թաղամասում:



1



2



3





4



5

ՄՇՈՒՐ



6



7

## ՄՇՈՒՐ



8



9



10

| Әлифба ездики | |
|---|---|
| А а | Н н |
| Б б | О о |
| Щ щ | П п |
| Ч ч | П' п' |
| Ч' ч' | Q q |
| D d | Р р |
| Ә ә | Р' р' |
| Ә' ә' | С с |
| Е е | Ш ш |
| Ф ф | Т т |
| Г г | Т' т' |
| h һ | Ö ö |
| Һ' һ' | У у |
| Ь ь | В в |
| И и | W w |
| Ж ж | Х х |
| К к | Г' г' |
| К' к' | Й й |
| Л л | З з |
| М м | |



*Ավելորդ չեմ համարում մեջ բերել երկու հրապարակում, որոնք լույս են տեսել 1996 թվականին՝ «Հայք» և «Հնչակ Հայաստանի» թերթերում:*

## «Ովքեր են եզդիները»

Ապրիլի 3-ին Երևանում տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որը կազմակերպել էր Հայաստանի եզդիների միության ղեկավարությունը «Ովքեր են եզդիները» թեմայով: Միության նախագահ Ազիզի Թամոյանը հանդես եկավ պատմափաստագրական պարզաբանումներով: Եզդիները ունեցել են ուրույն, ընդհանուր քրդական կյանքից առանձնացող պատմություն, իսկ մոտ 900 տարի առաջ նաև սեփական գրեր՝ 33 տառով: Հետաքրքիրն այն է, որ պարոն Թամոյանը եզդիների ծագումը կապում է ոչ թե քրդերի, այլ հայերի հետ: Հայերն ու եզդիները երբեք բախումներ չեն ունեցել, իսկ Մեծ Եղեռնի տարիներին մեկուկես միլիոն հայերի հետ միասին ոչնչացվել են նաև 300 հազար եզդիներ: Առանձին ինքնապաշտպանական մարտերում հայերի հետ կողք-կողքի կռվել են նաև եզդիները: Ղարաբաղի ազատագրական մարտերին ևս ակտիվ մասնակցություն են ցուցաբերել եզդիները: Պարոն Թամոյանը միաժամանակ ներկաների ուշադրությունը հրավիրեց փաստական այն վիճակի վրա, որ արտաքին որոշ ուժեր Հայաստանում բնակվող 60 հազար եզդիներին հայտարարել են քրդեր, նրանց ուզում են ներքաշել քաղաքական անմաքուր խաղերի մեջ: Ազիզ Թամոյանը ներկաներին տեղեկացրեց, որ 8 տարի առաջ Հայաստանում ձևավորվել է եզդիներին որպես առանձին ազգություն ճանաչման համար շարժումը: Չորս տարի առաջ Հայաստանում բնակվող մոտ 15 հազար եզդիների չափահաս անդամներից հավաքվել են ստորագրություններ այն մասին, որ նրանք պատկանում են եզդի ազգությանը:

Եզդիների՝ առանձին ազգային պատկանելության ապացույցներից Ազիզ Թամոյանը բերեց նաև Խորհրդային Հայաստանում անցկացված մարդահամարի տվյալները՝ մոտ 52 հազար եզդի, իսկ քրդերի թվաքանակը իջել է 4 հազարի սահմանագծին:

Ի վերջո, եզդիների միության բերած պատմափաստագրական տվյալների հետ իրենց լիակատար համաձայնությունը հայտնեցին Հայաստանում Ազգային փոքրամասնությունների միության նախագահ Վլադիմիր Չաքոևը, Ասորիների համայնքի ղեկավար Պավել Թամրազովը, Ուկրաինական համայնքի ղեկավար Ռոմա Յակիրն ու Ռուսաստանի հայրենակիցների օգնության և օժանդակության հիմնադրամից Իվան Սեմյոնովը:

Մամուլի ասուլիսի ժամանակ հյուրերի կողմից առաջարկվեց Հայաստանի եզդիների շրջանակներում հավաքել նոր ստորագրություններ, առ այն, որ հանրապետության եզդիները իրենց ոչ թե քուրդ, այլ եզդի ժողովրդի ներկայացուցիչներ են համարում: Իր հերթին

Ազիզ Թամոյանը առաջարկեց հանրապետության կառավարությանը խնդրել անցկացնել հանրաքվե՝ պարզելու Հայաստանում եզդի և քուրդ ազգությունների պատկանող մարդկանց քանակը: Այս առաջարկության կապակցությամբ կատարվեց դիտողություն, որ շուտով Հայաստանում անցկացվելու է նոր մարդահամար, սակայն եզդիների միության նախագահը գտնում է, որ պետք չէ սպասել նոր մարդահամարի տվյալներին և հանրաքվեն անհրաժեշտ է կատարել այս տարվա ընթացքում:

Հարկ է նշել, որ եզդի-քուրդ հարաբերության հարցը, իրոք որ, արտաքին որոշ ուժերի կողմից փորձ է արվում դուրս բերել երկու համայնքների վիճաբանության շրջանակներից: Նույն ազգության պատկանելու կողմնակիցների կողմից շեշտադրումը կատարվում է լեզվական նմանությունների, բարբառների գործոնի վրա, իսկ եզդիները իրենց ապացույցներում հիմնվում են պատմական, հոգևոր- մշակութային, կրոնական, լեզվական տարբերությունների առկայության վրա:

*ՎԱՂԻՆԱԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ*

Ա. Թամոյանի մամլո ասուլիսը

## ԵԶԴԻՆԵՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՀԱՆՐԱՔՎԵ

«Փաստ» գործակալությունը հաղորդել է.- Ապրիլի 13-ին մամուլի ասուլիս էր հրավիրել Հայաստանի եզդիների միությունը, որը նպատակ ուներ պարզություն մտցնել եզդիների ազգային ինքնուրույնությունը հարցականի տակ դնող բանավեճում: ...Մտքերի բուռն քննարկման արդյունքում հրապարակ իջավ մի նախաձեռնություն, որի համաձայն ՀՀ Ազգությունների միության հովանավորությամբ դիմում պետք է ներկայացվի կառավարությանը՝ արտոնելու տեղային հանրաքվե անցկացնել հանրապետության մի շարք բնակավայրերում և հնարավորություն տալ մարդկանց ինքնուրույն որոշելու իրենց ազգային պատկանելությունը:

Մեր կողմից ավելացնենք, որ Հայաստանի եզդիների միության նախագահ Ազիզ Թամոյանը պատմամշակութային բազմաթիվ փաստարկներով հիմնավորել է եզդիների քրդերից տարանջատ, ուրույն ազգություն լինելու տեսակետը, շեշտելով նաև, որ չորս տարի առաջ հայաստանաբնակ 15 հազար չափահաս եզդիներ ստորագրությամբ հաստատել են իրենց պատկանելությունը եզդի ազգությանը: Իսկ ինչպես հաղորդել է «Հայք»-ի քաղաքական մեկնաբան Վաղինակ Տերտերյանը.

«Ի վերջո, եզդիների միության բերած պատմափաստագրական տվյալների հետ իրենց լիակատար համաձայնությունը հայտնեցին Հայաստանում Ազգային փոքրամասնությունների միության նախագահ



Վլադիմիր Չաթոևը, Ասորիների համայնքի ղեկավար Պավել Թամրազովը, Ուկրաինայի համայնքի ղեկավար Ռոմա Յակիրն ու Ռուսաստանի հայրենակիցների օգնության և օժանդակության հիմնադրամից Իվան Սեմյոնովը»: Մենք ողջունելի ենք համարում Վ. Չաթոևի ղեկավարած կազմակերպության այս դիրքորոշումը, որը ողջամտության ու արդարամտության հաղթանակն է, քանի որ վերոհիշյալ միությունն առ այսօր իր կազմում հանդես էր բերում միայն «քրդերի», վերջիններիս շրջանում ընդգրկելով հիմնականում եզդիներին:

Ինչ վերաբերում է եզդիների միջավայրում առանձնակի հանրաքվե անցկացնելու առաջարկին, ապա Ա. Թամոյանը պնդել է այն Հայաստանի ողջ տարածքում անցկացնելու անհրաժեշտությանը:

«Հնչակ Հայաստանի»ն (իսկ մինչ այդ «Փյունիկ»ը) բազմիցս ու հանգամանորեն անդրադարձել է եզդիներին «քրդացնելու» չարամիտ փորձերին: Ուրախալի է, որ այլ թերթեր ևս արդեն իսկ ըմբռնումով են մոտենում հարցին: Ահա, օրինակ, թե ինչ է գրել ապրիլի 16-ին «Հայք»-ի խմբագրության անդամ Հր. Վարդանյանը, «Վերածնունդ՝ եզդիները հպարտ են իրենց արմատներով» խորագրի ներքո.

«Այնպես է ստացվել, որ ես անձամբ վաղուց սերտ շփումներ ունեի այս համայնքը ներկայացնող մտավորականության, գիտնականների, բժիշկների, գրողների հետ, բարեհոգի, բարյացակամ, իրենց ազգի համար բնորոշ խիստ սրտառուչ մարդիկ, մտահոգ և հոգատար իրենց ժողովրդի նկատմամբ, սիրահարված իրենց ազգակիցներին, լեզվին ու մշակույթին: Նրանք նույնպես ներկայանում էին մեզ որպես քուրդ: Սակայն պետք է նշենք, որ «եզդի» բառը Հայաստանում միշտ էլ քաջածանոթ է եղել, պարզապես, կարծես թե ինչ-որ ուժեր այն դուրս էին մղել պաշտոնական գործածության ոլորտից:

Եվ, ըստ էության, միայն երկրի ազատականացումից հետո բարձրացավ այս հարցը: Հանրապետության եզդիական համայնքը զարմանալի միահամուռ կերպով հանդես եկավ իրենց քրդական տարրի մեջ ձուլելու միտումների դեմ: Վերը մեր կողմից նշված մտավորականությունը, որը «քրդական թևի» հակում էր ցուցաբերում, ըստ էության հայտնվեց մեկուսացման մեջ: Խորապես պարզաբանվեցին նաև այս խտրականության քաղաքական դրդապատճառները: Նախ՝ խորհրդային տարիներին ըստ ամենայնի դրսևորվում էր, մանավանդ «միկրոկայսրություններում», փոքրաթիվ ժողովուրդների անտեսման, նրանց «դե յուրե» ոչնչացման միտումը, լավագույն ապացույցը մեր հարևան հանրապետությունն է, որը բնակեցնող բազմաթիվ ազգությունների «կրճատումով» ստեղծեց նախկինում չտեսնված և ոչ մի տեղ չարձանագրված մի ազգ՝ ադրբեջանցիներ: Այսօր հրատարակվող ոչ մի տեղեկատուում այլևս մի շարք ազգերի այդ հանրապետությունում, իհարկե, չես հանդիպի նաև ո՛չ «քուրդ», ո՛չ, առավել ևս, «եզդի» անուններին: Կարելի է մտածել, որ փոքրաթիվ ազգություններին

ատիճանաբար ավելի մեծերի մեջ ներկայացնելու այս խորհրդային քաղաքականությունը ամբողջ ուժով գործել է նաև եզդիների նկատմամբ: Այնուհետև, այս համայնքը ներկայացնող մտավորականների մոտ իշխում էր այն գաղափարը, որ ավելի ձեռնտու է հանդես գալ որպես մեծ, համարյա 20 միլիոնանոց մի ազգի ներկայացուցիչ, քան ինչ-որ մի քանի տասնյակ կամ հարյուր հազարանոց համայնքի, որը հիմնականում միայն հայերի մոտ է կարողացել ապաստանել և հարազատ օջախ գտնել:

Ահա, բավականին խորը գաղափարական, տրամաբանական և քաղաքական արմատներ ունեցող այս ելակետներով ի վիճակի էին վերջնականորեն մարդկության հիշողությունից ջնջել «եզդի» գաղափարը, որը, վկա են բոլորը, ներկայացվում էր որպես «քուրդ» տերմինի ենթատեսակ, ինչ-որ երկրորդական կարգի մի ամբողջություն: Սակայն ազատականացման հետ զարմանալիորեն առաջ եկավ մի հզոր ալիք, որը արագ և շեշտակիորեն բարձրացրեց եզդիական ելակետը այս ժողովրդի մեջ, համակելով ըստ էության ամբողջ համայնքին: Ես ի տարբերություն «քրդական» թևի, մանրամասն զրույցներ չեմ ունեցել եզդիների առաջնորդների և տեսաբանների հետ, չկարողացա մասնակցել նաև շաբաթ օրը կայացած նրանց հավաքին, որովհետև տրամադրված դահլիճը լեփ-լեցուն էր և մտնել հնարավոր չէր: Դա հակված եմ բացատրել ոչ այնքան կազմակերպչական թերություններով, որքան այս շարժման մասսայականությամբ»:

*1996 թ. ապրիլի 20*

***

*«Փյունիկ»* թերթը 1990 թվականի մայիս ամսվա համարում մի ընդհարձակ հոդված է տպագրել «Ի՞նչ է նշանակում քուրդ և ե՞րբ են առաջացել քրդերը» խորագրով: Ի տարբերություն գիտական լուրջ փաստարկումների՝ «Փյունիկը» գրում է.

«...Արաբ հեղինակները «քուրդ» (հոգնակին՝ «աքրադ») տերմինն առաջին անգամ օգտագործել են մեր թվարկության երրորդ դարի պատմական իրադարձություններին անդրադառնալիս: Սակայն տերմինը հիմնականում հանդես է գալիս 7-րդ դարից հետո տեղի ունեցած եղելությունների նկարագրման կապակցությամբ: Պարսկական «Քարնամակ»-ի «Արտախշերի Պաբական» վիպական պատմվածքում (6-7-րդ դարեր) հիշատակվում է «Քուրտան շապանան» բառակապակցության մեջ: Յռոմեական աղբյուրներում նշված «կուրտիի», «կուրտի» լեռնաբնակ, վաչկատուն ցեղեր էին: Արդ, ի՞նչ ծագում ունի խնդրո առարկա ցեղանունը՝ լինի քուրդ, քուրտ կամ կուրտի:

«Քուրդը» արաբ հեղինակների համար հաստատապես ցեղանուն է, բայց վաղ շրջանում «քուրդը» նշանակել է «անասնապահ, լեռնաբնակ, հովիվ»: Ուրիշ խոսքով՝ «քուրդ» նկատի չունի էթնիկ որոշակի մի խումբ: Ավելի որոշակի կարելի է եզրակացնել, որ դեռևս 7-րդ դարում «քուրդ» նշանակում էր ոչ թե քուրդ ժողովուրդ, այլ «քոչվոր, խաշնարած»: Յետևապես կարելի է ասել՝ նոր կացութաձևի պատճառով են հյուսիսային Միջագետքում տարածված լեռնաբնակ հովիվները կոչվել քուրդ: Յետագայում, արդեն ավելի ուշ, 10-11-րդ դարերում քուրդ անունը հաստատապես ամրագրվել է որպես էթնոնիմ՝ ժողովրդի անուն: Յատկանշական է, որ նույնիսկ այժմ, իրանական որոշ լեզուներում «քուրդ» անունը դեռևս նշանակում է հովիվ:

Այս բոլորից ելնելով կարելի է ասել, որ ժամանակակից քրդերը որպես ժողովուրդ վերջնականապես ձևավորվել են 10-12-րդ դարերում»:

*(«Փյունիկ» -05- 1990)*

Եվ, վերջապես, չէ՞ որ յուրաքանչյուր ժողովուրդ ունի իրեն յուրահատուկ ազգային ավանդույթները, սովորությունները, կենցաղային նիստն ու կացը, կրոնական առանձնահատկությունները, ազգային տոներն ու բազմաթիվ այլ իրողություններ,որոնցով որպես ազգ ու ժողովուրդ տարբերվում է մյուսներից:

Յիշենք մեր ազգային այն տոները, որոնք յուրահատուկ են միայն մեզ՝ եզդիներիս, որոնցով մենք կարող ենք ի տես ողջ աշխարհի ներկայանալ որպես եզդիներ:

1989 թվականի մարդահամարի տվյալներով եզդիների թիվը Յայաստանում հասնում էր 51 հազար 900-ի, քրդերինը՝ 4200-ի: Անցել է տասը տարի, եզդիների թվաքանակը հասել է 60 հազարի, իսկ քրդեր Յայաստանում համարյա չկան: Յայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի Ղարաբաղյան փուլում հազարավոր եզդիներ են մասնակցել բազմաթիվ ճակատամարտերի, հերոսացել: Եզդիներն ունեցել են մոտ 40 զոհված ազատամարտիկ:

«ԵԶԴԻՆԵՐԸ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» (1989)

| Քաղաքներ | եզդիների թիվը | | |
|---|---|---|---|
| 1. Երևան | 7086 | 12. Գյումրի | 325 |
| 2. Աբովյան | 465 | 13. Կամո | 1 |
| 3. Ալավերդի | 9 | 14. Վանաձոր | 33 |
| 4. Աշտարակ | 83 | 15. Արմավիր | 928 |
| 5. Արարատ | 54 | 16. Յրազդան | 122 |
| 6. Արթիկ | 64 | 17. Կապան | - |
| 7. Արտաշատ | 262 | 18. Չարենցավան | 151 |
| 8. Գորիս | - | 19. Ջերմուկ | 1 |
| 9. Դիլիջան | 186 | 20. Սևան | 155 |
| 10. Էջմիածին | 1007 | 21. Սպիտակ | 32 |
| 11. Իջևան | 1 | 22. Ստեփանավան | 168 |

Ընդամենը 11,133

ՇՐՋԱՆՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| 1. Աբովյան | 1840 | 20. Տաշիր | 567 |
| 2. Արզնի | 143 | 21. Կամո | 41 |
| 3. Բյուրեղավան | 55 | 22. Կրասնոսելսկ | 140 |
| 4. Վայք | 2 | 23. Արմավիր | 9952 |
| 5. Ախուրյան | 237 | 24. Հրազդան | 414 |
| 6. Ամասիա | - | 25. Կապան | 4 |
| 7. Անի | 285 | 26. Աշոցք | 3 |
| 8. Աշտարակ | 2169 | 27. Մասիս | 3231 |
| 9. Ապարան | 72 | 28. Մարտունի | 18 |
| 10. Արագած | 4034 | 29. Մեղրի | 2 |
| 11. Արարատ | 2142 | 30. Նաիրի | 2388 |
| 12. Արթիկ | 99 | 31. Նոյեմբերյան | 11 |
| 13. Արտաշատ | 2651 | 32. Տաուշ | 10 |
| 14. Գուգարք | 38 | 33. Սևան | 269 |
| 15. Եղեգնաձոր | 17 | 34. Սիսիան | 12 |
| 16. Էջմիածին | 7303 | 35. Սպիտակ | 4 |
| 17. Թալին | 4193 | 36. Ստեփանավան | 43 |
| 18. Թումանյան | 83 | 37. Վարդենիս | 339 |
| 19. Իջևան | 37 | | |
| | | | 42,848 |
| | | Ընդամենը՝ | 53,981 |

Անհրաժեշտ եմ համարում ներկայացնել նաև Հանրապետության այն մարզերն ու շրջանները, որտեղ կան եզդիավբնակ գյուղեր: Դրանք են.

*Արմավիրի շրջան* - Այգեշատ, Արազափ, Արգավանդ, Արևիկ, Արմավիր, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Երասխահուն, Զարթոնք, Լուկաշին, Խանջյան, Հայկավան, Ջերժինսկի, Մարգարա, Մայիսյան, Մրգաշատ, Նաիրի, Նալբանդյան, Նորամասիս, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Շենավան, Ջանֆիդա, Ջրաշեն, Սովետաշեն, Վարդաշեն, Տանձուտ, Փշատավան, Նորավան, Նորապատ, Հոկտեմբեր, Արտաշատ, Եղեգնուտ, Արաքս, Մեծամոր, Մելիորատոր:

*Էջմիածնի շրջան* - Արշալույս, Ֆերիկ, Ծիածան, Մուղան, Ծաղկունք, Դողս, Ամբերդ, Լեռնամերձ, Աղավնատուն, Այգեշատ, Դաշտ, Խաթունարխ, Գայ, Տարոնիկ, Լեռնուղի, Մեծամոր, Ջրառատ, Արաքս, Էջմիածին, Կայարան, Ակնալիճ, Աթարբեկյան, Շենքեր, Զվարթնոց, Բաղրամյան, Մերձավան, Փարաքար, Շահումյան, Մրգաստան, Սամաղար, Ապարան, Արևաշատ, 4-րդ սովխոզ, Լուսագյուղ:

*Արտաշատի շրջան* - Մխչյան, Այգեստան, Դիմիտրով, Ջրաշեն, Դիտակ, Արևաշատ, Լանջառատ, Բարձրաշեն, Գետաշեն, Կանաչուտ, Արտաշատ,



Նորաշեն, Քաղցրաշեն, Այգեզարդ, Այգեպար, Նշավան, Ծաղկաշեն, Դվին, Վ. Դվին, Ոստան, Ազատավան, Բուրաստան, Դալար, Մրգավան, Բաղրամյան, Մասիս, Բամբակավան:

*Բաղրամյանի շրջան* - Հուշակերտ, Նաիրի սովխոզ, Արաքս, Դալարիկ, Քարակերտ, Բաղջալար, Տալվորիկ, Կողպավան, Արտամետ, Արևաշատ:

*Մասիսի շրջան* - Արգավանդ, Գեղանիստ, Գետափ, Ազատաշեն, Արբաթ, Ղուկասյան, Ենգիջա, Շիրակավան, Հովտաշեն, Ռանչպար, Մասիս ավան, Թազագյուղ, Նոր Խարբերդ, Մարմարաշեն, Սարվանալար (Սիս), Մարմարաշեն, Նորամարգ:

*Աշտարակի շրջան* - Պռոշյան սովխոզ, Սասունք, Շամիրամ, Օհանավան, Կարբի, Ուշի. Օշական, Ոսկեհատ, Կոշ, Ավան:

*Աբովյանի շրջան* - Էլար, Արզնի, Գյամրեզ, Զովք, Զորաղբյուր, Մայակովսկի, Բալահովիտ, Նուռնուս, Թազագյուղ, Կոտայք, Սևաբերդ, Ջրվեժ, Առինջ, Պտղնի, Ակունք, Գետամեջ, Բյուրեղավան:

*Թալինի շրջան* - Հակո, Գյաթո, Ծորիկ, Թլիկ, Բատժ, Սորիկ, Ավան, Արագած, Արտենի, Թալիշ:

*Նաիրիի շրջան* - Պռոշյան, Ջովունի, Քանաքեռավան, Մրգաշեն, Նոր Գեղի, Քարաշամբ, Թղնիկ, Ձորավան, Բանավան:

*Վեդու շրջան* - Վեդի, Թատերական, Նոր կյանք, Արալար, Տաղլուբ, Չիման, Վանաշեն, Ավշար, Արարատ, Գորավան, Սուրենավան, Երասխավան:

*Արագածի շրջան* - Ոյա-Թազա, Ալագյազ, Շենական, Դերեկ, Օրթաջյա, Սիփան, Ավշեն, Սանգյառ, Ամրե թազա, Ջամշլու, Միրաք:

*Գյումրի քաղաք*, ինչպես նաև Ամասիայի շրջան, Տաուշի շրջան (Կալինինո), Ստեփանավանի գյուղեր, Վանաձոր քաղաք (Կիրովական), Ապարան և այլն:

Ինչպես երևում է վերևում բերված տվյալներից, եզդիներն առավել մեծ թիվ են կազմում Երևանում, Աբովյանում, Արտաշատում, Էջմիածնում, Արմավիրում, Աշտարակում, Արագածոտնում, Մասիսում, Նաիրիում, Թալինում և այլուր:

Ելնելով դրանից, իմ նախաձեռնությամբ, վերոհիշյալ շրջաններում եզդիների ազգային միության նախագահության որոշմամբ ստեղծվեցին մարզային, շրջանային, քաղաքային մասնաճյուղեր, որոնց նախագահներ նշանակվեցին առավել գործունյա, հեղինակություն ունեցող երիտասարդներ:

*Իմ հրամանով ստեղծվեցին կոմիտեներ, որոնց նախագահներ նշանակվեցին հետևյալ անձինք.*

Երևան - Հասան Թամոյան
Կոտայք - Գոգո Ասոյան
Աբովյան - Գրիշա Ոզգոյան
Նաիրի - Սուրիկ Ավդալյան

Արագածոտն - Ղուլիխանե Ազիզ
Արմավիր - Ռուստամե Հասան
Էջմիածին - Լիլո (Ուսուբ Սարիադյան)
Մասիս - Աhմադ Խուդոյան
Արարատ - Անդո Ասոյան
Արտաշատ - Օնիկ Խուդոյան

Այսօր եզդիները մեծ թվաքանակ ունեն Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրներում, հատկապես Ռուսաստանի դաշնությունում: Ահա թե ինչու Ազգային միության մասնաճյուղեր ստեղծեցինք նաև Մոսկվայում, Տուլայում, Ռոստովում, ինչպես նաև Վրաստանում: Յուրաքանչյուր նոր նշանակում հայտարարվում էր «Եզդիների ձայն» թերթում, համառոտ ներկայացվում էր մեր ակտիվիստների կենսագրությունը:

*Ահա նրանք, մեր ակտիվիստները, կոմիտեների նախագահները.*

Կալինինգրադ - Սադախյան Մամուդ        Մոսկվա - Համզիև Օտտո
Վրաստան - Ջաֆարով Թամրազ        Նովգորոդ - Բաբայան Թռուն
Սարատով - Մամոյան Բայլոզ        Սարատովի մարզ - Բաքոյան Սամանդ

Բացի պաշտոնական աշխատողներից, Ազգային միության նախագահությունը մշտապես կապ է պահպանում ազգի նվիրյալների, ակտիվիստների ու համակիրների հետ: Ահա նրանցից մի քանիսը, որոնք չեն սպառում նվիրյալների ցուցակը.

Խուդոյան Աբբաս, Մամադե Ամար, Շուքրե Քյարամ, Ավդոյան Գյուլնարա, Դավրեշյան Սուրեն, Ֆատե Ջահանգիր աղա, Խդըրե Աթեր, Աhմադե Ամար, Բըրե Շեխ Դավրեշ, Իսայան Այսեր, Աբասյան Խըդըր, Ջասըմե Հյուսեին-Մամոյան, Քյարամե Սըլո, Մամոյան Օմար, Նադոյան Մշիր, Հաջոյան Զազո, Թամոյան Ասադ, և շատ ու շատ ուրիշներ, որոնցից շատ քչերին ենք ներկայացնում, մյուսներից խնդրելով իրենց ներողամտությունը, հետագա հրատարակություններում այս դիմանկարների շարքը անպայման ավելացնելու խոստումով:

Խնդրում եմ նաև հիշել, որ կենսագրականները տեղադրված են ոչ թե այբբենական կարգով կամ որևէ այլ սկզբունքով, այլ պատահականորեն, ելնելով տեխնիկական պատճառներից:

Իր հարյուրամյա ճանապարհին եզդիների և շրջակա տարածքների հայերի մեջ մեծ հեղինակություն է վայելել Դահար բեգը, որի մասին ուզում եմ մեջ բերել «Եզդիների ձայն» թերում տպագրված փոքրիկ ակնարկը:



## ԴԱՀԱՐ ԲԵԳ



Նրա մասին բազմաթիվ լեգենդներ են հյուսվել: Բավական է հիշել, որ Դահար բեգ Ամրյանն ապրեց 100 տարուց ավելի... Մե՜կ դար: Նա տեսել է 20-րդ դարի սկիզբն ու վերջը, ականատես է եղել դարակազմիկ իրադարձությունների:

Դահար բեգի կամ ինչպես ասում են Դարբեգի նախնիներն ապրել են Արևմտյան Հայաստանում, Կարսիա և Իգդիրի տարածքներում, եղել են աշխատավոր մարդիկ, իրենց հացը վաստակել են ճակատի քրտինքով:

Ընդամենը 20 տարեկան էր Դահար բեգը (նա ծնվել է 1898 թվականին), երբ իր նման հազարավոր եզդիների հետ բռնեց գաղթի ճանապարհը: Այլևս անհնար էր ապրել Արևմտյան Հայաստանում, իսկ Արևելյան Հայաստանն այն միակ վայրն էր, ուր փրկվում էին ֆիզիկական բնաջնջումից: Աշտարակի շրջանը դարձավ Դահար բեգի նոր հանգրվանը: Ապրեց, բարգավաճեց Շավավե Ամըրի տոհմը, հասակ առան նրա ժառանգները, ընտանիք կազմեցին, ունեցան զավակներ, թոռներ, ծոռներ...

Մեծ համայնքի բեգ էր Դահարե Շաբաբը: Նրա 6 որդիները, 2 դուստրերը, 150-ի հասնող թոռներով ու ծոռներով մեծ գերդաստանն իր մեծ նահապետին ճանաչում է որպես ազնիվ, շիտակ անձնավորություն: Նա իսկական խաղաղության սերմնացան էր, մեծ գերդաստանում պատահաբար ծագած գժտությունները հարթեցնողը: Նրա խոսքն օրենք էր բոլորի համար, և այդպես էլ՝ սրբի նման, գնաց այս աշխարհից:

Ամենակարևոր պատգամը, որ թողեց հարյուրամյա ծերունին, այն էր, որ եզդիները պետք է սիրեն, փայփայեն Հայաստանը, իրենց նոր հայրենիքը: Եզդիների պարտքն է ամրապնդել եզդի և հայ ժողովուրդների բարեկամությունը, շենացնել Հայաստանը. ահա նրա հավատքը:

Այդպես էլ վարվում են նրա հետնորդները, Հայաստանի Հանրապետության լիիրավ քաղաքացիները:

## ՖԱԿԻՐ ՏԱՅԱՐԸ

Ճանաչված անձնավորություն է բավե Ֆակիրը՝ Տայար Մուսաֆրյանը: Նա ծնվել է 1975 թվականին Երևանում, սովորել է N107 դպրոցում: Մանկական հասակից նա իրեն նվիրել է եզդիների դավանանքին: 1996 թվականին եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանի նախաձեռնությամբ, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի և սպարապետ Վազգեն Սարգսյանի աջակցությամբ մեկնեց Իրաք, եղավ Լալըշանուրանիում: Նույն թվականի հունիսի 6-ին օծվեց որպես բավե Ֆակիր:



*Լուսանկարում բավե ֆակիրն է (աջից) և բավե շեխ Խատոն:*

Բայց ֆակիր Տայարի մասին պատմենք ավելի մանրամասն:

Վերջին 80-90 տարվա ընթացքում երկրորդ անգամ հայաստանաբնակ եզդին գնաց եզդիների գլխավոր սրբավայր՝ Լալըշ, առաջին անգամ այնտեղ օծվեց, ձեռնադրվեց:

Դա Տայարե շեխ-Քյալաշեն էր, որին հիմա եզդիական սովորության և կրոնական պահանջների համաձայն կոչում են Ֆակիր Տայար անունով:

Տայարը ծնվել է եզդի հոգևորականի ընտանիքում (շեխե շեխուբաքրա): Նրա պապը՝ Շեխ Միրզոն, կրոնի լավագույն գիտակներից էր և հավանաբար հայաստանաբնակ վերջին եզդիներից, որ հագնում էր ազգային տարազ ու աչքի էր ընկնում իր բարոյական ու մարդկային բարձր հատկանիշներով, մաքրությամբ ու հեզությամբ: Շեխ Միրզոյի, շեխ Քյալաշի, հարազատների ու բարեկամների խոսակցությունների հիմնական թեման լինում էր սուրբ Լալըշը, որը մեծ տպավորություն էր թողել Տայարի վրա: Նա դեռևս պատանի հասակից որոշեց ինչ գնով էլ լինի անպայման լինել Լալըշում: Նրա սրտում այդ ձգտումն էլ ավելի ամրապնդեց եզդիների հոգևոր առաջնորդ Միր Մաույին, որն այցելելով Հայաստանի եզդիների համայնքին, իր պատգամները թողեց, շատ հավանեց Տայարին և խոստացավ օգնել նրան: Բայց ավաղ, նա շուտ վախճանվեց, ու Տայարին օգնեցին Վազգեն Առաջինը, Ազիզ Թամոյանը, Վազգեն Սարգսյանը: Վերջապես Տայարը մեծ դժվարություններով ու զրկանքներով այցելեց Լալըշ: Նա 3-4 ամիս մնաց Իրաքի հյուսիսային մասում, այցելեց բազմաթիվ եզդիական բնակավայրեր, շատ բան տեսավ ու լսեց, զարմացավ, ուրախացավ, սովորեց: Եվ այդպես, որպես ֆակիր Տայար նա վերադարձավ Հայաստան:



Լալըշում նրան տրվեց 7 սուրբ զգեստ՝ տարբեր արարողությունների համար: Նա պարտավոր է այդ զգեստները կրել մինչև իր կյանքի վերջը:

Անցան տարիներ: Ֆակիր Տայարը մեծ հեղինակություն ձեռք բերեց, արժանացավ մեծ հարգանքի:

Ֆակիր Տայարը սերտ կապեր է պահպանում եզդիների ազգային միության հետ, հաճախ է այցելում Միություն, դարձել է նրա լավ բարեկամը:

## ԱՀՄԱԴ ՈՒՍՈՒԲԻ ԽՈՒԴՈՅԱՆ



*Ազգային միության պրզիդենտ Ա. Թամոյանի հրամանով Ահմադ Ուսուբի Խուդոյանը նշանակվել է ՀՀ եզդիների ազգային միության Մասիսի շրջանային կոմիտեի նախագահ:*

Ահմադ Ուսուբի Խուդոյանը ծնվել է 1942 թվականին Մասիսի շրջանի Ենգիջա գյուղում: Մանկությունն անցել է հայրենի գյուղում, ուր ստացել է յոթնամյա կրթություն: Այնուհետև ավարտել է գյուղատնտեսական տեխնիկումը, աշխատանքի անցել ՀՀ մշակույթի նախարարության համակարգում, «Հայֆիլհարմոնիայում», ուր աշխատում է մինչև այսօր: Աշխատանքին զուգընթաց զբաղվել է գյուղատնտեսությամբ: Համագյուղացիները մինչև այժմ էլ հիշում են Ահմադ Խուդոյանի մարդասիրական քայլը, երբ նա 1988 թվականի աղետալի երկրաշարժից հետո իր հարկի տակ հյուրընկալեց հինգ աղետյալների՝ Գևորգյանների և Ասատրյանների ընտանիքներին, տարի ու կես խնամեց նրանց՝ որպես հարազատների:

Ահմադ Խուդոյանը ճանաչված է որպես հոգատար ընկեր, սրտաբաց մարդ, ընտանիքի լավ հայր: Նա հինգ զավակների հայր է, վայելում է համագյուղացիների սերն ու հարգանքը:

## ՇԵԽ ԱՀՄԱԴԸ



Այո, նա այս անունով է հայտնի եզդիներին: Իր բնավորության և պահվածքի շնորհիվ հարգանք ու պատիվ է վայելում իրեն ճանաչողների շրջանում և այդ ամենը հեշտությամբ ձեռք չի բերվել: Ինչպես ամեն մի պատկառելի անձնավորություն, Շեխ Ահմադն էլ պատանի և երիտասարդ հասակում իրեն ճանաչողներին «ստիպեց» իրեն հարգելու, նույնիսկ նրա բացակայությամբ ասելու. «Ահմադը ճշտախոս է, շիտակ է...»:

Իսկ եթե մենք վերհիշենք, որ նա դեռևս մանուկ հասակում զրկվել է հորից, հայրական դաստիարակությունից, ապա պետք է հաճելիորեն զարմանալ և ուրախանալ, որ նա այսօր ոչ միայն հանրապետության, այլև նախկին Միության ամենահայտնի և ամենահարգված եզդի հոգևորականներից մեկն է:

-Հորս, - վերհիշում է Շեխ Ահմադը, - 1937 թվականին նախկին Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղից աքսորեցին, երբ ես ընդամենը տաս տարեկան էի:

Հիշում եմ և լսել եմ, որ այդ տարիներին հարյուրավոր եզդիների էլ բանտարկեցին, աքսորեցին, գնդակահարեցին, բայց մինչև հիմա էլ չեմ հասկանում, ինչո՞ւ, նրանց մեղքը ո՞րն էր...

Իմ հորը և նրա նման շատերին աքսորեցին ու գնդակահարեցին լոկ նրա համար, որ նրանք հոգևորականներ էին, ժողովրդին քարոզում էին հավատ, բարոյական մաքրություն, աստվածավախություն..., բայց որոշ մարդկանց դա դուր չէր գալիս... Դաժան և ծանր ժամանակներ էին, ինչպես մեր հայրերն են ասել. «Այդ օրերը թող գնան ու չվերադառնան»:

Ճիշտ է, հայրս ու նրա նման հարյուրավոր եզդիներ այլևս չվերադարձան իրենց ընտանիք, բայց, փառք Աստծո, մենք փրկվեցինք, հարազատների, բարեկամների շնորհիվ դարձանք տուն-տեղ և այն հոգով դաստիարակվեցինք, որ միայն բարոյական մաքրության ու մարդկային անկեղծ վերաբերմունքի շնորհիվ կարող ենք մեր նախնիների հիշատակը պահել, հավերժացնել նրանց անունը և հասարակության մեջ պատիվ ձեռք բերել ու կարողանալ բաց ճակատով երևալ ժողովրդին: Նույնն այսօր ես ասում եմ իմ զավակներին, ինձ ճանաչող և չճանաչող եզդիներին:

Երևի այս և նման շատ հատկանիշներ մենք արհամարհեցինք, որ վերջին տասնամյակներին համարյա մոռացության տրվեց մեր ժողովրդի անունը, իսկ հետևանքն այն եղավ, որ մոռացության ենք տալիս մեր լեզուն, մեր նիստ ու կացը, մեր ազգային անունները...

Ցավալի է, սիրելի ժողովուրդ: Հազարավոր տարիներ դիմացել և կռվել ենք հզոր և նենգ թշնամիների դեմ, բայց հիմա, երբ նման բաներ, մասնավորապես Հայաստանում, չկան, ինքներս, կարծես կամովին և անհոգ, հեռանում ենք մեր արմատներից, ապուպապերի գեղեցիկ և սրբագրված կրոնից, նիստ ու կացից: Հիմա էլ ուշ չէ, սիրելի ազգականներ, համախմբվել և ազգովի պայքարել մեր դիմագծի պահպանման համար:

Այո, սիրելի ընթերցող, Շեխ Ահմադն այս ամենն ասում էր նաև այն տարիներին, երբ Հայաստանի եզդիները ոտքի կանգնեցին ու պահանջեցին, որ մեզ չկոչեն և չանվանեն օտար անունով: Չնայած իր պատկառելի տարիքին, նա միշտ, ինչպես ասում են, պայքարի առաջին «գծում էր» և հետ չկանգնեց այդ գաղափարից, որի համար դարերով պայքարել և մարտնչել է աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը և միայն հայոց երկրում է, որ կարողացել և կարողանում է հասնել իր փայփայած նպատակներին:



Շեխ Ահմադը սիրում է կրկնել. «Աշխարհի ոչ մի ժողովուրդ եզդիների հետ այնպես լավ չի վարվել և վարվում, ինչպես հայերը և պետք է այդ հնարավորությունը բաց չթողնել ազգային մշակույթի պահպանման ու զարգացման համար»:

## ՓԱՇԱ ԱՂԱՅԻ ԱՂԱՅԱՆ



### ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Աշխատանքային արգասավոր ուղի է անցել Փաշա Աղայանը: Հասարակական ակտիվ աշխատանքի, եզդիների շրջանում ունեցած մեծ հեղինակության, աշխատանքային ակտիվությունն ցուցաբերելու համար նա արժանացավ Եզդիների ազգային միության նախագահի նախ խորհրդականի պաշտոնին, ապա ընտրվեց վերստուգիչ հանձնաժողովի նախագահ:

Փաշա Աղայանը ծնվել է 1944 թվականին Արմավիրի մարզի Արմավիր գյուղում: Սովորել է հայրենի գյուղի դպրոցում, ստացել է միջնակարգ կրթություն:

1963-67 թվականներին ծառայել է խորհրդային բանակում նախ Իվանովո, ապա Կալինին քաղաքներում, ծառայության ընթացքում արժանացել է մարտական բազմաթիվ խրախուսանքների:

1967-74 թվականներին ծառայել է ներքին զորքերի համակարգում, ունի ավագ լեյտենանտի կոչում: 1974-1993 թվականներին, շուրջ 20 տարի, նա վարել է «Ռոսիա» (այժմ «Այրարատ») կինոթատրոնի փոխտնօրենի պաշտոնը: 1993 թվականից Փաշա Աղայանն աշխատել է «Էլեկտրոն» գործարանում որպես պահակային ծառայության հերթափոխի պետ: Աշխատանքային գործունեության ընթացքում նա արժանացել է բազմաթիվ խրախուսանքների, պատվոգրերի: Նրա լավ աշխատանքի մասին հաճախ են պատմել հանրապետական թերթերը:

Փաշա Աղայանն ամուսնացած է: Նրա որդիները՝ Սամվելն ու Մանվելը, իրենց հայրիկի օրինակով բարեխղճորեն ծառայում են իրենց ժողովրդին: Իսկ թոռնիկները՝ Էդգարը, Թեհմինան, Լուսինեն և Սյուզաննան ու Մարիաննան աշխատանքային անսպառ եռանդ են հաղորդում իրենց պապիկին:

## ԱՐԻՖ ՇԻՐԻՇԱՆԻ ԱՄԱՐՅԱՆ



Արիֆ Շիրիշանի Ամարյանը ծնվել է 1925 թվականին Ապարանի շրջանի Քարվանսարա գյուղում: Սովորել է Ծաղկահովտի միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո տեղափոխվել է Երևան, ընդունվել կապի տեխնիկում: Տեխնիկումն ավարտելուց հետո նա սովորել է նաև կապի բաժանմունքների ղեկավարների 6-ամյա դասընթացներում: 1950 թվականին աշխատանքի է անցել Երևանի կապի 20-րդ բաժանմունքում, եղել է բաժանմունքի պետը: 1957 թվականից Արիֆ Ամարյանն իր կյանքը կապեց արտադրության հետ, աշխատանքի անցավ Երևանի ժամացույցի գործարանի հաստոցավերանորոգման ավտոմատ արտադրամասում, որպես փականագործ: Այստեղ նա անցկացրեց իր կյանքի 36 տարին, ճանաչվեց որպես հմուտ մասնագետ, արտադրության առաջավոր, արժանացավ բազմաթիվ խրախուսանքների և պարգևների: Նա աշխատել է նաև Արաբկիրի թաղապետարանում որպես պահպանության ջոկատի տեսուչ: Աշխատանքի վետերանը, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ, 1988 թվականին մեկնեց վաստակած հանգստի: Սակայն նա հանգիստ չունեցավ, մասնակցեց ազգային շարժմանը, ակտիվ աշխատանքի համար ընտրվեց եզդիների միության Մալաթիա-Սեբաստիա համայնքային կոմիտեի նախագահ:

Ծերունազարդ Արիֆ Ամարյանը երիտասարդի առույգությամբ շարունակում է աշխատել նաև այժմ: Նա եզդիների ազգային միության նախագահության անդամ է: Անբասիր և նվիրված աշխատանքի համար պարգևատրվել է մեդալներով, պատվոգրերով, աշխատանքի վետերան է:

Արիֆ Ամարյանն ամուսնացած է, ունի 9 երեխա:

## ՍՈՒՐԻԿ ԱԶԻԶԻ ՀԱՋՈՅԱՆ



2001 թվականի սեպտեմբերի 26-ին տեղի ունեցած եզդիների արտակարգ համագումարում, Սուրիկ Ազիզի Հաջոյանն ընտրվեց Աշխարհի եզդիների ազգային միության նախագահության անդամ և փոխնախագահ:

Սուրիկ Ազիզի Հաջոյանը ծնվել է 1963 թվականի հոկտեմբերի 22-ին Կոտայքի մարզի Զովունի գյուղի Ամո թաղամասում, ավարտել է տեղի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանը, ապա Երևանի Անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը, դարձել է հմուտ մասնագետ, կարճ



ժամանակով աշխատել է իր մասնագիտությամբ, ապա տեղափոխվել է անվտանգության նախարարության համակարգ, ուր ջանասիրությամբ ու պարտաճանաչությամբ վաստակել է գործընկերների, ինչպես նաև ղեկավարության հարգանքն ու սերը:

Սուրիկ Հաջոյանը մեծ պատասխանատվությամբ է կատարում եզդիների ազգային միության փոխնախագահի պարտականությունները:

## ԼԱՎ ՄԱՐԴՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ



«Սիաբանդ Բաքոյանը Հայաստանի Հանրապետության արժանավոր քաղաքացին է»: «Սիաբանդ Բաքոյանի լավագույն հատկանիշներն են՝ խոսքի և գործի միասնությունը, աշխատասիրությունը և անսահման բարությունը»:

Այսպես են բնութագրում եզդի ժողովրդի արժանավոր զավակին՝ նրա գործընկերները, նրան մոտիկից ճանաչողները: Սակայն այս գնահատականները դեռևս ամբողջովին չեն կարող բնութագրել Սաբանդ Բաքոյանին, որն իր ողջ ուժերը, ավյունն ու եռանդը նվիրել է մարդկանց ծառայելուն: Դրա լավագույն ապացույցն է այն փաստը, որ 1979 թվականից Սիաբանդ Բաքոյանն աշխատել է Երևանի քաղխորհրդի գործկոմի կենտրոնական ապարատում, իսկ 1986 թվականից առ այսօր՝ Երևանի քաղաքապետարանում որպես գլխավոր մասնագետ:

Սիաբանդ Բաքոյանը ծնվել է 1944 թվականին՝ Թալինի շրջանի Բառոժ գյուղում, մանկությունն անց է կացրել հայրենի վայրերում, բնության գրկում, 1964 թվականին ավարտել է Թալինի շրջանի Արեգ (այժմ Թաթուլ) գյուղի միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում, որն ավարտել է 1969 թվականին: Բառոժ գյուղի 1969-70 ուսումնական տարվա աշակերտներն ու մանկավարժական կոլեկտիվի անդամները լավ են հիշում իրենց այդ տարվա պատմության ուսուցիչ Սիաբանդ Բաքոյանին, այդ կրակոտ, եռանդուն, բանիմաց երիտասարդին, որը կարողացավ կարճ ժամանակում մեծ հեղինակություն վաստակել: Հետո կյանքի ճանապարհը նրան տարավ Երևան, ուր նա 1970-79 թվականներին աշխատեց «Երքիմշին» տրեստում որպես ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար, ուր 1978 թվականին անբասիր աշխատանքի համար արժանացավ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրի: Այդ նա էր, որ 1997 թվականին հիմնադրել է «Եզդիխանա» հասարակական-քաղաքական կազմակերպությունը, այդ նա է, որ այժմ էլ հանդիսանում է «Եզդիխանա» կուսակցության նախագահը:

## ՃԱՆԱՉՎԱԾ ՆԱԽԱԳԱՀԸ



Նրան ճանաչում են բոլորը, թե՛ հայրենակիցները, թե՛ շրջապատի մարդիկ: Եվ այդ հարգանքն ու սերը վաստակել է իր բարեխղճությամբ, բոլորի նկատմամբ ցուցաբերած հոգատարությամբ, աշխատասիրությամբ, եզդուն հատուկ ազգային արժանապատվությամբ: Եվ պատահական չէ, որ (Սուտո) Խդրի Ավդալյանն ընտրվել է եզդիների միության Կոտայքի մարզի Նաիրիի շրջանի համայնքի կոմիտեի նախագահ:

Ծնվել է 1946 թվականին՝ Զովունի գյուղում, ուր ստացել է իր նախնական կրթությունը: Ավարտել է Երևանի Դավիթաշենի N109 միջն. դպրոցը: Նրա աշխատանքային գործունեությունն սկսվել է դպրոցն ավարտելուց անմիջապես հետո, աշխատել է տարբեր շրջանների անասնաբուծական ֆերմաներում, եղել է բրիգադավար, ֆերմայի տնօրեն: Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից սատար է կանգնել իր հայ եղբայրներին, որոնք մինչև օրս էլ հիշում են , թե այն ծանր օրերին Սուտոն ինչպիսի հոգատարություն էր դրսևորում՝ ազատամարտիկների նկատմամբ, ինչպիսի ոգևորությամբ 11 տոննա միս նվիրաբերեց Արցախի ազատագրության ֆոնդին:

Որպես կոմիտեի նախագահ, նա իր պարտքն է համարում լինել ամենուրեք, եզդիների համայնքում, հանդիպումներ ունենալ բոլորի հետ, օգնել դպրոցներին, զրուցել երիտասարդների հետ, որ նրանք ոչ թե խուսափեն զինվորական ծառայությունից, այլ մեկնեն բանակ, զորավիգ լինեն անկախ Հայաստանի հզորացմանը: Զովունիի շուրջ 140, Նոր Գեղիի 120, Քանաքեռավանի 50, Նոր Հաճնի 40 և այլ ավանների ու գյուղերի բազմաթիվ ընտանիքներում սիրով են արտասանում Ս. Ավդալյանի անունը: Չէ՞ որ նա գիտե գրեթե բոլորին, իր սեփական ավտոմեքենան ի սպաս դրած ընդհանուր գործին, լինում է ամենուրեք, օգնության ձեռք մեկնում կարիքավորներին, շատերին է ընդգրկում աշխատանքում:

Ս. Ավդալյանի նախնիները՝ պապը, նրա հայրը եղել են հարգված ու սիրված մարդիկ: Թուրքական յաթաղանի զոհ են դարձել Ավդալ նախապապն ու նրա Ուսուբ որդին, որոնց սպանել են, հափշտակել 1000-ից ավելի մանր եղջերավոր անասուն:

Երջանիկ հայր է Ս. Ավդալյանը. 5 երեխա, 5 թոռ... Ու մեծանում է նրա գերդաստանը, ծյուղավորվում, շիվեր տալիս: Կրտսեր որդին, որն արդեն 16 տարեկան է, ճանաչված ձյուդոյիստ է, երազում է չեմպիոնական դափնիներ...

Այսպես է ապրում Ս. Ավդալյանը, իր անձնական կյանքով օրինակ դառնալով շատերի համար:



## ԱՍԱԴ ԹԱՄՈՅԱՆ



Ծնվել է 1944 թվականին՝ Զովունիում, կրթությունն ստացել է տեղի դպրոցում, աշխատանքի անցել Քանաքեռի խորհրդային տնտեսությունում, աչքի է ընկել իր աշխատասիրությամբ ու ջանասիրությամբ, միշտ համարվել է աշխատանքային բնագավառների առաջավոր: Նրան լավ են հիշում նաև Զովաշենում, Սևանի շրջանում և բոլոր այն վայրերում, ուր աշխատել է նա:

1988 թվականը ճակատագրական եղավ: Սկսվեց եզդիների ազգային, մշակութային շարժումը: Պետք է աշխարհին իմանար, որ գոյություն ունի եզդի ժողովուրդ, որին պետք է ճանաչել, հարգել նրա սրբություններն ու ավանդույթները: Այդ գործին էլ նվիրաբերվեց Ասադը:

Եզդիները համախմբվեցին իրենց առաջնորդ Ազիզ Թամոյանի շուրջը: Նրանց մեջ էր նաև Ասադ Թամոյանը, որն իր մասնակցությունը բերեց 1988 թվականի երկրաշարժի հետևանքների վերացմանը, եղավ կամավորական ջոկատների կազմում, որոնք փլատակներից փրկում էին մարդկանց: Երբ Ազիզ Թամոյանը դիմեց եզդի բնակչությանը՝ սատար կանգնել հայոց բանակին ու այդ նպատակով հանգանակվեց 6 միլիոն ռուբլի, Ասադն առաջիններից էր, որ իր անձնական խնայողություններն ի սպաս դրեց այդ սուրբ գործին:

## ՍԻԱԲԱՆԴ ՄՍՏՈՅԻ ՍԱԴՈՅԱՆ

ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆՈՎ ՍԻԱԲԱՆԴ ՄՍՏՈՅԻ ՍԱԴՈՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ:

Սիաբանդ Սադոյանը ծնվել է 1961 թվականին Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղում: Սովորել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1978 թվականին: 1979 թվականին զորակոչվել է խորհրդային բանակ, ծառայել Սարատովի ավիացիոն զորամասերում: Ծառայության ընթացքում նա աչքի է ընկել իր կարգապահությամբ, բանիմացությամբ, դարձել է սերժանտ, դասակի հրամանատարի տեղակալ: Սիաբանդ Սադոյանը բանակից զորացրվել է 1981 թվականին, վերադարձել է հայրենի գյուղ և աշխատել որպես վարորդ՝ մինչև 1989 թվականը:

Սիաբանդ Սադոյանի կյանքի նոր փուլն սկսվեց Արցախյան շարժման առաջին իսկ օրերից: Կամավոր անդամագրվելով գյուղում կազմավորված ջոկատին, նրա կազմում մասնակցել է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության մարտերին, աչքի է ընկել

խիզախությամբ, մարտական գործողություններին ակտիվ մասնակցությամբ: Սիաբանդ Սադոյանի ծառայությունները աննկատ չմնացին: Հայկական ազգային բանակի կազմավորումից հետո, նա նշանակվել է Էջմիածնի զորամասի ծառայության պետ: 1994 թվականին մեկնել է Լեռնային Ղարաբաղ, մասնակցել Մարտակերտի ինքնապաշտպանության մարտերին, դարձել է բրիգադի ծառայության պետ:

1995 թվականին Սիաբանդ Սադոյանը պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության մարտերի ժամանակ ցուցաբերած հատուկ ծառայությունների համար «Քաջորդիներին մայրական երախտագիտություն» մեդալով: Այժմ նա ծառայում է Հայոց բանակում, ավագ լեյտենանտ է, հրամանատարի տեղակալ: Սիաբանդ Սադոյանն ամուսնացած է, ունի երեք երեխա:



## ԳՈԳՈ ԱՍՈՅԻ ԱՍՈՅԱՆ

Ծնվել է 1956թ. մայիսի 2-ին, Կոտայքի մարզի Զովեժ գյուղում, որտեղ էլ ավարտել է միջնակարգ դպրոցը: Բանակում ծառայելուց հետո գյուղի անտառտնտեսությունում աշխատել է որպես վարորդ, բրիգադիր, 2 ամիս գյուղատնտեսական ինստիտուտում վերապատրաստվելուց հետո աշխատանքը շարունակել է նույն տեղում: Մի քանի տարի է, ինչ Խորհրդային շրջանի սանմաքրման ավտոտնտեսության մեխանիկն է:

1996թ. մայիսի 16-ին ընտրվել է ՀՀ ԵԱՄ-ի Կոտայքի մարզի կոմիտեի նախագահ:

Ամուսնացած է, ունի երեք երեխա:

## ԱՀՄԱԴ ԱՄԱՐԻ ԹԱՄՈՅԱՆ



Ծնվել է 1934 թվականին Էջմիածնի շրջանի Ջրառատ գյուղում: 1936 թվականին ընտանիքով տեղափոխվել է Նաիրիի շրջանի Ամո գյուղ: Սովորել է Դավիթբաշենի դպրոցում: Մինչև 1988 թվականը աշխատել է Կոտայքի շրջանի Զովաշենի խորհրդային տնտեսությունում:

Եզդիների ազգային զարթոնքի ժամանակ նա կանգնեց եղբոր՝ շարժման առաջնորդ Ազիզ Թամոյանի կողքին և մինչև վերջ պայքարեց եզդի ժողովրդի իրավունքների վերականգնման համար: Ակտիվորեն մասնակցեց նաև Ղարաբաղյան շարժմանը, արձագանքեց ազգային միության կոչերին: Նրա որդիները՝ Գոգոն, Ալիկը եղել են ֆիդայիներ:



## ԱՀՄԱԴ ԱԼԻԻ ԱՄԱՐՅԱՆ



Ծնվել է 1928 թվականին Էջմիածնի շրջանի Ջրառատ գյուղում: Տարրական կրթություն ստանալուց հետո, դժվար պայմաններից ելնելով, նա թողնում է դպրոցը, սկսում աշխատել նախ Աբովյանի, ապա Արմավիրի շրջանների խորհրդային տնտեսություններում: Մի քանի տարի աշխատել է նաև Էջմիածնի շրջանի Լուկաշինի անվան խորհրդային տնտեսությունում, ապա տեղափոխվել է Զովունի: Ակտիվորեն մասնակցել է եզդիների ազգային զարթոնքի շարժումներին, Ղարաբաղի ազգային ազատագրական պայքարին նվիրված բոլոր միջոցառումներին:

## ՌՈՄԻԿ ՀԱՍԱՆԻ ՄՀԵՅԱՆ



Ռոմիկ Միհեյանին հաճախ կարելի է տեսնել եզդիների ազգային միությունում: Նա միշտ ժպտուն ու բարեհամբույր է, միշտ գործնական, կարևոր հարցերի ջատագով: Եվ դա պատահական չէ, քանի որ նա եզդիների ազգային միության Խարբերդի կոմիտեի նախագահն է, հայրենակիցների շահերի ու իրավունքների ազնիվ պաշտպանը, բոլոր եզդի համագյուղացիների «դեսպանը»՝ մարզում և մայրաքաղաքում...

Ռոմիկ Միհեյանը ծնվել է 1971 թվականին, Նոր Խարբերդում, սովորել է հայրենի գյուղի դպրոցում, 8-րդ դասարանն ավարտելուց հետո ընդունվել է Անասնաբուժական - անասնաբուծական տեխնիկում, որտեղ ստացած գիտելիքները հետագայում ի սպաս է դրել ոչ միայն իր համագյուղացիների, այլև բոլոր նրանց համար, ովքեր դիմել են և դիմում են նրան:

1988-1990 թվականներին Ռոմիկ Միհեյանը ծառայել է խորհրդային բանակում, աչքի ընկել իր մարտական պատրաստվածությամբ և կարգապահությամբ:

Ազգային զարթոնքի օրերին նա ակտիվորեն մասնակցեց իր ժողովրդի արդարացի պահանջներին նվիրված հանրահավաքներին, բողոքի ցույցերին: Նա սիրված ընկեր է , մարդամոտ ու մարդասեր:

## ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ



Եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանի հրամանով նախագահի խորհրդական է նշանակվել Մաջիթ Աղայի Աղայանը: Այդ նշանակումը պատահական չէ, որովհետև Մաջիթ Աղայանը և՛ գործընկերների, և՛ իր հայրենակիցների շրջանում միշտ աչքի է ընկել հարցերին բազմակողմանիորեն մոտենալու և ճիշտ լուծումներ գտնելու հմտությամբ: Եվ ամենուրեք, երբ խոսք է բացվում Մաջիթ Աղայանի մասին, բոլորը նրան հիշում են բարի խոսքով և ակնածանքով:

Ծնվել է 1957 թվականին և արդեն հասցրել է իր կենսագրության էջերը լրացնել ուշագրավ փաստերով: Ավարտել է հայրենի գյուղի՝ նախկին Հոկտեմբերյանի շրջանի՝ Արմավիրի միջնակարգ դպրոցը, 1975-1977 թվականներին ծառայել է բանակում, եղել է Վլադիվոստոկի հրթիռային ստորաբաժանման ջոկատի հրամանատար, զորացրվելուց հետո ընդունվել է միլիցիայի համակարգ, սովորել է միլիցիայի միջնակարգ մասնագիտական դպրոցում, որն ավարտելուց հետո աշխատել է ներքին գործերի նախարարությունում, հետո՝ Շահումյանի շրջանի ՆԳ բաժնում, իսկ 1994 թվականից առ այսօր Շենգավիթի ՆԳ բաժնում տեղամասային ավագ տեսուչ է, միլիցիայի մայոր:

Մաջիթ Աղայանը և նրա տիկինը՝ Գոհարը, իրենց երկու երեխաներին՝ Արմինեին ու Կարենին դաստիարակում են ազգային ոգով, ազգային սովորույթներով: Պետք է հիշել նաև, որ Մաջիթ Աղայանն Արցախյան ազատամարտի ակտիվ մասնակից է, եղել է Վարդենիսում, Հրազդանում, վաստակել է խիզախ մարտիկի անուն:

Այդպիսին է մեր Մաջիթ Աղայանը:

## ՌՈՒՍՏԱՄ ՍԱՀԻԴԻ ԲՐՈՅԱՆ



Արմավիրի շրջանային մասնաճյուղի նախագահի պարտականությունները դրվել են նույն շրջանի Նոր Արտագերս գյուղի բնակիչ Ռուստամ Սահիդի Բրոյանի վրա:

Ծնվել է 1954 թ., նախկին Հոկտեմբերյանի շրջանի Նոր Արտագերս գյուղում: Միջնակարգն ավարտելուց, հետո սովորել է Հոկտեմբերյանի անասնապահական-անասնաբուծական տեխնիկումում և Կիևի գյուղատնտեսական ակադեմիայում, գյուղում եղել է մեխանիզատոր: Ակտիվորեն մասնակցել է ՀՀ սահմանների և Արցախի պաշտպանությանը: Հանդիսանում է ԵԱՄ-ի Արմավիրի շրջանի մասնաճյուղի նախագահը:



## ՕՆԻԿ ԴՀԱՐԻ ԽՈՒԴՈՅԱՆ



Ծնվել է 1963 թվականին Արտաշատի շրջանի Այգեստան գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, սովորել է պրոֆտեխուսումնարանում: Զորակոչվել է բանակ, ծառայել բարեխղճորեն: Զորացրվելուց հետո աշխատել է հայրենի գյուղի կոլտնտեսությունում:

Ազգային զարթոնքի օրերին ակտիվ մասնակցություն է բերել Արցախյան շարժմանը, մասնակցել է Երասխավանի, Լաչինի, Սադարակի մարտերին: Պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ է: 1996 թվականին ընտրվել է եզդիների ազգային միության Արտաշատի տարածքային կոմիտեի նախագահ:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

## ՍՈՒՐԵՆԵ ԻՍԿՈ ԴԱՎՐԵՇՅԱՆ



Ծնվել է 1958 թ., Էջմիածնի շրջանի Ծաղկունք գյուղում: Այժմ բնակվում է Մասիսի շրջանի Արգավանդ գյուղում: Ունի թերի միջնակարգ կրթություն: Աշխատել է վարորդի մասնագիտությամբ:

1989 թվականից մասնակիցն է եղել եզդիների ազգային ինքնության համար ծավալված շարժումների, ընտրվել է Եզդիների ազգային միությանն առընթեր եզդի ազատամարտիկների և զինվորականների խորհրդի նախագահ:

## ՄՐԱԶ ՄՀԱՐԻ ԱՀՄԱԴՅԱՆ



Աշխարհի եզդիների ազգային միության պրեզիդենտի հրամանով Տուլայի մարզում Եզդիների համայնքի նախագահ է նշանակվել Մրազ Միարի Ահմադյանը: Այդ մեծ պատվին նա արժանացել է տեղի եզդի համայնքում ունեցած մեծ հարգանքի և հեղինակության համար:

Մրազ Ահմադյանը ծնվել է 1961 թվականին՝ Էջմիածնի շրջանի Գրիբոյեդով գյուղում: Սովորել է տեղի դպրոցում, ապա Երևանում ուսանել է տեխնիկական ուսումնարանում, ծանոթացել է դեղատնային աշխատանքի

գաղտնիքներին և ստացած գիտելիքները ծառայեցրել է ինչպես զինվորական ծառայության տարիներին` 1979-1981 թթ., այնպես էլ հետագայում, միշտ օգտակար լինելով մարդկանց, միշտ հոգատարություն ցուցաբերելով բոլորի նկատմամբ:

Ավիացիոն զորամասում ծառայությունն ավարտելուց հետո, Մրազ Սիմոդյանը հաստատվել է Տուլայի մարզի Դոնսկոյ քաղաքում, ուր ապրում է նաև եղբայրը` ՆԳ քրեական հետախուզության բաժնի պետ, մայոր Ալիկ Սիմոդյանը: Եղբայրների ջանքերով տեղի եզդիները սկսեցին համախմբվել, հանդիպումներ կազմակերպել, որոշելով բարձր պահել եզդիների պատիվը, պահպանել ազգային ավանդույթները: Այդ գործում հատկապես իր մեծ ավանդն ունեցավ Մրազը` միշտ գործունյա, հոգատար, սրտացավ ու սրտամոտ:



## ԱՆԴՈ ՋՄՇՈՒԴԻ ԿԱՍՈՅԱՆ

Ծնվել է 1967 թվականին: Ապրում է Արարատի մարզի Արտաշատ քաղաքում: 1985 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը: Ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո, 1988 թվականին աշխատանքի է անցել ՆԳ Նախարարության համակարգում որպես միլիցիոներ: 1990 թվականին հանրապետության սահմանների պաշտպանության և Արցախյան պատերազմին մասնակցելու համար ծառայության է տեղափոխվել միլիցիայի հատուկ նշանակության ջոկատ: 1992 թվականին ընդունվել է միլիցիայի բարձրագույն իրավաբանական դպրոց: 1995 թվականին ավարտելով ուսումը, աշխատանքի է անցել Արտաշատի ՆԳ բաժնում որպես տեսուչ: Այժմ նա միլիցիայի ավագ լեյտենանտ է:

1999 թվականին եզդիների ազգային միության նախագահի հրամանով նշանակվել է Արարատի մարզային կոմիտեի նախագահ:

1994 թվականին Անդո Կասոյանի հովանավորությամբ լույս է տեսել Արցախի և հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված եզդի ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշաօրացույց: 2001 թվականի մայիսի 9-ի կապակցությամբ պարգևատրվել է հոբելյանական կրծքանշանով:



*ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ*

## ՕՐԹԱԼԱՆԵՐ

Եզդիների զանգվածային տեղափոխությունների իրենց պատմական հայրենիքից` Իրաքի հյուսիսային մասերում գտնվող ս. Լալըշից, Շանգալից (Սինջար) տեղի են ունեցել 1600-ական թվականներին: Եզդիները պարբերաբար ենթարկվում էին մուսուլմանների հալածանքներին, կանգնած էին հավատափոխության վտանգի առջև և հետագա հալածանքներից խուսափելու համար, եզդիների մի զգալի մասը փաստորեն դիմեց փախուստի: Երկար դեգերումներից հետո եզդիները վերջապես հաստատվում են Թուրքիայի Այնթավ (Ավախե) տարածքում, սակայն այստեղ նույնպես նրանք ենթարկվում են ճնշումների ու հալածանքների, որի պատճառով երեսուն տարի Ավախեում ապրելուց հետո, նրանք կրկին գաղթում են, այս անգամ հանգրվանում են Օրթալա գյուղում: Իհարկե, այստեղ էլ խաղաղ չէր նրանց կյանքը, քանի որ այս անգամ էլ քրդական ավազակախմբերն էին հաճախ հարձակվում խաղաղ եզդիների վրա, խլում էին նրանց ունեցվածքը, տանում էին անասունները, ոչխարների հոտերը: Նախ Մանթաշիա ցեղի Ամըր բեգի ղեկավարությամբ եզդիները դիմագրավեցին հափշտակիչ ավազակներին` պաշտպանելով իրենց ընտանիքները և ունեցվածքը: Ավանդությունը հիշատակում է մի հետաքրքիր փաստ: Եզդիները ոտքի են կանգնում, դիմադրում Գըր Յասոյին (Գայլ Յասո), նրան շրջելով դեպի ուրիշ էլ (համայնք), որի ղեկավարը նեղանում է Ամըր բեգից պատճառաբանելով, թե ինչու է ավազակների ուղղությունը շրջել դեպի իրենց: Ամըր բեգը պատասխանում է, որ իրենք պաշտպանվել են ավազակներից, հետ են շպրտել նրանց հարձակումը, այլ ոչ թե դիտավորյալ փոխել նրանց հարձակման ուղղությունը: Միայն պետք էր, որ նրանք էլ հակահարված տային ավազակներին: Անցնում են տարիներ: Եզդիները շարունակաբար ենթարկվում են ճնշումների, ու կրկին բռնում են գաղթի ճամփան: Օրթալան շուրջ երկու հարյուր տարի եղավ եզդիների ապաստանն ու ապրելավայրը: Դրանից հետո էլ, շուրջ հարյուր տարի ապրելով Կարակու բնակավայրում և կրկին բռնելով գաղթի ճամփան, նրանք վերջնականապես իրենց հանգրվանն են գտնում Արևելյան Հայաստանում:

Եզդիների աղայությունը շարունակվել է դարեր շարունակ: Ամըր բեգից հետո նրա գործը շարունակել են Շաբաբ բեգը, հետագայում` Տահար և Սայիդ բեգերը:

1997 թվականին վախճանվեց Տահար բեգը: Նրա հուղարկավորությանը մասնակցեց երկու հազարից ավելի մարդ: Աշխարհի եզդիների ազգային միության պրեզիդենտ Ազիզ Թամոյանը նույն օրը առաջարկեց Օրթալաների բեգ համարել յոթ եղբայրներից Փաշիկին: Առաջարկությունն ընդունվեց հավանությամբ: Նորընծա Փաշի բեգը առ այսօր շարունակում է վախճանված Տահար բեգի գործը:

*Ստորև ներկայացվում է Օրթըլայում ապրող եզդիական ցեղերի անվանումները` շեխերի և փիրերի հիշատակմամբ:*

| | | |
|---|---|---|
| **Ղազանիներ** (տես հավելվածը) | **Թոռընաներ** Սիաբանդե Ջարջո (ղեկավարը) | **Մամաշարիֆաներ** Ջարջե Ալի (ղեկավարը) |
| **Ռաշաներ** Շաբաբե Սադո (ղեկավարը) | **Քաշաղաններ** Մահմուդե Իսո | **Մանթաջիներ** Անըր Աղաե Ալի աղա Մհե Չատո |
| **Սալվաններ** Աթարե Յասո (ղեկավարը) | **Մուսկաներ** Շըլիե Թամո | Ստուրկաներ Յամադե Լազգի |
| | | **Մամիդոկա** Կայմասե Մստո |

**Օրթըլաների շեխերն են**

Շեխ Ահմադե Յոսե - Շեխե շեխու բաքրա

Շեխ Ուսըվե Ավդալն շեխե շեխու բաքրա (շեխե սորե սորա)

Շեխ Բրահիմ - Շեխե շեխու բաքրա

Շեխ Ասադ - Շեխե շեխու բաքրա

Շեխ Քալաշե Միրզե Ավլո - Շեխե շեխու բաքրա

Շեխ Միրզա Ֆակիր - Շեխե շեխու բաքրա

Շեխ Թամե Թաթո - Շեխե մալա մըրազա (կամ` շեխե շեշըմն)

Շեխ Նամատ (շեխե մարա-օծ)

**Օրթըլաների փիրերն են**

| | |
|---|---|
| Փիր Ուսըվե Ֆակիր Խադո | Փիրե Օմարե Խալա |
| Փիր Ֆակիր Դուքո | Փիրե Օմարե Խալա |
| Փիր Ալիե Յամադ | Փիրե Օմարե Խալա |
| Փիր Ալիե Բաքըր | Փիրե Օմարե Խալա |
| Փիր Ֆրիկե Ուսո | Փիրե Մամե Շվան |

## ՂԱԶԱՆԻՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ

Գաղտնիք չէ, որ եզդիական ընտանիքները լինում են բազմամարդ: Արյունակցական և բարեկամական կապերը հիշվում են սերնդե-սերունդ, ու այդ է պատճառը, որ եզդի ժողովուրդն աչքի է ընկնում իր համախմբվածությամբ, համերաշխությամբ, բարեկամական ամուր կապերով: Ո՞ւր են գնում նրանց արմատները, ո՞ւր են հասնում ժամանակները, ո՞վ է ամենահին նախապետը, որի անունը սրբությամբ են հիշում նրա սերունդները, տասնյակ ու տասնյակ թոռները, հարյուրավոր ծոռները, նրանց թոռնորդիներն ու ծոռնորդիները:

Այդպիսի տոհմածառի ստեղծման փորձ է արել Եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանը, կազմելով եզդիական տոհմածառի միայն մեկ` Ղազանիների մի քանի սերունդների բարեկամական կապերը:

Ահա այն.





# ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԸ

Եզդիների հարատևումը պայմանավորված է նաև ազգային ծեսերի, արարողությունների, տոնակատարությունների, ավանդապատումների հետ, որոնք սրբությամբ պահպանվելով ժողովրդի մեջ, նրան պահում են որպես եզդի, որպես ազգություն, որպես ժողովուրդ:

Ազգային տոներն առանձնահատուկ կարևորություն են ստանում ժողովրդին միավորելու, միասնականություն ստեղծելու տեսանկյունից: Դրանք անց են կացվում մեծ շուքով, հանդիսավորությամբ, ծիսական հետաքրքիր արարողություններով: Այդպիսի ազգային տոները ամեն տարի նշվում են որոշակի օրերի: Ստորև բերվող տոների օրերը նշվում են հին տոմարով:

Ամեն տարի փետրվարի 13-ից հետո եկող շաբաթվա առաջին երկուշաբթի օրը մատաղի ոչխար են մորթում, ծոմ է պահվում նոր վախճանվածների համար (բարվա ռադըվըն), իսկ երեքշաբթի, չորեքշաբթի և հինգշաբթի օրերը (ռադըվնը պաշիվե) ծոմ է պահվում: Ուրբաթ օրը Խըդըր Նաբիի՝ Խըդըր Էյլազի տոնն է: Ծոմի երեք օրերի ընթացքում շեխերից կամ փիրերից մեկը պարտադիր կարգով պետք է այցելի գերեզմանատուն, աղոթք կարդա հանգուցյալների համար (ղավըլ ու բայթ): Հինգշաբթի օրվա երեկոյան գնում են սպասավորների՝ շեխերի ու փիրերի տուն, համբուրում են օջախները, սրբերը և այնտեղ դրամ են թողնում, որով սրբագործվում են նաև իրենք՝ իրենց մեղքերին թողություն տալով:

Հինգշաբթի օրվա գիշերը բոլորն ուրախանում, նվագում, զվարճանում են, զուռնա-դհոլ են հնչեցնում և, իհարկե, մինչև լուսաբաց չեն քնում: Այդ գիշերը կոչվում է Լայլա Կադըր: Նույն գիշերը երեխաները թելով կապված տոպրակներ են իջեցնում երդիկներից, որոնք լցվում են մրգերով, կոնֆետներով ու այդպես շրջագայում են տնից տուն: Դա կոչվում է Դոլի դանգ:

Ծոմից առաջ, կիրակի՝ լույս երկուշաբթի, արթնանում են ժամը 4-5-ը, ուտում-խմում են, չօգտագործելով սակայն կանեփ, կաղամբ, խոզի միս: Լույսը չբացված՝ քնում են, մինչև առավոտյան ժամը 9-10-ը: Մութն ընկնելուց հետո արդեն կարող են ուտել, խմել, ուրախանալ: Չի կարելի ծոմի օրերին ուտել, խմել, ծխել, քնել, ծամոն ծամել, չի կարելի շոր լվանալ, լողանալ, տղամարդիկ իրավունք չունեն սափրվելու, կնոջ անկողին մտնելու: Մութն ընկնելուն պես սնվում են, քնում ու դեռ լույսը չբացված՝ նորից են սնվում (բարվա ռադըվըն) և այդպես շարունակ՝ 3-4 օր: Երբ երեկոյան աղոթք են անում, սովորաբար ասում են՝ ղաբուլ վը ռոժյա վը, այսինքն՝ ընդունելի լինի ձեր ծոմը:

Միայն Խըդըր Նաբիի՝ Յայլա Կադըրի գիշերը չամուսնացած աղջիկներն ու տղաները աղի բլիթ են ուտում (տոտկա շոռ), որ երազում տեսնեն իրենց ընտրյալին՝ ապագա ամուսնուն կամ կնոջը, պատի վրա



ալյուրի մեջ թաթախված մատով նշան են անում (նիշանա Խըդըր Նաբի), որպես թե նա գալու է, դիմավորում են: Երեխաներն ու հիվանդներն ազատվում են բոլոր ծիսակատարություններից, որոնք կատարվում են այդ օրերին: Նրանք կարող են ուտել, խմել, շարունակել իրենց առօրյա կյանքը: Տոնի օրը միմյանց տներն այցելելիս, պետք է ներկայանալ նվերներով: Ուրբաթ օրը բուն տոնն է՝ Խըդըր Նաբի: Տոնը շարունակվում է շաբաթ օրը՝ արաֆաթ, որի ընթացքում բոլորը պարտադիր այցելում են գերեզմանատները՝ անպայման իրենց շեխի կամ փիրի հետ: Տոնը շարունակվում է նաև կիրակի օրը՝ շարաֆաթ: Ժողովուրդն ասում է. բըմբարակբա, այդա մըրիա ու զենդիա, այսինքն՝ շնորհավոր ապրողների և հանգուցյալների տոնը:

Ամեն տարվա ապրիլի 13-ից հետո առաջին շաբաթվա երկուշաբթի օրը ծոմ է պահվում Մալաքե Թավուսի օրվա կապակցությամբ (և հանգուցյալների), իսկ չորեքշաբթի օրը բուն Մալաքե Թավուսի տոնն է, այսինքն՝ եզդիների Նոր տարին: Նույն օրը պարտադիր կարգով այցելում են գերեզմանատներ: Դա կոչվում է Չարշամա սըրե սալե - մըրի հատընը դըրե մալե, ըստ եզդիների հավատալիքների հանգուցյալը՝ նրա հոգին, գալիս է դռան առաջ: Երեքշաբթի օրը մի հատ գաթա են թխում, որը կոչվում է կլոճ, ինչպես նաև՝ կարմիր գաթա, այն կտրատում են չորեքշաբթի օրը և բաժանում տան անդամներին: Գաթայի մեջ լինում են ուլունքներ կամ այլ խորհրդանիշ և այն ում բաժին ընկնի, նա խորհրդանշորեն համարվում է տան ունեցվածքի տերն ու տիրակալը: Նույն չորեքշաբթի օրը համարվում է Մամե Շվանի օր, որը մանր եղջերավոր անասունների, այսինքն՝ ոչխարների պահապանն ու հովանավորն է:

Այդ օրերից (երեք օրվա ծոմերի) առաջին օրը պետք է ոչխար մորթել, երեկոյան՝ դեռ մութը չընկած, սինու մեջ դրված ամանով ճաշ ու մրգեղեն են տանում չքավոր հարևաններին՝ որպես Խըդըր Նաբիի խեր (պատարագ): Իսկ մեկ օրը՝ հինգշաբթի, տալիս են հանգուցյալների հաց (նանե խերա մըրիա): Իսկ երբ գիշերները (երեք գիշեր) վեր են կենում, նույն ձևով հաց են տալիս՝ բապիրի պաշիվի: Բապիրի պաշիվին այդ արարողության հրեշտակն է: Իսկ բուն օրը, առավոտյան շուտ, սինու մեջ ամանով ճաշ ու մրգեր են տանում հարևաններին, որպես Խըդըր Նաբիի հաց - պատարագ:

Այդ արարողությունը Իրաքում, ապրիլի 13-ից հետո, չորեքշաբթի օրը, հոգևոր առաջնորդի՝ միրի ղեկավարությամբ, ղավալները շեխերի և փիրերի հետ սուրբ Լալըշում նշում են Մալաքե Թավուսի սուրբ ծնունդը: Այդ տոնը ուղեկցվում է թմբուկի և շվիի նվագակցությամբ: Կատարվում են կրոնական ծիսակատարություններ: Դա կոչվում է չարշամա սոր (կարմիր չորեքշաբթի): Այդ օրը Մալաքե Թավուսը խորհրդանշող սիրամարգը դնում են Միրի տաճարում և աշխարհի տարբեր կողմերից եկած եզդի հավատացյալները ոտաբոբիկ ներս են մտնում սրբավայր, գլուխ են խոնարհում, համբուրում են Մալաքե Թավուսի խորհրդանշանը, թողնում

են նվեր, դրամ, զոհողություններ են անում, հետ-հետ դուրս են գալիս սրբավայրից և միանում դրսում հավաքված բազմությանը, մասնակցում դրսում կատարվող տոնախմբությանը:

Եզդիների ազգային տոներից մեկը նշվում է դեկտեմբերին: Դեկտեմբերի 13-ից հետո առաջին շաբաթվա երեքշաբթի օրը ծոմ են պահում՝ հանգուցյալների համար (բըրվա ռադըվըն): Երեք օրերը՝ երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի ծոմ են պահում նախահայր Եզիդի համար: Ուրբաթ օրը Եզիդի բուն տոնն է: Այդ սուրբ օրը, որն ազգային մեծ տոն է, բոլորը պարտադիր կարգով, նվերներով պետք է այցելեն այդ տարվա հանգուցյալների տները, միմյանց տները, միմյանց հետ պետք է հաշտվեն բոլոր նեղացածները, խռովածները, վիրավորվածները: Չհաշտվողները չեն կարող եզդիներ համարվել:

Յայլա կադրի ամբողջ գիշերը քեֆ են անում: Շաբաթ՝ արաֆաք, այցելում են գերեզմանատներ, իրենց փիրի կամ շեխի հետ աղոթք են անում:

## ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐ ԵԶԴԻ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

### Եզդիների ազգային միության նախագահությունում

*2001 թվականի հունիսի 22-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության ազգային միության նախագահության ընդլայնված նիստ, որին մասնակցում էին նախագահության անդամները, վերստուգիչ հանձնաժողովի անդամները, տարածքային կոմիտեների նախագահներ:*

*Նախագահությունը քննարկեց մի շարք հարցեր, որոնց թվում նաև եզդի ժողովրդի ազգային գիտական պատվավոր կոչումներ շնորհելու մասին հարցը:*

*Եվ Եզդիների ազգային միության նախագահության ընդլայնված նիստի արձանագրությամբ հաստատվեց, որ...*



***Ազիզ Ամարի Թամոյանին*** եզդի ժողովրդի դարավոր պատմությանը նվիրված «Մենք եզդի ենք» պատմավավերագրական, «Անմահ է քո սխրանքը, եզդի ազատամարտիկ» հերոսապատումի, մամուլում եզդիների կյանքին ու ճակատագրին նվիրված հրապարակային հոդվածների, ռադիոյով և հեռուստատեսությամբ ունեցած հանրամատչելի զրույցների, եզդի ժողովրդի դավանանքին, կրոնին և աստվածաբանության հարցերին առնչվող հոդվածների և ելույթների, անբասիր



մանկավարժական գործունեության համար շնորհել եզդի ժողովրդի պատմագիտության և աստվածաբանության պատվավոր դոկտոր-պրոֆեսորի կոչում:

Կրկին ու կրկին շնորհավորում ենք եզդի ժողովրդի ազգային հերոս, նորընծա դոկտոր-պրոֆեսորին և ցանկանում ենք նրան ստեղծագործական նորանոր հաջողություններ:



***Տհար Ամարի Աբասյանին*** եզդի ժողովրդին մատուցած մեծ ծառայությունների, հրատարակած «Հարազատ ընտանիքում», «Եզդի ծիավորները առաջին համաշխարհային պատերազմում», «Եզդիական բանահյուսության» գրքերի, մամուլում հրապարակած պատմագիտական հոդվածների, եզդի ժողովրդի դարավոր պատմության լուսաբանման, կյանքի 77 տարիներից 57-ը դպրոցին և մանուկ սերնդի դաստիարակությանը նվիրելու, երկար տարիներ Երևանի պոլիտեխնիկական ամբիոնում դասախոսելու և անբասիր մանկավարժական գործունեության համար, բանասիրական գիտությունների թեկնածու Տահար Ամարի Աբասյանին շնորհել եզդի ժողովրդի ազգային պատմագիտության պատվավոր պրոֆեսորի կոչում:

***

...Աշխատանքների եռուն պահին, երբ նոր գործեր էին սպասվում մեզ, հիվանդացա: Դրությունս օրեցօր վատանում էր: Անհրաժեշտ էր լիարժեք բուժում, և ես մեկնեցի արտասահման: Մեկ տարուց ավելի մնացի Գերմանիայում, չորս անգամ վիրահատվեցի և, փառք աստծո, ապաքինված վերադարձա:

Ավելորդ չեմ համարում մեջ բերել «Առավոտ» թերթի 1999թ. սեպտեմբերի 1-ի համարում տպագրված «Վերադարձել է եզդիների նախագահը» տեղեկատվությունն ամբողջությամբ:

## ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է ԵԶԴԻՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Օգոստոսի 27-ին մեկամյա բացակայությունից հետո Հայաստան վերադարձավ Հայաստանի եզդիների ազգային միության նախագահ, եզդիների համաշխարհային միության նախագահ Ազիզ Թամոյանը:

- Մեկ տարի է, որ բացակայում էի Հայաստանից, գտնվելով Գերմանիայի Հանրապետությունում, առողջությունս վերականգնելու նպատակով: Այդ մեկ տարվա ընթացքում ենթարկվել եմ 4 ծանր վիրահատության: Այժմ իմ առողջական վիճակը բավարար է, և այդ պատճառով ես վերադարձա: Այդ ընթացքում հանդիպումներ եմ ունեցել Գերմանիայում գտնվող մեր համայնքի ներկայացուցիչների հետ:

- Որքա՞ն եզդիներ են բնակվում Գերմանիայում:

- Այժմ Գերմանիայում բնակվում են շուրջ 300 հազար եզդիներ, սակայն նրանցից ընդամենը հազարն են Հայաստանի քաղաքացիներ: Մեծ թիվ են կազմում նաև հայերը: Սակայն եզդիներն էլ, հայերն էլ մի օր վերադառնալու են: Նրանց քաղաքացիություն ստանալը բացառվում է: Ես 100%-ով ասում եմ, որ մի քանի տարի հետո այսօր գնացածները վերադառնալու են, քանի որ այնտեղ են բնակվում միլիոնավոր փախստականներ:

- Ըստ Հայաստանում Գերմանիայի դեսպանատան, Դուք այդ երկիր եք մտել առանց դեսպանատան գիտության:

- Դա ճիշտ է: Ես Հայաստանից դուրս եմ եկել ֆրանսիական դեսպանատան վիզայով: Սկզբում պետք է մեկնեի Ֆրանսիա, բայց իմ վիզան Շենգենյան է, որը հնարավորություն է տալիս ազատ տեղաշարժվել՝ Շենգենյան համաձայնագրի անդամ երկրներում:

- Գերմանական իշխանությունների հետ որևէ խնդիր, կոնֆլիկտ ունեցե՞լ եք:

- Ոչ մի խնդիր էլ չի եղել: Մանավանդ, որ ոչ մի մտադրություն չունեի մնալ այդ երկրում: Ես ի վիճակի չեմ որևէ այլ երկրում մնալ: Այստեղ իմ ծննդավայրն է, պապական օջախը, դարերով այս ազգի հետ ենք ապրել: Տնտեսական վիճակի բարելավման դեպքում բոլորն էլ վերադառնալու են:

## ՀԱՎԵԼՎԱԾ - 2

Ցուցակ այն անձանց և ընտանիքների, որ ապրել են մինչև մեծ եղեռնը՝ Իգդիրի գավառի տարբեր գյուղերում 18-րդ դարում, երբ նրանց գլխավորներն են եղել Բրահիմ աղան և Ջավո բեկը:

Գյուղ Ջորե - շեխե ջընտըրիարա - շեխ Արաբե Հըմըդ, ապրել են մասնակներ Միրզե Մախսո, Թոռնա Օզման Ախա, Թոռնա Մալա Ոզգան աղա, Մալա, Սլեյման:

Բանդուրյա - Ամրե Անջո, փիրե Մամե Շվանա, մալա Ջալե Աղե, շեխե Շեխմանդա, շեխ Բաբե:

Գյուղ Քալը - բուֆկա, մալա Քալե Համո, փիրե Օմարե Խալա, մալա փիր Աֆո Ալի:

Գյուղ Խանե

Մամիդոնկա - մալա Շավեշե Հազե, փիրե Օմարե Խալա, մալա Չոմեխ, Ամե փիր Թամո, Ըրմոշի կադիե Ամո:

Գյուղ Գյարմաշվե

Մամիդոնկա - Կասե Ամո, մալա Թամե Ֆերո,

Բուվկա - Շըրե Մստո, Աբասե Սադո,

Բուվկա - Մալա Դավլե, Կաշանգե Այո, փիրե Օմարե խալա, մալա խդրե փիր Ռըշո:

Գյուղ Կուճ - բուդյա մալա Ալիե Սարդար, մալա Հասանե Խըդո, Խըդե Նադո, շեխե շեխուբաքրա, մալա Մնջե Չոլո, Ստուրկա - մալա Խըդե Շավո, շեխե Շըմսա - մալա շեխ Ամե Մստո:



Գյուղ Սոյիբլախ - Օզմանոյա, մալա Ասադե Բաքո, շեխե շեխուբաքրա, մալա Տայե Քավե:

Գյուղ Բանդամուրդա

ղազանի - մալա Ջուրբե Ջալիլ, Ահմադե Հորե:

Գյուղ Կարախտին - Ռամոշա - մալա Այլոյա, մալա Ասադե, Հասանե Կըռընգ

շարկյա - մալա Կաչախե Ալի

Գյուղ Զարիբխանը

ռաշա - մալա Սլոյե Ալե

մամիդոկա - մալա Աիբե Կարո, փիրե Իսիբյա - մալա փիր Ակոյե Թամո

Գյուղ Ասլանլու

Հաըշնի - մալա Ուսըվ Բազե, Հասան աղա, մամիդոկա - Խըրուջե Ալո, բուդյա, թեջըրէ (բեգե) Սլո:

Գյուղ Դամախան

ռամոշա - մալա Չոլե Կնյազ:

Գյուղ Ալչալու

ռամոշա - մալա Ուսըվե Խադո,

այլոյա - Մանթաշիա - Ջավո բեգե Շավեշ

Գյուղ Տաշբուրդի

ռամոշա - Խդրա, մալա Խադե Ոէզո, մալա Ռաշկե Նավո:

Գյուղ Բաշ Սինակ

մալա Բրահիմ աղաե Հաջի աղա

մամիդոկա - Ավդե մալա Սմայիլե, փիրե Հազմամանա, մալա Ուսվե փիր Ալիե, շարկյա - մալա Ամե Միրո:

Գյուղ Մաջրի

Մալա Ասե Միո

Գյուղ Խըրբե Սոր

Սալվանա - մալա Ալիե Կայմազ:

Սանթաշիա - մալա Հասե Սուդի, Ամադե Հասո, Ալի, Ամար,

բուդյա - մալա Ալիե Ֆարըզե Համե:

Գյուղ Գըլի

ռամոշա - մալա Շըվավե Ավասե քըլըշ, ռըշոյա - խդրե Շըվեվ:

Գյուղ Մախսուդյա

մալա Մախսուդ, մալա Սայիդե Միո, շեխե շեխուբաքրա - մալա շեխ Չոլո, մալա Հոսե շեխ Ավդիե:

Գյուղ Ռասո - դոդկա մալա Ռաշե Խըդո

Շեխերի գյուղ

շեխե շեխուբաքրա - մալա Շամե Մամո, Մալա Ավդալե, մալա Քալե Բրո, մալա Ուսե, Սլո:

շարկյա - Մալա Չարկազե Խըդո,

սըլվանա - մալա Խըդե Թըզե,

բուֆկա - մալա Ալե Խըլամ,

բուդյա - մալա Թըմե Մըմո փիրե իսիբյա, մալա Դոդե, Բավաե Ալո, Օմարե Խալա, մալա Օզմանե գզո:

Գյուղ Տաուշան

Սանթաշիա - Ամըր աղա, Ալի աղա,

շեխե շեխուբաքրա - մալա Համիդե Հասո

ՀԱՎԵԼՎԱԾ - 3

## ԵԶԴԻԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թեև գրքի նախորդ էջերում խոսվել է միրերի՝ եզդիների հոգևոր առաջնորդների մասին, սակայն ի լրումն ասվածի, կարևոր եմ համարում մի քանի խոսքով կրկին անդրադառնալ եզդի ժողովրդի համար խիստ կարևոր այդ հարցերին:

*Փիրերը* սկզբնավորվել են շատ խոր անցյալում՝ հին Հնդկաստանում և համարվել են հոգևորականներ, պատահական չէ, որ Մալակե Թավուսը փիր է համարվում:

*Շեխությունը* համեմատաբար ավելի երիտասարդ է, իսկ շեխերը կոչվել են *կնյազներ*: Շեխ Ադու ժամանակ նրանք արդեն համարվում էին կրոնավորներ: Իսկ մինչև այդ, երբ Սըլթան Եզիդը խալիֆ էր, միրերը համարվում էին *շեխե խալիֆաթա*, այսինքն՝ խալիֆաթի շեխեր, դրանով իսկ տարբերվելով մյուս շեխերից:

Շեխերի մեջ միրերը իրավունք ունեն ամուսնանալ միայն շեխե շեխուբաքրաների հետ, սակայն իրենք՝ միրերը նրանց աղջիկ չեն տալիս, որովհետև մեղք է համարվում միրի ներքնակի վրա պառկելը՝ սավա դոշակա մալա միրա:

Հիշենք նաև, որ 11-րդ դարում, շեխ Ադու ժամանակ, երբ նա հաղսադ ստեղծեց, փիրերի մի մասը դարձվեցին շեխեր - կըրասեբ խըվը գուհաստըն (շապիկները փոխեցին), ստեղծվեց ևս մի նոր կաստա՝ *ղավալներ*: Ղավալները, որ բնիկ աշխարհիկ են, կոչվում են *ղավալե շիխադի*: Ըստ ավանդության, շեխ Ադին է նրանց հագցրել սուրբ հանդերձանք՝ քուլուկ և խարկան: Թե՛ այն ժամանակ և թե՛ հիմա Իրաքում կրոնական ծիսակատարությունները իրականացնում են ղավալները: Ղավալներն իրավունք ունեն մրիդներից կնության աղջիկ առնել, բայց մրիդներն այդ իրավունքը չունեն: Պատճառը քուլուկ ու խարկա հագնելն է, որը մեղք է համարվում մրիդներին՝ աղջիկներ կնության տալը: Այժմ Իրաքում բոլոր ղավալների ղեկավարը Սըլեյմանն է, բոլոր կրոնականների առաջնորդը: Քանի որ մեզ մոտ ղավալներ չկան, կրոնական ծիսակատարություններն իրականացնում են շեխերն ու փիրերը:

Եզդիական յուրաքանչյուր ընտանիք, ըստ եզդիական օրենքների, պարտադիր կարգով պետք է ունենա հինգ կրոնավոր:

Դրանք են.

1. Բրե աղրատե, 2. Յարե աղրատե, 3. Փիրե զքատե, 4. Շեխե բսկե, 5. Մարիաբի (դըստ դամըն հըվ գրտըն):

Եզդիական յուրաքանչյուր ընտանիք, ըստ իր ցանկության, այդ հինգ կրոնավորներին տարին մեկ անգամ տալիս է դրամական փոխհատուցում՝ որպես խեր: Բացի այդ հինգ կրոնականներից, եզդիական ընտանիքները կարող են ունենալ նաև ոչ պարտադիր երկու կրոնավոր՝ փիրե մամե շվան և շեխե շամսա (ովքեր ոչխար ունեն - նրանց տարեկան մի գառ են տալիս):



Երբ եզդին վախճանվում է, հրավիրում են բրե աղրատեին և փիրի: Հիշենք, որ ոչ բոլոր դեպքերում հրավիրում են նաև խուշկա աղրատեին: Նրանք աղոթքներ են ասում՝ ղավըլ ու բայթ, կազմակերպում են թաղման հետ կապված բոլոր ծիսակատարությունները, մասնակցում են երեք անգամ տրվող պատարագներին: Այդ պարտադիր պատարագները եզդիներն անվանում են խեր: Ժողովրդի ներկայությամբ հանգուցյալի զգեստները բաժանվում են նրա շեխին ու փիրին: Եթե որևէ մեկը զգեստ չի ցանկանում վերցնել, նրան տալիս են դրամական փոխհատուցում: Ըստ ընդունված օրենքի առաջին խերը տրվում է հուղարկավորության օրը, երկրորդը՝ երրորդ օրը, իսկ երրորդ խերը, այսինքն՝ երրորդ պատարագը տրվում է մեկ տարի հետո: Իսկ մինչև այդ, թաղումից հետո մեկ տարի շարունակ, հինգշաբթի օրերին, մի ընտանիքի տրվում է հոգու հաց՝ խեր: Տարվա ընթացքում գերեզմանին այցելելը պարտադիր է: Առանձին մարդիկ կարող են տարվա ընթացքում իրենք նույնպես հանգուցյալի հիշատակին, իրենց ցանկությամբ, պատարագ տալ և այցելել գերեզման:

Եթե հանգուցյալը կին է, շեխի ու փիրի կանայք են այդ արարողությունները կատարում՝ որոշ պարտականություններ վերցնելով իրենց վրա:

Հիշենք նաև, որ եթե այդ արարողություններին շեխն ու փիրը չներկայանան, հանգուցյալը հալալ չի համարվի՝ հալալ նաբը:

Այդ երեք հիշյալ պատարագները՝ խերերը, համարվում են պարտադիր:

*Եզդիական հարսանյաց ծեսերը* նույնպես ունեն իրենց օրենքները, ավանդական արարողությունները, փոխադարձ այցելությունները, կարգ ու կանոնը:

Երբ արդեն համաձայնություն է կայացվել այս կամ այն աղջկան տղայի համար ուզելու, տղայի ծնողները, ըստ կարգի, գնում են աղջկա տուն՝ նրա ծնողներից աղջկա ձեռքը խնդրելու: Իհարկե կա նաև մի այլ սովորույթ, երբ դեռ փոքր հասակում երկու կողմերի ծնողների համաձայնությամբ բեշքերթում է կատարվում: Դա թեև հազվադեպ է կատարվում, բայց ենթադրում է, որ երբ փոքրերը դառնան չափահաս, պետք է ամուսնանան միմյանց հետ:

Տղայի ծնողները աղջկա ձեռքը խնդրելիս, աղջկա համար տանում են զանազան զարդեր: Համաձայնության գալով, տղայի ծնողները իրենց բարեկամների հետ մի քանի շաբաթ անց կրկին գնում են աղջկա ծնողների մոտ, կրկին զարդեր ու նվերներ են տանում, այդ արարողությունը կոչվում է *շիրանի* (մի ժամանակ, աղջկա գլխագին՝ ղալիմ էր պահանջվում, որն հիմա վերացել է): Որոշ ժամանակ անց արդեն գնում են աղջկան հարս բերելու:

Այդ արարողությունը կոչվում է *նըքիա բըքըըըն*, որը յուրահատուկ երդման արարողություն է, երբ հայրերը երդվում են՝ ինչ գնով էլ լինի, պահպանել ջահելների ընտանիքի միասնությունը՝ մինչև նրանց կյանքի վերջը (ի բացառյալ հիվանդությունները, անհաջողությունները և

անկանխատեսելի իրադարձությունները): Դա հավատարմության և անխախտ դաշինքի երդում է, որ եզդիները պաշտպանում են սրբությամբ: Դա նաև եզդիական ԶԱԳՍ-ի յուրահատուկ ձև է:

Երկու ծնողները երդման արարողության ժամանակ ասում են.

- Եթե աղջիկը կամ տղան կաղ են, կույր են կամ հիվանդ, մեզ համար ընդունելի է՝ մա կաբուլը:

Փեսայի տան մոտ մի բերքատու ծառ է զարդարվում, որ նորապսակները բերքատու լինեն այդ ծառի նման: Տղան ծառի վրայից վերցնում է մի կարմիր խնձոր, դրանով խփում է աղջկա գլխին, որ նա խնձորի նման գեղեցիկ ու առողջ երեխա ունենա: Ծիսական արարողություն է նաև ծառը հարսի գլխին թափ տալը, տղային բռնելը, որ նրա գլխարկը հանկարծ չփախցնեն, որն անպատվության նշան կհամարվի: Վերջապես տղան մոտենում է վարագույրի հետևում կանգնած հարսնացուին, երեք անգամ ոտքով սեղմում է նրա ոտքը և նրանք միասին դուրս են գալիս հարսանքավորների առջև:

Այդ օրը հարսի օժիտի հետ միասին ձիով կամ մեքենայով տղայի տուն է տարվում նաև հարսի պատրաստած զարդաբարձիկը, որը կամ վաճառվում է, կամ նվեր է տրվում փեսային:

Հարսնացուն ոտքով ջարդում է իր ոտքի տակ դրված երկու ափսեները՝ որպես չարի խափանման նշան և մտնում է փեսացուի տուն:

# ԻԲՐԵՎ ՎԵՐՋԱԲԱՆ

Եվ այսպես, սիրելի՛ ընթերցող, գրքիս էջերով քեզ հետ անցանք այն ճանապարհը, որ իմ ժողովուրդն անցել է դարերի ընթացքում: Այն մի ուղի է, որ առլեցուն է դառնություններով ու դժվարություններով: Այն մի ճանապարհ է, որ նաև հույս ու հավատ է եղել եզդիների համար, որ խոստացել է տանել դեպի լուսավոր ափեր, դեպի հավերժություն:

Գուցե դու, սիրելի՛ ընթերցող, փորձես քո կարծիքը հայտնել սույն գրքի այս կամ այն հատվածի վերաբերյալ, գուցե ցանկանաս որևէ մոռացված էջ ավելացնել եզդիների պատմությանը, նոր փաստաթուղթ կամ որևէ արժեքավոր լուսանկար տեսնել գրքի էջերում, հաղորդել նոր տեղեկություններ, որոնք կհարստացնեն գիրքը և տեղ կգտնեն նրա հետագա հրատարակություններում: Այդ ամենի մասին տեղեկացրու գրքի հեղինակին՝ Աշխարհի և Հայաստանի եզդիների ազգային միության նախագահ Ազիզ Թամոյանին, որն ապրում է Կոտայքի մարզի Զովունի գյուղի (նախկին Նաիրիի շրջան) Ամո եզդիական թաղամասում: Նրա օջախի դռները բաց են բոլոր հայրենակիցների, բոլոր հյուրերի առջև:

Եվ թող Շեյխ Ադու օրհնությամբ եզդի ժողովուրդը վստահ իր երթին՝ գնա դեպի նոր հորիզոններ, դեպի գալիք դարեր:



*Համոզված լինելով, որ իմ ընտանեկան արխիվի լուսանկարները կարող են հետաքրքրել իմ ընթերցողներին, որովհետև դրանք վերաբերում են նաև եզդիների կյանքին ու առօրյային, կապված են հանրապետությունում կատարված կարևոր իրադարձություններին, որպես գրքի անհրաժեշտ լրացումներ կլրացնեն մեր պատմությունը, գրքում տեղադրում եմ մի շարք կարևոր լուսանկարներ:*



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-Ն ԵՎ ԱԶԻԶ ԹԱՄՈՅԱՆԸ



Միր Մավին Երևանում՝ եզդի մտավորականության հետ



Եզդիների 3-րդ համագումարի մի խումբ պատգամավորներ



Եզդիների 3-րդ համագումարում





Եզդիների 4-րդ համագումարում



Մշիր Նադոյանը, Ազիզ Թամոյանը և Ալիկ Թամոյանը



Ձախից աջ՝ Խդրե Աբերը, Միր Իսմայիլի որդի Կոկըը և Ազիզ Թամոյանը



Ձախից աջ. Ազիզ Թամոյան, Համե Տաֆուր - հանրապետական ռադիոյի աշխատակից, Իրաքի եզդիների միր Իսմայիլի որդի միր Բայազետի, շեխե ջընտայար Միարե Ռազա



Սայիդ Թամոյանը (ձախից երկրորդը)՝ մտերիմների հետ





Զոհված եզդի ազատամարտիկ Գագիկ Հաջոյանի հուղարկավորության ժամանակ (Եռաբլուր, 1992)



1996 թվական, Եռաբլուր, հերթական հարգանքի տուրքը՝ եզդի ազատամարտիկներին



Այղր լճում



Եղեռնի հուշարձանին ծաղիկներ դնելիս



Ռադիոյով եզդիների համար տրվող հաղորդումների խմբագրության աշխատակիցների հետ







Միության նախագահ Ազիզ Թամոյանը, իր տեղակալներ շեխ Ռուստամ Բաքոյանի և Թեմուրե Հասան Խատոյանի հետ:




Ամար Ազիզի Թամոյան Սանդու-ուշու մարզաձևի հանրապետության բազմակի չեմպիոն




Ազիզ Թամոյանը որդիներ՝ Սուրիկի և Ամարի հետ (սեփական մեքենայով):



Գյավազ Հաջոյան - Ազիզ Թամոյանի մայրը





Ամար Հաջոյանը իր սեփական ավտոմեքենայի մոտ, աջից՝ ավագ որդի Աիմադը և բարեկամ Ագիտը





Կենտրոնում Ազիզ Թամոյանի տիկինն է՝ Խազալ Խըդըրի Ավդալյանը իր Գյավազ և Ամար երեխաների և Աիմադ, Գյուլիզար, Ամըր թոռների հետ



Ազիզ Թամոյանն իր թոռնիկներ Սուրիկի և Օմարի հետ



Խազալ Թամոյանը (աջից) իր մայրիկի՝ Գյուլլիզարի հետ



Սուրիկ Թամոյանը գերդաստանի փոքրիկների հետ



Ազիզ Թամոյանի գերդաստանի մի խումբ անդամներ





Հարազատները հիշում են Օմար Ավդալյանին. կենտրոնում պահված է նրա լուսանկարը



Ձախից աջ. Ազիզ Թամոյանի մոր՝ Գյավզգի, հոր՝ Ամարի, հորեղբոր՝ Ալիի և հորեղբոր կնոջ Թաղլանի շիրիմների մոտ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Խոսք ընթերցողիս ---------- 3
Մենք եզդի ենք ---------- 4
Եզդիների մեծ ավանդը ---------- 29
Զոհված եզդի ազատամարտիկներ ---------- 32
«Եզդիների ձայն» թերթի պատմությունից ---------- 51
Եզդի ժողովրդի ազգային հերոսները ---------- 57
Երգեր՝ նվիրված եզդի ժողովրդի ազգային հերոսներին ---------- 73
Եզդիների ազգային դրոշը ---------- 86
Ազգային զարթոնքի ազատամարտիկները ---------- 88
Եզդիների 4-րդ համագումարը ---------- 93
«Եզդիների ձայն»-ում տպագրված մի քանի հոդվածներ ---------- 101
Եզդիները գնում են դեպի նոր հորիզոններ ---------- 108
Պատմազգագրական դիտանկյունով ---------- 112
Աղոթքներ և հոգևոր երգեր ---------- 123
Խոսք եզդիական աստվածաբանության մասին ---------- 144
Եզդի ժողովրդի սրբերը ---------- 145
Եզդիների սուրբ գրքերը ---------- 154
Երկու հրապարակում ---------- 171
«Եզդիները Հայաստանի Հանրապետությունում» ---------- 175
Մեր ակտիվիստները, կոմիտեների նախագահները ---------- 178
Պատմության էջերից ---------- 193
Եզդիների ազգային տոները ---------- 196
Պատվավոր կոչումներ եզդի մտավորականներին ---------- 198
Վերադարձել է եզդիների նախագահը ---------- 199
Հավելված 2 ---------- 200
Հավելված 3 ---------- 202
Իբրև վերջաբան ---------- 204
Ընտանեկան արխիվից ---------- 205



ԱԶԻԶ ԱՄԱՐԻ ԹԱՄՈՅԱՆ

АЗИЗ АМАРОВИЧ ТАМОЯН


# ՄԵՆՔ ԵԶԴԻ ԵՆՔ

## ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ


Հրատարակիչ՝ Բագրատ Ալեքյան
Խմբագիր՝ Ալբերտ Փարսադանյան
Սրբագրիչ՝ Անահիտ Միրաքյան
Համակարգչային
շարվածք և ձևավորում՝ Գոհար Հարությունյան

Ստորագրված է տպագրության 7.10.2001թ.
Ծավալը՝ 13,5 տպագրական մամուլ:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 300:
Գինը՝ պայմանագրային:

**«ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ**
հրատարակչության տպարան